Ս.Վ. ԽԱՐՄԱՆԴԱՐՅԱՆ

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՈՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ



Հրտ.
Սովետական

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ИСТОРИИ

С. В. ХАРМАНДАРЯН

# СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ЧЕТВЕРТОЙ ПЯТИЛЕТКИ (1946—1950)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
Խ35

Ս. Վ. ԽԱՐՄԱՆԴԱՐՅԱՆ

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՈՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946—1950)

A II/4070

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1960

ԱԿԱԴԵՄԻԱ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ։

*Աշխատությունը նվիրված է կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի հերոսական պայքարին։ Հեղինակը հենվելով հրատարակված աղբյուրների, արխիվային նյութերի, այդ թվում Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալների և մամուլի նյութերի վրա, հիմնական գծերով ներկայացնում է Սովետական Հայաստանի համար կարևոր էտապ հանդիսացող 1946—1950 թվականների պատմությունը։*

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

*Չորրորդ հնգամյակի տարիների տնտեսական պատմությունը զգալի չափով լուսաբանվել է սովետական տնտեսագետներ Յ. Կոշելևի, Ա. Ռումյանցևի, Ա. Ասաբեկյանի, Ա. Վիկենտևի և ուրիշների մի շարք ռուսերեն աշխատություններում։ Սովետական Հայաստանի տնտեսագետները նույնպես որոշ աշխատանք են կատարել այդ ուղղությամբ. նշենք Հ. Թումանյանի «Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկան Հայրենական պատերազմի շրջանում և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում» (1953) հայերեն աշխատությունը*[1]*։ Սակայն, այս բոլորը տնտեսագիտական բնույթի աշխատություններ են, իսկ պատմաբանները, մասնավորապես Սովետական Հայաստանի պատմաբանները, դեռևս չեն հրատարակել ուսումնասիրություններ նվիրված հետպատերազմյան շրջանի պատմության հարցերին, չնայած այդ ուղղությամբ նրանց կողմից ևս որոշ աշխատանք է կատարված*[2]*։*

*Բացի դրանից, Հայկական ՍՍՌ-ին վերաբերվող վերը նշված, ինչպես և Հայրենական Մեծ պատերազմի պատմու-*

---

[1] *Տե՛ս մանրամասն գրքի վերջում օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը։*

[2] *Նշենք Ի. Խաչատրյանի «Սովետական Հայաստանի առաջավոր կոլտնտեսությունները ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման չորրորդ հնգամյակի տարիներին (1946—1950)», հայերեն, և Գ. Ճանշիևի «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պայքարը ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացման համար չորրորդ հնգամյակի տարիներին (1946—1950 թթ.)», ռուսերեն, պաշտպանված, բայց չհրատարակված դիսերտացիոն արժեքավոր աշխատությունները. Հայ ժողովրդի պատմության ձեռնարկի III մասը (1957)։*

թյանը նվիրված այլ աշխատություններում[1] մի շարք կարևոր հարցեր չեն լուսաբանված։ Այսպես, օրինակ, մինչև այժմ չեն պարզաբանված 1941—1945 թթ. ընթացքում պատերազմի պատճառով Հայաստանի ժողովրդական տնտեսությանը հասցված վնասները, որոնք բավականին զգալի են եղել, և նկարագրվել է այնպես, որ Հայաստանի էկոնոմիկան Հայրենական Մեծ պատերազմի տարիներին միայն զարգացել է, քանի որ պատերազմական անմիջական գործողություններից չի տուժել։ Այդ իրականությանը չի համապատասխանում և այդպիսի հարցադրումը հակասում է հետպատերազմյան առաջին հնգամյա պլանի գլխավոր քաղաքական-տնտեսական խնդրին, որը կայանում էր նրանում, որ պետք էր նախ վերականգնել սովետական ռեսպուբլիկաների, այդ թվում և Սովետական Հայաստանի էկոնոմիկայի նախապատերազմյան 1940 թ. մակարդակը և ապա զգալի չափով գերազանցել այն։ Այսպիսով, չորրորդ հնգամյակում Հայաստանի պատմության այս կենտրոնական հարցը սխալ է մեկնաբանված։ Չեն լուսաբանվել նաև այլ կարևոր հարցեր, ինչպես Կոմունիստական պարտիայի կողմից աշխատավորության ուժերի մոբիլիզացումը չորրորդ հնգամյա պլանը ռեսպուբլիկայում կատարելու և գերակատարելու ուղղությամբ, հնգամյակի դժվարությունները, սովետական ժողովուրդների ընտանիքում հայ ժողովրդի մասնակցությունը խաղաղության գործը ամբողջ աշխարհում ամրապնդելու համար առաջացած համաշխարհային շարժման մեջ և այլն։

Ելնելով վերոհիշյալից, ներկա աշխատության նպատակն է՝ հրատարակված աղբյուրների, ժողովածուների, որոշ արխիվային նյութերի՝ հատկապես Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալների և մամուլի նյութերի հիման վրա հիմնական գծերով ներկայացնել Սովետական Հայաստանի համար կարևոր էտապ հանդիսացող 1946—1950 թվականների պատմությունը։

---

[1] Ա. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում (1941 — 1945), 1954, «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության», պրակ III, 1960։

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովետական Միության ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, համախմբված ռուս մեծ ժողովրդի շուրջը, նախքան Հայրենական Մեծ պատերազմը, հիմնականում ավարտեցին սոցիալիզմի կառուցումը մեր երկրում և համառ աշխատանքային պայքար ծավալեցին աստիճանաբար կոմունիզմին անցնելու համար։ Սակայն պատերազմն ընդհատեց խաղաղ կոմունիստական շինարարությունը։ Սովետական ժողովուրդն իր բոլոր ուժերը մոբիլիզացրեց ֆաշիստական ագրեսորների դեմ։ Հաղթականորեն ավարտելով Հայրենական պատերազմը, սովետական ժողովուրդը վերստին ձեռնամուխ եղավ խաղաղ, ստեղծագործ աշխատանքի։

Հայկական ՍՍՌ աշխատավորությունը, Սովետական Միության ընտանիքում, մեծ հաջողությունների է հասել հետպատերազմյան կոմունիստական շինարարության տարիներին։ Այդ հաջողություններն ակնառու կերպով են դրսևորվում, երբ ժողովրդական տնտեսության բնագավառում ձեռք բերած ցուցանիշները համեմատում ենք անցյալում եղած տվյալների, 1913 թ. ցարական Ռուսաստանի հետամնաց նահանգ հանդիսացող Հայաստանի և մանավանդ 1919 թ. դաշնակների տխրահռչակ տիրապետության օրերի հետ։

Այսպես, օրինակ, 1913 թ. Հայաստանում կար 10 էլեկտրակայան՝ 3,1 հազար կիլովատ կարողությամբ, տարեկան միայն 5,1 միլիոն կիլովատ-ժամ արտադրանքով։ Բանվորների ընդհանուր թիվը Հայաստանի բոլոր արդյունաբերական

ձեռնարկություններում հազիվ հասնում էր 6000 մարդու. խոշոր արդյունաբերության ամբողջ արտադրանքի արժեքը 1913 թ. կազմում էր մի խղճուկ գումար՝ 15.7 միլիոն ռուբլի (1926/27 տնտեսական տարվա անփոփոխ գներով), որը կազմում էր երկրի ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի միայն 13,6%: 1913 թ. Հայաստանում փաստորեն ռռոգվող հողային տարածությունը հավասար էր 97 հազար հեկտարի, իսկ ամբողջ ցանքային տարածությունը՝ 345,7 հազար հեկտարի. Հողի մշակումը կատարվում էր հետամնաց ձևերով (գլխավորապես արորով), բերքատվությունը շատ ցածր էր: Օրինակ, մեկ հեկտարից միջին հաշվով ստացվում էր 5,8 ցենտներ հացահատիկ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թ. կազմում էր ընդամենը 65,8 միլիոն ռուբլի, այդ թվում անասնապահության արտադրանքը՝ 20,7 միլ. ռուբլի: Ժողովրդական լուսավորության և առողջապահության գործը ցարիզմի ժամանակ գտնվում էր ողորմելի վիճակում, հայ ժողովրդի կուլտուրան չէր կարողանում ազատ կերպով զարգանալ:

Դաշնակների օրոք տեղի ունեցավ Հայաստանի առանց այդ էլ թույլ զարգացած արտադրողական ուժերի համարյա լրիվ քայքայում: Սովետական իշխանության հաղթանակի նախօրեին Հայաստանում գրեթե ոչ մի արդյունաբերություն գոյություն չուներ: Մնացել էր 7 խղճուկ էլեկտրակայան՝ 1500 կիլովատ ընդհանուր կարողությամբ, տարեկան 1700 հազար կիլովատ-ժամ արտադրանքով, այսինքն՝ երեք անգամ քիչ, քան նույնիսկ 1913 թ.: Արդյունաբերության ամբողջ արտադրանքը 1919 թ. համարյա 30 անգամ ցածր էր 1913 թ. մակարդակից (կազմում էր 1700 հազար ռուբլի 1926/27 տնտեսական տարվա անփոփոխ գներով): Ոռոգելի ցանքը հիմնականում ավերված էր: Ցանքսերի տարածությունը, 1913 թ. համեմատությամբ, կրճատվել էր 4 անգամ (նվազել՝ մինչև 82,7 հազար հեկտարի), խաղողի այգիների մոտ կեսը և պտղատու այգիների 2/3-ը չորացել էին. գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը կազմում էր 1913 թ. ա-

ռանց այն էլ ցածր մակարդակի միայն կեսը։ Ձիերի, խոշոր ու մանր եղջերավոր անասունների, խոզերի գլխաքանակը կրճատվել էր 2/3-ով։ Գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը կրճատվել էր 6 անգամ, այդ թվում անասնապահության արտադրանքը՝ 6,5 անգամ։

Ավելի ևս վատթար վիճակում էր ժողովրդական լուսավորության և առողջապահության գործը։ 1920 թ. Հայաստանում կար միայն 7 դեղատուն 18 դեղագործներով, միայն 45 բժիշկ և 107 բուժակ. Երևանում կար 4 փոքրիկ հիվանդանոց՝ ընդամենը 75 մահճակալով, չկար կոյուղի։ 1919 թ. միայն 32 բնակելի վայր ուներ ջրմուղ, որի երկարությունը ընդամենը 65 կմ էր։ Դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովրդի դրությունը առանձնապես ծանրացավ։ Դաշնակցական կառավարության ավանտյուրիստական արտաքին ու ներքին քաղաքականության և թուրքական արշավանքների հետևանքով Հայաստանում (1914 թ. սահմաններում) սպանվել, սովից ու համաճարակից մահացել են 480 հազար մարդ՝ բնակչության 1/3-ից ավելին։ Ահա այսպիսի ժառանգություն ստացավ Հայաստանում Սովետական իշխանությունը ցարիզմից ու դաշնակներից։

Սակայն Սովետական կարգերի կենսունակ ուժը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման հաղթանակի հիման վրա Հայաստանը դարձրեց սովետական ռեսպուբլիկաների եղբայրական ընտանիքում առաջավոր ինդուստրիայով հագեցած արդյունաբերության և կոլեկտիվ, մեքենայացված գյուղատնտեսության սոցիալիստական ռեսպուբլիկա, որը հարաճուն կերպով զարգացնում է իր ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական, բնույթով ինտերնացիոնալ կուլտուրան։ Բավական է նշել, որ Սովետական իշխանության տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմել են ռեսպուբլիկայի համար մի հսկայական գումար՝ մոտ 15 միլիարդ ռուբլի (1955 թ. հուլիսի 1-ի գներով)։ Հայաստանում կառուցվել են մոտ 120 էլեկտրակայան, 110 ոռոգելի ջրանցք և

հարյուրավոր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։
Ռեսպուբլիկայի էներգետիկայի կարողությունը, 1913 թ. հա-
մեմատությամբ, աճել է 150, իսկ էլեկտրաէներգիայի արտա-
դրությունը՝ 500 անգամ. այժմ մեզ մոտ մեկ օրում 1,5 ան-
գամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրվում, քան ամբողջ
1913 թվականի ընթացքում, իսկ տարեկան արտադրանքը
ավելի շատ է, քան ողջ ցարական Ռուսաստանում 1913 թ., և
մենք բնակչության 1 շնչին ընկնող էլեկտրաէներգիայի չա-
փով անցել ենք այնպիսի կապիտալիստական երկրներից,
ինչպես Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և ուրիշները։ Մեր
արդյունաբերությունը 1959 թ. թողարկել է 61 անգամ ավելի
արտադրանք, քան 1913 թ., չխոսելով այլևս 1919 թ. մա-
կարդակի մասին։ Արդյունաբերական արտադրանքը կազմում
է մեր ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի
մոտ $^3/_4$-ը. արդյունաբերական-արտադրական հիմնական մի-
ջոցները կազմում են 4 միլիարդ ռուբլի։ Գյուղատնտեսության
գծով, ցանքատարածությունը, 1913 թ. համեմատությամբ
ավելացել է 30%, այդ թվում ոռոգելի հողերի տարածությու-
նը՝ 2,2 անգամ և կազմում է 213, 5 հեկտար, իսկ բերքա-
տվությունը, միջին հաշվով, կրկնապատկվել է։ 1956 թ. ռես-
պուբլիկայի կոլտնտեսությունների 94% արդեն էլեկտրիֆի-
կացված էր. 1960 թ. կավարտվի կոլտնտեսությունների և
սովխոզների լրիվ էլեկտրիֆիկացումը։ Ռեսպուբլիկայի գյու-
ղատնտեսության համախառն արտադրանքը այժմ կազմում
է մոտ 3 միլիարդ ռուբլի (1951 թ. համեմատական գներով)
և 3,5 անգամ գերազանցում է նախառևոլյուցիոն՝ 1913 թ.
մակարդակը։

Հայաստանը բոլորովին անճանաչելի է դարձել։ Նրա բը-
նակչությունը կազմում է մոտ 1,8 միլիոն մարդ, 1913 թ.
համեմատությամբ ավելանալով 750 հազարով, իսկ 1920 թ.
համեմատությամբ՝ 2,4 անգամ։ Մայրաքաղաք Երևանը խո-
շոր ինդուստրիալ կենտրոն է, 500 հազարից ավելի բնակչու-
թյամբ, մի թիվ, որը 15 անգամ գերազանցում է նախասովե-
տական Երևանի բնակչության թիվը։ Հայաստանում աճել են

նոր արդյունաբերական քաղաքներ, բարեկարգվում են գյուղերը և ավանները, ռեսպուբլիկայում կա 12 քաղաք և 23 քաղաքատիպ ավան, որտեղ ապրում է բնակչության 50 տոկոսը։ Հայաստանի սոցիալիստական զարգացման տեմպերի համար բնորոշ է այն, որ եթե 1913 թ. նրա ժողովրդական տնտեսության մեջ կար միայն 6 հազար բանվոր, որից մոտ 5 հազարը՝ խոշոր արդյունաբերության մեջ, ապա Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականությունը կյանքում կիրառելու շնորհիվ, այժմ ռեսպուբլիկայում բանվոր դասակարգը կազմում է մոտ 150 հազար (այդ թվում շինարարական բանվորները՝ 40 հազար)։ Բանվոր դասակարգի այդ ընդհանուր աճը (25 անգամ), երբ ռեսպուբլիկայի բնակչությունը, համեմատաբար, աճել է 1,8 անգամ՝ Սովետական Հայաստանի արագ ինդուստրացման ցուցանիշներից մեկն է։

Ռեսպուբլիկայում բարձր զարգացման են հասել գիտությունն ու կուլտուրան. Հայաստանը համատարած գրագիտության երկիր է, որտեղ 17 հազար պատանիներ և աղջիկներ միջին տեխնիկական կրթություն են ստանում 37 տեխնիկումներում, ավելի քան 20 հազար ուսանողներ բարձրագույն կրթություն են ստանում 11 բուհերում։ Բնորոշ է, որ Հայկական ՍՍՌ-ում բնակչության 10 հազար մարդուն 7 անգամ ավելի ուսանող է ընկնում, քան Ֆրանսիայում, 13 անգամ ավելի՝ քան Անգլիայում և 16՝ քան հարևան կապիտալիստական Թուրքիայում։ Այժմ մենք ունենք մոտ 1200 դպրոց, 1914/15 ուսումնական տարվա 459 դպրոցի փոխարեն, ընդորում աշակերտների թիվը աճել է 8 անգամ։ Բացի դրանից, ռեսպուբլիկայում գործում է 65 գիտահետազոտական հիմնարկ, Գիտությունների ակադեմիայի գլխավորությամբ, որը ընդգրկում է 25 գիտահետազոտական ինստիտուտ և ինքնուրույն սեկտոր, այն ժամանակ, երբ Հայաստանում մինչև Սովետական իշխանության հաղթանակը չկար և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն և գիտահետազոտական հիմնարկ։

Լայն զարգացում են ստացել դրականությունը, արվեստը,

առողջապահության գործը, բարձրացել է աշխատավորության կուլտուրական մակարդակը և նյութական բարեկեցությունը։ Այս բոլորը իր վառ արտահայտություններից մեկը գտնում է Հայաստանի պետական բյուջեի անընդհատ աճի մեջ։ 1957 թ. ռեսպուբլիկայում ժողովրդական Տնտեսության խորհուրդ կազմակերպելուն և նրան մի ամբողջ շարք միութենական ենթակայության ձեռնարկություններ հանձնելուն զուգընթաց մեր պետական բյուջեն՝ եկամուտների և ծախսերի գծով, պլանով նախատեսված 1,649 միլիարդ ռուբլու դիմաց կազմեց 2, 217 միլիարդ ռուբլի, իսկ 1959 թ. բյուջեն արդեն հավասար էր 2,822 միլիարդ ռուբլու։ Համեմատության կարգով նշենք, որ Սովետական Հայաստանի այդ մեկ տարվա՝ 1957 թ. բյուջեն հավասար էր նրա ողջ նախապատերազմյան 20 տարիների բյուջեի գումարի 80% ավելիին, 1940 թ.- բյուջեից ավելի էր մոտ 4,5 անգամ, 1946 թ. բյուջեից՝ 2,5 և 1950 թ.՝ մոտ 2 անգամ։ Ռեսպուբլիկան պատած է ռադիոյի, հեռուստատեսության, կինոյի, թատրոնների, ակումբների, կուլտուրայի տների, թանգարանների, գրադարանների, հիվանդանոցների, սանատորիաների, հանգստյան տների ցանցով։ Այսպես, օրինակ, 1913 թ. համեմատությամբ, հիվանդանոցային մահճակալների թիվը ավելացել է 51 անգամ, բուժ-հիմնարկների թիվը՝ 40 անգամ, ռեսպուբլիկայում աշխատում է ավելի քան 4000 բժիշկ՝ այսինքն մեզ մոտ բնակչության 450 մարդուն ընկնում է 1 բժիշկ։ Հայկական ՍՍՌ պետական բյուջեի 60 տոկոսից ավելին հատկացվում է ժողովրդի սոցիալ-կուլտուրական կարիքների համար։ Եթե 1913 թ. Հայաստանում հրատարակվում էին 6 թերթ և 2 ամսագիր չնչին տիրաժով, ապա ներկայումս հրատարակվում են 51 ռեսպուբլիկական, քաղաքային և շրջանային թերթեր և 38 ամսագիր մեծ տիրաժներով։ Հայաստանում Սովետական իշխանությունը հրատարակել է մոտ 20 հազար անուն գիրք, ավելի քան 100 միլիոն օրինակ տիրաժով, այժմ ամեն տարի հրատարակվում է 7—8 միլիոն ընդհանուր տիրաժով գիրք։

Մեր ժողովրդական տնտեսությունն ու կուլտուրան ապ-

րում են աննախընթաց վերելք առանձնապես հետպատերազմյան ժամանակաշրջանում։ Ընդհանուր առմամբ վերցված, միայն ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքը հետպատերազմյան ժամանակաշրջանում, 1940 թ. համեմատությամբ ավելացել է 5 անգամ, իսկ 1959—1965 թթ. 7-ամյա պլանով Հայաստանը կտա 12 անգամ ավելի շատ արդյունաբերական արտադրանք, քան նախապատերազմյան 1940 թ.։ Մեր կյանքում դեռևս կան դժվարություններ, սակայն դրանք անընդհատ զարգացման, բուռն աճի հետ կապված դժվարություններ են, որոնք հաջող կերպով հաղթահարվում են Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարությամբ։ Պարտիան կյանքում անշեղորեն կիրառում է կոմունիզմի կառուցման իր գիտականորեն հիմնավորված ծրագիրը։ Այս մեծ գործում չորրորդ հնգամյակի տարիները (1946—1950 թթ.) խոշոր քայլ հանդիսացան դեպի կոմունիզմն ընթացող սովետական ժողովրդի համար՝ պատերազմի ծանր վերքերը բուժելու և ժողովրդական տնտեսության հետագա զարգացման գործում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՆՑՈՒՄԸ ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

*Սովետական ժողովրդի անզուգական սխրագործությունը 1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում փրկեց մեր Հայրենիքը հիտլերյան բարբարոսական արշավանքից, սովետական ժողովրդին կեղեքելու, նրա պետականությունը ոչնչացնելու և կապիտալիզմի ռեստավրացիայի վտանգից, պաշտպանեց և պահպանեց սոցիալիզմի նվաճումները, մեր ազատությունն ու անկախությունը։ Սովետական ժողովուրդը ջախջախելով ֆաշիզմի և իմպերիալիստական ագրեսիայի երկու գլխավոր օջախները՝ հիտլերյան Գերմանիան և միլիտարիստական Ճապոնիան, ազատագրեց Եվրոպայի և Ասիայի ժողովուրդներին ֆաշիստական ստրկացումից և փրկեց քաղաքակրթությունը։*

*Մարքսիզմ-լենինիզմի թեորիան ուսուցանում է, որ պատերազմը ժողովուրդների և պետությունների բոլոր նյութական և հոգեկան ուժերի բազմակողմանի ստուգումն է։ Պատերազմի ծանր փորձությանը կարող է դիմանալ միայն այն պետությունը, որը ավելի ուժեղ է իր հասարակական և պետական կարգով, տնտեսության զարգացման և կազմակերպվածության աստիճանով, զինված ուժերով կռվելու վարպետությամբ և մարտական ոգով, ժողովրդի դիմացկունությամբ և միասնությամբ՝ պատերազմի ամբողջ ընթացքում։ Կոմու-*

նիստական պարտիայի և Սովետական պետության առաջնորդ ու հիմնադիր Վ. Ի. Լենինը նշել է. «Պատերազմն ամեն մի ազգի բոլոր տնտեսական և կազմակերպական ուժերի ստուգումն է»[1]։

Հերոսական սովետական ժողովուրդը Հայրենական պատերազմում ցույց տվեց իր բոլոր լավագույն հատկությունները։ Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմն ավարտվեց սովետական ժողովրդի լիակատար հաղթանակով։ Այդ համաշխարհային պատմական հաղթանակը ձեռք բերվեց անչափ մեծ դժվարություններով, զրկանքներով և զոհաբերություններով, սովետական ժողովրդի բոլոր ուժերի և միջոցների մեծագույն լարվածությամբ։ Վ. Ի. Լենինը ասում էր. «...քանի որ գործը հասել է պատերազմին, ապա ամեն ինչ պետք է ենթարկել պատերազմի շահերին, երկրի ամբողջ ներքին կյանքը պետք է ենթարկել պատերազմին, այդ առթիվ փոքրագույն տատանումն անգամ անթույլատրելի է»[2]։

Պատերազմի առաջին շրջանում, երբ ժամանակավոր ռազմական առավելության շնորհիվ Սովետական Միության տերիտորիայի զգալի մասը օկուպացվեց թշնամու կողմից, ստեղծվեց մահացու վտանգ մեր Հայրենիքի համար։ Սովետական մարդիկ հասկացան մեր երկրին սպառնացող վտանգի ամբողջ խորությունը։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սովետական ժողովուրդը ահեղ կռվի մեջ մտավ ֆաշիզմի դեմ և հաղթականորեն ավարտեց պատերազմը։

Ֆաշիստական զավթիչների կողմից Սովետական երկրի մի շարք կարևորագույն տնտեսական շրջանների ժամանակավոր օկուպացիան մեծ կորուստներ պատճառեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությանը։ Օկուպացված շրջաններում մինչ պատերազմը ապրում էր 88 միլիոն մարդ, այսինքն՝ երկրի ազգաբնակչության 40% ավելին։ Այդ շրջանները Սովետական Միության ոչ միայն առավել խիտ բնակեցված, այլև տնտե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր. հատ. 30, էջ 178։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ 31, էջ 150։

սապես ամենազարգացած շրջաններից էին և մինչև պատերազմը տալիս էին ամբողջ արդյունաբերության արտադրանքի մեկ երրորդը և գյուղատնտեսական արտադրանքի կեսը։ Ֆաշիստական ճիվաղները նահանջելով Սովետական Բանակի հուժկու հարվածների տակ, ատելությամբ լցված դեպի սոցիալիզմը, իրականացնում էին սովետական շրջանները «անապատային գոտու» վերածելու, նյութական և կուլտուրական արժեքների ոչնչացման և ժողովրդի բնաջնջման մարդատյաց ծրագիրը։

Պատերազմի ընթացքում, լրիվ կամ մասնակի չափով, ավերվել և հրկիզվել էին 1710 քաղաք և ավելի քան 70 հազար գյուղ, որի շնորհիվ անօթևան էին մնացել 25 միլիոն մարդ։ Սոցիալիստական արդյունաբերությունը կրեց մեծ վնասներ։ Օկուպանտները ոչնչացրին կամ վնասեցին 31850 գործարան և այլ արդյունաբերական ձեռնարկներ, չհաշված մանր ձեռնարկությունները և արհեստանոցները։ Ավերված էին ածխահանքեր, որոնք 1940 թ. տալիս էին ամբողջ երկրում ստացվող ածխի մոտ 60%, 5 միլիոն կիլովատ կարողությամբ էլեկտրակայաններ, մետալուրգիական գործարաններ, որտեղ ձուլվում էր երկրում ստացվող պողպատի ավելի քան 70% և այլն։

Գյուղատնտեսությունը նույնպես մեծ չափով տուժեց։ Կողոպտված էին և ավերված 1876 սովխոզ, 2890 մեքենատրակտորային կայան, 98 հազար կոլտնտեսություն։ Թշնամին ոչնչացրել կամ հափշտակել էր 7 միլիոն ձի, 17 միլիոն գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 20 միլիոն խոզ, 27 միլիոն ոչխար և այծ, նա քայքայել էր օկուպացված շրջաններում գյուղատնտեսության ամբողջ նյութա-տեխնիկական բազան (137 հազար տրակտոր, 49 հազար կոմբայն, մոտ 4 միլիոն գյուղատնտեսական այլ մեքենաներ ու գործիքներ և այլն)։

Քայքայված էին տրանսպորտն ու կապը։ Օկուպանտները ոչնչացրել էին կամ վնասել 65 հազար կիլոմետր երկարությամբ երկաթգիծ։ Ֆաշիստական ջարդարարները ավերել էին

A II/4070

*տասնյակ հազարավոր հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, դպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլ գիտական ու կուլտուրական հիմնարկներ։*

*Սովետական պետությանը և ժողովրդին հասցված միայն ուղղակի վնասը գույքի կորստից, թալանի և ավերումների հետևանքով, չհաշված ազգային եկամտի և ռազմական ծախսերի կորուստները պատերազմի տարիներին, 1940 թ. մինչպատերազմյան պետական գներով կազմեց 679 միլիարդ ռուբլի[1]։ Այս գումարի մեջ չեն մտցված այնպիսի կորուստներ, ինչպես ազգային եկամուտի նվազումը պատերազմի տարիներին, ֆաշիստական օկուպացիոն զորքերի կողմից բռնագրավված պարենային ապրանքների արժեքը և այլն։ Սովետական պետության ընդհանուր ծախսերը պատերազմի վրա և ժողովրդական տնտեսության եկամուտների կորուստները օկուպացիայի հետևանքով կազմեցին 1890 միլիարդ ռուբլի։ Այսպիսով Սովետական Միությանը պատճառած վնասները հավասար էին 2 տրիլիոն 569 միլիարդ ռուբլու[2]։*

*Պատերազմը սովետական ժողովրդին պատճառեց մարդկային հսկայական կորուստներ։ Թշնամու ներխուժման հետևանքով Սովետական Միությունը մարտերում, ինչպես նաև թշնամու կողմից օկուպացիայի ու սովետական մարդկանց արևմուտք քշելու հետևանքով կորցրեց մոտ 7 միլիոն մարդ։ Այդ պատերազմը ամենադաժան ու ծանր պատերազմն էր մեր Հայրենիքի անցյալում երբևիցե տեղի ունեցած բոլոր պատերազմներից։ Սակայն Սովետական Միությունը դիմացավ դաժան փորձությանը և պատերազմից դուրս եկավ էլ ավելի ամրացած, ապացուցելով, որպես պետության նոր, բարձրագույն ձև, իր գերազանցությունը կապիտալիստական պետությունների հանդեպ։*

---

*[1] Բոլոր թվական տվյալները տե՛ս «Գերմանա-ֆաշիստական զավթիչների չարագործությունները պարզող ու հետազոտող Պետական Արտակարգ Հանձնաժողովի հաղորդագրությունը», «Պրավդա», 13 սեպտեմբերի 1945․*

*[2] Սովետական իշխանության նվաճումները 40 տարում թվերով։ Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն, էջ 33։*

***

Հայ ժողովուրդը Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմում ներդրեց արիություն և հերոսական աշխատանքի իր բաժինը թշնամուն ջախջախելու և հաղթանակը ապահովելու ընդհանուր գործում։ Հայ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իր ավագ եղբայր ռուս ժողովրդի առաջնորդությամբ, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ մեկտեղ պաշտպանեց իր պատիվը, ազատությունը, ազգային անկախությունը ու իր լուման մուծեց ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների պաշտպանության գործում։ Դա հենց հայ ժողովրդի ազգային հպարտությունն է։ Հայրենիքի զոհասեղանին թափված արյունը էլ ավելի ամրապնդեց հայ ժողովրդի մեծ բարեկամությունը ռուս ժողովրդի և Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ։

Հայկական ՍՍՌ, ինչպես և ամբողջ Սովետական Միության աշխատավորները իսկույն ևեթ վերակառուցեցին իրենց աշխատանքը՝ ամեն ինչ ենթարկելով ռազմաճակատի կարիքներին, թշնամու ջախջախումը կազմակերպելու խնդրին։ Հայ ժողովուրդը ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ միասին, ոտքի կանգնեց պաշտպանելու իր իրավունքները, իր հողը և իր սոցիալիստական նվաճումները։ Նա բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս Սովետական Բանակին, համալրում էր նրա շարքերը, մատակարարում էր անհրաժեշտ պարենով ու ռազմամթերքով, լայն օգնություն էր ցույց տալիս վիրավոր ճակատայիններին։ Հայ ժողովրդի տասնյակ հազարավոր զավակներ մեկնեցին ռազմաճակատ՝ զենքը ձեռքներին պաշտպանելու իրենց հայրենիքը։ Հազարավոր հայուհիներ կամավոր կերպով գնացին բանակ որպես բժշկական քույրեր։ Թիկունքում մնացածները մտան ժողովրդական աշխարհազորի մեջ և սկսեցին ուսումնասիրել ռազմական գործը։ Սովետական Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները, ծառայողները՝ թե տղամարդիկ, և թե կանայք, ոգևորված սովետական հայրենասիրությամբ անձնազոհ կերպով աշխատում էին կրկնա-

պատկված եռանդով, որպեսզի ապահովեն ռազմաճակատի կարիքները։

Ռեսպուբլիկայում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի մեջ լայն ծավալ ստացավ սոցիալիստական մրցությունը, որը ծնեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոսներ։ Արդյունաբերական ձեռնարկությունները ռազմաճակատի կարիքների համար յուրացրին ավելի քան 270 նոր տեսակի արտադրանք։ Մեծ դեր կատարեցին քիմիական գործարանները, տեքստիլ և սննդի արդյունաբերական ձեռնարկությունները, պղնձի արդյունաբերությունը, որոնք իրենց արտադրանքով բավարարում էին ռազմաճակատի և ՍՍՌՄ պաշտպանության արդյունաբերության պահանջները։ Այսպես, օրինակ, Հայաստանում արտադրվող կարբիդը գնում էր ավիացիոն, տանկային, հրետանային, նավաշինարարական գործարանների կարիքների համար, Լենինականի տեքստիլ կոմբինատը պատերազմի տարիներին Սովետական Բանակի համար արտադրեց 62 միլիոն մետրից ավելի կտավ, բանակի մարտիկների համար կարվել է 4,8 միլիոն ձեռք հանդերձանք, ռազմաճակատ են ուղարկվել մի քանի տասնյակ միլիոն տուփ պահածո, մեծ քանակությամբ միս, գինի, կոնյակ, ծխախոտ և այլն։ Սովետական մարդկանց աշխատանքային հերոսությունը, արտադրական հաղթանակները ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ամրապնդում էին Սովետական Բանակի հաղթանակները Հայրենական պատերազմի ռազմաճակատներում։

Հայ ժողովուրդը լարված կերպով հետևում էր իր զավակների հերոսական գործերին Հայրենական Մեծ պատերազմի ճակատներում, իր հայրական խոսքով ոգևորում էր նրանց նորանոր սխրագործությունների։ 1943 թ. փետրվարին հայ ժողովուրդը դիմեց հայ մարտիկներին պատմական նամակով, որը ստորագրված էր Հայկական ՍՍՌ 316.335 աշխատավորների կողմից։

«Մենք մեծագույն խանդավառությամբ հետևում ենք ձեր պայքարին,— ասվում էր այդ նամակում,— եղեք ձեր ժողո-

վերջին արժանի, մեր զավակներ... բազմապատկեք ձեր զենքի ուժը, էլ ավելի կոփեցեք ձեր սրտերը: Կանգ մի առեք ոչ մի դժվարության առաջ, քարուքանդ արեք ֆաշիստական ամրությունները, ոչնչացրեք նրանց տեխնիկան ու կենդանի ուժը: Անընդհատ շարժվեք դեպի արևմուտք... Մեր ավագ եղբայր ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ մարտնչեցեք թշնամու դեմ մեր եղբայրական ժողովուրդների զավակների հետ կողք-կողքի, ձեռք-ձեռքի տված: Ամրապնդեցեք ռազմաճակատներում անխախտ բարեկամությունն ու եղբայրությունը... Մենք կոչ ենք անում ձեզ ձեր սխրագործություններով ու հերոսություններով բազմապատկեցեք սովետական հզոր զենքի փառքը: Եղեք մեծ Կարմիր Բանակի արժանի մարտիկներ: Բարձր պահեք հայ ժողովրդի մարտական տրադիցիաները... Ճզմեք և ետ մղեք թշնամուն դեպի արևմուտք: Արևմուտք շարժվելով միայն դուք կարագացնեք ձեր հաղթական վերադարձը դեպի հայրենի տուն, Մայր Հայաստան... Վստահ եղեք, մեր հարազատներ, որ մենք ձեզ հետ ենք հոգով ու սրտով, մեր աշխատանքով: Հանգիստ եղեք մեզ համար, ձեր ընտանիքների համար: Նրանք շրջապատված են Պարտիայի և Կառավարության ամենօրյա հոգատարությամբ»[1]:

Հայրենական պատերազմի բոլոր ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակները, չխնայելով իրենց կյանքը, հերոսաբար պաշտպանում էին սովետական հողը: Հայրենական Մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ մտան հազարավոր հայ մարտիկների անունները, որոնք իրենց կյանքը զոհեցին Հայրենիքի պաշտպանության համար:

Հայ ժողովուրդը անմահ է պահում Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի՝ Հայկական Մատրոսովի անունը, որը իր մարմնով ծածկեց թշնամու ԴԶՕՏ-ի հրակնատը «Դոլգայա» լեռան գագաթի վրա՝ Նովոռոսիյսկ քաղաքի ազատագրման համար մղվող կատաղի մարտում:

---

[1] Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, Երևան, 1943, էջ 6—34:

Հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին հպարտանում է Սովետական Միության կրկնակի Հերոս Նելսոն Ստեփանյանի փառքով, որը 108 կրկնակի Հերոսների թվում, ամբողջ աշխարհով մեկ անմահացրեց իր անունը որպես սովետական անվեհեր օդաչու — «աս», որպես առասպելական «օդի թագավորներից» մեկը։

Սովետական բանակի շարքերում որպես հաղթողներ և ազատարարներ, Վարշավա, Պրագա, Բուխարեստ, Բուդապեշտ, Սոֆիա, Բելգրադ, Վիեննա և ուրիշ շատ քաղաքներ մտան նաև հայ մարտիկները։ Նրանցից շատերը իրենց կյանքը նվիրաբերեցին վերջնական հաղթանակին հասնելու և այդ ժողովուրդներին ֆաշիստական լծից ազատագրելու համար։ Սովետական Միության Հերոսի կոչում ստացան՝ գվարդիայի սերժանտ Հմայակ Անոպլյանը Նեման գետի մոտ, լեյտենանտ Ռուբեն Բաղիրյանը՝ Սանդոմիրյան պլացդարմում, Թադևոս Եղիազարյանը՝ Տիսսա գետի մոտ, Գեղամ Փիլոսյանը՝ Վիեննայի մոտ, Դանուբի վրա ցույց տված իր հերոսության համար. Գվարդիայի լեյտենանտ Արամ Սաֆարյանին, որն իր կյանքը զոհաբերեց Հարավսլավիայի ազատագրման համար, նույնպես հետմահու շնորհվեց Սովետական Միության Հերոսի բարձր կոչում։ Դեպի Բեռլին տանող ճանապարհների վրա մղվող կատաղի մարտերում աչքի ընկավ հայկական 89-րդ Թամանյան դիվիզիան՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ։ Շնորհակալություն ստացան Բեռլինում կռվող հայ գեներալներ՝ Ս. Կարապետյանը, Հ. Բաբաջանյանը, Ի. Գասպարյանը, իսկ Ս. Մարտիրոսյանը արժանացավ Սովետական Միության Հերոսի բարձր կոչման։

Խոսելով Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության մասին, անհրաժեշտ է նշել, որ հայ մարտիկները անձնվեր կերպով պայքարեցին ժողովրդական վրիժառուների՝ պարտիզանական շարժման մեջ, որը ծավալվել էր Սովետական Միության ժամանակավորապես օկուպացված տերիտորիայի վրա։ Գեներալ-մայոր Նաումովը այսպես է բնութագրել իր հայ պարտիզաններին. «Միկոյանի անվան ջո-

կատը փառավոր է ոչ միայն նրա համար, որ նա ուժգին հարվածներ է հասցնում գերմանացիներին, այլև նրա համար, որ նա մեր Սովետական Հայրենիքի համար մարտնչող միակ ազգային պարտիզանական ջոկատն է Ուկրաինայում»[1]։ Իսկ Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Վերշիգորան եղբայրական ուկրաինական ժողովրդի ազատագրման համար իրենց կյանքը զոհաբերած հայ պարտիզանների մասին գրել է. «Թող նրանց հանգրվանը լինի ուկրաինական հողը։ Նրա ընդերքում ընկան նրանք ընդհանուր գործի համար մղվող մարտերում»[2]։

Այսպիսով, հայ ժողովրդի բազմաթիվ որդիներն ու դուստրերը պսակեցին իրենց հերոսական փառքով։ Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ գրավեց իր արժանավոր տեղը Սովետական Միության ժողովուրդների ընդհանուր ընտանիքում։ Հայ ժողովուրդը Սովետական Բանակին տվեց 50-ից ավելի գեներալ՝ Սովետական Միության Մարշալ Բաղրամյանի, ծովակալ Իսակովի և ավիացիայի մարշալ Խուդյակովի (Խանֆերյանի) գլխավորությամբ, ավելի քան հարյուր Սովետական Միության հերոս։ 66.802 հայ մարտիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով և մեդալներով։ Հայ ժողովուրդը Հայրենական պատերազմի ռազմաճակատներ ուղարկեց հայկական ազգային դիվիզիաներ, որոնք Հայրենիքի առաջ պատվով կատարեցին իրենց պարտքը։ Հայաստանում թիկունքի աշխատողներից 16800 հոգի պարգևատրվել են «Կովկասի պաշտպանության համար» և 365338 հոգի «Աշխատանքային արիության համար 1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում» մեդալներով։

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ սփյուռքի հայ աշխատավորները ակտիվ կերպով պայքարում էին ֆաշիզմի դեմ, հանդես էին գալիս որպես Հայկական ՍՍՌ, ամբողջ Սո-

---

1 ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 10, գ. 298, թ. 1։

2 Նույն տեղում, գ. 358, թ. 1։

վետական Միության պաշտպաններ։ 1941 թ. օգոստոսի 17-ի կոչում՝ ուղղված հայ ժողովրդի կողմից իր արտասահմանի եղբայրներին ու քույրերին, ասված է. «Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հետ միասին արյունարբու ֆաշիզմի դեմ ահավոր ուժով բարձրացավ նաև հայ ժողովուրդը։ Մեր ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում առաջին անգամ չէ, որ դուրս է եկել օտարերկրյա ասպատակողների ու հափշտակիչների դեմ, բայց նա երբևիցե չի եղել այնքան միասնական ու միաձույլ, ինչպես հիմա... Հարազատ եղբայրներ և քույրեր։ Մենք լավ գիտենք, որ յուրաքանչյուր հայ, երկրագնդի որ մասում էլ նա գտնվելիս լինի, սիրում է իր իսկական մայր հայրենիքը,—ազատագրված Սովետական Հայաստանը։ Ամեն մի հայ երազում և ձգտում է վերադառնալ իր հայրենի օջախը... Մենք դիմում ենք ձեզ և կոչ ենք անում ձեզ համախմբել ձեր բոլոր ուժերը՝ հանուն Սովետական Միության պաշտպանության, հանուն մարդկության խարդախ ու վտանգավոր թշնամու — ֆաշիզմի ոչնչացման»[1]։

Արտասահմանի հայ աշխատավորները գիտակցեցին, որ Սովետական Միությունը մղում է ազատագրական-արդարացի պատերազմ, հաղթանակը պետք է պահպաներ և պահպանեց նրանց Մայր Հայրենիքը, Հայաստանի ազատությունը, անկախությունը, ապահովեր Հայաստանի սքանչելի ապագան մյուս Սովետական ռեսպուբլիկաների հետ միասին։ Նրանք համոզվեցին նաև որ Սովետական Միությունը պայքարում է ամբողջ աշխարհի ժողովուրդների ազատության համար։ Արտասահմանի հայերը հավաքեցին խոշոր դրամական գումարներ՝ Սովետական Բանակին «Սասունցի Դավիթ» և «Բաղրամյանի անվան» տանկային շարասյան նվիրաբերելու համար։ ՍՍՌՄ ռազմական դաշնակիցներ՝ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, իսկ պատերազմի վերջին շրջանում նաև Բուլղարիայի ու Ռումինիայի բանակներում ներգրավվեցին տասնյակ հազարավոր արտա-

[1] «Սովետական Հայաստան», 17 օգոստոսի 1941։

սահմանի աշխատավոր հայեր և քաջաբար մարտնչեցին թշնամու դեմ։ Նրանք համարձակ մասնակցություն են ունեցել ընդհատակյա «դիմադրության շարժման» մեջ և պարտիզանական հերոսական պայքարում՝ Ֆրանսիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Հարավսլավիայում, Ռումինիայում և այլ երկրներում։ Ֆրանսիական ժողովուրդը փառաբանեց Փարիզի պարտիզանական ջոկատների հրամանատար Միսակ Մանուշյանի անունը որպես իր ազգային հերոսի։ Ֆաշիստները գնդակահարեցին Մանուշյանին և նրա 22 ընկերներին։ Բուլղարական պարտիզանների շարքերում հերոսաբար մարտնչեց և զոհվեց անվախ պարտիզանուհի Հերմինե Ռաղիբատլյանը, որը գործում էր «Մաշկա» ծածկանվան տակ։ Հունաստանում փառաբանվեց անվեհեր պարտիզան Անդրանիկ Ղուկասյանը։

Հայրենական Մեծ պատերազմի և երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտումը զուգադիպեց Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի 25-ամյակին, որը տոնվեց ցնծությամբ։ ՍՍՌՄ կառավարությունը և Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն՝ Հայկական ՍՍՌ-ի 25-ամյակի առթիվ իրենց ողջույնի մեջ տվեցին փայլուն գնահատական հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական Մեծ պատերազմին։ Ողջույնի մեջ նշված է՝ «Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր Հայրենիքի ազատությունը և անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար։ ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետը և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն հաստատ համոզմունք են հայտնում, որ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի աշխատավորները այսուհետև ևս կպայքարեն Հայաստանի տնտեսության ու կուլ-

տուրայի զարգացման նորանոր հաջողությունների համար, Սովետական պետության հզորության հետագա ամրապնդման համար» [1]։

***

Երկրորդ համաշխարհային պատերազմը ավարտվելուց հետո, սովետական ժողովուրդն իր առջև նպատակ դրեց՝ վերսկսել երկարատև ու ծանր պատերազմի պատճառով ընդհատված խաղաղ շինարարությունը, վերականգնել պատերազմի հսկայական ավերումները, լիկվիդացնել այն վնասը, որը պատճառել էին ֆաշիստական օկուպանտները, շարունակել կոմունիստական շինարարությունը մեր երկրում, նախապատրաստելով անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ։ Սովետական ժողովուրդը, լուծելով կոմունիստական շինարարության պատմական խնդիրները, ելնում էր և ելնում է երկու սիստեմների՝ սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների երկարատև, համատեղ գոյակցության փաստից։ Սովետական ժողովուրդը ձգտում է գնալ երկու սիստեմների խաղաղ գոյակցության ուղիով, համագործակցության ցանկության առկայության դեպքում և փոխադարձության ու իրենց վրա վերցրած պարտավորությունների կատարման սկզբունքին հետևելու պայմանով։ Սովետական ժողովուրդը, հետևողականորեն և հաստատակամ պաշտպանելով այդ սկզբունքը, պայքարել և պայքարում է հանուն խաղաղ աշխատանքի, ընդդեմ նոր պատերազմի՝ կանխելու համար այն։

Հաղթելով Հայրենական Մեծ պատերազմում, Սովետական Միությունը էլ ավելի հզորացավ, նրա միջազգային հեղինակությունը և դերը անհամեմատ աճեցին։ ՍՍՌՄ-ի շուրջը միավորվեցին ամբողջ աշխարհի դեմոկրատական, պրոգրեսիվ ուժերը։ Ֆաշիզմի ջախջախումից հետո ստեղծված ժողովրդա-դեմոկրատական երկրները՝ Լեհաստանը, Չեխոսլովակիան,

[1] «Պրավդա», 25 նոյեմբերի 1945։

Հունգարիան, Ռումինիան, Բուլղարիան, Ալբանիան Սովետական Միության գլխավորությամբ կազմեցին դեմոկրատական սոցիալիստական լագեր, որը իր առաջ խնդիր դրեց պաշտպանել խաղաղությունը, ամրապնդել դեմոկրատիան, արմատախիլ անել ֆաշիզմի մնացուկները, պայքար տանել իմպերիալիստական էքսպանսիայի և գաղութարարության դեմ, ծավալել սոցիալիստական շինարարությունը։

Էական փոփոխություններ տեղի ունեցան կապիտալիստական աշխարհում, որը ապրում է կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացումը։ Երեք իմպերիալիստական մեծ տերություններ՝ Գերմանիան, Ճապոնիան, Իտալիան ռազմական ջախջախման հետևանքով դուրս ընկան համաշխարհային շուկայից։ Ֆրանսիան թուլացավ և կորցրեց իր առաջվա, որպես մեծ տերության դերը։ ԱՄՆ-ը դուրս եկավ պատերազմից հարստացած և ուժեղացած թե տնտեսական և թե ռազմական տեսակետից, իսկ Անգլիան՝ խիստ խարխլված դիրքերով և ԱՄՆ-ից կախյալ վիճակում։ Միաժամանակ ուժեղացան համաշխարհային բանվորական և դեմոկրատական շարժումը և գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։ Բացի դրանից, ժողովրդա-դեմոկրատական պետությունների ստեղծումը և նրանց դուրս գալը կապիտալիստական սիստեմից, խոշոր հարված հասցրին վերջինին։

Երկրորդ համաշխարհային պատերազմի հակաֆաշիստական ազատագրական բնույթը, Սովետական Միության վճռական դերը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում, ժողովրդա-դեմոկրատական երկրների առաջացումը փոփոխեցին ուժերի փոխհարաբերությունը սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների միջև՝ հօգուտ սոցիալիստականի։ Այսպիսով միջազգային դրությունը էական փոփոխությունների ենթարկվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Ձևավորվեցին երկու լագերներ, երկու հակադիր ուղղություններ՝ միջազգային քաղաքականության և համաշխարհային տնտեսության մեջ։

Սովետական ժողովրդի ղեկավար և ուղղություն ցույց տվող ուժն, ինչպես խաղաղ շինարարության, այնպես էլ պատերազմի տարիներին, հանդիսացել և հանդիսանում է Սովետական Միության Կոմունիստական Մեծ պարտիան։ Մեր ժողովուրդը իր բախտը վստահել է Կոմունիստական պարտիային, նրա հետ է կապել իր լավագույն իղձերը, որովհետև Պարտիան՝ սովետական պատրիոտիզմի մարմնացումն է։ Կոմունիստական պարտիան հանդիսանում է սոցիալիստական Հայրենիքի ամենաառաջավոր հայրենասերների պարտիան, որը սովետական ժողովրդին տանում է իր ետևից՝ հաղթանակից հաղթանակ։ Պարտիայի լավագույն մարդիկ մարտնչում էին թշնամու դեմ Հայրենական Մեծ պատերազմի ռազմիկների առաջին շարքերում, նվիրում էին իրենց կյանքը Հայրենիքին, ոգևորում սովետական մարդկանց անձնազոհ պայքարը, կազմակերպելով թշնամու ջախջախումը։

***

Հաղթականորեն ավարտելով պատերազմը, սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ երկրի էկոնոմիկայի լրիվ վերականգնմանը և հետագա էլ ավելի զարգացմանը։ Սոցիալիստական արտադրության առանձնահատկություններից մեկն այն է, որ նա երբեք չի կարող կանգնած մնալ, դոփել մի տեղում, կամ նվազել ինչպես կապիտալիստական արտադրությունը։ Սոցիալիստական արտադրությունը անշեղորեն զարգանում և աճում է։ Սովետական ժողովուրդը չի սահմանափակվում ձեռք բերված հաջողություններով, նվաճումների միայն ամրապնդումով, որովհետև դա կհանգեցներ լճացման։ Սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ ստեղծելու անհրաժեշտ պայմաններ ժողովրդական տնտեսության նոր հզոր վերելքի համար և ապահովելու տնտեսական տեսակետից անցումը սոցիալիզմից կոմունիզմին։ Կոմունիստական պարտիան առա-

չորրորդ ժողովրդական տնտեսության այդ նոր հզոր վերելքը՝ մեր արդյունաբերության մակարդակը բարձրացնելու երեք անգամ, 1940 թ. մակարդակի համեմատությամբ, որպեսզի մենք տարեկան ունենայինք մինչև 50 միլիոն տոննա չուգուն, 60 միլիոն տոննա պողպատ, 500 միլիոն տոննա ածուխ, 60 միլիոն տոննա նավթ և այլն[1]։

Սոցիալիստական արտադրության զարգացման առանձնահատկություններից մեկն այն է, որ նույնիսկ պատերազմի դաժան պայմաններում Սովետական Միության այնպիսի ռեսպուբլիկաներում ու շրջաններում, որոնք զերծ էին պատերազմական անմիջական գործողություններից և չտուժեցին ավերումներից, աշխատավորության ջանքերի շնորհիվ տեղի էր ունենում սոցիալիստական էկոնոմիկայի հետագա զարգացումը՝ ռազմական ժամանակաշրջանի կարիքներին համապատասխան։ Սովետական Միության արևելյան, հյուսիսային ու հարավային շրջաններում նախապատերազմյան հնգամյակների տարիների ընթացքում ստեղծված հզոր արդյունաբերական բազայի հիման վրա, ինչպես նաև պատերազմի առաջին տարում այդ շրջանները էվակուացված ավելի քան 1300 խոշոր գործարանների ու ձեռնարկությունների արագ գործադրմամբ, տեղի էր ունենում սոցիալիստական արդյունաբերության հետագա զարգացումը։ Ընդամենը 1942—1944 թթ. այդ շրջաններում գործադրվել կամ նոր կառուցվել են 2250 խոշոր ձեռնարկություն։ 1945 թ. առաջին կիսամյակում ՍՍՌՄ այդ շրջաններում արտադրվել է 2 անգամ ավելի շատ արդյունաբերական արտադրանք, քան 1941 թ. առաջին կիսամյակում։ Պատերազմի չորս տարվա ընթացքում արդյունաբերության արտադրությունը ավելացավ՝ Ուրալում 3,6 անգամ, Սիբիրում՝ 2,8 անգամ, Մերձվոլգայում՝ 3,4 անգամ և այլն[2]։ Այս

[1] Տե՛ս Ի. Վ. Ստալին. Ճառ Մոսկվա քաղ. Ստալինյան ընտրական օկրուգի նախընտրական ժողովում 1946 թ. փետրվարի 9-ին, 1946, էջ 20։

[2] Տե՛ս Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, «Պրավդա», 21 մարտի 1946։

կարևոր հանգամանքը պետք է զգալի դեր կատարեր վնասված շրջանների տնտեսությունը արագ ու լրիվ վերականգնելու և ամբողջ երկրի էկոնոմիկայի նոր, հզոր վերելք ստեղծելու գործում։ Դրա հետ մեկտեղ նշենք, որ Սովետական Միության այն շրջաններում, որոնք զերծ էին ռազմական գործողություններից, գյուղատնտեսությունը նույնպես զարգանում էր հիմնականում ցանքսերի տարածությունների ընդարձակման հաշվին։

Հայկական ՍՍՌ-ում Հայրենական պատերազմի տարիներին էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը, նախապատերազմյան 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 16,3 հազար կիլովատով, լրիվ կամ մասնակի կարգով կառուցվեցին և գործադրվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, ինչպես Երևանի ավտոդողերի, էլեկտրամեքենաշինական, Ալավերդու ծծմբաթթվի, հերսաքլորիտանի և հիդրոգենիզացիայի, Ստեփանավանի գուլպայի գործարանները, մեքենաշինական գործարանը, գուլպա-տրիկոտաժային ֆաբրիկան, մորթու-մուշտակի ֆաբրիկան Կիրովականում, ներկման ֆաբրիկան Լենինականում, Հոկտեմբերյանի պահածոների գործարանի առաջին հերթը և այլն, ընդամենը շուրջ 114 խոշոր արդյունաբերական օբյեկտներ։ Եթե 1940 թ. վերջին Հայաստանում կար 365 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, ապա 1945 թ. այդ թիվը հասավ 479-ի, այսինքն տվեց աճ 1,3 անգամ։ Համապատասխանաբար, քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների թիվը 7-ից հասավ 11-ի, մետաղամշակման արդյունաբերության գծով՝ 34-ից 45-ի (այդ թվում մեքենաշինական ձեռնարկությունների գծով՝ 3-ից 5-ի), թեթև արդյունաբերության գծով՝ 40-ից 64-ի, կարի արդյունաբերության՝ 14-ից 24-ի, սննդ-համի՝ 121-ից 149-ի։ Լայն գործունեություն ծավալեցին տեղական Սովետներին կից արդյունաբերական կոմբինատները։ Ռեսպուբլիկայի արդյունաբերական-արտադրական հիմնական միջոցները պատերազմի տարիներին աճեցին մոտ 40% և անցան 920

միլիոն ռուբլու արժեքից։ Այդ ծանր տարիներին սկսվեց այնպիսի խոշոր ձեռնարկությունների շինարարությունը, ինչպիսիք էին պղնձա-մոլիբդենային կոմբինատը, պլաստմասսաների, սուպերֆոսֆատի, ժամացույցի, կոմպրեսորների, մետաղյա իրերի, հիդրոտուրբինների, հրակայուն շինանյութերի, շաքարի գործարանները և այլն. վերսկսվեցին աշխատանքները Սևանգէսի և Ալյումինի գործարանի շինարարություններում. գյուղատնտեսական ցանքային տարածությունները ավելացան 27 հազար հեկտարով, դրանից 18,3 հազար հեկտարը հատկացվեց հացահատիկային կուլտուրաներին։ 1941—1945 թթ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ կատարվել են (առանց կոլտնտեսությունների) 925 միլիոն ռուբլու (1955 թ. հուլիսի 1-ի գներով) կապիտալ ներդրումներ[1]։

Այսպիսով, Հայաստանը, պատերազմական ուղղակի գործողություններից չվնասված Սովետական Միության մյուս շրջանների հետ մեկտեղ, մոբիլիզացնելով իր բոլոր ուժերը, պատերազմի տարիներին հասավ էական հաջողությունների ռազմական էկոնոմիկայի զարգացման գործում։ Սակայն Հայաստանի ժողովրդական տնտեսությունը ընդհանուր առմամբ նույնպես խոշոր չափով տուժեց պատերազմի հետևանքներից։ Ռեսպուբլիկայում ռազմական հավաքագրումների պատճառով զգացվում էր բանվորական ուժի պակաս՝ թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության և թե մյուս բոլոր բնագավառներում, պատերազմի պատճառով արդյունաբերական ֆոնդերը՝ հաստոցներ, սարքավորումներ և այլն չէին կարող վերականգնվել և նրանց զգալի մասը հնացել էր, զգացվում էր հումքի պակաս. որոշ չափով իջել էր աշխատանքի արտադրո-

[1] Տե՛ս ՀՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները. ՍՍՌՄ ցանքային տարածությունները, Վիճակագրական ժողովածու, հատ. 1, 1957, ռուսերեն, էջ 128—129. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը. Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն, էջ 105. Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, 1948, էջ 17—19, 41—43։

ղականությունը. մեքենաշինության արտադրանքը 1945 թ., 1940 թ. համեմատությամբ, նվազել էր, ժամանակավոր կասեցում էր առաջ եկել նաև շինարարության ասպարեզում, նվազել էր նաև շինարարական նյութերի արտադրությունը և այլն։ Ընդհանուր առմամբ Հայաստանի ողջ արդյունաբերության համախառն արտադրանքը, չնայած նոր արդյունաբերական ձեռնարկությունների գործադրման, նախապատերազմյան 1940 թ. համեմատությամբ, իջել էր 7 տոկոսով։ Եթե 1940 թ. նա գերազանցում էր 1913 թ. մակարդակը 8,7 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերությանը՝ 23 անգամ, ապա 1945 թ. 1913 թ. նույն մակարդակը գերազանցում էր 8,1 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերությանը՝ արդեն 21 անգամ։ Գյուղատնտեսական տեխնիկան չէր կարող նորոգվել, պակասել էր տրակտորների քանակը, զգացվում էր վառելիքի, քիմիական պարարտանյութերի պակաս. դրա հետևանքով վատացավ ագրոտեխնիկան, նվազեց բերքատվությունը։ Զգալիորեն պակասեց խոշոր եղջերավոր անասունների, ձիերի գլխաքանակը, ընկավ անասունների մթերատվությունը և այլն[1]։ Ռեսպուբլիկայում, ինչպես և ողջ Սովետական Միության մեջ զգացվում էր կենսամթերքների պակաս՝ մտցված էր պարենային և արդյունաբերական ապրանքների քարտային սիստեմ։

Սովետական երկրի էկոնոմիկայի վերականգնման առանձնահատկություններից է այն, որ դեռ Հայրենական պատերազմի ընթացքում սովետական հողը աստիճանաբար մաքրելու և սովետական մարդկանց ֆաշիստական օկուպացիայի լծից ազատագրելու հետ մեկտեղ, սկսվեց ժողովրդական տնտեսության վերականգնումը ազատված շրջաններում։ Դա հանդիսանում էր առաջնահերթ տնտեսական խնդիրներից մե-

[1] Տե՛ս Սովետական իշխանության նվաճումները 40 տարում, Վիճակագրական ժողովածու, էջ 149 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները.

կը։ Սովետական կառավարությունը և Կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն 1943 թ. օգոստոսին ընդունեցին որոշում՝ օկուպացիայից ազատագրված շրջաններում տնտեսությունը վերականգնելու անհետաձգելի միջոցառումների մասին։ Այդ որոշումը ճիշտ գծի վրա էր դնում և ապահովում թշնամու արյունոտ ու ավերիչ օկուպացիայի հետևանքները լիկվիդացնելու գործի կազմակերպումը[1]։ Պարտիական կազմակերպությունների ղեկավարության շնորհիվ, տեղերում Սովետական իշխանության օրգանների բեղմնավոր գործունեության և սովետական մարդկանց անձնուրաց աշխատանքի հետևանքով բազմաթիվ ավերված արդյունաբերական ձեռնարկություններ արագ վերականգնվեցին ու սկսեցին արտադրանք տալ ռազմաճակատի և թիկունքի կարիքների համար։ Ազատագրված շրջանների տնտեսության վերականգնումը, այդ շրջանների բնակչությանն արագ օգնություն հասցնելը՝ դարձավ ամբողջ սովետական ժողովրդի ընդհանուր գործը, բոլոր ռեսպուբլիկաների աշխատավորության համաժողովրդական գործը։ Հայկական ՍՍՌ բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան ամենաակտիվ մասնակցություն ցուցաբերեցին իրենց եղբայրներին օգնելու այդ մեծ և ազնիվ գործում։

Հայաստանից ազատագրված շրջաններն էին ուղարկվում գործարանային սարքավորումներ, մեքենաներ, անասուններ, սերմացու, գյուղատնտեսական ինվենտար, դպրոցական գույք, գրականություն, դրամական միջոցներ և այլն։ Ռեսպուբլիկայում հիմնվեց Ստալինգրադ հերոս-քաղաքի վերականգնման ֆոնդ։ Այս բոլորը ջերմ արձագանք էր գտնում ազատագրված շրջանների աշխատավորների մոտ։ Այսպես, օրինակ, Ստալինգրադից ստացված հեռագրերից մեկում, որն ուղղված էր ՀԿ(բ)Պ Ստեփանավանի շրջկոմին, նշված է՝ «Ստալինգրադցիները շնորհակալություն, մեծ շնորհակալու-

---

[1] Տե՛ս «Պրավդա», 22 օգոստոսի 1943։

թյուն են հայտնում Հայկական ՍՍՌ Ստեփանավանի շրջանի աշխատավորներին, նրանց եղբայրական օգնության համար։ Ստալինգրադի վերականգնման ֆոնդը Ստեփանավանի աշխատավորները մուծել են 1.266 հազար ռուբլի։ Ամբողջ սրտով ցանկանում եմ ձեզ նորանոր հաջողություններ գյուղատնտեսության բոլոր բնագավառներում։ ՀամԿ(բ)Պ Ստալինգրադի մարզկոմի քարտուղար Պիսկին»[1]։

Հայրենական պատերազմի վերջին նախկին օկուպացված շրջանների ավերված արդյունաբերության հիմնական ֆոնդերը արդեն 1/3-ով վերականգնված էին, այդ թվում ավելի քան 6000 գործարան ու ֆաբրիկա։ Վերականգնվել էին 85 հազար կոլտնտեսություն, 1800 սովխոզ, 3000 մեքենա-տրակտորային կայան, որը հանդիսացավ այդ շրջանների գյուղատնտեսության վերածնման հիմքը։ Բացի դրանից, վերականգնվեցին կամ նոր կառուցվեցին մոտ 6000 հիվանդանոց, ավելի քան 70 հազար դպրոց, 17,9 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն քաղաքներում և 1.260 հազար բնակելի տուն՝ գյուղական վայրերում։ Վերականգնման այս մեծ աշխատանքների վրա ծախսվել է մոտ 57 միլիարդ ռուբլի[2]։

Այս բոլորը տնտեսության սոցիալիստական սիստեմի գերազանցության ակնհայտ ապացույցն է համեմատած կապիտալիստական տնտեսության հետ. այս բոլորը մեր հասարակարգի և պետական կարգերի հսկայական առավելությունների ապացույցն է։ Սովետական Միությունը երկրորդ համաշխարհային պատերազմից դուրս եկավ ավելի ուժեղացած և ամրացած և ոչ թե թուլացած, ինչպիսի հույսեր ունեին և ինչի ձգտում էին հասնել արևմտյան իմպերիալիստները։ Սովետա-

---

[1] Ա. Ն. Մնացականյան, *Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում (1941—1945)*, Երևան, 1954, էջ 294։

[2] Տե՛ս Ա. Ֆ. Ռումյանցև, *Սովետական էկոնոմիկայի զարգացման ուրվագծերը չորրորդ հնգամյակում*, 1952, ռուսերեն, էջ 4։ Ֆ. Պ. Կոշելև, *Հետպատերազմյան առաջին հնգամյակի կատարման հիմնական հանրագումարները*, 1951, ռուսերեն, էջ 40։ Ա. Առաքելյան, *Հետպատերազմյան հնգամյակի հիմնական խնդիրները*, 1947, էջ 17։

կան հասարակարգի ու պետական կարգերի կենսատու ուժը, սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնությունը, սովետական մարդկանց հայրենասիրությունն ու պրոլետարական ինտերնացիոնալիզմը, մեր երկրի հզոր սոցիալիստական արդյունաբերությունն ու կոլեկտիվ գյուղատնտեսությունը լրիվ հնարավորություն էին տալիս կարճ ժամանակամիջոցում ոչ միայն վերացնել պատերազմի մեծ վնասները, վերականգնել նախկին օկուպացված շրջանների տնտեսությունը, այլև հասնել ամբողջ Միության էկոնոմիկայի բոլոր ճյուղերի նոր զգալի վերելքին։ Կոմունիստական պարտիան սովետական ժողովրդի առջև դրեց խաղաղ շինարարության անցման, հետպատերազմյան ստեղծագործական աշխատանքի, ժողովրդի կենսական մակարդակի բարձրացման խնդիրները։

Սովետական ժողովրդի կյանքում կարևոր քաղաքական իրադարձություն էր 1946 թ. փետրվարի 10-ի՝ իշխանության գերագույն օրգան ՍՍՌՄ Գերագույն Սովետի երկրորդ գումարման ընտրությունները։ Այդ ընտրությունների կապակցությամբ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի կողմից սովետական ժողովրդին ուղղված դիմումում նշված էր. «Ութ տարի է անցել ՍՍՌՄ Գերագույն Սովետի առաջին ընտրությունների ժամանակվանից։ Պատերազմը հնարավորություն չտվեց հերթական ընտրությունները կատարելու Սովետական կոնստիտուցիայով նախատեսված ժամկետին։ Այժմ, երբ Հայրենական Մեծ պատերազմը հաղթականորեն ավարտված է և սկսվել է խաղաղ զարգացման ժամանակաշրջանը, սովետական ժողովուրդը հնարավորություն ունի կատարել ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատների ընտրությունները»[1]։

Կոմունիստական պարտիան գծեց կոմունիստական շինարարության հետագա կոնկրետ, պրակտիկ խնդիրները։ Կոչում նշվում էր, որ պատերազմը վերջանալուց հետո մեր

---

[1] «Պրավդա», 2 փետրվարի 1946։

գործարաններն ու ֆաբրիկաները փոխադրվում են խաղաղ ժամանակի արտադրանքի արտադրության, լայն հնարավորություններ են բացվել արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման ու աշխատավորության կարիքները բավարարելու համար։ Խնդիրն այն էր, որպեսզի զգալի չափով բարձրացվեր աշխատավորության բարեկեցությունը, որպեսզի Սովետական պետությունը կարողանար բնակչությանը տալ ավելի շատ կենսամթերքներ և լայն սպառման ապրանքներ, որ ավելի բարեկարգվեին մեր քաղաքներն ու գյուղերը, լայնորեն ծավալվեր բնակարանների, հիվանդանոցների և ծննդատների շինարարությունը, ավելացվեր հանգստյան տների ու սանատորիաների, մանկական մսուրների ու մանկապարտեզների, հասարակական ճաշարանների և այլ կենցաղային հիմնարկների թիվը։ Անհրաժեշտ էր ուժեղացնել ամենօրյա հոգատարությունը կանանց ու երեխաների նկատմամբ, ավելի բարելավել սովետական կանանց աշխատանքի պայմանները և կենցաղը, նրանց ավելի լայնորեն ներգրավելով երկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում։ Պարտիան մեծ նշանակություն էր տալիս սովետական երիտասարդության աշխատանքային ու կենցաղային պայմանների հետագա բարելավմանը, Սովետական Բանակի զորացրված մարտիկներին ու Հայրենական պատերազմի հաշմանդամներին աշխատանքի տեղավորելու, նրանց կենցաղը կազմակերպելու հարցերին, համաժողովրդական հոգատարություն ցույց տալով զոհված մարտիկների ընտանիքների նկատմամբ՝ մարտիկների, որոնք զոհվեցին Հայրենական պատերազմում ժողովրդի երջանկության համար։

Կոմունիստական պարտիան դնում էր հետևյալ խնդիրները՝ պատերազմի ընթացքում մեր էկոնոմիկային հասցված վնասի արագ լիկվիդացումը և ժողովրդական տնտեսության՝ ներառյալ ժողովրդական կրթության, կուլտուրայի ու գիտության հետագա զարգացումը, Հայրենական պատերազմում սովետական ժողովրդի արյունով ձեռք բերված մեծ հաղթա-

նակի ամրապնդումը և միջազգային ասպարեզում ՍՍՌՄ ժողովուրդների պետական շահերի հետևողական պաշտպանումը։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն սովետական ժողովրդին կոչ էր անում էլ ավելի սերտ համախմբվել Կոմունիստական պարտիայի շուրջը և իրենց ձայնը տալ կոմունիստների ու անպարտիականների բլոկի թեկնածուների օգտին։

1946 թ. փետրվարի 10-ի ընտրությունները վերածվեցին սովետական ժողովրդի տոնի՝ աշխատավորության միասնության ու համախմբվածության ցույցի՝ Կոմունիստական պարտիայի ու նրա Կենտրոնական Կոմիտեի շուրջը։ Հայրենական պատերազմի ընթացքում Պարտիան էլ ավելի սերտորեն կապվեց ժողովրդի հետ ու անձնուրաց ծառայելով Հայրենիքին, նվաճեց ամբողջ ժողովրդի էլ ավելի սերն ու վստահությունը։ Սովետական ժողովուրդը ավելի ևս համոզվեց Պարտիայի քաղաքականության ճշտության մեջ՝ քաղաքականություն, որը համապատասխանում է ժողովրդի արմատական շահերին։ Այդ էր պատճառը, որ կոմունիստների ու անպարտիականների բլոկը փայլուն հաղթանակ տարավ ընտրություններին։ Բոլոր ընտրական օկրուգներում ցուցակագրված 101717686 ընտրողների ընդհանուր թվից ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատների ընտրությանը մասնակցեցին 101450976 մարդ կամ ցուցակագրված ընտրողների ընդհանուր թվի 99,7%, կոմունիստների ու անպարտիականների բլոկի թեկնածուների օգտին ձայն տվեցին քվեարկությանը մասնակցած ընտրողների 99% ավելին[1]։

Հայաստանի աշխատավորները ևս ընտրություններին մասնակցեցին մեծ խանդավառությամբ։ Ռեսպուբլիկայի 643,733 ընտրողների ընդհանուր թվից քվեարկությանը մասնակցեցին 643,113 մարդ, այսինքն 99,9%, այդ թվից Միության Սովետի ընտրություններին կոմունիստների և անպարտիականների բլոկի թեկնածուների օգտին ձայն տվե-

[1] «Պրավդա», 14 փետրվարի 1946։

ցին 641,204 մարդ՝ 99,71% և Ազգությունների Սովետի ընտրություններին՝ 641,051 մարդ՝ 99,68%[1]։ Այսպիսով, ամբողջ Սովետական ժողովուրդը մասնակցություն ունեցավ ընտրություններին՝ ցուցաբերելով չտեսնված ակտիվություն։ Ընտրությունները կրկին ցույց տվեցին սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը, նրա կուռ համախմբվածությունը իր հարազատ Պարտիայի և Սովետական իշխանության շուրջը։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի հենց առաջին սեսիայում 1946 թ. մարտին հաստատվեց ՍՍՌՄ կառավարության կողմից ընդունված օրենքը՝ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին։ «ՍՍՌՄ Գերագույն Սովետը սահմանում է,— ասված էր այդ օրենքում,— որ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի հիմնական խնդիրներն են՝ վերականգնել երկրի տուժած շրջանները, վերականգնել արդյունաբերության ու գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև զգալի չափերով գերազանցել այդ մակարդակը»[2]։ Նույնիսկ Սովետական երկրի համար, որը սովոր էր նախապատերազմյան հնգամյակների բարձր տեմպերին, չորրորդ հնգամյակի այդ հիմնական տնտեսական-քաղաքական խնդիրը իր մասշտաբով չտեսնված էր։ Սովետական Միությունը հինգ տարվա ընթացքում պետք է ոչ միայն վերականգներ այն բոլորը, ինչ որ ավերվել էր պատերազմում, ոչ միայն վերականգներ արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը, այլև զգալի չափով գերազանցեր այն, ցույց տալով տնտեսական զարգացման ավելի արագ, մինչ այդ չտեսնված տեմպեր։

---

[1] «Պրավդա», 14 փետրվարի 1946։

[2] Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, «Պրավդա», 21 մարտի 1946։

Չորրորդ հնգամյա պլանի կենտրոնական խնդիրն էր՝ ծանր արդյունաբերության ու երկաթուղային տրանսպորտի առաջնահերթ վերականգնումը և հետագա զարգացումը, առանց որի անհնարին էր արագ ու հաջող կերպով վերականգնել և ավելի զարգացնել ամբողջ ժողովրդական տնտեսությունը։ Արդեն 1948 թ. պետք է երկիրը հասներ արդյունաբերության արտադրության նախապատերազմյան մակարդակին, իսկ 1950 թ. արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը պետք է 48% գերազանցեր այն. 35% պետք է ավելանար սև մետաղների արտադրությունը, ավելի քան 1,5 անգամ ածխի հանույթը, 70% էլեկտրաէներգիայի արտադրությունը, երկու անգամ՝ մեքենաշինության արտադրանքը, 1,5 անգամ՝ քիմիական արդյունաբերությունը և այլն։ Միայն սև մետալուրգիայի գծով պետք էր կառուցել, վերականգնել և գործի դնել 45 դոմնային վառարան, 165 մարտենյան վառարան, ընդամենը հինգ տարվա ընթացքում պետք էր վերականգնել և նոր կառուցել 5900 արդյունաբերական խոշոր պետական ձեռնարկություններ, չհաշված մանրները։

Կարևորագույն խնդիրն էր նաև գյուղատնտեսության և սպառման միջոցներ արտադրող արդյունաբերության վերելքի կազմակերպումը՝ բնակչությանը անհրաժեշտ կենսամթերքների ու արդյունաբերական ապրանքների առատություն ստեղծելու համար։ Մենք պետք է գերազանցեինք ազգային եկամտի և ժողովրդական սպառման նախապատերազմյան մակարդակը, վերացնեինք քարտային սիստեմը և փոխարինեինք այն սովետական ազատ առևտրով, բարձրացնեինք աշխատավորության կենսական մակարդակը, ամրացնեինք դրամական շրջանառությունը և սովետական վալյուտան։ Հնգամյա պլանը նշեց խոշոր աշխատանքներ բնակարանային շինարարության ծավալման, ժողովրդական առողջապահության, լուսավորության գործի բարելավման ուղղությամբ և այլն։ Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սովետական կուլտուրայի հետագա ծաղկման

ապահովումը հնգամյա պլանի հիմնական խնդիրներից մեկն էր։ Որպեսզի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ապահովվեր հետագա տեխնիկական առաջընթացը, որը արտադրության հզոր վերելքի և աշխատանքի արտադրողականության բարձրացման պայմանն է, պետք էր ոչ միայն հասնել, այլև կարճ ժամանակամիջոցում անցնել արևմտյան երկրների գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումներից։ Անհրաժեշտ էր Սովետական Միության զինված ուժերը ապահովել նորագույն ռազմական տեխնիկայով ու անդադար ամրապնդել մեր Հայրենիքի պաշտպանունակության հզորությունը։ Այս բոլոր խնդիրները դրված էին չորրորդ հնգամյա պլանում։

Կյանքում կենսագործելով Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականությունը, չորրորդ հնգամյա պլանը ապահովում էր բոլոր միութենական ռեսպուբլիկաների և առաջին հերթին թշնամու ավերումից տուժած ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի արագ աճը։ Այդ շրջանների էկոնոմիկան վերականգնելու համար պլանավորված էր երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ներդրվող կենտրոնացված կապիտալ ներդրումների համարյա կեսը, այսինքն՝ 115 միլիարդ ռուբլի՝ 250 միլիարդ ռուբլուց։ Այդ ծախսերը (115 միլիարդ ռուբլի) զգալի չափով գերազանցում էին ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների գումարը երրորդ հնգամյակի 3 տարիների ընթացքում։ Հատուկ ուշադրություն էր նվիրվում Մերձբալթյան երկրամասի Սովետական ռեսպուբլիկաների զարգացմանը։ Հնգամյա պլանը մատնանշում էր յուրաքանչյուր միութենական ռեսպուբլիկայի էկոնոմիկայի ու կուլտուրայի վերելքը առանձին-առանձին վերցրած։ Հնգամյա պլանում նշվում էր միութենական ռեսպուբլիկաների արտադրողական ուժերի վերականգնման ու զարգացման գործում տնտեսական նախաձեռնության զարգացման անհրաժեշտությունը, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության սիստեմում ռեսպուբլիկական տնտեսությունների ամրացման

ու աճի ապահովումը, ռեսպուբլիկական տնտեսության տեղական արդյունաբերության ու արհեստագործական կոոպերացիայի զարգացման ապահովումը առանձնապես կենսամթերքների ու լայն սպառման ապրանքների, տեղական վառելանյութի հանույթի, տեղական կարիքների համար գլանման ու ձուլման արտադրության, շինարարական ու անտառային նյութերի, մետաղյա իրերի ու սարքավորումների արտադրության ավելացումը և այլն։ Նախատեսված էր, որ տեղական արդյունաբերության ու արհեստագործական կոոպերացիայի արտադրած լայն սպառման ապրանքները լրիվ կերպով կլինեն միութենական ռեսպուբլիկայի տնօրինության տակ, ըստ որում ռեսպուբլիկաների Մինիստրների Սովետները իրենց հայեցողությամբ պետք է որոշեին ռեսպուբլիկայի ներսում արտադրանքի սպառման համար թողնվող և ապրանքափոխանակության կարգով մյուս ռեսպուբլիկաներն ուղարկվող բաժինները շուկայական գների ընդհանուր պետական կանոնավորումով։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյա պլանից բխող Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին օրենքը, որը քննվեց և հաստատվեց 1946 թ. հուլիսին ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի առաջին գումարման XI սեսիայում, նշում էր Հայաստանի էկոնոմիկայի ու կուլտուրայի վերականգնման ու հետագա զարգացման հիմնական խնդիրները։ Այսպիսով, պատահական չէր, որ պատերազմը հաղթականորեն ավարտելուց հետո 1946—1950 թթ. չորրորդ հնգամյա պլանի գլխավոր տնտեսական-քաղաքական խնդիրը ամբողջ Սովետական Միության և այդ թվում Հայաստանի համար կայանում էր նախ և առաջ նրա էկոնոմիկայի վերականգնման և ապա հետագա զարգացման մեջ։

Նոր հնգամյա պլանում ընդգծվեց հինգ տարում ավելի քան կրկնապատկել ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրությունը։ Սա խոշոր զարգացում էր Հայաստանի հա-

մար։ 1946—1950 թթ. ընթացքում Հայաստանում պետք էր զգալի չափով ավելացնել հիդրոէլեկտրակայանների կառուցումը, կառուցել ու գործարկել կաբելի և փոքր հիդրոտուրբին արտադրող գործարաններ, ապահովել Քաջարանի պղնձա-մոլիբդենային հանքաքարի հանույթը ու հարստացումը, կազմակերպել ալյումինի արտադրությունը, չորս անգամ ավելացնել սինթետիկ կաուչուկի և երկու անգամ՝ սոդայի արտադրությունը, զգալիորեն ընդլայնել ավտոդողերի արտադրությունը, ավարտել շաքարի գործարանի շինարարությունը Սպիտակում, ավելացնել պտղամրգային պահածոների, խաղողի գինիների արտադրությունը, կառուցել կոնյակի նոր գործարան, կազմակերպել գյուղատնտեսական մեքենաների ու ինվենտարի արտադրություն ռեսպուբլիկական արդյունաբերության մեջ և այլն։

Հնգամյա պլանը ռոգման ցանցի, գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման, գյուղում նոր տեխնիկայի ներդրման հիման վրա նշում էր գյուղատնտեսության արտադրության ավելացումը, համեմատած 1940 թ. հետ, 75%։ Բամբակի ցանքային տարածությունները սահմանված էին 15 հազար հեկտարի չափով։ Պետք էր ընդլայնել բազմամյա տնկիների տարածությունը, վարգացնել շաքարի ճակնդեղի արտադրությունն ու մետաքսագործությունը, ընդարձակել ցանքային տարածությունները և բարձրացնել բերքատվությունը ծխախոտի գծով, գործարկման հանձնել մի շարք ոռոգիչ ջրանցքներ, իրականացնել աշխատանքները Արազդայանի տափաստանի ռոգման ուղղությամբ, ապահովել 1946—1950 թթ. ընթացքում ջրովի տարածությունների աճը 23,5 հազար հեկտարով։ Խնդիր դրվեց ավելացնել անասունների գլխաքանակը (1950 թ. վերջի համար սահմանվեցին հետևյալ կոնտրոլ թվերը՝ 32,5 հազար ձի, 670 հազար խոշոր եղջերավոր անասուն, 1,680 հազար ոչխար ու այծ, 80 հազար խոզ), բարելավել մթերատու անասունների տեսակը և ընդլայնել նրբագեղմ ոչխարաբուծությունը։

Հնգամյա պլանը սահմանեց 1946—1950 թթ. համար

ավելացնել պետական բնակելի ֆոնդը ռեսպուբլիկայի քաղաքներում 284 հազար քառ. մետրի չափով, նոր ջրմուղի կառուցումը, կոյուղու ընդլայնումը և 15 կմ. տրամվայի գծի երկարացումը Երևանում, իսկ Լենինականում ջրմուղի ընդարձակումը։ Կուլտուրական շինարարության և առողջապահության գծով հիմնական առաջադրանքներն էին՝ դպրոցների թիվը 1950 թ. հասցնել մինչև 1155, իսկ սովորողներինը՝ 288 հազարի, հիվանդանոցային մահճակալների թիվը՝ քաղաքներում և գյուղական վայրերում՝ մինչև 6700 մահճակալի։ Արդյունաբերական արտադրանքի հիմնական տեսակների արտադրության պլանը հաստատվեց 1950 թ. համար հետևյալ չափերով, 860 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 180 հազար ավտոդող, 15 հազար տոննա սուպերֆոսֆատ, 12 հազար տոննա կաուստիկ սոդա, 500 մետաղահատ հաստոց, 120 հազար տոննա ցեմենտ, 44,8 միլիոն մետր բամբակյա գործվածք, 2,6 միլիոն մետր մետաքսյա գործվածք, 15,4 միլիոն զույգ գուլպեղեն, 2,55 միլիոն զույգ կոշկեղեն, 8400 տոննա միս, 6500 տոննա շաքար, 150 հազար դեկալիտր կոնյակ, 2 միլիոն դեկալիտր խաղողի գինի, 2 միլիարդ գլանակ և այլն [1]։

Այսպիսով, հայ ժողովուրդը ՍՍՌՄ ժողովուրդների ընտանիքում չորրորդ հնգամյակի տարիներին պետք է լուծեր խոշորագույն ժողովրդա-տնտեսական խնդիրներ։

---

[1] Բոլոր թվական տվյալները տե՛ս Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, չորրորդ բաժին՝ Միութենական ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման պլանը, «Պրավդա», 21 մարտի 1946։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐՈՅԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

*Սովետական ժողովրդի բոլոր հաջողությունները, չորրորդ հնգամյա պլանի ժողովրդա-տնտեսական մեծ խնդիրների կատարումը պայմանավորվեցին այն հերոսական ջանքերով, աշխատավորության քաղաքական և աշխատանքային ակտիվության, ստեղծագործական այն վերելքով, որի ոգեշնչողը և կազմակերպիչը հանդիսանում է Սովետական Միության Կոմունիստական պարտիան։ Կոմունիստական պարտիան իսկապես ժողովրդական պարտիա է, նրա քաղաքականությունը համապատասխանում է մեր երկրի աշխատավորության կենսական շահերին։ Այդ է պատճառը, որ սովետական ժողովուրդը Պարտիային ցույց է տալիս անսահման վստահություն ու աջակցություն։ Դրանում է Կոմունիստական պարտիայի հաջողությունների գրավականը։*

*Հայրենական պատերազմի և չորրորդ հնգամյակի տարիներին շարունակվում էր Պարտիայի շարքերի աճը, որը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի կողմից ժողովրդական մասսաների հետ ունեցած կապերի էլ ավելի ամրապնդման փայլուն արտահայտությունը։ Չնայած նրան, որ Կոմունիստական պարտիան շատ մեծ կորուստներ կրեց Հայրենական պատերազմի ռազմաճակատներում, այնուհանդերձ նրա շարքերը աճեցին պատերազմի ընթացքում ավելի քան 1.600*

հազար մարդու։ Պարտիայի մեջ մտան սովետական ժողովրդի ամենանվիրված ու ամենակայուն ներկայացուցիչները։

. . Հայաստանի Կոմունիստական պարտիան հանդիսացել և հանդիսանում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի մարտական ջոկատներից մեկը։ Նա պատվով դուրս եկավ պատերազմի ծանր փորձություններից, մոբիլիզացնելով հայ ժողովրդի բոլոր ուժերը հաղթական պայքարի գործում։ Չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի պարտիական կազմակերպությունները գլխավորեցին աշխատավորության հերոսական ջանքերը՝ չորրորդ հնգամյակի պլանի առաջադրանքները կատարելու ու գերակատարելու, աշխատավորների գաղափարական-քաղաքական մակարդակը բարձրացնելու և հայ սոցիալիստական ազգի կուլտուրայի հետագա զարգացման համար։ Հայաստանի Կոմունիստական պարտիան սերտորեն համախմբվելով ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի շուրջը, չորրորդ հնգամյակի տարիներին էլ ավելի ամրացավ և ուժեղացավ։

1940 թ. Հայաստանի Կոմպարտիայի շարքերում կար 33,984 մարդ, այդ թվում՝ 23,653 պարտիայի անդամ և 10,331 թեկնածու։ Առ 1-ը հոկտեմբերի 1948 թ. Հայաստանի Կոմպարտիայի մեջ կար արդեն 61, 440 մարդ, որից 53,375 անդամ և 8,065 անդամության թեկնածու։ Այսպիսով, Հայրենական պատերազմի ընթացքում ու հնգամյակի առաջին երեք տարիներին Հայկական ՍՍՌ պարտիական կազմակերպությունները աճեցին 1,8 անգամ։ Պարտիայի մեջ մտան 28,385 մարդ, այդ թվում 16,010 ՀԼԿԵՄ անդամներ, 9,408 կին, Հայաստանի Կոմպարտիայի կազմի 62% այն կոմունիստներն էին, որոնք Պարտիայի շարքերն ընդունվեցին պատերազմի ու չորրորդ հնգամյակի տարիներին[1]։ 1948 թ. հոկտեմբեր — 1951 թ. մարտ ժամանակամիջոցում Հայաստանում Կոմպարտիայի շարքերն են ընդունվել 3,536

---

[1] Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, 1948, էջ 92—93։

մարդ[1]։ Պարտիական կազմակերպությունները տեղերում ավելի ճշգրիտ պահպանեցին անհատական ընտրության սկզբունքը, ընդունելության ժամանակ ցուցաբերելով ավելի մեծ պահանջներ և Պարտիայի շարքերն ընդունելով առավել առաջավոր աշխատավորների, որոնք իրենց գործնական աշխատանքով ապացուցում էին նվիրվածությունը Պարտիային։ Ուժեղացավ աշխատանքը՝ երիտասարդ կոմունիստների քաղաքական դաստիարակության ու Պարտիայի մեջ պատահական կերպով սողոսկած տարրերից ազատվելու գործում։

Պատերազմն ավարտվելուց հետո, խաղաղ շինարարության տարիներին, Կոմունիստական պարտիայի, ամբողջ սովետական ժողովրդի առաջ ծառացած նոր տնտեսական ու կուլտուրական խնդիրների լույսի տակ պարտիական կազմակերպությունների աշխատանքում բացահայտվեցին խոշոր թերություններ։ Անհրաժեշտ էր բարձրացնել ներպարտիական աշխատանքի մակարդակը, վերացնել պարտիական-կազմակերպչական ու գաղափարական աշխատանքների նկատմամբ տեղ գտած անուշադրությունը, ամրացնել տեղական պարտիական օրգանները։ Հարկավոր էր պարտիական օրգանների կողմից բարձրացնել պետական ու տնտեսական գործունեության ցույց տրվող ղեկավարությունը և ամրացնել իշխանության պետական օրգանները, ուժեղացնել նրանց կապը մասսաների հետ։ Հայրենական պատերազմը ավարտվելուց հետո, խաղաղ շինարարության անցնելու պայմաններում պարտիական կազմակերպությունները սկսեցին վերակառուցել իրենց աշխատանքը, վերացնելով պարտիական օրգանների կողմից ղեկավարման տնտեսական-ադմինիստրատիվ մեթոդների պրակտիկան, որը միայն պատերազմի ժամանակ էր արդարացնում իրեն։

Չորրորդ հնգամյակի տարիներին պարտիական կազմակերպությունները, իրականացնելով հսկողությունը տեղական

---

[1] Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտկոմի աշխատանքի մասին, 1951, էջ 77։

սովետական ու տնտեսական կազմակերպությունների գործունեության վրա, իրագործելով իրենց քաղաքական ղեկավարությունը, սիստեմատիկ կերպով օգնելով ու ամրապնդելով նրանց, հասան սովետական ու տնտեսական կազմակերպությունների դերի բարձրացմանը, նրանց աշխատանքների պատասխանատվության ու օպերատիվության բարձրացմանը։ Մյուս կողմից պարտիական կազմակերպություններն սկսեցին վերացնել պարտիական օրգանների կողմից ղեկավարման տնտեսական-ադմինիստրատիվ մեթոդներով չափից դուրս տարվելու այնպիսի բացասական հետևանքը, ինչպես, օրինակ, ոչ բավարար ուշադրությունը մասսայական-քաղաքական աշխատանքի և աշխատավորության կոմունիստական դաստիարակության հարցերի նկատմամբ։ Այդ կարևորագույն խնդիրները հետպատերազմյան ժամանակաշրջանում դարձան պարտիական կազմակերպությունների աշխատանքների առանցքը։

Պարտիական օրգանների կողմից տնտեսական-ադմինիստրատիվ մեթոդներով ղեկավարման չափից դուրս տարվելու բացասական հետևանք էր աշխատանքի այդ մեթոդների տարածումը ներպարտիական հարցերի վճռման վրա։ Դրա հետևանքով առաջ եկան հարցերի կոլեգիալ քննարկման խախտումներ, պարտիական շատ ղեկավարների ձևական հաշվետվություն, քննադատության ու ինքնաքննադատության թուլացում, ղեկավարների կտրվածություն լայն մասսաներից։ Չորրորդ հնգամյակի տարիներին սկսվեց պայքար դեմոկրատական ցենտրալիզմի խախտման դեմ, սակայն ռեսպուբլիկայի պարտիական, սովետական, տնտեսական, պրոֆմիութենական և մյուս օրգանների աշխատանքների վերակառուցումը այդ ուղղությամբ կատարվում էր չափազանց դանդաղ։

Սովետական ժողովրդի կյանքում դեռևս դրսևորվում էին անհատի պաշտամունքի բացասական հետևանքները։ Անհատի պաշտամունքը նսեմացնում էր Պարտիայի և ժողովրդական մասսաների դերը, նսեմացնում էր կոլեկտիվ ղեկավարության դերը։ Պարտիայի շարքերում և սովետական ապա-

րատում, հանգեցնում էր լուրջ սխալների։ Անհատի պաշտամունքը դեռևս լուրջ կերպով խանգարում էր ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում տեղ գտած թերությունները հիմնովին վերացնելու և աշխատավորության կոմունիստական դաստիարակության հետագա բարելավման գործին [1]։

Ոչ մի անհատ չէր կարող և չի կարող փոփոխել պետության էությունը և այն էլ սոցիալիստական պետության, որը իր հիմքում ունի արտադրական միջոցների հանրային սեփականությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության սերտ դաշինքը և ժողովուրդների բարեկամությունը։ Անհատի պաշտամունքը հանգեցրեց լուրջ սխալների Պարտիայի գործունեության և պետության ղեկավարման ասպարեզում, որոնք սկսեցին դանդաղեցնել սովետական հասարակության զարգացումը, արգելակել աշխատավորական մասսաների ստեղծագործական նախաձեռնությանը, սակայն այդ սխալները չէին կարող և չկարողացան շեղել Սովետական պետությանը դեպի կոմունիզմ տանող ճիշտ ուղուց, որովհետև երկրի սրատմական ուղին բնորոշվում է ոչ թե պետական գործերի ղեկավարման ասպարեզում կատարված սխալներով, այլ վերջին հաշվով ժողովրդի ստեղծագործական աշխատանքով։ Նույնիսկ անհատի պաշտամունքի ծանր հետևանքների առկայության պայմաններում Կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող սովետական ժողովրդի հզոր ստեղծագործական նախաձեռնությունը կատարում էր իր մեծ պատմական գործը, հաղթահարելով դժվարությունները կոմունիստական շինարարության ճանապարհին։

Պատերազմից խաղաղ շինարարության անցման պայմաններում նոր խնդիրները ճիշտ ու հաջող կերպով վճռելու համար անհրաժեշտ էր ավելի բարձրացնել պարտիական ու սովետական կադրերի գաղափարական-քաղաքական ու տեսա-

[1] Տե՛ս Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի 1956 թ. հունիսի 30-ի որոշումը. 1956, էջ 15։

կան մակարդակը, որին և ձեռնամուխ եղավ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն կազմակերպելով կադրերի լայն պատրաստման ու վերապատրաստման գործը։ Պարտիական լուսավորության ամբողջ սիստեմը վերակառուցվեց։ Պարտիական ու սովետական կադրերի հիմնական կազմը չորրորդ հնգամյակի տարիներին ընդգրկվեց պարտիական դպրոցներում և վերապատրաստման կուրսերում մարքսիզմ-լենինիզմը տիրապետելու, հասարակական զարգացման օրենքների գիտությամբ զինվելու, երկրի էկոնոմիկան, Սովետական պետության ու Կոմունիստական պարտիայի ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը լավ ըմբռնելու համար։

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն Հայաստանի Կոմպարտիային ցույց էր տալիս մեծ օգնություն՝ նրա շարքերն ամրապնդելու և Հայկական ՍՍՌ առաջ կանգնած խնդիրները հաջող լուծելու համար ուժերը մոբիլիզացնելու գործում։ 1947 թ. օգոստոսի 27-ին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ընդունեց որոշում՝ «Հայաստանի պարտիական կազմակերպությունում պարտիական ղեկավար կադրերի ընտրության, առաջքաշման և օգտագործման վիճակի մասին»։ Այս կարևոր որոշումը բացահայտեց խոշոր թերություններ Հայաստանում կադրերի պատրաստման ու դաստիարակման գործում և ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների ուշադրությունը բևեռեց մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների, բուրժուական նացիոնալիզմի ռեցիդիվների և բուրժուական կուլտուրայի առաջ խոնարհվելու դեմ պայքարը ուժեղացնելու հարցերի վրա։ 1947 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի պլենումը քննարկեց այդ կարևոր որոշումը և ձեռք առավ անհրաժեշտ միջոցառումներ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ցուցումները կյանքում իրագործելու համար։ Կադրերի ընտրության, առաջքաշման և տեղաբաշխման գործը ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպություններում սկսեց հետզհետե բարելավվել, արդյունաբերական հիմնարկները ապահովվեցին ղեկա-



4—1568

վար տնտեսական կադրերով, որոնք ունեին՝ տեխնիկական կրթություն և պրակտիկ աշխատանքի փորձ։

Ռեսպուբլիկայում ձեռք առնվեցին միջոցներ պարտիական կադրերի տեսական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Մի շարք ընկերներ գործուղվեցին Հասարակական գիտությունների ակադեմիա, Բարձրագույն պարտիական դպրոց և ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեին կից տարեկան կուրսերը։ Պարտիայի շրջանային կոմիտեների առաջին քարտուղարների համար Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմին կից ստեղծվեց մշտական սեմինար՝ Բարձրագույն պարտիական դպրոցի ծրագիրը խորացված ուսումնասիրելու նպատակով. Երևանի երկամյա պարտիական դպրոցը 1948 թ. տվեց իր առաջին շրջանավարտները՝ 142 մարդ, իսկ 1949—1950 թթ.՝ 275 մարդ՝ ռեսպուբլիկայի պարտիական, սովետական ու կոմերիտական ղեկավար աշխատողներից։ Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմին կից նույնպես ստեղծվեցին իննամսյա կուրսեր՝ շրջանային ղեկավար կադրերի պատրաստման համար և մեկ տարվա կուրսեր՝ ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների խոշոր պարտիական կազմակերպությունների 150 քարտուղարների համար։ Բացի դրանից պարտիական և սովետական ղեկավար աշխատողներից շատ կոմունիստներ սովորում էին Բարձրագույն պարտիական դպրոցի հեռակա բաժնում։ Այս բոլորի շնորհիվ 1951 թ. սկզբին ռեսպուբլիկայի պարտիական օրգանների աշխատողների կեսից ավելին ունեին հատուկ քաղաքական պատրաստականություն[1]։

Չորրորդ հնգամյակի տարիներին պարտիական կազմակերպությունները սկսեցին հատուկ ուշադրություն նվիրել մարքսիզմ-լենինիզմի տեսության պրոպագանդային։ Պար-

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 103. Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 95։

տական լուսավորության ցանցը ընդլայնվեց. աշխուժացան Պարտիայի շրջանային ու քաղաքային կոմիտեներին կից պարտիական կաբինետների աշխատանքները, կազմակերպվեցին նոր գրադարաններ, որտեղ պարբերաբար լսվում էին զեկուցումներ, դասախոսություններ, անց էին կացվում կոնսուլտացիաներ։ Զգալի աշխատանք էր տարվում պրոպագանդիստների, քաղխմբակների ղեկավարների ու կոնսուլտանտների կազմը ամրապնդելու ուղղությամբ. բարձրացավ մամուլի ու ռադիոյի դերը՝ մարքսիզմ-լենինիզմի գիտելիքների պրոպագանդայի գործում։ 1951 թ. սկզբին պարտիական լուսավորության ցանցում՝ քաղխմբակներում ու քաղդպրոցներում պարապում էին ավելի քան 34 հազար կոմունիստ, 7300 կոմերիտական և մոտ 10 հազար անպարտիական. ավելի քան 20 հազար կոմունիստ ինքնուրույն ուսումնասիրում էին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը[1]։ Պրոպագանդիստների ու կոնսուլտանտների կոլեկտիվը էլ ավելի ամրացվեց թեորետիկապես պատրաստված կոմունիստներով՝ բարձրագույն կրթությամբ և առանձնապես գիտական աստիճաններ ունեցողների թվից. ամռան ամիսներին կազմակերպվում էին մեկամսյա կուրսեր գյուղական պրոպագանդիստների և երկամսյա կուրսեր՝ ռեսպուբլիկայի քաղաքների պրոպագանդիստների համար. պրոպագանդիստներին սիստեմատիկ օգնություն էին ցույց տալիս Պարտիայի շրջանային ու քաղաքային կոմիտեներին կից մշտական սեմինարները։ Բացի դրանից, Երևանում և Լենինականում գործում էին Մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարաններ պարտիական ու սովետական ակտիվի ու ինտելիգենցիայի լայն կոլեկտիվի համար։

1947 թ. Երևանում ստեղծվեց ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալը (այժմ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը), որի

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 84։

առջև խնդիր դրվեց Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների ու Հայաստանի Կոմպարտիայի պատմության հարցերի մշակումը, ինչպես նաև մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների թարգմանությունը և հրատարակությունը հայերեն լեզվով։ Աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում խոշոր դեր կատարեց Վ. Ի. Լենինի կենսագրության ուսումնասիրման կազմակերպումը։ 1946 թ. վերսկսվեց պատերազմի ժամանակ դադարեցված, Վ. Ի. Լենինի երկերի ժողովածուի չորրորդ հրատարակությունը և մինչև 1950 թ. ներառյալ լույս տեսան Լենինի երկերի 35 հատորից բաղկացած ժողովածուի 20 հատորները հայերեն լեզվով, հնգամյակի տարիներին ավելի մեծ տիրաժով լույս տեսան մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները. 1947 թ. հայերեն լույս տեսավ Կ. Մարքսի Կապիտալի III հատորի առաջին մասը։ Ուժեղացավ աշխատավորության մեջ պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու սովետական հայրենասիրության ոգով տարվող դաստիարակչական աշխատանքը։

Չորրորդ հնգամյակի տարիներին ծավալվեց ռուսաց լեզվի ուսումնասիրման գործը ռեսպուբլիկայի աշխատավորական լայն մասսաների կողմից։ Կոմունիստական պարտիայի Կենտկոմի 1947 թ. օգոստոսի 27-ի որոշման մեջ նշվում էր միութենական ռեսպուբլիկաներում, մասնավորապես Հայկական ՍՍՌ-ում պարտիական ու սովետական աշխատակիցների կողմից ռուսերեն լեզվի անբավարար գիտենալը։ Այդ թերությունը չէր նպաստում աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործին և նրանց էլ ավելի համախմբմանը ռուս մեծ ժողովրդի՝ Սովետական Միության ժողովուրդների ավագ եղբոր շուրջը։ Հայաստանի քաղկոմներին ու շրջկոմներին կից, բազմաթիվ պարտիական կազմակերպություններում ստեղծվեցին դպրոցներ ու խմբակներ ռուսերեն լեզվի ուսումնասիրության համար։

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի՝ «Ստալինգրադի պարտիական կազմակերպությունում ագիտատորների հետ տարվող աշխատանքի թերությունների և

այն բարելավելու միջոցառումների մասին» հայտնի որոշումից հետո ուժեղացավ մասսայական-բացատրական ագիտացիոն աշխատանքը նաև Հայաստանի աշխատավորության մեջ։ Պարտկազմակերպությունները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել ագիտատորների ու ագիտկոլեկտիվների վրա. բարելավվեց ու ամրացավ ագիտկոլեկտիվների կազմը և նրանց ղեկավարությունը, շատ առաջավոր անպարտիական բանվորներ, կոլտնտեսականներ, ինտելիգենցիայի ներկայացուցիչներ սկսեցին ակտիվ մասնակցություն ցույց տալ բնակչության մեջ տարվող ագիտացիոն աշխատանքներին։ Ագիտատորների 19 հազարանոց կոլեկտիվը լայն ագիտացիոն-մասսայական աշխատանք էր տանում ռեսպուբլիկայում Պարտիայի և Կառավարության կարևորագույն որոշումների, միջազգային քաղաքականության և այլ հարցերի պարզաբանման ուղղությամբ։ Ագիտացիոն աշխատանքը լայն ծավալ էր ընդունում հատկապես ՍՍՌՄ Գերագույն Սովետի, ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի, տեղական Սովետների ընտրությունների կապակցությամբ, ժողովրդական դատարանների ընտրությունների ժամանակ։ Սակայն քաղաքական-մասսայական աշխատանքի ասպարեզում կային լուրջ թերություններ. օրինակ՝ ագիտացիոն աշխատանքը թույլ էր ծավալվում Հայկական ՍՍՌ ադրբեջանական, քրդական, ռուսական բնակչություն ունեցող շրջաններում, հայրենադարձ աշխատավոր հայերի մեջ, ու շատ դեպքերում այդ մեծ քաղաքական աշխատանքը կրում էր կամպանիոն բնույթ՝ կապված հերթական ընտրությունների հետ. անհատի պաշտամունքի պայմաններում այդ պատասխանատու գործում, ինչպես և ընդհանրապես ամբողջ իդեոլոգիական աշխատանքներում, ներառյալ մամուլը, գիտության և արվեստի բնագավառները, տեղ էր գտնում տիրացուական տառակերությունը և դոգմատիզմը։

Ժողովրդին կոմունիզմի ոգով դաստիարակելը հանդիսանում է Կոմունիստական պարտիայի կարևորագույն խնդիրը։ Այդ անխզելիորեն կապված է հենց կոմունիզմի կառուցման պրոցեսի հետ, Կոմունիստական շինարարության հետ մեկտեղ

սովետական մարդիկ հետզհետե վերափոխվում են, նրանց գիտակցության մեջ հաղթահարվում են կապիտալիզմի մնացուկները՝ մասնավոր սեփականատիրական հոգեբանության, բուրժուական բարոյականության մնացորդները, նացիոնալիզմի վերապրուկները և այլն, որն ունի վճռական նշանակություն կոմունիզմի գաղափարների լիակատար հաղթանակի համար։ Կոմունիստական պարտիան հատուկ ուշադրություն էր դարձնում սովետական հայրենասիրության էլ ավելի արմատավորման ու ծավալման վրա։ Ելնելով այս բոլոր խնդիրներից, Պարտիան միշտ էլ վճռական պայքար է տարել ազգային սահմանափակվածության ու շովինիզմի արտահայտությունների դեմ, ինչպես և արևմուտքի բուրժուական կուլտուրայի առջև ստորաքարշության ու սարկամտության տարբեր արտահայտությունների դեմ, զարգացնելով սովետական ժողովրդի մեջ հայրենասիրական վառ զգացմունքները։

Չորրորդ հնգամյակի տարիներին Կոմունիստական պարտիան առանձնապես ուժեղացրեց պայքարը վերև հիշված կարգի վերապրուկների դեմ, որպեսզի բոլորովին արմատախիլ անի դրանք սովետական մարդկանց գիտակցությունից, Պարտիան վճռական հարված հասցրեց կոսմոպոլիտիզմի կոնկրետ արտահայտություններին, որովհետև ստորաքարշությունն ու սարկամտությունը բուրժուական կուլտուրայի առջև խանգարում էր աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին։ Պարտիան ուժեղացրեց պայքարը ամեն տեսակի իդեոլոգիական աղավաղումների դեմ՝ բուրժուական իդեոլոգիայի մնացուկները լրիվ հաղթահարելու համար։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն 1946—1948 թթ. հայտնի որոշումներ ընդունեց գրականության ու արվեստի ասպարեզում՝ գաղափարական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու ուղղությամբ. «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին (1946 թ. օգոստոսի 14), «Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին» (1946 թ. օգոստոսի 26), «Մեծ կյանք» կինոնկարի մասին» (1946 թ. սեպտեմբերի 4),

Վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին» (1948 թ. փետրվարի 10)։ Կենտրոնական Կոմիտեի այս պատմական որոշումները բացահայտեցին խոշոր սխալներ ու թերություններ մեր կուլտուրայի ասպարեզում։ Գաղափարազրկության, ապաքաղաքականության, «արվեստը արվեստի համար» ամեն մի քարոզը միայն վնաս էր բերում սովետական ժողովրդի կոմունիստական դաստիարակության գործին, խորթ էր նրան։ Կենտկոմի որոշումները մոբիլիզացրին սովետական գիտության և կուլտուրայի աշխատողների ուժերը՝ պայքարելու սովետական գիտության, գրականության, արվեստի պարտիականության համար. Նոր, ավելի բարձր մակարդակի բարձրացնելու սոցիալիստական կուլտուրայի բոլոր միջոցները՝ գրականությունը, արվեստը, գիտությունը, մամուլը, ռադիոն, ամբողջ ագիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքը։

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մեծ ուշադրություն դարձրեց սկզբունքային ու օբյեկտիվ քննադատության ծավալմանը, որը անհրաժեշտ էր սովետական գրականության ու արվեստի զարգացման համար։ 1947 թ. սեպտեմբերից «Կուլտուրա ի ժիզն» (Կուլտուրա և կյանք) թերթը՝ Կենտրոնական Կոմիտեի պրոպագանդայի ու ագիտացիայի վարչության օրգանը, որը ծավալեց թերությունների քննադատությունը իդեոլոգիական աշխատանքի տարբեր բնագավառներում ու օգտակար դեր կատարեց եղած թերությունները արմատախիլ անելու գործում։ Չորրորդ հնգամյակի տարիներին Կենտրոնական Կոմիտեի կողմից կազմակերպված դիսկուսիաների շնորհիվ գիտության շատ ասպարեզներում բացահայտվեցին լուրջ սխալներ ու խեղաթյուրումներ։ Նրանք բացահայտեցին գիտնականների առանձին մասի ինքնապարփակումը, նրանց անհանդուրժելի վերաբերմունքը դեպի քննադատությունը և արգելակ հանդիսացան գիտության մեջ կարծիքների պայքարի ու քննադատության ծավալման գործին։ Պարտիան պայքար կազմակերպեց փոխադարձ գովասանքի և սխալներն ու թերությունները լռության մատնող մթնոլորտի դեմ, որը առաջացնում էր լճացում գիտության

մեջ։ Կոմունիստական պարտիան իդեոլոգիական ֆրոնտի ու կուլտուրայի աշխատողների ջանքերը ուղղեց լրիվ կերպով հաղթահարելու այդպիսի հետամնաց մտապատկերները և լրիվ կերպով ծառայելու ժողովրդին ու Սովետական պետությանը։

Հայկական ՍՍՌ աշխատավորության կոմունիստական դաստիարակությունը չորրորդ հնգամյակի տարիներին ծավալվեց շնորհիվ լայն հոգատարության և ուշադրության, որը ցույց էր տալիս այդ կարևոր գործին Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն։ Վերոհիշյալ հայտնի որոշումներից հետո իդեոլոգիական աշխատանքն սկսեց ուժեղանալ նաև ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպություններում։ Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը 1947 թ. դեկտեմբերի 16-ին իր պլենումում ընդունեց կարևոր որոշում՝ «Հայաստանի պարտիական կազմակերպություններում իդեոլոգիական աշխատանքն ուժեղացնելու միջոցառումների մասին»։ Իդեոլոգիական աշխատանքը արմատապես բարելավելու, կադրերի գաղափարական-տեսական մակարդակը բարձրացնելու և աշխատավորության կոմունիստական դաստիարակությունը ուժեղացնելու նպատակով ի կենսագործումն ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1947 թ. օգոստոսի 27-ի որոշման, պրակտիկ միջոցառումներ նշվեցին։ «Պարտիական կազմակերպությունների ամբողջ աշխատանքի կենտրոնում,—նշվում է դեկտեմբերի 16-ի որոշման մեջ.— դնել աշխատավոր մասսաների դաստիարակությունը կոմունիզմի ոգով, սովետական հայրենասիրության ոգով, անհաշտ պայքարը կապիտալիզմի մնացուկների դեմ մարդկանց գիտակցության մեջ, հատկապես նացիոնալիզմի ռեցիդիվների դեմ, պատմության ֆալսիֆիկացիայի և անցյալի իդեալականացման, արևմուտքի ռեակցիոն բուրժուական կուլտուրայի առջև ստորաքարշության դեմ» [1]։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի օգոստոսի 27-ի որոշման մեջ Հայաստանի Կոմպարտիայի ուշադրությունը հրա-

---

1 «Սովետական Հայաստան», 30 դեկտեմբերի 1947։

վիրում էր անցյալի իդեալականացման, բուրժուական նացիոնալիզմի ռեցիդիվների և վերապրուկների դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտության վրա։ Որոշ գիտնականների, գրողների, արվեստի աշխատողների կողմից անցյալի պատմությամբ միակողմանի տարվելը հանգեցրեց նրանց՝ հեռավոր անցյալի իդեալականացմանը, դասակարգային պայքարի և հին Հայաստանի սոցիալական կարգերի շահագործողական էության աղոտմանը, պատմական անձերի և դեպքերի գերագնահատմանը և այդպիսով պատմության աղավաղված, կեղծ շարադրմանը։ Այս բոլորն իր հերթին կարող էր որպես պարարտ հող ծառայել բուրժուական նացիոնալիզմի վերապրուկների համար և խանգարել աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին։ Ռեսպուբլիկայում ծավալվեց նացիոնալիզմի ռեցիդիվների, ապաքաղաքականության, բուրժուական կուլտուրայի առաջ ստորաքարշության երևույթների քննադատությունը և մերկացումը գրականության, արվեստի, գիտության ասպարեզում, սկսեց ուժեղանալ պայքարը նացիոնալ-նիհիլիզմի և հակահայրենասիրական կոսմոպոլիտիզմի արտահայտությունների դեմ։

Պարտիական կազմակերպությունները զգալի աշխատանք ծավալեցին այդ սխալները և թերությունները լիկվիդացնելու ուղղությամբ. իդեոլոգիական ֆրոնտը ամրացվեց ավելի պատրաստված կադրերով, վերանայվեցին գիտահետազոտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքների պլանները՝ այդ հիմնարկները ավելի մոտիկից կապվեցին կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ։ Սակայն, պետք է նշել, որ այդ պայքարի ընթացքում թույլ տրվեցին զգալի խեղաթյուրումներ ու ծայրահեղություններ. շատ դեպքերում առողջ քննադատությունը առանձին գիտնականների, կուլտուրայի և արվեստի աշխատողների վերաբերյալ փոխարինվում էր միտումնավոր քննադատությամբ։ Այնուամենայնիվ, պարտիական կազմակերպությունները ցույց տվեցին լուրջ օգնություն գիտական հիմնարկներին ու բուհերին, արվեստի աշխատողներին, գլխավորեցին նրանց աշխատանքների վերակառուցումը։

*Ուժեղացրին իրենց աշխատանքը ռադիոն և մամուլը. Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմին կից 1947 թ. հիմնվեց «Պարտիական կյանք» (այժմ «Լենինյան ուղիով») տեսական-քաղաքական հանդեսը։ Զորրորդ հնգամյակի վերջին՝ 1950 թ. ռեսպուբլիկայում արդեն հրատարակվում էին 34 ամսագիր 458 հազար տիրաժով և 8 ռեսպուբլիկական, 3 քաղաքային, 38 շրջանային, ինչպես նաև 6 բազմատիրաժ թերթ 186 հազար օրեկան տիրաժով*[1]*։ Ամսագրերի, ռադիոհաղորդումների գաղափարական մակարդակը բարձրացավ, ուժեղացավ պարտիական, սովետական և տնտեսական օրգանների աշխատանքների թերությունների քննադատությունը։ Մամուլը լուրջ կերպով օգնում էր վերացնելու այդ թերությունները։*

*Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական Միության աշխատավորությունը, այդ թվում և Հայկական ՍՍՌ աշխատավորությունը ակտիվ պայքարի մեջ ներգրավվեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը վերականգնելու ու էլ ավելի զարգացնելու, սովետական ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի հետագա ծաղկման համար։*

***

*Խաղաղ ստեղծագործական շինարարության ծավալման համար մեծ նշանակություն ունեցավ բարձր տարիք ունեցողների զորացրումը Սովետական Բանակի շարքերից, որը իրականացվեց Սովետական կառավարության կողմից գլխավորապես 1945—1946 թթ. ընթացքում և պլանային կարգով՝ հաջորդ տարիներին։ Սովետական բանակի միլիոնավոր զորացրված մարտիկներ, այդ թվում և հայ մարտիկներ վերա-*

---

*[1] Տե՛ս ՍՍՌՄ Կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, 1956, ռուսերեն, էջ 34—35 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։*

դարձան քաղաքացիական աշխատանքի ասպարեզը։ Այստեղ նրանք գտան լրիվ աջակցություն և պարտիական ու սովետական օրգանների կողմից ցույց տրվող հոգատար վերաբերմունքի շնորհիվ տեղավորվեցին աշխատանքի ըստ իրենց մասնագիտությունների։ Զորացրված մարտիկների զգալի մասը, որը պատերազմի պատճառով չէր ավարտել իր կրթությունը, արտոնյալ պայմաններով ընդունվեց բարձրագույն ուսումնական հաստատություններ, տեխնիկումներ և այլ ուսումնական հիմնարկներ։ Հայրենական պատերազմի ճակատամարտերում Հայրենիքի առաջ իրենց պարտքը պատվով կատարած Սովետական Բանակի զորացրված մարտիկները խաղաղ շինարարության պայմաններում ներգրավվեցին կոմունիստական շինարարության՝ չորրորդ հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու համար ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում սոցիալիստական մրցություն կազմակերպելու ու ծավալելու գործի մեջ։ Ամբողջ սովետական ժողովուրդը տոգորված էր ստեղծագործական, աշխատանքային վերելքով՝ պատերազմի հետևանքները վերացնելու և խաղաղ շինարարության ասպարեզում Կոմունիստական պարտիայի կողմից դրված խնդիրների իրականացման գործում նոր հաղթանակների հասնելու համար։

Այդպիսի պայմաններում, 1947 թ. սկզբին Հայկական ՍՍՌ-ում, ինչպես և մյուս Միութենական ռեսպուբլիկաներում, տեղի ունեցան Գերագույն Սովետի երկրորդ գումարման ընտրությունները։ 1947 թ. փետրվարի 5-ին հրապարակվեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի նախընտրական դիմումը ռեսպուբլիկայի բոլոր ընտրողներին։ Այդ դիմումի մեջ նշվում էր, որ սովետական ժողովուրդը և նրա ընտանիքում հայ ժողովուրդը իր փորձով համոզվել է, որ Կոմունիստական պարտիայի քաղաքականությունը համապատասխանում է ժողովրդի արմատական շահերին, որ Պարտիայի ամբողջ գործունեությունը՝ ժողովրդին ինքնազոհ կերպով ծառայելն է։ Հայրենական Մեծ պատերազմի տարիները ցույց տվեցին Կոմպարտիայի քաղաքակա-

նության հաղթանակը։ Դիմումում նշվում էր, որ Պարտիան ինչպես նախորդ ընտրություններին, այնպես և 1947 թ. ընտրությունների էր գնում բլոկ կազմած անպարտիական բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի հետ։

Սովետական Միության մեջ կոմունիստների ու անպարտիականների հզոր բլոկը բնական ու կենսական երևույթ է, որովհետև մեր սոցիալիստական երկրում կոմունիստներն ու անպարտիականները, ապրելով մի ընդհանուր կոլեկտիվում և գործելով մի ընդհանուր նպատակի համար, չեն խնայում իրենց ուժերը Սովետական պետության հզորությունը ամրապնդելու գործում։ Դրա համար դիմումը համոզմունք էր արտահայտում, որ բոլոր ընտրողները նորից ցույց կտան իրենց վստահությունը Պարտիային, հավանությունը կտան նրա քաղաքականությանը և ձայն կտան կոմունիստների ու անպարտիականների բլոկի թեկնածուներին։

Դիմումի մեջ նշվում էր հայ ժողովրդի բազմաչարչար անցյալը, նրա վերածնունդը և փայլուն հաղթանակները Սովետական իշխանության տարիների ընթացքում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի զարգացման, աշխատավորության նյութական բարեկեցության և կյանքի կուլտուրական մակարդակի բարձրացման բնագավառներում և ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ հայ ժողովրդի բարեկամությունն ամրապնդելու գործում։ Դիմումի մեջ մատնանշվում էր, որ քվեարկելով կոմունիստների և անպարտիականների բլոկի թեկնածուների օգտին, ռեսպուբլիկայի աշխատավորները կքվեարկեն Հայկական ՍՍՌ 26 տարվա գոյության ընթացքում ձեռք բերած բոլոր նվաճումների ամրապնդման և հետագա զարգացման օգտին։ Դիմումը կոչ էր անում Սովետական Հայաստանի բոլոր ընտրողներին էլ ավելի սերտ համախմբվել Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության շուրջը և պայքարել մեր Հայրենիքի հետագա ծաղկման, կոմունիզմի լրիվ հաղթանակի համար Սովետական Միության մեջ [1]։

[1] «Սովետական Հայաստան», 5 փետրվարի 1947։

Հայ ժողովուրդը Գերագույն Սովետի ընտրությունները դիմավորեց քաղաքական մեծ վերելքի պայմաններում, ընդհանուր ժողովներում բանվորներն ու ծառայողները, կոլտնտեսականները, Սովետական Բանակի մարտիկները, հրամանատարները Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատության թեկնածուներ առաջադրեցին կոմունիստների ու անկուսակցականների բլոկի արժանի լավագույն մարդկանց։

Փետրվարի 9-ը՝ ընտրությունների օրը դարձավ Հայկական ՍՍՌ աշխատավորների համաժողովրդական տոն։ Կոմունիստների ու անկուսակցականների բլոկը փայլուն հաղթանակ տարավ։ Հայկական ՍՍՌ բոլոր ընտրական օկրուգներում ցուցակագրված 713,240 ընտրողների ընդհանուր թվից ընտրություններին մասնակցեցին 713,164 մարդ, այսինքն՝ ցուցակագրված ընտրողների ընդհանուր թվի 99,99%։ Դրանցից կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին իրենց ձայնը տվեցին 711.747 մարդ, որը կազմում է քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 99,81%։ Ընտրված 269 դեպուտատներից 203-ը կոմունիստներ էին, իսկ 66-ը՝ անկուսակցականներ. դեպուտատներից 75-ը կանայք էին[1]։ Գերագույն Սովետի դեպուտատներ ընտրվեցին հայ ժողովրդի և մեր ռեսպուբլիկայում բնակվող մյուս եղբայրական ժողովուրդների լավագույն զավակներն ու դուստրերը։ Սովետական դեմոկրատիայի իսկական ժողովրդականությունն արտահայտվեց նրա բնորոշ գծերից մեկում, որ դեպուտատներ ընտրվեցին պարտիական ու սովետական աշխատողներ, Հայրենական պատերազմի մասնակիցներ, անվանի բանվորներ ու կոլտնտեսականներ, առաջավոր արդյունաբերական ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների ղեկավարներ, գիտության, գրականության, արվեստի լավագույն աշխատողներ։

Նրանց թվում էին Ղափանի հանքավայրերի բանվոր Հմայակ Մարտիրոսյանը, Ալ. Մյասնիկյանի անվան գործարանի

[1] «Սովետական Հայաստան», 10 փետրվարի 1947։

էլեկտրիկ Աննա Գեոկչյանը, Լենինականի երկաթուղային դեպոյի մեքենավար-ինստրուկտոր, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Անդրանիկ Խաչատրյանը, կոլտնտեսականներ՝ Հակոբ Կիրակոսյանը, Նազանի Գալստյանը, Վերին Խաթունարխ գյուղի կոլտնտեսության նախագահ Ռեբեկա Ղարիբյանը, ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, ժողովրդական դերասանուհի Հայկանուշ Դանիելյանը, բանաստեղծ Գեղամ Սարյանը, ճարտարապետ Կարո Հալաբյանը, Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Խաչատուր Կոշտոյանցը, քուրդ ժողովրդի զավակ, Սովետական Միության Հերոս Սամանդ Սիաբանդովը և շատ ուրիշներ։

Ընտրությունների կամպանիան Հայաստանի աշխատավորները նշանավորեցին աշխատանքային հուժկու վերելքով, արտադրական հաջողություններով գործարաններում ու ֆաբրիկաներում, նորակառույցներում, գյուղատնտեսության մեջ, պետական ժողովրդա-տնտեսական պլանների ժամկետից շուտ կատարումով։ Այսպես, օրինակ. Ղափանի անվանի հանքափոր Արամ Խաչատրյանը հունվար ամսվա ընթացքում կատարեց իր ամբողջ եռամսյա պլանը։ Նույն ձևով էին աշխատում շքանշանակիրներ Հմայակ Ներսիսյանի և Լևոն Ստեփանյանի գլխավորած բրիգադները։ Հանքափորներ՝ Մ. Հուսեյինովը, Ա. Հակոբյանը, Ս. Լուստինովը, Մ. Պաստերը, Մ. Իսմայիլովը ցույց էին տալիս անձնվեր աշխատանք։ Երևանի Ձերժինսկու անվան դազգահաշինական գործարանի բանվորներ Գ. Գուլյանը, Վ. Այվազյանը, Յա. Նովիկովը, Ի. Հովհաննիսյանը, կոմերիտականներ՝ Միքայելյանը, Առաքելյանը, Հարությունյանը, Շախմանյանը զգալի չափով գերակատարում էին իրենց պլանները։ Արհեստագործական ուսումնարանը ավարտած Վալենտին Միքայելյանը հունվարի 31-ին, հերթափոխության ընթացքում, կատարեց 15 նորմա, Մարիամ Առաքելյանը գործարանի բանվորուհիներից առաջինը դարձավ հազարական։ Երևանի կոշիկի № 3 գործարանի երիտասարդ բանվորներ՝ ընտրություններին առաջին անգամ մասնակցող Գ. Հակոբյանը և Ս. Կարապետյանը օրեկան կատարում էին երկու արտադրական նորմա և այլն։

Մեքենա-տրակտորային կայանի աշխատողները պատասխանելով Կուբանի մեխանիզատորների կոչին, սոցիալիստական մրցություն ծավալեցին ի պատիվ ընտրությունների և մինչև փետրվարի 10-ը կատարեցին տրակտորների վերանորոգման պլանը։ Ալագյազի շրջանի կոլտնտեսությունները ընտրությունների նախօրյակին ավարտեցին գյուղատնտեսական գործիքների վերանորոգումը, դաշտ փոխադրեցին պարարտանյութերը, վերջացրին սերմաղտման աշխատանքները. նույնը կատարեցին և Ղափանի շրջանի Բաղաբուրջ, Շիշկերտ, Չեյվա գյուղերի և շատ ուրիշ կոլտնտեսությունները։ Այսպիսի աշխատանքային խանդավառություն էին ցուցաբերում Հայաստանի աշխատավորները։

Վ. Ի. Լենինը նշել է, որ Սովետները՝ պետության կառավարման նոր ձև են, դեմոկրատիայի նոր, բարձրագույն ձև, որ Սովետները հազար անգամ ավելի մոտ են ժողովրդին, քան ամենից դեմոկրատական-բուրժուական պառլամենտը[1]։ Կոմունիստական պարտիան Սովետների միջոցով պետական գործունեության մեջ է ներգրավում լայն աշխատավորական մասսաներին։ Քաղաքային, շրջանային, գյուղական, մարզային, երկրամասային Սովետների, միութենական ռեսպուբլիկաների Գերագույն Սովետների և ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատներ են հանդիսանում բանվորների, գյուղացիների և սովետական ինտելիգենցիայի մեկ և կես միլիոն ներկայացուցիչներ։ Սովետական իշխանությունը աշխարհում ամենահզոր ու հեղինակավոր իշխանությունն է։ Չնայած անհատի պաշտամունքի, որը լուրջ վնաս հասցրեց և սովետական դեմոկրատիայի զարգացմանը, հակառակ նրան սովետական ժողովուրդը չորրորդ հնգամյակի տարիներին շարունակում էր օգտվել սովետական դեմոկրատիայի բարիքներից, զարգացնում էր այն իր անընդհատ աճող ակտիվ մասնակցությամբ պետության կառավարման գործում։ Մշտական և էլ ավելի ընդլայնող դեմոկրատիան՝ ահա ինչն է բնորոշում Սովետա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 120—121։

կան սոցիալիստական կարգերը, որպես նոր հասարակական-քաղաքական սիստեմ։

1947 թ. աշնանը Հայկական ՍՍՌ-ում, ինչպես և մյուս սովետական ռեսպուբլիկաներում բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան, պարտիականները և անպարտիականները աշխարհում ամենադեմոկրատական Սովետական Կոնստիտուցիայի հիման վրա աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային, գյուղական և ավանային Սովետների դեպուտատության թեկնածուներ առաջադրեցին և ընտրեցին ժողովրդին, սոցիալիստական Հայրենիքին ու Կոմունիստական պարտիային նվիրված իրենց լավագույն ներկայացուցիչներին։ Տեղական Սովետների ընտրական կամպանիան, նախընտրական ժողովները, դեպուտատության թեկնածուների հետ ընտրողների հանդիպումները նպաստեցին բացահայտելու թերությունները տեղական Սովետների գործադիր մարմինների ու նրանց ղեկավարների աշխատանքներում։

Աշխատավորները իրենց հանձնարարությունն (նակազը) էին տալիս, մտցնում էին առաջարկներ տեղական Սովետների աշխատանքները բարելավելու ուղղությամբ և դա զգալի չափով օգնեց իշխանության տեղական մարմինների աշխատանքի ամրացմանն ու բարելավմանը։ Այսպես, օրինակ, Երևանի քաղաքային ու շրջանային նոր գումարման Սովետների դեպուտատության թեկնածուների առաջ նախընտրական ժողովներում դրվեցին քաղաքային տրանսպորտի և էլեկտրացանցի աշխատանքների լավացման, փողոցների, բանվորական ավանների, բնակելի տների բարեկարգման, բաղնիքների շինարարության, աշխատավորության կուլտուր-կենցաղային սպասարկման ուղղությամբ աշխատանքների ուժեղացման հարցերը։ Ընտրողները քաղաքային ու շրջանային Սովետների գործադիր կոմիտեներից պահանջեցին բարելավել կոմունալ բաժինների աշխատանքները, ուժեղացնել միլիցիայի օրգանների աշխատանքը, բարձրացնել քաղաքի սանիտարական վիճակը, ընդլայնել խանութների, ճաշարանների ցանցը, կառուցել նոր շուկաներ, վերացնել առևտրական կազմակերպու-

*թյունների աշխատանքներում գոյություն ունեցող խոշոր թերությունները և այլն։ Շրջանային ու գյուղական Սովետների ուշադրության կենտրոնում դրվեցին կոլտնտեսություններում ու մեքենա-տրակտորային կայաններում աշխատանքի ճիշտ կազմակերպման, կոլտնտեսությունները պարարտանյութերով, բարձրորակ սերմերով, գույքով, շինանյութերով և այլ միջոցներով ապահովելու, գյուղական բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկումը լավացնելու, գյուղերը բարեկարգելու և ուրիշ շատ հարցեր։*

*Ռեսպուբլիկայի աշխատավորները ընտրությունների օրը դիմավորեցին արտադրական հաջողություններով. Հայաստանի արդյունաբերությունը ժամկետից շուտ ավարտեց 1947 թ. պլանի կատարումը. կոլտնտեսային գյուղացիությունը կատարեց պետական բոլոր պարտավորությունները և նախապատրաստվեց 1948 թ. գյուղատնտեսական աշխատանքներին։ Ընտրություններին աշխատավորները մեկ անգամ ևս ցուցադրեցին իրենց բարոյա-քաղաքական միասնությունը և անխախտ բարեկամությունը Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ։ Ընտրությունները մեկ անգամ ևս ցուցադրեցին սովետական դեմոկրատիայի ուժը։ 1947 թ. դեկտեմբերի 21-ին Հայկական ՍՍՌ աշխատավորները ընտրեցին 38 շրջանային, 11 քաղաքային, 711 գյուղական և 24 ավանային դեպուտատների Սովետներ։ Քվեարկությանը մասնակցեցին ցուցակագրված ընտրողների 99,99%։ Կոմունիստների ու անպարտիականների բլոկի թեկնածուների օգտին իրենց ձայնը տվեցին քվեարկությանը մասնակցած ընտրողների 99,62%։ Ընդամենը բոլոր տեղական Սովետներում ընտրվեցին 12,195 մարդ. ընտրվածների թվում կային 4118 կին, որոնք կազմում էին դեպուտատների թվի 33,77%։ Կոմունիստական պարտիայի անդամներից ու անդամության թեկնածուներից դեպուտատ ընտրվեցին 6411 մարդ, այսինքն 52,57%, անպարտիական աշխատավորներ՝ 5784, որը կազմում էր 47,43% [1]։*

---

[1] *«Սովետական Հայաստան», 26 դեկտեմբերի 1947։*



5—1568

Տեղական Սովետների հաջող գործունեությունը այդքան շատ բանում կախված էր նրանց կազմակերպական-մասսայական աշխատանքից: Այնտեղ, որտեղ տեղական Սովետներին կից մշտական գործող հանձնաժողովները, ընդգրկում էին բացի դեպուտատներից նաև սովետական ակտիվը, հենվում նրա վրա և այդպիսով ներգրավում էին լայն մասսաներին իրենց աշխատանքի մեջ՝ պետության կառավարման գործի մեջ,— այնտեղ տեղական Սովետները հաջող կերպով կատարում էին տնտեսական ու կուլտուրական շինարարության ղեկավարման խնդիրները ու վերացնում աշխատանքի մեջ ունեցած թերությունները: Տեղական Սովետները, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ գլխավորեցին բանվորների, ծառայողների, գյուղացիության քաղաքական ու աշխատանքային վերելքը հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ՝ չորս տարում կատարելու, առաջավորների փորձը մասսայականացնելու և ծավալելու ուղղությամբ, օգնում էին արդյունաբերական ձեռնարկություններին ու կոլտնտեսություններին կատարելու իրենց պլանները և այլն: Սրանում էր կայանում և կայանում է Սովետների, սովետական դեմոկրատիայի ուժը, նրա ծաղկումը:

Հայկական ՍՍՌ աշխատավորության քաղաքական ակտիվության և աշխատանքային վերելքի, չորրորդ հնգամյա պլանի հաջող կատարման պայմաններում 1948 թ. նոյեմբերին կայացավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի XIV համագումարը:

Համագումարը իր ընդունած բանաձևում նշեց արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի ասպարեզում եղած հաջողությունները, որոնք ձեռք էին բերվել ռեսպուբլիկայի աշխատավորության կողմից Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ: Լուծելով ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման խնդիրները, պարտիական կազմակերպությունները գլխավորեցին Հայկական ՍՍՌ բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի համառ պայքարը չորրորդ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար:

Բանաձևում նշվում էր, որ զգալի չափով ավելացել էր արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ընդհանուր ծավալի մեջ։ Ստեղծվել էին արդյունաբերության նոր ճյուղեր, ավելացել էր ձեռնարկությունների թիվը և նրանց կողմից թողարկվող արտադրանքի ասորտիմենտը։ Աշխատանք էր կատարվել Հայկական ՍՍՌ էներգետիկ բազայի լայնացման ուղղությամբ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար և ծավալվել մի շարք նոր խոշոր ձեռնարկությունների շինարարությունը։ Արդյունաբերական ձեռնարկությունների պարտիական կազմակերպությունները գլխավորեցին սոցիալիստական մրցման վերելքը աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման, արտադրանքի որակի բարելավման և ինքնարժեքի իջեցման, շահութաբեր աշխատանքի անցման ու գերպլանային սոցիալիստական կուտակումներ ստեղծելու համար։

Գյուղատնտեսության մեջ ընդլայնվել էին ցանքատարածությունները, բարձրացել էր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Տեղի էր ունենում կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական հետագա ամրացումը, աշխատանքային կարգապահության ամրապնդումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումը կոլտնտեսություններում։ Զգալի աշխատանք էր կատարվել ոռոգելի տարածությունների ընդարձակման ուղղությամբ՝ ջրանցքների շինարարության ու ճահճային հողերի չորացման միջոցով։ Ծավալվել էին աշխատանքները կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների էլեկտրիֆիկացման ուղղությամբ։

Սկսել էր բարելավվել աշխատանքը պարտիական պրոպագանդայի և ագիտացիայի բնագավառում, բարձրացել էր կոմունիստների և բոլոր աշխատավորների գաղափարական-քաղաքական պատրաստականության մակարդակը։ Ուժեղացել էր պայքարը մարդկանց գիտակցության միջից կապիտալիզմի մնացուկները, բուրժուական նացիոնալիզմի վերապրուկների ու բուրժուական կուլտուրայի հանդեպ ստորաքարշությունը արմատախիլ անելու ուղղությամբ։

Պարտկազմակերպությունները, ավելի հաջող կերպով համատեղելով պարտիական աշխատանքը տնտեսական աշխատանքի հետ, բարձրացրել էին իրենց քաղաքական ղեկավարության մակարդակը տնտեսական ու սովետական կազմակերպությունների, գիտահետազոտական և կուլտուրական հիմնարկների, բարձրագույն ուսումնական հիմնարկների և այլ գործունեության հանդեպ։

Հայաստանի Կոմպարտիայի XIV համագումարը բացահայտեց մեծ թերություններ, որոնք կային ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Այսպես, օրինակ, որոշ արդյունաբերական ձեռնարկություններ հետ էին մնում արտադրական պլանների կատարման գործում։ Արդյունաբերական ձեռնարկությունների ռեզերվային հնարավորությունները լրիվ չէին օգտագործվում, հումքը, էլեկտրաէներգիան, վառելանյութը ծախսվում էին առանց խնայողության, արտադրության տեխնիկական կուլտուրան դեռևս չէր բավարարում արդյունաբերության պահանջներին։ Կապիտալ շինարարության մեջ բազմաթիվ օբյեկտներում տեղ էր գտել միջոցների, նյութա-տեխնիկական ռեսուրսների և բանվորական ուժի ցրվածություն, որը կասեցնում էր ժողովրդական տնտեսության նոր հիմնական ֆոնդերի շահագործման հանձնելը։ Դեռևս վատ էին կենսագործվում Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության որոշումները բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կուլտուր-կենցաղային սպասարկումը բարելավելու ուղղությամբ։

Գյուղատնտեսության մեջ մեծ թերություն էին հանդիսանում աշխատանքի վատ կազմակերպումը, անբավարար ուշադրությունը դեպի անասնակերային բազայի ընդլայնման, արոտավայրերի, մարգագետինների ճիշտ օգտագործման հարցերը, որը խանգարում էր անասնապահության արագ զարգացմանը և անասունների մթերատվության բարձրացմանը։ Թռչնաբուծությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը շատ դանդաղ էին զարգանում։ Մրգատու և խաղողի այգի-

ների բերքատվությունը ցածր էր։ Մեքենա-տրակտորային կայանները լրիվ չէին կատարում ամենակարևոր ագրոտեխնիկական աշխատանքները և անբավարար էին ներդնում մեքենայացումը գյուղատնտեսական արտադրության աշխատատար պրոցեսներում։ Լուրջ թերություններ կային ժողովրդական կրթության ասպարեզում, բուհերի և գիտահետազոտական հիմնարկների աշխատանքների մեջ և այլն։

Իր որոշումներում Հայաստանի Կոմունիստական պարտիայի համագումարը մատնանշեց, որ ռեսպուբլիկայի պարտկազմակերպությունների կարևորագույն խնդիրն է հանդիսանում աշխատավորների ուժերի մոբիլիզացումը չորրորդ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու՝ արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացման, աշխատավորության նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման համար։ Համագումարը հանձնարարեց Կենտրոնական Կոմիտեին մշակել և իրագործել մի շարք կոնկրետ միջոցառումներ՝ զարգացող արդյունաբերությունը էներգետիկ բազայով ապահովելու գործում, ինչպես և հատուկ ուշադրություն դարձնել քիմիական, մետալուրգիական և մեքենաշինական արդյունաբերության հետագա զարգացման վրա՝ որպես Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերի։ Թեթև արդյունաբերության զարգացման և լայն սպառման ապրանքների արտադրության ծավալման նպատակով համագումարը անհրաժեշտ գտավ արագացնել միութենական-ռեսպուբլիկական և ռեսպուբլիկական ենթակայության, տարբեր մինիստրությունների ու արհեստագործական կոոպերացիայի գծով մի շարք ֆաբրիկաների ու կոմբինատների շինարարությունը և ընդլայնումը։

Համագումարը պարտավորեցրեց պարտկազմակերպություններին և արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական ղեկավարներին հասնել արտադրության տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործմանը, ապահովել աշխատանքի արտադրողականության աճը, թողարկվող արտադրանքի որակի բարձրացումը, արտադրական հզորություննե-

րի լրիվ օգտագործումը, հումքի, էլեկտրաէներգիայի, վառելանյութի, օժանդակ նյութերի և դրամական գումարների էլ ավելի խնայողությունը, արտադրանքի ինքնարժեքի ամեն կերպ իջեցումը։ Կապիտալ շինարարության ասպարեզում՝ ապահովել մեքենայացման ուժեղացումը, շինարարության էժանացումը և արագացումը, նախահաշիվներում ավելորդ ծախսերի կրճատումը, աշխատանքի կազմակերպման գործի լավացումը, շինարարությունն արագացնող մեթոդների կիրառումը։ Երկաթուղային տրանսպորտի ասպարեզում՝ հասնել նրա աշխատանքների բարելավմանը և ժողովրդա-տնտեսական փոխադրումների պլանների կատարմանը և գերակատարմանը։ Համագումարը պարտավորեցրեց պարտիական կազմակերպություններին ավելի լավ ղեկավարել արտադրությունը՝ պարտիական-քաղաքական աշխատանքը տնտեսական աշխատանքի հետ ճիշտ զուգակցելու և ադմինիստրացիայի գործունեության վրա սիստեմատիկ հսկողություն իրագործելու ճանապարհով, ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները հնգամյա պլանը չորս տարում կատարելու համար սոցիալիստական մրցման մեջ մտած բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների ու ծառայողների կողմից վերցված պարտավորությունները հաջողությամբ կատարելու համար։

Գյուղատնտեսության ասպարեզում, որպես գլխավոր խնդիր, համագումարը նշեց գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության կրկնապատկումը և անասնապահության մթերատվության բարձրացումը՝ սովետական առաջավոր ագրոբիոլոգիական գիտության նվաճումները գյուղատնտեսության մեջ ներդնելու, հողի մշակումը և սերմնաբուծական տնտեսությունը բարելավելու, 1949 թ. հացահատիկային կուլտուրաների ամբողջ ցանքսերը տեսակավոր սերմերով ապահովելու, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման, գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի բարձրացման, դաշտավարության, այգեգործության և անասնապահության մեջ աշխատատար պրոցեսների մեքենայաց-

ման, կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների էլեկտրիֆիկացիայի ծավալման հիման վրա։ Համագումարը որոշեց արագ կերպով ավարտել մի շարք ոռոգելի ջրանցքների կառուցումը, ինչպես և ճահճացած հողերի չորացումը. ընդլայնել խաղողի և մրգատու այգիները՝ լայնորեն ներդնելով ռեսպուբլիկայի լեռնային շրջաններում միչուրինյան տեսակները, հատուկ ուշադրություն դարձնել մերձարևադարձային նոր կուլտուրաների՝ ձիթապտղի, թուզի, նուշի, խուրմայի զարգացմանը Նոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի և այլ շրջաններում, վճռականորեն ընդլայնել սննդահամի արդյունաբերության և Կոնսերվտրեստի սովխոզների աշխատանքը, ապահովել անասունների գլխաքանակի աճը, բարձրացնել անասնապահության մթերատվությունը, ընդլայնել նրա կերային բազան, ավելի շատ ուշադրություն դարձնել թռչնաբուծության, մեղվաբուծության և շերամապահության վրա։

XIV համագումարը հանձնարարեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և ռեսպուբլիկայի մյուս գիտահետազոտական ինստիտուտներին ու սելեկցիոն կայաններին մինչև վերջ վերակառուցել իրենց աշխատանքները առաջավոր ագրոբիոլոգիական գիտության հիման վրա գյուղատնտեսության առաջ դրված ակտուալ խնդիրները լուծելու համար։ Պետք էր գյուղատնտեսության արտադրության մեջ լայնորեն ներդնել սովետական առաջավոր բիոլոգիական գիտության նվաճումները և գյուղատնտեսության առաջավորների փորձը։ Համագումարը պարտիական կազմակերպություններին պարտավորեցրեց պայքար ծավալել գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը անշեղ կերպով կյանքում կենսագործելու, նրա խախտումները վերացնելու, կոլտնտեսություններում աշխատանքը ճիշտ կազմակերպելու և կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական-տնտեսական ամրացման ու կոլտնտեսականների նյութական բարեկեցության բարձրացման համար։

Ժողովրդական կրթության ասպարեզում XIV համագու-

մարը գլխավոր խնդիրը համարեց գյուղում ընդհանուր ութ-ամյա պարտադիր ուսուցման, իսկ քաղաքում՝ լրիվ միջնակարգ ուսուցման իրականացումը, ուսման որակի բարձրացումը, դպրոցների, առանձնապես գյուղական դպրոցների, ապահովումը բարձրագույն կրթություն ունեցող ուսուցչական կադրերով, տանելով ամենօրյա սիստեմատիկ աշխատանք նրանց գաղափարական-քաղաքական մակարդակի ու որակավորման բարձրացման ուղղությամբ։ Համագումարը կարևորագույն խնդիրներից մեկը համարեց պարտիական ու սովետական կադրերի կողմից ռուսերեն լեզվի ուսումնասիրման գործի բարելավումը։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության և նորակառույցների կարիքը բարձրորակ կադրերով ապահովելու համար համագումարը բոլոր ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների պարտիական կազմակերպություններին, տնտեսական ղեկավարներին պարտավորեցրեց ուժեղացնել աշխատանքը բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատակիցների պատրաստման ու նրանց որակավորումը բարձրացնելու ուղղությամբ։

Գիտության ու կուլտուրայի ասպարեզում գլխավոր խընդիրը՝ կոմունիստական շինարարության առօրյայի հետ կապված բարձր գաղափարական-գիտական աշխատությունների ստեղծումն էր, գեղարվեստական արժեքավոր և գաղափարապես հագեցված երկերի ստեղծումը՝ գրականության, երաժըշտության, կերպարվեստի, դրամատուրգիայի, կինեմատոգրաֆիայի գծերով, որոնք պետք է արտահայտեին կոմունիստական շինարարության հերոսիկան և սովետական մարդկանց հոգեկան կերպարը, հասարակական գիտությունների դասավանդման բարելավումը, գիտության, գրականության, արվեստի աշխատողների մարքս-լենինյան դաստիարակության ուժեղացումը։

XIV համագումարը պահանջեց կտրուկ կերպով բարելավել կուլտուր-լուսավորական աշխատանքը աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում՝ մանավանդ գյուղում։ Խնդիր էր դրվում բարձրացնել երիտասար-

դության սպորտային ու ֆիզկուլտ պատրաստականությունը, բարելավել բնակչության նյութական դրությունը, կուլտուր-կենցաղային սպասարկումը, վերակառուցել առողջապահության օրգանների աշխատանքը, բարելավելով գյուղական բնակչության բժշկական սպասարկումը, ծավալել սովետական առևտուրը՝ մասնավորապես ընդլայնել առևտրի ցանցը գյուղում, ընդլայնել և բարձրացնել առևտրի կուլտուրան պատշաճ ուշադրություն դարձնելով առևտրի աշխատողների կադրերի ընտրության, տեղավորման ու նրանց դաստիարակման գործին։

Համագումարը պարտիական կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկը համարեց պարտիական-քաղաքական աշխատանքի հետագա ուժեղացումը և պարտավորեցրեց վերջ տալ կազմակերպական ու դաստիարակչական աշխատանքի փոխարեն դեռ տեղ գտած վարչարարական պրակտիկային, ամենօրյա օգնություն ցույց տալ և ամրացնել սովետական ու տնտեսական հիմնարկների ապարատը, խրագործել տնտեսական ղեկավարությունը ոչ թե այդ օրգաններից դուրս, այլ նրանց միջոցով, բարձրացնելով սկզբնական պարտկազմակերպությունների դերը, կոմունիստների ավանգարդային դերը արտադրության մեջ։

Համագումարը Հայկական ՍՍՌ Պրոֆմիությունների խորհրդին և բոլոր պրոֆմիութենական կազմակերպություններին հանձնարարեց ուժեղացնել աշխատանքը աշխատավորության կոմունիստական դաստիարակության ուղղությամբ, բարելավել աշխատավորների ապրուստի նյութական և կուլտուր-կենցաղային պայմանները, ուժեղացնել պայքարը աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդման համար, լայն կերպով ծավալել սոցիալիստական մրցությունը աշխատանքի արտադրողականության բարձրացման և պետական պլաններր ժամկետից շուտ կատարելու համար։ Համագումարը ուշադրություն հրավիրեց կոմերիտական կազմակերպությունների աշխատանքների ուժեղացմանը, կոմերիտականների ու ամբողջ երիտասարդության կոմունիստական դաստիարակու-

թյան, նրանց մարքս-լենինյան կրթության գործի բարելավման, կոմերիտական կազմակերպությունների դերը արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ բարձրացնելու անհրաժեշտության վրա։

XIV համագումարը կոչ արեց պարտիական կազմակերպություններին ուժեղացնել պայքարը մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի վերապրուկների, բուրժուական նացիոնալիզմի ամեն մի ռեցիդիվի, ազգային նիհիլիզմի արտահայտությունների ու նեխվող բուրժուական կուլտուրայի առաջ ստորաքարշության դեմ, մերկացնել դաշնակների՝ իմպերիալիստների այդ վարձկանների ու գործակալների դավաճանական գործունեությունը և ռեակցիոն մտքերը։ Համագումարը պարտիական կազմակերպություններին և բոլոր կոմունիստներին կոչ արեց մոբիլիզացիայի ենթարկել ռեսպուբլիկայի աշխատավորության ուժերը մեր մեծ Սովետական Հայրենիքի ռազմա-էկոնոմիկական հզորության հետագա ամրապնդման և Կոմունիստական պարտիայի կողմից սովետական ժողովրդի առջև դրված բոլոր խնդիրները ի կատար ածելու համար[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի XIV համագումարից հետո համառ պայքար ծավալեց կոմունիստական շինարարության հետագա հաղթանակների համար։ Համագումարի որոշումները, պարտիական, սովետական, տնտեսական և այլ կազմակերպությունների աշխատանքների թերությունների քննադատությունը համագումարում մոբիլիզացրեցին ռեսպուբլիկայի աշխատավորության ուժերը կատարելու Կոմունիստական պարտիայի կողմից նշված խնդիրները։

Տեղական Սովետների ընտրությունները և այն ուշադրությունը, որը ցույց էր տալիս Կոմունիստական պարտիան նրանց գործունեությանը, զգալիորեն բարելավեցին

---

[1] Տե՛ս Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի XIV համագումարի բանաձևը Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ, 1948, էջ 1—30։

Սովետական իշխանության տեղական օրգանների աշխատանքը։ Կոլտնտեսությունների խոշորացումից հետո, որը կատարվեց 1949—1950 թթ. ընթացքում, պարտիական կազմակերպությունները քանակական տեսակետից պակասեցին 353 միավորով, սակայն այդ կոլտնտեսությունների միավորված պարտիական կազմակերպությունները նույնպես դարձան ավելի խոշոր, բազմանդամ, համեմատաբար ուժեղացավ նրանց դերը ներկոլտնտեսային կյանքում։ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը կոլտնտեսային պարտկազմակերպությունների քարտուղարների համար՝ նրանց գործնական ու քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպեց մեկ ամսյա կուրսեր, որտեղ 1950 թ. վերջին սովորում էին 403 մարդ[1]։

Հայկական ՍՍՌ գիտա-հետազոտական հիմնարկների պարտկազմակերպությունները գլխավորեցին գիտական աշխատողների ջանքերը, որոնք ուղղված էին այն բանին, որպեսզի ծավալեն քննադատությունը և կարծիքների պայքարը գիտական աշխատանքում և նպաստեն սովետական գիտության նորանոր նվաճումներին։

Պարտիական կազմակերպությունները գլխավորեցին արդյունաբերության բնագավառի աշխատողների կողմից ծավալած սոցիալիստական մրցությունը, որը ուղղված էր արտադրական պլանները ժամկետից շուտ կատարելուն, նոր արդյունաբերական ձեռնարկությունները արագ շահագործման հանձնելուն, տեխնիկական սարքավորման լավացման և արտադրական պրոցեսների տեխնոլոգիայի կատարելագործմանը, արտադրության կազմակերպման առաջավոր մեթոդները ներդնելուն և աշխատանքի արտադրողականության անշեղ աճին։ Ուժեղացավ պահանջը արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների և տնտեսական աշխատողների նկատմամբ թերությունները լիկվիդացնելու, արտա-

[1] Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 81։

ղության տեմպերը ավելացնելու, որակի բարելավման, արտադրանքի ինքնարժեքի էժանացման և գերպլանային սոցիալիստական կուտակումներն ապահովելու գործում։

Սովետական երիտասարդությունը չորրորդ հնգամյակի տարիներին, ինչպես և միշտ ժողովրդի ավանգարդումն էր։ Նրա դերը Կոմունիստական պարտիայի կողմից դրված խնդիրների կատարման գործում մեծ էր։ Այդ տարիներին էլ ավելի ուժեղացավ Կոմերիտմիության ազդեցությունը երիտասարդության լայն խավերի վրա։ Հայաստանի Կոմերիտմիությունը աճեց պատերազմի և չորրորդ հնգամյակի տարիներին 50 հազարով։ 1948 թ. Հայկական ՍՍՌ-ում կար 110 հազար ՀամԼԿԵՄ անդամ, իսկ 1951 թ. սկզբին՝ 138 հազար կոմերիտական, ըստ որում այդ աճի մեջ մտնում էր 10 հազար կոմերիտական բանվոր-երիտասարդությունից [1]։

Կոմերիտական կազմակերպությունների, ամբողջ երիտասարդության դերը չորրորդ հնգամյա պլանը գերակատարելու պայքարում տարեց-տարի աճում էր։ Հազարավոր կոմերիտականներ, կոմերիտուհիներ, ներգրավվելով սոցմրցման մեջ, ցույց էին տալիս աշխատանքի բարձր արտադրողականության օրինակներ։ Երիտասարդական բրիգադները արդյունաբերության մեջ ու տրանսպորտում, երիտասարդության բարձր բերքատվության օղակները՝ գյուղատնտեսության մեջ կատարում և գերակատարում էին հնգամյա պլանի առաջադրանքները։ Չորրորդ հնգամյակի տարիներին լայն թափ ստացավ Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում աշխատող երիտասարդության ընդհանուր կրթական և տեխնիկական գիտելիքների մակարդակի բարձրացումը։

Սակայն կոմերիտական կազմակերպությունների աշխատանքներում շարունակում էին տեղ գտնել չակամ թերություններ, գլխավորապես երիտասարդության մեջ կոմունիս-

---

[1] Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 91։

տական դաստիարակության ուժեղացման և աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդման գործում, Թույլ էր աշխատում կոմերիտական լուսավորման ցանցը, պարտկազմակերպությունները դեռ չէին ցուցաբերում բավականաչափ ուշադրություն ու բազմակողմանի օգնություն կոմերիտական կազմակերպություններին։ Խնդիր էր դրվում արտադրության մեջ աշխատող երիտասարդությանը լրիվ կերպով ընդգրկել երեկոյան ընդհանուր կրթական դպրոցները և անընդհատ բարձրացնել երիտասարդ բանվորների, կոլտնտեսականների և ծառայողների մասնագիտական որակը։

ՀամԼԿԵՄ XI համագումարից հետո, որը կայացավ 1949 թ. մարտին, կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի կենտրոնում դրվեցին երիտասարդության կոմունիստական դաստիարակության հարցերը։ Կոմերիտմիությունը, որպես Պարտիայի հավատարիմ ու ամենամոտ օգնականը, մոբիլիզացնում էր երիտասարդության ուժերը կոմունիստական շինարարության խնդիրները կատարելու համար։

Հայկական ՍՍՌ պրոֆմիությունները, որպես ՍՍՌ Միության պրոֆմիությունների մարտական ջոկատներից մեկը, որպես միացնող օղակ Կոմունիստական պարտիայի և աշխատավորական լայն մասսաների միջև, ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում աշխատավորության ուժերի մոբիլիզացման գործում՝ չորրորդ հնգամյա պլանի խնդիրները կատարելու և գերակատարելու համար։ Պրոֆմիությունները մեծ աշխատանք կատարեցին ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններում լայն սոցիալիստական մրցում ծավալելու ուղղությամբ։

1948 թ. պրոֆմիությունների ղեկավարությունը վերակառուցվեց։ Պրոֆմիությունների ռեսպուբլիկական կոմիտեների գործունեությունն ուժեղացնելու և նրանց աշխատանքը կոորդինացնելու նպատակով կազմակերպվեց Հայաստանի պրոֆմիությունների խորհուրդ։ Դրա հետ մեկտեղ սկսեց բարելավվել ռեսպուբլիկական կոմիտեների ղեկավարությունը տեղական պրոֆմիութենական կոմիտեների աշխատանքի

հանդեպ։ Սակայն և այստեղ կային լուրջ թերություններ մասնավորապես աշխատավորության կուլտուր-կենցաղային պայմանների, բանվորական մատակարարման, հասարակական սննդի հետագա բարելավման ուղղությամբ և այլն. պահանջվում էր էլ ավելի ուշադրություն այս կենսական հարցերին և ամբողջ պրոֆմիութենական աշխատանքի մակարդակի բարձրացմանը։

Սովետական դեմոկրատիզմի վառ արտահայտություններից մեկը հանդիսացան ժողովրդական դատարանների ընտրությունները, որոնք տեղի ունեցան 1949 թ. փետրվարին։ Երկու ամսից ավելի տևեց ժողդատարանների ընտրությունների նախապատրաստումը։ Պարտիական, սովետական, կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունները մասսայական քաղաքական-բացատրական ու կազմակերպչական մեծ աշխատանք կատարեցին։ Նախընտրական ժողովներում աշխատավորները առաջ քաշեցին տասնյակ ժողդատավորների և 4055 ժողովրդական ատենակալների թեկնածությունները։ Վերջիններս, չկտրվելով իրենց հիմնական աշխատանքից, ժողդատավորների հետ միասին հավասար մասնակցում են դատական գործերի քննությանը և դրանով իսկ բարձրանում պետական գործչի մակարդակին։ Ժողդատարանների ընտրությունները անցկացվեցին քաղաքական բարձր ակտիվության մթնոլորտում։ Ընտրություններին մասնակցեցին ընտրողների 99,99%, ժողդատավորների թեկնածուների օգտին քվեարկեց մասնակցողների 99,70%, իսկ ժողատենակալների թեկնածուների օգտին՝ 99,94%[1]։

Սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական միասնության հետագա ամրապնդումը իր արտահայտությունը գտավ ՍՍՌՄ Գերագույն Սովետի երրորդ գումարման ընտրություններին՝ 1950 թ. մարտին։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի՝ բոլոր ընտրողներին ուղղված դիմումի մեջ, որը հրապարակվեց 1950 թ. փետրվարի 17-ին, նշվում

[1] «Սովետական Հայաստան», 9 փետրվարի 1949։

էր, որ ինչպես 1937, 1946 թթ., այնպես էլ 1950 թ. ընտրությունների, Կոմունիստական պարտիան մասնակցում է ընտրություններին պրոֆմիությունների, կոմերիտմիության և աշխատավորների մյուս կազմակերպությունների ու ընկերությունների հետ, հանդես է գալիս սերտ դաշինք կապած անպարտիական բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի հետ, իր մեծ ուժը ցույց տված միացյալ բլոկով, որը սովետական ժողովրդի անխախտ բարոյա-քաղաքական միասնության արտահայտությունն է։

Դիմումներով հանդես եկան նաև ՀամԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեն և Պրոֆմիությունների Համամիութենական Կենտրոնական Խորհուրդը, որոնք ջերմ կերպով պաշտպանում ու հավանություն էին տալիս Կոմունիստական պարտիայի քաղաքականությանը և բոլոր ընտրողներին կոչ էին անում իրենց ձայնը տալու կոմունիստների ու անպարտիականների բլոկին, էլ ավելի սերտ համախմբվելու Կոմունիստական պարտիայի շուրջը։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Նախընտրական դիմումը ընտրողներին հանդիսացավ կարևոր քաղաքական փաստաթուղթ, որի մեջ հանրագումարի էին բերվում Կոմունիստական պարտիայի, որպես սովետական ժողովրդի կազմակերպող ու առաջատար ուժի, գործունեությունը։ Դիմումի մեջ ընդգծվում էին սովետական ժողովրդի մոտակա կարևորագույն խնդիրները։ Այդ դիմումը մեծ ոգևորությամբ քննարկվեց նաև Հայաստանի աշխատավորության ժողովներում. այն հանդիսացավ մոբիլիզացնող ուժով տոգորված փաստաթուղթ, որը էլ ավելի համախմբեց աշխատավորությանը՝ հարազատ Կոմունիստական պարտիայի շուրջը։

Սովետական Հայաստանի աշխատավորները մեծ ոգևորությամբ ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատության թեկնածուներ առաջադրեցին Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարներին, Հայկական ՍՍՌ պարտիական ու սովետական աշխատողներին, արդյունաբերության ու գյուղատնտեսության, կուլտուրայի ու գիտության

առաջավոր մարդկանց։ Նրանցից էին Զանգեզուրի Լենինի անվան հանքերի անվանի հանքափոր Արտեմ Անտոնյանը, որը արդեն 1948 թ. կատարել էր իր արտադրական հնգամյա պլանը, Ալավերդու մետաղաձուլական գործարանի ձուլարանի վարպետ Իսահակ Պապոյանը, անվանի մեքենավար Գարեգին Աբաջյանը, Բուդյոննու անվան կոլտնտեսության օղակավարուհի Սոցիալիստական Աշխատանքի Հերոս կոմերիտուհի Մարիամ Մարտիրոսյանը, Նոր Բայազետի (այժմ Կամոյի) շրջանի Հացառատի կոլտնտեսության նախագահ, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Հակոբ Գրիգորյանը, անվանի մանածագործուհի Եվդոկիա Լիխաչևան, վաստակավոր ուսուցչուհի Կարինե Դրամբյանը, «Սովետ Էրմենիստանի» լրագրի պատասխանատու քարտուղար Սեդա Կադիմովան, Պետական համալսարանի դասախոս-գիտնական Ստեփան Ներսիսյանը, Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, կոլտնտեսության նախագահ Ռեբեկա Ղարիբյանը, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը և ուրիշները։ Հայաստանի աշխատավորները ողջունեցին և հավանություն տվեցին Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի՝ ընտրողներին ուղղված դիմումին։ Ընտրությունների կամպանիան ուղեկցվեց բանվորների ու գյուղացիների նոր աշխատանքային վերելքով. Նոր հաջողություններ ձեռք բերվեցին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։

Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի նշանավոր գործիչ Ա. Ի. Միկոյանը իր համաձայնությունը տվեց քվեարկվելու որպես ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ՝ Երևան քաղաքի ընտրական օկրուգներից մեկում։ Մարտի 10-ին նա հանդիպում ունեցավ իր ընտրողների հետ։ Դեպուտատության թեկնածու Ա. Ի. Միկոյանի վստահելի անձ՝ Ս. Մ. Կիրովի անվան գործարանի անվանի բանվոր Բիչախչյանը աշխատավորների անունից ջերմ ողջույն ուղղեց Ա. Ի. Միկոյանին։ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Համբարձումյանը, տարիքավոր դասատու Միքյանը, Կոշիկե

երրորդ ֆաբրիկայի անվանի բանվոր կոմերիտական Թումանյանը, Երևանի կայազորի զորամասերի ներկայացուցիչ սպա Անտոնովը ողջունեցին Միկոյանին և կոչ արեցին միահամուռ ձայն տալ ժողովրդի արժանավոր զավակի օգտին.

«Մենք, Ստալինյան շրջանի երիտասարդ ընտրողներս,— ասաց Մ. Թումանյանը,— ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունների պատվին կանգնեցինք ստախանովյան հերթափոխության և մարտի 12-ի ուրախալի օրը դիմավորում ենք արտադրական բարձր ցուցանիշներով։ Մեծ է հպարտությունը, որով կոմերիտականներն ու կոմերիտուհիները, մեր շրջանի ողջ երիտասարդությունը կքվեարկեն ամբողջ սովետական ժողովրդի կողմից ջերմ սիրված Ա. Ի. Միկոյանի օգտին»[1]։

Ա. Ի. Միկոյանը իր ելույթի մեջ նկարագրեց սովետական ժողովրդի, այդ թվում և հայ ժողովրդի մեծ հաջողությունները խաղաղ կոմունիստական շինարարության ասպարեզում Գերագույն Սովետի երկրորդ և երրորդ գումարման ընտրությունների միջև ընկած չորսամյա ժամանակաշրջանում։ Ա. Ի. Միկոյանը քննադատեց ռեսպուբլիկայի տեղական ու կոոպերատիվ արդյունաբերության, գյուղատնտեսության և սովետական առևտրի աշխատանքներում եղած լուրջ թերությունները և առաջ քաշեց արդյունաբերության, գյուղատնտեսության և առևտրի հետագա զարգացման, կուլտուրայի էլ ավելի ծաղկման և աշխատավորության ինտերնացիոնալ համերաշխության ավելի ամրապնդման խնդիրները։ Ա. Ի. Միկոյանը շնորհակալություն հայտնեց իրեն ցույց տրված վստահության համար և կոչ արեց էլ ավելի սերտ համախմբվել Կոմունիստական պարտիայի շուրջը և հասնել նորանոր հաջողությունների կոմունիստական շինարարության գործում[2]։

Մարտի 12-ին կայացած ընտրություններին, սովետական ժողովուրդը միահամուռ կերպով ցուցադրեց իր սերն ու նվիրվածությունը Հայրենիքին և Կոմունիստական պարտիա-

[1] «Կոմունիստ», 11 մարտի 1950։

[2] Տե՛ս Ա. Ի. Միկոյան, Ճառ Երևան քաղ. Ստալինյան ընտրական օկրուգի նախընտրական ժողովում 1950 թ. մարտի 10-ին, Երևան, 1950։



6—1568

յին։ Ընտրողների ընդհանուր թիվը Միության բոլոր ընտրական օկրուգներում կազմում էր 111.116.373 մարդ, որոնցից ընտրությանը մասնակցեցին բոլոր ընտրողների 99,98%։ Կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին ձայն տվեցին քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 99,73%՝ Միության Սովետի ընտրություններին և 99,72%՝ Ազգությունների Սովետի ընտրություններին։ Հայկական ՍՍՌ-ում ընտրողների 769.782 ընդհանուր թվից քվեարկությանը մասնակցեցին 99,99%. այդ թվում կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին ձայն տվեցին քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 99,95%՝ Միության Սովետի և 99,93%՝ Ազգությունների Սովետի ընտրություններին[1]։ Ընտրությունների արդյունքները մեկ անգամ ևս ցույց տվեցին Պարտիայի անխզելի կապը ժողովրդի հետ։

1950 թ. դեկտեմբերին անցկացվեցին Հայկական ՍՍՌ տեղական Սովետների ընտրությունները։ Հայ ժողովուրդը այդ ընտրությունները նշանավորեց աշխատանքային նոր հաղթանակներով՝ տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Տեղական Սովետների նոր կազմի մեջ մտան ռեսպուբլիկայի լավագույն մարդիկ՝ արդյունաբերության, գյուղատնտեսության առաջավորները, կուլտուրայի, գիտության աշխատողներ։ Տեղական բոլոր Սովետներում ընտրվեցին 12.009 դեպուտատ, որոնց թվում 4193 կին կամ 34,5%, 6548 պարտիական կամ 54,5%, 5461 անկուսակցական կամ 45,5%. սովետական քաղաքացիները ընտրություններին մասնակցեցին համարյա 100%[2]։ Այսպիսով ռեսպուբլիկայի աշխատավորները միահամուռ կերպով ցույց էին տալիս իրենց պատրաստակամությունը կատարելու հարազատ Պարտիայի բոլոր առաջադրանքները, կյանքում կիրառելու նրա գլխավոր գիծը։

---

1 «Սովետական Հայաստան», 15 մարտի 1950։

2 «Կոմունիստ», 22 դեկտեմբերի 1950։

***

ՍՍՌՄ ժողովուրդների անխախտ բարեկամությունը՝ բազմազգ Սովետական սոցիալիստական պետության կարևորագույն հիմքերից մեկն է և եղբայրական սովետական ռեսպուբլիկաների բոլոր հաջողությունների գրավականը։ Այն արտահայտում է Սովետական Միության ժողովուրդների շահերի ընդհանրությունը, նրանց եղբայրական համագործակցության և փոխադարձ օգնության մեծ ուժը կոմունիստական հասարակության կառուցման գործում։

Հայ ժողովրդի բարեկամությունը և եղբայրական միությունը ռուս մեծ ժողովրդի և մեր երկրի մյուս բոլոր ժողովուրդների հետ ամրապնդվեց և կոփվեց Սովետական իշխանության համար մղած համատեղ պայքարում, սոցիալիստական շինարարության պրոցեսում, Հայրենական Մեծ պատերազմի հնոցում և կոմունիստական շինարարության հետպատերազմյան տարիներին։

Հայ ժողովրդի, ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների փայլուն նվաճումները հնարավոր դարձան ռուս ժողովրդի անշահախնդիր եղբայրական օգնության շնորհիվ և նրա առաջավոր կուլտուրայի ազդեցության տակ։ Կոմունիստական պարտիան, որն այդ փոխադարձ եղբայրական օգնության ոգեշնչողն ու կազմակերպիչն է, դաստիարակում է աշխատավորներին ժողովուրդների լենինյան բարեկամության ոգով։ Սովետական մարդիկ խորապես գնահատում են այդ բարեկամությունը, ամրացնում այն, բազմացնում նրա հիանալի ձևերն ու արտահայտությունները։

Զորբորդ հնգամյակի տարիներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ սոցիալիստական մրցման մեջ էին Անդրկովկասի երեք եղբայրական ռեսպուբլիկաների՝ Լենինական, Կիրովաբադ, Քութայիսի քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունները, այդ ռեսպուբլիկաների առանձին գործարաններ, ինչպես Երևանի և Թբիլիսիի հաստոցաշինական գործարանների կոլեկտիվները։ Գոյություն ուներ և ու-

նի սերտ կապ Հայաստանի և Ադրբեջանի երկրաբանական գիտությունների ինստիտուտների, ինչպես և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի Շինարարական ինստիտուտների միջև։ Հայկական ՍՍՌ գիտնականները իրենց աշխատանքները կոորդինացնում էին մյուս ռեսպուբլիկաների գիտնականների հետ, գումարվում էին միացյալ գիտական սեսիաներ։ Լայնարձակ Սովետական Միության արդյունաբերության և գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի տարբեր բնագավառներից բազմամարդ դելեգացիաներ այցելություններ էին կատարում եղբայրական ռեսպուբլիկաները, որտեղ ծանոթանում էին առաջավորների փորձին, սառւգում սոցիալիստական մրցման արդյունքները, ամեն կերպ ամրապնդելով եղբայրական կապերը ՍՍՌՄ ժողովուրդների միջև։

Մեր սոցիալիստական իրականության մեջ ժողովուրդների անխախտ բարեկամության բազմաթիվ արտահայտություններից է՝ եղբայրական ռեսպուբլիկաների կոլտնտեսությունների աշխատանքային համագործակցությունը պլանով նախատեսված առաջադրանքները կատարելու և գերակատարելու գործում։ Այդ նպատակով նրանք կնքում են սոցիալիստական մրցման պայմանագրեր և սիստեմատիկորեն ստուգում արդյունքները, փոխանակելով իրենց լավագույն փորձը և օգնելով իրար։

Այսպես, օրինակ՝ չորրորդ հնգամյակի տարիներին մրցել և այժմ մրցում են մեր ռեսպուբլիկայի Արտաշատի շրջանի և Ադրբեջանական ՍՍՌ Նախիջևանի ավտոնոմ մարզի բամբակագործ կոլտնտեսությունները։ Նույն ռեսպուբլիկաների՝ Հոկտեմբերյանի շրջանի Օրջոնիկիձեի անվան և Աղբաստաֆայի շրջանի «Կարմիր հոկտեմբեր» կոլտնտեսությունները, Հոկտեմբերյանի և Կասումիզմայիլյան շրջանների մեքենա-տրակտորային կայանների աշխատողները, Իջևանի և Ղազախի շրջանների կոլտնտեսականները և այլն։ Իջևանի շրջանի Խաչթառաք, Լալի, Ուզունթալա գյուղերի կոլտնտեսությունները մրցում էին Ադրբեջանի Ղազախի շրջանի կոլտնտեսականների հետ։ Հայաստանի Լալի և Ադրբեջանի Ջախ-

մախլու գյուղերի կոլտնտեսականները ձեռք ձեռքի տված ընդհանուր ուժերով կառուցեցին ջրանցք, որը ոռոգում է Լալվարի կոլտնտեսության 80 հեկտար և Ջախմախլուի կոլտնտեսության 60 հեկտար հողերը։ Այդ կոլտնտեսությունները ելնելով իրենց սոցիալիստական մրցությունից կազմակերպում էին համգիպումներ, տարեց տարի կնքում սոցիալիստական մրցության պայմանագրեր, փոխադարձ ստուգում էին իրենց պատրաստականությունը գարնանային աշխատանքներին, աշնանը ընդհանրացնում արդյունքները, կազմակերպում առաջավոր կոլտնտեսությունների՝ բարձր բերքի վարպետների աշխատանքի փորձի փոխանակում և այլն։

Փայլուն արդյունքների է հասել Հայաստանի և Վրաստանի կոլտնտեսականների սոցիալիստական մրցությունը։ Այսպես. օրինակ, Վրացական ՍՍՌ Մախարաձեի շրջանի Նաթանեբի գյուղի և Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյանի շրջանի Փոքր Շահրիարի կոլտնտեսությունները, որոնք սոցիալիստական մրցման մեջ են դեռևս 1939 թ., սիստեմատիկաբար ստանձնում էին նորանոր, ավելի բարձր պարտավորություններ։ 1950 թ. գարնանը, վերստին ստուգելով արդյունքները և շարունակելով սոցիալիստական մրցությունը, նրանք հաղորդում էին իրար՝ «Մենք ջանք չենք խնայում,— գրում էին Վրաստանի կոլտնտեսականները,— որպեսզի հաջող կերպով կատարենք մեր կողմից վերցրած պարտավորությունները»[1]։ Նրանց ի պատասխան Հայաստանի կոլտնտեսականները գրում էին. «Մենք գիտենք, որ ինտերնացիոնալ կապերի հետագա ամրապնդումը՝ էլ ավելի մեծ հաջողությունների նրաշխիքն է աշխատանքի ասպարեզում»[2]։

Կուլտուրայի և գիտության ասպարեզում գոյություն ուներ և ունի նույնպիսի սերտ համագործակցություն։ Սովետական գրողները, արվեստի, գիտության աշխատողները գործուղվում էին Սովետական Միության ամենաառաջավոր կենտրոնները՝ Մոսկվա, Լենինգրադ, Կիև խորացնելու իրենց գիտելիքները,

[1] «Կոմունիստ», 13 ապրիլի 1950։

[2] Նույն տեղում։

կատարելագործվելու: Ուժեղացավ աշխատավորության դաստիարակումը պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման ոգով: Մամուլում, դրականության մեջ լուսաբանվում էին եղբայրական ռեսպուբլիկաների նվաճումները, նշվում էին նրանց նշանավոր տարեդարձները՝ կապված ռևոլյուցիոն-քաղաքական իրադարձությունների, սովետական կարգերի հաստատման, կուլտուրայի և գիտության արժանավոր մարդկանց, անցյալի առաջավոր քաղաքական և լուսավորչական դեմքերի հետ, լայն կերպով լուսաբանվում էին անցկացվող սպորտային մրցությունները՝ անդրկովկասյան սպարտակիադաները, գիտական սեսիաները և այլն:

Այս բոլորը բարձրացրել և բարձրացնում է մասսաների քաղաքական և կուլտուրական մակարդակը, ընդարձակում սովետական մարդկանց մտահորիզոնը, ամրապնդում ժողովուրդների եղբայրական բարեկամությունը և նպաստում նրանց կոմունիստական դաստիարակությանը, դրանով իսկ միաժամանակ նպաստում կոմունիստական շինարարության հաջող ընթացքին:

***

Սովետական Հայաստանի, ինչպես նաև բոլոր մյուս սովետական ռեսպուբլիկաների էկոնոմիկայի ու կուլտուրայի ծաղկումը սոցիալիստական շինարարության տարիներին, Սովետական Միության հաղթանակը Հայրենական Մեծ պատերազմում, ՍՄԿՊ ազգային քաղաքականությունը էլ ավելի ուժեղացրին արտասահմանի աշխատավոր հայերի ձգտումը՝ վերադառնալու իրենց Հայրենիքը՝ Հայկական ՍՍՌ: Սփյուռքի հայության հայրենադարձությունն սկսվել էր դեռ Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի առաջին տարիներին և շարունակվում էր ընդհուպ մինչև նախապատերազմյան տարիները: Չորրորդ հնգամյակի տարիներին

արտասահմանի աշխատավոր հայության հայրենադարձությունը ընդունեց լայն, մինչև այդ չտեսնված մասսայական բնույթ։

ՍՍՌՄ կառավարությունը Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեի և կառավարության խնդրանքով, 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում ընդունեց արտասահմանի հայության մասսայական հայրենադարձության մասին։ ՍՍՌՄ կառավարությունը համապատասխան գումարներ առանձնացրեց հայրենադարձ հայերին տեղավորելու և նյութապես ապահովելու համար, նրանց տրվեցին արտոնություններ՝ ամենահեռու երկրներից, ինչպես ԱՄՆ-ից և ուրիշ երկրներից, ձրի կերպով տեղափոխվելու, վերցնելով իրենց հետ ամբողջ ունեցվածքը, նմանապես և տեղում տնտեսություն հիմնելու համար։

1946—1949 թթ. Սովետական Հայաստան փոխադրվեցին մոտ 90 հազար աշխատավոր հայեր՝ Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Հունաստանից, Եգիպտոսից, Սիրիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Իրանից և այլն՝ ընդամենը 15 երկրներից։ Այդ թվից 9 հազար մարդ տեղավորվեցին աշխատանքի արդյունաբերության մեջ, 5700 մարդ՝ արհեստագործական կոոպերացիայում, 2500՝ սովխոզներում, 3150՝ շինարարական աշխատանքներում, 4700՝ տարբեր հասարակական կազմակերպություններում և հիմնարկներում, իսկ 11 հազար մարդ՝ մտան կոլտնտեսությունները։ Մնացածը երեխաներ էին, տարիքավորներ կամ անաշխատունակ։ Հայրենադարձների մոտ կեսը հիմնվեց Երևանում[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի XIV համագումարը պարտավորեցրեց պարտիական կազմակերպություններին ուժեղացնել ուշադրությունը արտասահմանից Հայրենիք վերադարձած հայերի կարիքների նկատմամբ։ Միջոցներ ձեռք առնել նրանց աշխատանքը ճիշտ օգտագործելու, որակը բարձրացնելու և նրանց կողմից նոր մասնագիտություններ

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 107։

յուրացնելու ասպարեզում։ Ապահովել հայրենադարձ հայերի համար բնակելի տները ժամանակին շահագործման հանձնելը և նրանց ամեն կերպ օգնել անհատական բնակարանային շինարարությունը հաջողությամբ իրագործելու համար։ Աշխատանքներ կատարել այն ավանների բարեկարգման և կուլտուրական-կենցաղային հիմնարկությունների շինարարության ասպարեզում, որտեղ բնակվում են հայրենադարձ հայեր։ Պարտկազմակերպությունները պարտավոր են ուժեղացնել հայրենադարձ հայերի հետ տարվող քաղաքական-դաստիարակչական և կուլտուր-լուսավորական աշխատանքը. նրանց լայնորեն ներգրավել ակտիվ հասարակական աշխատանքի, նրանց օգնել՝ ավելի արագ ազատվելու բուրժուական իդեոլոգիայի մնացուկներից»[1]։

Վերաբնակիչները հնարավորություն ստացան կառուցել անհատական տներ, որի համար նրանց տրվեցին արտոնյալ պայմաններով երկարամյա վարկ և շինանյութեր. Այս ձևով մինչև 1948 թ. նոր շենքերի կառուցման համար ծախսվեց 274 միլիոն ռուբլի, կառուցվեցին 4650 տուն. բացի դրանից, մինիստրությունները և հիմնարկները կառուցեցին առանձին տներ 3700 սենյակներով։ 1949—1950 թթ. շարունակվեց շինարարությունը հայրենադարձների կարիքների համար. կառուցվեցին 650 տուն և 2500 առանձին սենյակներ։ Հայրենադարձների համար կառուցվեցին ութ նոր ավան։

Հայրենադարձ աշխատավորները ակտիվ կերպով ներգրավվեցին սովետական ժողովրդի խաղաղ ստեղծարար աշխատանքների մեջ։ Նրանք ստացան սովետական քաղաքացիների բոլոր իրավունքները և լայնորեն օգտվեցին ու օգտվում են նրանցից։ Այսպես, օրինակ, հայրենադարձ պատանիները, աղջիկներն ու երեխաները մտան բարձրագույն ուսումնական հաստատություններ, տեխնիկումներ, դպրոցներ.

[1] Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի XIV համագումարի բանաձևը ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, էջ 25։

վերացվեց 5900 մեծահասակ հայրենադարձների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը. 1947/48 ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություններում արդեն սովորում էին 377 երիտասարդ հայրենադարձ, միջնակարգ և մասնագիտական դպրոցներում, արհեստագործական ուսումնարաններում և ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներում՝ 16500 երեխա։ Օգնություն էր ցույց տրվում հայրենադարձ բանվորներին՝ նրանց վերաորակավորման և կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու գործում։ Ռուսերեն լեզուն ուսումնասիրելու նպատակով հայրենադարձ հայերի համար կազմակերպվեցին տասնյակ խմբակներ. հայրենադարձ աշխատավոր հայերը մեծ ցանկությամբ ու գոհունակությամբ սկսեցին սովորել ռուս մեծ ժողովրդի լեզուն, ուսումնասիրել այն և մերձենալ ռուսական կուլտուրային[1]։

Հայրենադարձ աշխատավորները այդ տարիներին և հետագայում աչքի ընկան ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի շատ բնագավառներում։ Այսպես, օրինակ. արդյունաբերության ասպարեզում՝ Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի առաջավոր վարպետ Հմայակ Ղազանչյանը (եկել է ԱՄՆ-ից), նույն գործարանի առաջավոր բանվոր Հակոբ Եփրեմյանը (Սիրիայից), Երևանի Կիրովի անվան գործարանի առաջավորներ՝ բանվոր Մեսրոպ Բոյաջյանը (Բուլղարիայից), ինժեներ-տեխնիկ Մկրտիչ Թոփալյանը (Հունաստանից), անվանի խառատ Վարդգես Ջիլինգարյանը (Եգիպտոսից), Երևանի կոնսերվի գործարանի առաջավոր բանվորուհի Վիկտորիա Լուրեջյանը (Սիրիայից), Կիրովականի կարբիդի գործարանի առաջավոր երիտասարդ բանվոր, ապա վարպետ Վահան Կենդերչյանը (Լիբանանից), Շահումյանի շրջանի մետաքսի կոմբինատի բանվոր-նորարար Պարգև Զուգասզյանը (ԱՄՆ-ից) և ուրիշները։

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 108։

Կոլտնտեսային առաջավորներից աչքի ընկան Ախտայի շրջանի Ձանատան գյուղի կոլտնտեսական Սուլթան Բաղրամյանը (Իրանից), որը բարձր բերք ստանալու համար պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով, Ստեփանավանի շրջանի Հոբարձի գյուղի կոլտնտեսական Տիգրան Անտոնյանը (Ֆրանսիայից) և շատ ուրիշներ։

Գիտության և կուլտուրայի ասպարեզում՝ Միքայել Տեր-Կարապետյանը (Ֆրանսիայից), որն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ՝ բիոլոգիայի գծով, Գիտությունների ակադեմիայի Քիմիական ինստիտուտի գիտական աշխատող Տիգրան Քրմոյանը և նրա կինը՝ մանկավարժ Սոնա Բնակունին (եկել են ԱՄՆ-ից), Երևանի Օպերայի և բալետի արտիստներ Գոհար Գասպարյանը (այժմ ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի) և Միհրան Երկաթը (այժմ Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ), որոնք ներգաղթել են Եգիպտոսից, Ռեսպուբլիկական Ռադիո-Կոմիտեի աշխատակից Շահե Տատուրյանը (Ֆրանսիայից) և Ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտաշխատողներ Հակոբ Նալբանդյանը (Եգիպտոսից), Վարդան Թիմուրճյանը (Ֆրանսիայից), հայրենադարձ գրողներ՝ Ստեփան Ալաջաջյանը (Լիբանանից), Արփիկ Ավագյանը (Իրանից), Արամ Արմանը (Սիրիայից) և ուրիշներ։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 1947 թ. ընտրություններին ռեսպուբլիկայի բարձրագույն օրգանի դեպուտատ ընտրվեցին Երևանի Արաբկիրի ընտրական օկրուգում Լիբանանից եկած բժիշկ Գևորգ Մանուշակյանը, Արտաշատի շրջանի Դալար գյուղի հայրենադարձ կոլտնտեսական Մաթևոս Խաչատրյանը, Լենինականի մի կոմբինատի հայրենադարձ բանվոր Մարտիրոս Կարապաջակյանը։ Երևանի Քաղաքային Սովետի դեպուտատ ընտրվեց Ֆրանսիայում հռչակված պարտիզան Միսաք Մանուշյանի կինը՝ Մելինե Մանուշյանը, որը եկել էր Ֆրանսիայից. նա 1950 թ. ավարտեց Երևանի Պետական համալսարանը և ընդունվեց այնտեղ ասպիրանտուրա հայ պարբերական մամուլի գծով։ Այսպիսով, 1948 թ. հայրենա-

դարձ աշխատավորներից երեք հոգի ընտրվեցին ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի դեպուտատ, 57 հոգի՝ քաղաքային Սովետների, 85՝ շրջանային և 246՝ գյուղական Սովետների դեպուտատներ, ընդամենը՝ 391 հոգի[1]։

Սովետական պետության պայմաններում, Կոմունիստական պարտիայի հոգատարության առկայությամբ, շարունակվեցին աշխատանքները հայրենադարձ աշխատավորների կյանքի կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, նոր բնակելի տների կառուցման, ավանների բարեկարգման, սկզբնական շրջանում հայրենադարձներին աշխատանքի տեղավորելիս թույլ տրված սխալները ուղղելու, կուլտուր-լուսավորական աշխատանքները հայրենադարձների մեջ ուժեղացնելու ուղղությամբ, նրանց գաղափարական-քաղաքական դաստիարակության և սովետական ժողովրդի կյանքին լրիվ կերպով մասնակից դարձնելու համար։

***

Չորրորդ հնգամյա պլանի հաջող կատարումը և Սովետական Միության էլ ավելի հզորացումը առաջ էին բերում խլրտում համաշխարհային ռեակցիայի լագերում։ Ատոմային զենքի առկայությունը Սովետական Միությունում կատաղություն էր հասցնում իմպերիալիստներին, որոնք երազում էին ատոմային զենքը մոնոպոլ կերպով օգտագործելու մասին։ Իմպերիալիստները, դիտելով Արևմտյան Գերմանիան և Ճապոնիան որպես նոր համաշխարհային պատերազմի օջախներ, հիմնականում պահպանեցին նրանց ռազմական պոտենցիալները. մտադրվեցին օգտագործելու նրանց որպես հարվածող ուժ սոցիալիզմի լագերի պետությունների դեմ։ Իմպերիալիստները տնտեսական բլոկադայի ենթարկեցին

[1] «Սովետական Հայաստան», օրգան Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերության, № 8, 1948, էջ 4։

Սովետական Միությունը, Չինաստանը, ժողովրդական դեմոկրատիայի մյուս երկրները։ Այսպես կոչված «Մարշալի պլանի» միջոցով ԱՄՆ-ի իմպերիալիստները իրենց ենթարկեցին արևմտա-եվրոպական կապիտալիստական երկրների էկոնոմիկան և ձգտում էին այդ երկրները լրիվ կերպով կապել իրենց ռազմական մեքենային ագրեսիվ բլոկներ կազմելու միջոցով։

Սակայն արևմտյան իմպերիալիստների հակասովետական հաշիվները ձախողվում էին իրար ետևից։ Ուժերի փոխհարաբերությունը միջազգային թատերաբեմում սոցիալիզմի ու կապիտալիզմի միջև անընդհատ փոփոխվում էր հօգուտ սոցիալիզմի։ 1949 թ. չին մեծ ժողովուրդը պատմական հաղթանակ տարավ, թոթափեց ֆեոդալիզմի և իմպերիալիստական գաղութային ստրկության լուծը, ստեղծվեց Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան —Չինական Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։ Այդ նույն ժամանակ ստեղծվեց և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկան՝ Գերմանիայի Միասնական սոցիալիստական պարտիայի ղեկավարությամբ։ Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկան ամենասերտ բարեկամական հարաբերությունների մեջ մտան Սովետական Միության հետ։

Չորրորդ հնգամյակի տարիներին Սովետական Միության միջազգային դրությունը էլ ավելի ամրապնդվեց։ Սովետական Միությունը բարեկամության և փոխադարձ օգնության մի շարք պայմանագրեր կնքեց ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ։ Այդ բոլոր պայմանագրերի և համաձայնությունների հիմքում ընկած է մեծ և փոքր ժողովուրդների եղբայրական համագործակցության և իրավահավասարության սկզբունքը։ 1949 թ. հունվարին ստեղծվեց Տնտեսական փոխադարձ օգնության խորհուրդը, որի մեջ մտան Սովետական Միությունը, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հունգարիան, Ռումինիան, Բուլղարիան, Ալբանիան և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկան։ Տնտեսական փոխադարձ օգնության խորհուրդը կազմակերպեց միմյանց նկատմամբ տնտե-

սական փորձի փոխանակում, տեխնիկական օգնության, հումքի, մեքենաների և սարքավորումների մատակարարման գործը: Այդ խորհրդի խնդիրներից մեկն էր նպաստել ժողովրդական դեմոկրատիայի երկրների տնտեսության պլանային, սոցիալիստական զարգացմանը:

Սովետական Միությունը իր կողմից ցույց է տվել և ցույց է տալիս ամեն հնարավոր եղանակով նյութական օգնություն ժողովրդական դեմոկրատիայի երկրներին, որոնք կանգնել են սոցիալիստական շինարարության ուղու վրա: Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների համագործակցության հիմքում ընկած է փոխադարձ օգնության և ազատ ժողովուրդների ընդհանուր տնտեսական վերելքին հասնելու անկեղծ ցանկությունը: Այդ հիմունքների վրա տեղի է ունենում արդյունաբերության բուռն զարգացումը այդ երկրներում: Չորրորդ հնգամյակի տարիներին կապիտալիստական համաշխարհային տնտեսական շուկային զուգընթաց առաջացավ դեմոկրատական համաշխարհային տնտեսական շուկան. համաշխարհային միասնական տնտեսական շուկան տրոհվեց երկու զուգահեռ համաշխարհային շուկաների, մի բան, որ բնորոշեց համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացումը:

Գլխավոր տենդենցը համաշխարհային քաղաքականության մեջ՝ դեմոկրատական, հակաիմպերիալիստական լագերի հետագա ամրապնդումն էր: Սովետական Միությունը այլևս միայնակ չէր ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ. Եվրոպայի և Ասիայի ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ միասին Սովետական Միությունը արդեն կազմում էր մոտ 900 միլիոն ազգաբնակչություն՝ երկրագնդի բնակչության մեկ երրորդը: Ներկա պայմաններում վերացված են նախկինում թույլ տրված որոշ սխալները մեր արտաքին քաղաքականության ասպարեզում, որոնք բխում էին անհատի պաշտամունքից. ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների անկեղծ համագործակցությունը և հա-

մերաշխությունը՝ դա առաջներում բոլորովին չտեսնված, կապիտալիստական պայմաններում անհնարին, տնտեսական և քաղաքական հարաբերությունների սիստեմ է։ ՍՍՌՄ օգնությունը, նրա եղբայրական գործակցությունը ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ՝ նրանց անկախության ու ծաղկման գրավականն է։

Իմպերիալիստական ուժերի հետ միասին Սովետական Միության դեմ պայքարել և պայքարում է դաշնակների հակաժողովրդական, կոնտրռևոլյուցիոն պարտիան, որը ամեն կերպ խեղաթյուրում է ճշմարտությունը Սովետական Հայաստանի մասին, նրա սոցիալիստական մեծ նվաճումները, աշխատավորության հերոսությունը պատերազմի հետևանքները վերացնելու և Կոմունիստական շինարարության գործում։ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության միջոցառումները արտասահմանի աշխատավոր հայերի հայրենադարձության գործը կազմակերպելու ուղղությամբ ջերմ ցանկություն առաջ բերեցին աշխարհում ցրված հարյուր հազարավոր աշխատավոր հայերի մոտ՝ տեղափոխվելու իրենց մայր-Հայրենիքը։ Սակայն արտասահմանի հայերի այդ օրինական ցանկության դեմ դուրս եկան բուրժուական նացիոնալիստ դաշնակները, որոնք ձգտում էին ամեն կերպ խափանել հայրենադարձությունը. կատաղի, հակասովետական կամպանիա էին տանում, մինչև բանդիտական հարձակումներ և տեռորի կազմակերպումը Հայրենիք վերադառնալ ցանկացող հայրենասեր հայերի դեմ։ Դաշնակները տեռորիստական փորձեր կատարեցին Թեհրանի (Իրան) «Վերածնունդ» պրոգրեսիվ թերթի խմբագիր Հայկ Գարագաշի, Կահիրեի (Եգիպտոս) «Արև» պրոգրեսիվ թերթի նախկին խմբագիր Գրիգոր Հարենկյանի դեմ և այլն[1]։ Նրանք պրովոկացիոն նպատակներով հայրենադարձների հետ ուղարկում էին իրենց գործակալներին, որոնք առաջադրված ունեին վարկաբեկել պատրիոտ հայրենադարձներին։ Բայց պայքարի այս բոլոր ժպիրհ, զազրելի ձևերը կրախի մատնվեցին։

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», № 8, 1948, էջ 52։

Արտասահմանի աշխատավոր հայերը մերկացնում էին դաշնակների նենգությունը, նրանց լարած նողկալի որոգայթները և համապատասխան հակահարված տալիս: Արտասահմանի աշխատավոր հայերի հայրենասիրությունը հարված հանդիսացավ իմպերիալիստների և նրանց լակեյ դաշնակների հակասովետական դիտավորությունների և մեքենայությունների նկատմամբ և Սովետական Միության միջազգային դրության հետագա ամրապնդման արտահայտություններից մեկն էր:

Միևնույն ժամանակ արտասահմանի հայ պրոգրեսիվ մամուլը, ինչպես «Լրաբեր», «Արմենիեն տրիբյուն» (ԱՄՆ-ում), «Ազատ խոսք» (Ֆրանսիայում) և այլն, պայքարում, կազմակերպում էր խաղաղության շարժումը սփյուռքի հայության մեջ և հասնում հիանալի արդյունքների: 1950 թ. հուլիսի 14—16-ն Լիոնում կայացած Ֆրանսահայ երիտասարդական միության համագումարը դիմեց գաղութահայ երիտասարդությանը կոչ անելով մի մարդու պես ստորագրել խաղաղության պաշտպանության նվիրված Ստոկհոլմի կոչը և միանալ խաղաղության համար մղվող համաշխարհային մեծ պայքարին [1]:

Սովետական Միության արտաքին քաղաքականությունը հիմնված է խաղաղության քաղաքականության վրա, որը համապատասխանում է սովետական ժողովրդի և մյուս բոլոր խաղաղասեր ժողովուրդների կենսական շահերին: Սովետական ժողովուրդը մինչև վերջ շահագրգռված է խաղաղության ամրապնդման և պահպանման մեջ, որովհետև կայուն, տևական խաղաղությունն է հնարավորություն տալիս երկրի անընդհատ զարգացման և ժողովրդի երջանիկ ու ունևոր կյանքը ապահովելու համար, Սովետական Միությունը ավելի ու ավելի մեծ մասշտաբներով է ծավալում կոմունիստական շինարարությունը: Այս է պատճառը, որ սովետական ժողովուրդը դնում է խաղաղության կողմնակիցների համաշխար-

[1] «Սովետական Հայաստան», № 9, 1950, էջ 13:

հային շարժման՝ ամբողջ աշխարհի հարյուր միլիոնավոր հասարակ մարդկանց ավանգարդում:

Խաղաղության կողմնակիցների շարժումը, որը առաջացավ չորրորդ հնգամյակի տարիներին, ծավալվում էր և ընդունում ավելի մեծ թափ: Բոլոր երկրների ժողովուրդները սովետական ժողովրդի գլխավորությամբ պայքարի ելան խաղաղության համար, պատերազմի հրձիգների հանցագործ ծրագրերի դեմ: Սովետական ժողովրդի ակտիվ մասնակցությունը խաղաղության համար մղվող համաշխարհային շարժման մեջ նպաստեց խաղաղության ուժերի համախմբմանը և միասնությանը, ժողովուրդների զգոնության բարձրացմանը: Սովետական Միությունը խաղաղության հզոր հենարանն է:

Սովետական պետության վարած խաղաղ քաղաքականությունը նրա որևէ թուլության նշանը չէ: Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը իրենց արտաքին քաղաքականության մեջ ելնում են հանճարեղ Լենինի ցուցումից՝ սոցիալիստական և կապիտալիստական — երկու սիստեմների տևական գոյակցության և խաղաղ մրցության հնարավորության վերաբերյալ: Միաժամանակ, որպեսզի պաշտպանի իր Հայրենիքը ամեն տեսակի պատահականություններից, խաղաղության արթուն պահակ հանդիսանա և կանխի ՍՍՌՄ և նրա դաշնակիցների դեմ ուղղված որևէ ագրեսիան, սովետական ժողովուրդը անդադար ամրապնդել և ամրապնդում է Սովետական պետության ռազմա-տնտեսական հզորությունը և նրա զինված ուժերը: Չորրորդ հնգամյակի տարիներին Սովետական Միության պաշտպանունակությունը բարձրացավ, Սովետական Բանակը հագեցվեց նորագույն ռազմական տեխնիկայով: «Սովետական ժողովուրդը խորապես համոզված է,— նշվում էր ՍՍՌՄ Գերագույն Սովետի երրորդ գումարման ընտրությունների կապակցությամբ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի վերահիշյալ դիմումի մեջ,— որ երկու սիստեմների խաղաղ մրցակցության մեջ ապահովված է սոցիալիզմի հաղթանակը կա-

պիտալիզմի նկատմամբ։ Դրա հետ միասին սովետական մարդիկ հավատացած են, որ եթե իմպերիալիստները նոր պատերազմ հրահրեն մեր խաղաղասեր երկրի դեմ, ապա Սովետական Միությունը, ամբողջ աշխարհի ազատասեր ժողովուրդների պաշտպանությամբ, գլխովին կջախջախի ամեն մի ագրեսորի»[1]։

Հայ ժողովուրդը Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին ցուցաբերել և ցուցաբերում է ակտիվ մասնակցություն ամբողջ աշխարհում խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու համար մղվող պայքարին։ Հայկական ՍՍՌ աշխատավորությունը լայն մասնակցություն ունեցավ խաղաղության համաշխարհային խորհրդի և խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի դիմումները ստորագրելու կամպանիաներին։

1949 թ. ապրիլին Փարիզում կայացած խաղաղության համաշխարհային կոնգրեսից հետո Մոսկվայում օգոստոսին տեղի ունեցած խաղաղության կողմնակիցների Համամիութենական առաջին կոնֆերանսում մեծանուն ժողովրդական պոետ Ավետիք Իսահակյանը հայ ժողովրդի անունից իր ձայնը բարձրացրեց ասելով, որ «Հայ ժողովուրդը, որ բազմիցս իր վրա զգացել է պատերազմի բոլոր սարսափները, ամենայն անկեղծությամբ, իր ամբողջ էությամբ կանգնած է խաղաղության պաշտպանության դիրքերում, ընդդեմ պատերազմի»[2]։

Նույն թվականի հոկտեմբերի 2-ին Հայաստանում, ինչպես և ողջ Սովետական Միությունում, ամբողջ պրոգրեսիվ մարդկության հետ միասին, առաջին անգամ նշվեց խաղաղության համար պայքարի միջազգային օրը։ 1950 թ. հունիսին Ատոմային զենքն արգելելու վերաբերյալ խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի կոչի տակ ՍՍՌՄ-ում, այդ թվում և Հա-

[1] «Պրավդա», 17 փետրվարի 1950։

[2] «Պրավդա», 30 օգոստոսի 1949։

յաստանում; քաղաքական և աշխատանքային մեծ ակտիվու-թյան խաղաղության մեջ, իրենց ստորագրությունները դրեցին մոտ 100 միլիոն մարդ[1]։

1950 թ. հոկտեմբերին Մոսկվայում կայացած խաղաղու-թյան կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆե-րանսում ընտրվեց խաղաղության պաշտպանության Սովետա-կան կոմիտե, որի կազմի մեջ մտան նաև Սովետական Հա-յաստանի ներկայացուցիչներ՝ Ամենայն Հայոց Գերագույն Պատրիարք—կաթողիկոս Գևորգ VI, Գիտությունների ակադե-միայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը, Ավետիք Իսա-հակյանը և Նաիրի Զարյանը։ Իր ելույթի մեջ կոնֆերանսում Ն. Զարյանը ասաց. «Թող համաշխարհային տիրապետության ատոմային հավակնորդները ունկնդրեն առողջ բանականու-թյան ձայնին, միլիոնավոր հասարակ մարդկանց ձայնին, որոնք չեն ցանկանում պատերազմ։ Մենք հավատում ենք մարդկության բարի կամքի հաղթանակին, որովհետև այդ կամքը կազմակերպված է, նրան ոգեշնչում է սովետական ժողովրդի մեծ օրինակը»[2]։

Անձնվեր աշխատանքով հայ ժողովուրդը չորրորդ հնգամ-յակի տարիներին իր ավանդն էր մտցնում Սովետական Միու-թյան հզորության հետագա ամրապնդման գործում, հայ ժո-ղովուրդը՝ խաղաղության համար, կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարի ակտիվ մասնակիցն էր։

---

[1] «Սովետական Հայաստան», 12 հուլիսի 1950

[2] «Սովետական Հայաստան», 5 հոկտեմբերի 1950։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

## 1. Արդյունաբերության, տրանսպորտի, կապի զարգացումը

*Արդյունաբերությունը, տրանսպորտը, կապը առաջատար տեղ են գրավում ամեն մի երկրի էկոնոմիկայում, նրանք որոշում են արտադրողական ուժերի զարգացման աստիճանը։ Այն երկիրը, որը չունի զարգացած արդյունաբերություն, ժամանակակից տրանսպորտ ու կապ, կապիտալիզմի պայմաններում չի կարող ինքնուրույն լինել ոչ տնտեսական և ոչ էլ քաղաքական տեսակետից և դառնում է ինդուստրիալ զարգացած կապիտալիստական պետությունների ագրարային կցորդը, գաղութային կամ կախյալ երկիր, պատերազմական թատերաբեմ՝ իմպերիալիստական գիշատիչների միջև, որոնք պայքարում են հումքի աղբյուրների և սպառման շուկաների համար և թույլ չեն տալիս ինքնուրույն տնտեսական զարգացում և, առաջին հերթին, արդյունաբերության զարգացում, այդ թույլ զարգացած երկրներում։ Մեր երկրի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների աշխատավորները կարողացան և կարող են կառուցել սոցիալիզմ, միայն զարգացնելով ամենաարագ տեմպերով արդյունաբերությունը, տրանսպորտը, կապը, ամբողջ էկոնոմիկան։*

*Արդյունաբերության, տրանսպորտի, կապի, ամբողջ ժո-*

ժողովրդական տնտեսության զարգացման գործում վճռական, վերափոխիչ դերը պատկանում է ծանր արդյունաբերությանը՝ մեքենաշինությանը, մետալուրգիային, էլեկտրաէներգետիկային, վառելիքային, քիմիական արդյունաբերությանը, շինարարական նյութերի արտադրությանը և այլն։ Ծանր արդյունաբերությունը ապահովում է ամբողջ արդյունաբերության զարգացումը, ստեղծելով մեքենա արտադրող մեքենաներ, համակարգելով ամբողջ ժողովրդական տնտեսությունը արտադրության միջոցներով, հագեցնելով այն նոր տեխնիկայով, մի հանգամանք, որը հանդիսանում է աշխատանքի արտադրողականության բարձրացման, կուտակումների աճի, ժողովրդական եկամուտի ավելացման անհրաժեշտ պայմանը։ Ծանր արդյունաբերությունը բնորոշում է երկրի էկոնոմիկայի բոլոր ճյուղերի զարգացման բնույթը։

Ծանր ինդուստրիայի անընդհատ աճը՝ ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման հիմքն է։ Դեռ քաղաքացիական պատերազմի ավարտման և խաղաղ աշխատանքներին անցնելու դժվարին շրջանում Վ. Ի. Լենինը նշել է, որ «...առանց ծանր արդյունաբերությունը փրկելու, առանց այն վերականգնելու, մենք չենք կարող կառուցել ոչ մի արդյունաբերություն, իսկ առանց արդյունաբերության մենք ընդհանրապես կկործանվենք որպես ինքնուրույն երկիր»[1]։

Կոմունիստական պարտիան, Սովետական իշխանությունը կյանքում անշեղորեն կիրառել են հանճարեղ Լենինի ցուցումները, ամեն կերպ զարգացնելով ՍՍՌ Միության ծանր ինդուստրիան, որի հիման վրա արդեն նախապատերազմյան տարիներին մեր Հայրենիքը դարձավ հզոր և անհաղթելի տերություն։ Ծանր արդյունաբերությունը կատարեց իր մեծ դերը Հայրենական պատերազմի ժամանակ, բավարարելով ռազմաճակատի կարիքները ծանր սպառազինությամբ ու մունիցիայով։ Ծանր ինդուստրիան կատարեց իր վճռական դերը

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 506 (այս ցիտատի հայերեն թարգմանության մեջ կա վրիպակ՝ ավելացված է «ծանր» բառը «արդյունաբերություն» բառից առաջ, որը մենք չենք բերում)։

երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման գործում և Հայրենական Մեծ պատերազմը ավարտվելուց հետո։ Արտադրության միջոցների արտադրության աճի բարձր տեմպերը ստեղծում էին անհրաժեշտ պայմաններ արդյունաբերության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության բոլոր ճյուղերի վերականգնման ու նոր վերելքի համար։

Անհրաժեշտ է նշել, որ մեր արդյունաբերության վերականգնումը Հայրենական Մեծ պատերազմից հետո ավարտվեց 3 տարվա ընթացքում՝ 2 անգամ ավելի արագ, քան թե 1918—1920 թթ. օտարերկրյա ինտերվենցիայից և քաղաքացիական պատերազմից հետո, երբ, 1913 թ. նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ, արդյունաբերությունը վերականգնելու համար պահանջվեց 6 տարի։

Այս կարևորագույն հանգամանքը բացատրվում է նրանով, որ Հայրենական Մեծ պատերազմից հետո արդյունաբերությունը վերականգնվում էր նոր, ամենաառաջավոր տեխնիկայի հիման վրա, վերջինիս բազան իր տրամադրության տակ ուներ բարձր զարգացած ծանր ինդուստրիա, մասնավորապես մեքենաշինություն, որի հզորությունը 1940 թ. գերազանցում էր մեքենաշինության 1913 թ. մակարդակը ավելի քան 50 անգամ։ Դրա շնորհիվ չորրորդ հնգամյակի տարիներին վերականգնվող կամ նոր կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունները զինվեցին ավելի լավ, ավելի կատարելագործված տեխնիկայով, քան հին ձեռնարկությունները։ Մինչդեռ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում 1921—1925 թթ. վերականգնվում էր թույլ զարգացած և տեխնիկապես հետամնաց նախկին ցարական Ռուսաստանի արդյունաբերությունը, այն ժամանակ կարիք էր զգացվում տեխնիկայի, սարքավորման, որը գնվում էր արտասահմանում։ Չորրորդ հնգամյակի տարիներին սովետական ժողովուրդը լիովին ուներ անհրաժեշտ տեխնիկա, սարքավորում, որով նույնիսկ մատակարարում էր ժողովրդական դեմոկրատիայի երկրներին՝ ցույց տալով եղբայրական օգնություն։

Այս ամենի պատճառով 1921—1925 թթ. ժամանակամիջոցում կարելի էր ավելի արագ ու համեմատաբար հեշտ վերականգնել թեթև արդյունաբերությունը, որը և կատարվեց առաջին հերթին։ Սակայն վերականգնվող թեթև արդյունաբերության զարգացումը հետագայում սկսեց դանդաղել ծանր արդյունաբերության թուլության պատճառով։ Չորրորդ հնգամյակի տարիներին սովետական ժողովուրդը իր տրամադրության տակ ունենալով հզոր ծանր ու թեթև արդյունաբերություն, առաջին հերթին վերականգնում ու շարունակում էր զարգացնել ծանր արդյունաբերության ճյուղերը, մի բան, որը հնարավորություն տվեց ամենաարագ կերպով միաժամանակ վերականգնել ու էլ ավելի զարգացնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը։

Բացի դրանից, այն ժամանակաշրջանում վերականգնման աշխատանքները արդյունաբերության բնագավառում ի մի էին բերվում գլխավորապես միջին և կապիտալ վերանորոգումների գծով. ձեռնարկությունները մեծամասնությամբ այնպես լրիվ ավերված չէին, ինչպես Հայրենական պատերազմի ընթացքում, նրանցից շատերը կանգնած էին վառելանյութի և հումքի բացակայության հետևանքով։ Դրա համար, որպեսզի ավելի ակնառու պատկերացում ստացվի չորրորդ հնգամյակի տարիների ընթացքում վերականգնման աշխատանքների թափի ու, նախապատերազմյան տարիների հետ համեմատած, ավելի մեծ շինարարության մասին բերենք համեմատական թվեր։

Քաղաքացիական պատերազմից հետո ժողովրդական տնտեսությունը վերականգնելու վրա ծախսվեց 5 միլիարդ ռուբլի, նրանից 2 միլիարդ ռուբլի արդյունաբերության վերականգնման վրա։ Չորրորդ հնգամյա պլանի համաձայն կենտրոնացված կապիտալ ներդրումների ծավալը կազմում էր 250,3 միլիարդ ռուբլի (1945 թ. նախահաշվային գներով), որից 157,5 միլիարդ ռուբլի հատկացվեց արդյունաբերությանը։ Այդ գումարը հսկայական էր ոչ միայն 1921—1925 թթ. համեմատությամբ, նա 5 անգամ գերազանցում էր ժողո-

ժողովրդական տնտեսության մեջ կենտրոնացված կապիտալ ներդրումների ծավալը ամբողջ I հնգամյակի տարիների և 2 անգամից ավելի՝ II հնգամյակի տարիների ընթացքում[1]։

ՍՍՌ Միության, այդ թվում Հայկական ՍՍՌ արդյունաբերությունը IV հնգամյակի տարիներին զարգացավ մեծ չափով, անշեղորեն բարձրացնելով արտադրությունը։ Սոցիալիստական արդյունաբերությունը տարեցտարի հաջողությամբ կատարում էր պետական պլանները։ 1946 թ., հնգամյա պլանի առաջադրանքի համաձայն, արդյունաբերությունը հիմնականում ավարտեց արտադրության հետպատերազմյան վերակառուցումը և, հաղթահարելով այդպիսի շրջանի անցման դժվարությունները, 1945 թ. համեմատությամբ 20% ավելացրեց քաղաքացիական արտադրանքի թողարկումը։ Այսպես, օրինակ. բրդյա գործվածքների արտադրանքը աճեց 28%, մետաքսյա գործվածքներինը՝ 36, բամբակյա գործվածքներինը՝ 16, կոշիկի արտադրությունը ավելացավ 32%, տրիկոտաժային գործվածքինը՝ 55, գուլպեղենը՝ 61% և այլն[2]։

Սակայն այդ աճը դեռ չէր բավարարում բնակչության կարիքները։ Այդ պատճառով 1946 թ. դեկտեմբերի 23-ին ՍՍՌՄ Մինիստրների Սովետը «Լայն սպառման ապրանքներ արտադրող պետական թեթև արդյունաբերության վերելքը արագացնող միջոցառումների մասին» հատուկ որոշման մեջ անբավարար համարեց տեքստիլ ու թեթև արդյունաբերության մինիստրությունների աշխատանքը լայն սպառման ապրանքների արտադրությունը ընդլայնելու ուղղությամբ և միջոցառումներ ձեռք առավ տեքստիլ ու թեթև արդյունաբերության արտադրության հնգամյա պլանը կատարելու ու էապես գերակատարելու ուղղությամբ։ Մասնավորապես 1947 թ., 1946 թ. համեմատությամբ, բամբակյա գործվածքեղենի ար-

---

[1] Տե՛ս Ֆ. Պ. Կոշելև. Հետպատերազմյան առաջին հնգամյակի կատարման հիմնական հանրագումարները, էջ 44—46, 62, 63. **Ա. Առաքելյան**. Հետպատերազմյան հնգամյակի հիմնական խնդիրները, էջ 22—23։

[2] «Պրավդա», 29 դեկտեմբերի 1946։

արտադրանքը պետք է աճեր 41,5%, բրդյա գործվածքներինը՝ 27,9, մետաքսյա գործվածքներինը՝ 27,3, վուշի գործվածքներինը՝ 36,2, կոշիկի արտադրությունը՝ 44,2, տրիկոտաժային իրերինը՝ 55,2% և այլն[1]։

Այդ առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար Սովետական կառավարությունը ավելացրեց կապիտալ ներդրումները տեքստիլ ու թեթև արդյունաբերության մեջ, ձեռք առավ միջոցառումներ լրիվ կերպով այն ապահովելու վառելիքով, էլեկտրաէներգիայով և անհրաժեշտ հումքով։ Ժամանակավոր դժվարությունները բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով մատակարարելու գործում պետք է արագ կերպով լիկվիդացվեին։

1947 թ. մարտի 4-ին հրապարակվեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1947 թ. պետական պլանի մասին։ Որոշման մեջ նշվեցին մի շարք թերություններ, որոնք դեռևս տեղ էին գտնում ժողովրդական տնտեսության մեջ, և սահմանվեցին հնգամյա պլանի օրենքից բխող 1947 թ. պետական պլանի հիմնական խնդիրները. մշակվեցին անհրաժեշտ միջոցառումներ արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի, կապիտալ շինարարության, առաջավոր տեխնիկա-տնտեսական նորմաները յուրացնելու, աշխատանքը մեքենայացնելու և առաջավոր տեխնիկան արմատավորելու, տնտեսության առանձին ճյուղերի աճման տեմպն արագացնելու, աշխատանքի և կադրերի, ինքնարժեքի իջեցման, ապրանքաշրջանառության, կուլտուրական շինարարության ու առողջապահության և այլն գծերով[2]։

Այսպիսով Սովետական կառավարությունը հոգատարություն էր ցույց տալիս ժողովրդի հանդեպ՝ աշխատավորների

---

[1] «Պրավդա», 29 դեկտեմբերի 1946։

[2] Տե՛ս ՍՍՌՄ Մինիստրների Սովետում, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1947 թ. պետական պլանի մասին, «Սովետական Հայաստան», 4 մարտի 1947։

կյանքի նյութական-կենցաղային պայմանները բարելավելու համար, ստեղծում էր նյութական հնարավորություններ մոտ ժամանակներում վերացնելու պարենային ու արդյունաբերական ապրանքների քարտային նորմաների սիստեմը։

Չորրորդ հնգամյակի երկրորդ տարում ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց, 1946 թ. համեմատությամբ, 22%, իսկ տեքստիլ ու թեթև արդյունաբերության արտադրանքը՝ 33%։ 1947 թ. արդյունաբերության պլանը կատարվեց 103,5%։ Այսպիսով, հնգամյակի երկու տարվա պլանային առաջադրանքները արդյունաբերությունը կատարեց 100%։ Հնգամյա պլանով 1948 թ. մեր երկիրը պետք է հասներ արդյունաբերական արտադրության նախապատերազմյան մակարդակին և արդեն 1947 թ. IV եռամսյակում արդյունաբերության համախառն արտադրանքը հասավ նախապատերազմյան 1940 թ. միջին եռամսյակային թողարկմանը[1]։ Սովետական ժողովուրդը չտեսնված կարճ ժամանակամիջոցում կարողացավ վճռել այդ պատմական խնդիրը։ Դա սովետական ժողովրդի մեծ հաղթանակն էր։

Հնգամյակի երրորդ տարում սովետական ժողովուրդը նոր հաղթանակներ նվաճեց աշխատանքային ճակատում։ Սովետական Միության արդյունաբերությունը 1948 թ. համախառն արտադրանքի գծով պլանը կատարեց 106%։ Հնգամյակի երեք տարվա պլանը գերակատարվեց։ 1948 թ. ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը, 1947 թ. համեմատությամբ, աճեց 27%. ՍՍՌՄ արդյունաբերական արտադրանքի աճը տոկոսներով, 1940 թ. համեմատությամբ, 1948 թ. կազմեց 118%[2]։

Այսպիսով, Սովետական պետության արտադրական հնարավորությունները աճում էին չտեսնված արագ չափերով։ Այդ բանում արտահայտություն էին գտնում արտադրության սոցիալիստական եղանակի, տնտեսության սոցիալիստական

---

[1] «Պրավդա», 18 հունվարի 1948։
[2] «Պրավդա», 20 հունվարի 1949։

*սիստեմի առավելությունները, ժողովրդական տնտեսության զարգացման գործի ճիշտ պլանավորումը Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ու Սովետական կառավարության կողմից:*

*Հայկական ՍՍՌ-ում 1946 թ. արդյունաբերությունը ավարտեց վերակառուցումը և սկսեց թողարկել խաղաղ ժամանակվա արտադրանք՝ բնակչության կարիքների համար: 1946—1947 թթ.՝ IV հնգամյակի առաջին երկու տարում ռեսպուբլիկայի արդյունաբերությունը 102% կատարեց պլանային առաջադրանքները: 1947 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը, 1940 թ. համեմատությամբ, կազմեց 136,8%: 1948 թ. 10 ամսվա պլանը Հայաստանի Կոմունիստական պարտիայի XIV համագումարի նախօրյակին կատարվեց 105,2% և դրանով 21,7% ավելի շատ արտադրանք տրվեց, քան 1947 թ. նույն ժամանակամիջոցում: Հայկական ՍՍՌ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը անընդհատ բարձրանում էր: 1947 թ. նա գերազանցեց 1940 թ. նախապատերազմյան մակարդակը՝ 25,1%, իսկ 1948 թ. միայն երեք եռամսյակում աճեց 14,4%՝ անցած 1947 թ. համեմատությամբ[1]: Այսպիսով արդյունաբերությունը զարգացման բուռն տեմպեր վերցրեց:*

*Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղերը 1946—1948 թթ. զարգացան հետևյալ կերպ:*

*Էլեկտրաէներգիայի գծով Հայէներգոյի սիստեմի մեջ մտնող էլեկտրակայանների կարողությունը ավելանում էր: Այդ աճը կատարվեց ի հաշիվ Սևան—Հրազդան կասկադի Քանաքեռգէսի վերջին ագրեգատի կառուցման ու շահագործման հանձնելուն ու 1948 թ. նրա I ագրեգատի մոդեռնիզացիայի: Քանաքեռգէսի մյուս ագրեգատները մոդեռնիզացիայի ենթարկելու աշխատանքները շարունակվում էին. դա հնարավորություն կտար կայանի կարողությունը նախագծայինից հզո-*

*[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 20—21:*

թյունից ավելացնելու 15,9%։ 1946 թ. կառուցվեց Ձորագէսի հիդրոէլեկտրիկական կառույցների ռեկոնստրուկցիան և տարվում էին նախապատրաստական աշխատանքներ 1949 թ. այնտեղ գործարկելու III ագրեգատը, որը ավելացնում էր Ձորագէսի հզորությունը 50%։ 1948 թ. նոյեմբերին շահագործման հանձնվեց Սովետական Միության ամենախոշոր հիդրոտեխնիկական կառույցներից մեկը՝ Սևանի ջրամբարային կառուցվածքը, որն ապահովեց Քանաքեռգէսի և Հրազդան գետի վրա մյուս գէսերի էֆեկտիվ աշխատանքը։

1945 թ. Հրազդան գետի վրա սկսվեցին Հայկական ՍՍՌ ամենախոշոր հիդրոկայանի՝ Գյումուշգէսի շինարարության նախապատրաստական աշխատանքները։ Այդ կայանը պետք է ապահովեր էներգետիկ բազա ստեղծել ռեսպուբլիկայի արդյունաբերության հետագա զարգացման համար, զգալիորեն ավելացնելով նրա էլեկտրակայանների հզորությունը։ Կառուցման համար անհրաժեշտ էր կատարել 400 միլիոն խորանարդ մետր միայն ժայռային և հողային աշխատանքներ, լցնել 700 հազար խորանարդ մետր բետոն, երկաթբետոն և քարային պատնեշ, կառուցել մի քանի բնակելի ավաններ, անցկացնել 5? կմ. երկաթուղագիծ և այլն։ Մինչև 1948 թ. կատարվեց 15 միլիոն ռուբլու կապիտալ աշխատանքներ[1]։ Շինարարությունը պետք է լայն թափ ընդուներ 1949 թ., որպեսզի 1953 թ. այն գործարկվեր։ Չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի աշխատավորները մեծ ոգևորությամբ ծավալեցին ռեսպուբլիկայի այդ խոշոր նորակառույցի շինարարությունը։

Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները 1947 թ. համախառն արտադրանքի պլանը կատարեցին 101,5% և զգալիորեն գերազանցեցին 1939 թ. թողարկված նախապատերազմյան արտադրանքի ծավալը։ Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների լավ աշխատանքը

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարին ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 21—23։

նշվեց Հայաստանի Կոմպարտիայի XIV համագումարում, որտեղ ցույց տրվեց, որ այդ ձեռնարկությունները կատարում էին ոչ միայն համախառն արտադրանքի պլանը այլև տեխնիկապես մասնակիորեն բարելավում էին արտադրության որակական ցուցանիշներն ու նույնիսկ սկսեցին ապահովել գերպլանային կուտակումներ, ինչպես, օրինակ, Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի և կարբիդի գործարանները[1]։

Հայկական ՍՍՌ մետաղարդյունաբերական ձեռնարկությունները 1946—1948 թթ. հասան զգալի հաջողությունների։ 1948 թ. Ղափանի և Ալավերդու հանքային վարչությունները պլանները գերակատարում էին, ինչպես համախառն արտադրանքի, նոմենկլատուրայի և ասորտիմենտի, այնպես էլ հետախուզական ու լեռնային նախապատրաստական աշխատանքների գծով։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման մեջ հատուկ տեղ գրավեց մեքենաշինությունը՝ արդյունաբերության մի ճյուղ, որը գոյություն չուներ Սովետական Հայաստանի անցյալում և որը ստեղծվելով նախապատերազմյան ժամանակաշրջանում սկսեց բուռն կերպով զարգանալ IV հնգամյակի տարիներին։ Մեքենաշինության արտադրանքի թողարկումը 1947 թ., 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 2 անգամ։ Հայաստանի Կոմպարտիայի XIV համագումարում նշվեց Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի լավ աշխատանքը, որն արդեն 1948 թ. հասավ հաստոցների արտադրության հնգամյա պլանի 1950 թ. մակարդակին, և կաբելի գործարանի նույնպիսի լավ աշխատանքը, որը 1948 թ. 9 ամսվա պլանը կատարեց 121%, և որի արտադրանքը, 1947 թ. նույն ժամանակի համեմատությամբ, աճեց 3 անգամ[2]։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության հաջողությունները

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Կ XIV համագումարում ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 24—26։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 28—29։

կարող էին ավելի զգալի լինել, եթե առանձին ձեռնարկություններ հետ չմնային, տեղ չտային արտադրական մեծ կորուստների։ Շատ գործարաններ, ֆաբրիկաններ համախառն արտադրանքի գծով կատարելով պլանը, չէին կատարում այն արտադրանքի հիմնական տեսակի գծով. թույլ էին տալիս էլեկտրաէներգիայի գերածախս, շռայլություն։ Հումքի ու նյութական ռեսուրսների օգտագործման ժամանակ, լրիվ չէին օգտագործում նորագույն սարքավորումների հզորությունը, ծանրաբեռնելով այն միայն մեկ հերթափոխության ժամանակ։ Շատ ձեռնարկություններում բացակայում էր համաչափությունը և համաձայնությունը առանձին ցեխերի աշխատանքներում։ Դանդաղ էր յուրացվում նոր արտադրանքի թողարկումը։ Հաճախ թողարկվող լայն սպառման ապրանքները ցածր որակի պատճառով չէին վաճառվում։ Առանձին ձեռնարկություններ չէին կատարում իրենց պլանները նաև համախառն արտադրանքի գծով։

Հայկական ՍՍՀ, ինչպես և ամբողջ Սովետական Միության արդյունաբերության առաջ կանգնած էր բոլոր ձեռնարկությունների աշխատանքի հետագա բարելավման խնդիրը։ Պետք էր հասնել արտադրության տեխնիկա-տնտեսական ցուցանիշների հետագա բարելավմանը, լրիվ օգտագործել ձեռնարկությունների ներքին ռեզերվները, ունեցած մեծ հնարավորությունները հումքի, նյութերի, էլեկտրաէներգիայի ծախսման կոէֆիցիենտը իջեցնելու ուղղությամբ, իջեցնել արտադրանքի ինքնարժեքը և ձեռնարկությունները փոխադրել ռիթմաբերային՝ առանց գրոհային աշխատանքի, սիստեմատիկորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը՝ գործադրելով նորագույն տեխնիկան ու արտադրության առաջավոր մեթոդները։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության բանվոր-ծառայողները, ինժեներա-տեխնիկական պերսոնալը համառորեն աշխատում էին հասնելու այս բոլորի կատարմանը։ Մոսկվայի առաջավոր ձեռնարկությունների նախաձեռնությունը առանց գրոհային աշխատանքի անցնելու և գերպլանային կուտա-

կումներ սանձելու համար լայն աջակցություն գտավ Հայկական ՍՍՌ ձեռնարկություններում, որոնք պարտավորություն ստանձնեցին միայն 1948 թ. պետությանը տալ 60 միլիոն ռուբլու գերպլանային կուտակում։ Նրանք զգալի աշխատանք կատարեցին պետական միջոցները խնայելու ուղղությամբ։ Լենինգրադի արդյունաբերական ձեռնարկությունների առաջավորների կոչը՝ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու մասին, առաջ բերեց ՍՍՌՄ ամբողջ բանվոր դասակարգի հայրենասիրական շարժումը արդյունաբերության առաջադրանքները գերակատարելու համար. նա գտավ ջերմ արձագանք նաև Հայկական ՍՍՌ բանվորների մոտ և առաջացրեց սոցիալիստական մրցության հետագա նոր վերելք։ Ռեսպուբլիկայի բանվորները մտնելով այդ համաժողովրդական սոցիալիստական մրցության մեջ, պատվով կատարեցին ստանձնած պարտավորությունները։ Հայկական ՍՍՌ բանվոր դասակարգը անդադար պայքարում էր կատարելու չորրորդ հնգամյա պլանը արդյունաբերության գծով։ Ծավալված մասսայական սոցիալիստական մրցությունը հանդիսացավ բանվոր-ծառայողների, ինժեներա-տեխնիկական աշխատողների գիտակցական, նպատակասլաց աշխատանքի արտահայտությունը. այդ հերոսական աշխատանքը ուղղված էր արդյունաբերության առաջ կանգնած խնդիրների լուծմանը։

Հայաստանի անվանի հանքափորներ Արտեմ Անտոնյանը, Արամ Խաչատրյանը, Խանասվար Գավչալինը, Կոնստանտին Բաթմանովը, Շամոն Կրեմերը և մյուսները իրենց արտադրական պլանները գերակատարում էին մի քանի անգամ։ Նրանք իրենց փորձը փոխանցում էին երիտասարդ բանվորներին։ Նույնպես լավագույն ձևով էին աշխատում նաև Ալավերդու մետաղաձուլներ Խաչիկ Պապոյանը, Հակոբ Լուսինյանը, Հովհաննես Սարգսյանը, Արամ Դավթյանը և ուրիշները։ Լենինականի տեքստիլ կոմբինատի անվանի բանվորուհի Եվդոկիա Լիխաչովան նախաձեռնեց հետ մնացող բանվորուհիներին օգնություն կազմակերպելու գործը, որը շահեց

փայլուն արդյունքներ։ Երևանի Ձերժինսկու անվան գործարանի առաջավոր բանվորները Ս. Հարությունյանի նախաձեռնությամբ ընդօրինակեցին Լենինգրադի անվանի խառատ Բորտկևիչի փորձը։ Գործարանը 1949 թ. կատարեց հնգամյա պլանի առաջադրանքը համախառն արտադրանքի գծով։ Երևանի մանածի գործարանի բանվորուհի Ռոզա Ղազարյանը առաջինը արձագանքեց Կրասնոխոլմսկի բանվորների կոչին՝ ընդօրինակել Ալեքսանդր Չուտկիխի նախաձեռնությունը բարձրորակ արտադրանք թողարկելու համար։

Պայքարելով չորրորդ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար արդյունաբերության շատ առաջավորներ, անձնվեր ստեղծագործական աշխատանքի հետևանքով, զգալիորեն գերակատարեցին հնգամյակի իրենց արտադրական առաջադրանքները։ Այսպես, օրինակ, Տեղարդմինիստրության Երևանի մեքենաշինական գործարանի խառատ Ս. Զուբանյանը կատարեց 15 տարվա նորմա, Լենինականի կարի ֆաբրիկայի բանվորուհի Վ. Պետրոսյանը՝ 9 տարվա նորմա։ Երևանի «Էլեկտրասարք» գործարանի հյուսն Ժ. Ալոյանը 1950 թ. աշխատում էր 1954 թ., իսկ Ռ. Մխիթարյանը՝ 1958 թ. հաշվին և այլն։

1949 թ. նշանավորվեց նոր՝ փայլուն հաղթանակներով արդյունաբերության բնագավառում։ Սովետական կառավարությունը միջոցառումներ ձեռնարկեց ՍՍՌՄ արդյունաբերության աշխատանքի հետագա բարելավման ուղղությամբ, որի հետևանքով բարձրացավ արտադրական կարողությունների օգտագործման մակարդակը, խնայողություն կատարվեցին հումքի, վառելանյութի և նյութերի ծախսի մեջ, ձեռնարկություններում հայտնաբերվեցին լրացուցիչ ներքին ռեզերվներ։ Միևնույն ժամանակ 1949 թ. ընթացքում հնարավոր դարձավ նույնիսկ ավելացնել արդյունաբերական արտադրության 1949 թ. նախնական պլանը, որը ևս կատարվեց 103%։ Ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի թողարկումը 1949 թ. ընթացքում, 1948 թ. համեմատությամբ, աճեց 20% և գերազանցեց հնգամյակի վերջին տարվա պլա-

նով նախատեսված մակարդակը։ 1949 թ. ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը, 1940 թ. համեմատությամբ, աճեց 41%[1]։ Արդյունաբերության շատ առաջատար ճյուղեր աշխատում էին հնգամյա պլանի առաջադրանքների զգալի գերակատարումով, օրինակ, Մոսկվայի արդյունաբերությունը արտադրության ծավալի հնգամյա պլանը կատարեց 4 տարում։

Չորրորդ հնգամյակի վերջին տարում ՍՍՌՄ ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց դարձյալ 23%[2]։ Այսպիսով, արտադրության աճի տեմպերը, միջին հաշվով, հնգամյակի ամեն տարվա համար կազմեցին 22—23%, որը տեսնված չէր համաշխարհային էկոնոմիկայի զարգացման պատմության մեջ։ 1950 թ. համար սահմանված առաջադրանքը արդյունաբերական արտադրանքի ծավալի վերաբերյալ գերակատարվեց 17%, որը նշանակում էր արդյունաբերական արտադրանքի ծավալի մեծացում 1950 թ., 1940 թ. համեմատությամբ, 73%՝ նախատեսված 48% փոխարեն[3]։

Ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների պլանը նախատեսում էր 250,3 միլիարդ ռուբլուց արդյունաբերության մեջ ներդնել 157,5 միլիարդ ռուբլի. վերականգնել ու նոր կառուցել 5.900 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Այդ պլանը կատարվեց 122%։ Դրա հետևանքով արդյունաբերության արտադրական հիմնական ֆոնդերը՝ ամենանորագույն տեխնիկայի բազայի վրա. 1940 թ. համեմատությամբ, ավելացան 58%։ Հնգամյակի ընթացքում վերականգնվեցին, նոր կառուցվեցին ու գործարկվեցին ավելի քան 6 հազար արդյունաբերական պետական ձեռնարկություններ, չհաշված պետական մանր, կոոպերատիվ և կոլտնտեսային ձեռնարկությունները, այսինքն՝ IV

[1] «Պրավդա», 19 հունվարի 1950։

[2] «Պրավդա», 26 հունվարի 1951։

[3] «Պրավդա», 17 ապրիլի 1951։

հնգամյակի տարիներին միջին թվով օրական երեքից ավելի (3,3) ձեռնարկություն էր գործարկվում [1]։

Այսպիսով, Սովետական Միության արդյունաբերությունը ժամկետից շուտ՝ 4 տարի և 3 ամսում կատարեց 5-ամյա պլանը։ Արդյունաբերության աշխատողները գերակատարեցին հնգամյա պլանի՝ արդյունաբերության վերականգնման ու հետագա զարգացման առաջադրանքները։

Մեր ռեսպուբլիկայում ևս արդյունաբերությունը հասավ մեծ հաջողությունների։ 1949 թ. արդյունաբերության համախառն արտադրանքի պլանը կատարվեց 102%, տարվա ընթացքում արտադրանքի 31% աճի ապահովությամբ [2]։ Արտադրության աճի տեմպերը անընդհատ ավելանում էին։ 1949 թ. ռեսպուբլիկայի շատ գործարաններ ու ֆաբրիկաներ կատարեցին հնգամյա պլանի առաջադրանքները և սկսեցին արտադրանք տալ հետևյալ՝ V հնգամյակի հաշվին։ Ամբողջությամբ վերցրած, 1949 թ. վերջին արդյունաբերությունը հասավ արտադրանքի թողարկման այն մակարդակին, որը նախատեսված էր 1950 թ. վերջի համար։

Հնգամյակը եզրափակող 1950 թ. նոր ձեռնարկությունների կառուցման ու թողարկման, գործող մի շարք ձեռնարկությունների ընդլայնման հետ մեկտեղ ներդրվում էին տեխնիկական կատարելագործումներ, բարելավումներ, արտադրական պրոցեսների ավելի կատարյալ տեխնոլոգիա։ Այդ բոլորը տվեց արդյունաբերական արտադրանքի մեծ աճ։ Ձեռնարկություններում տեղի էր ունենում արտադրության որակական ցուցանիշների ընդհանուր բարելավում՝ արտադրանքի ինքնարժեքի իջեցում, արտադրանքի որակի բարձրացում և էլեկտրաէներգիայի, նյութերի ու հումքի ծախսման խնայողություն, Գրեթե բոլոր ձեռնարկություններն էլ սկսեցին շահույթով աշխատել։

[1] Տե՛ս ՍՍՌՄ Պետական պլանային հանձնաժողովի և Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը՝ ՍՍՌՄ 1946—1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Պրավդա», № 107, 17 ապրիլի 1951։

[2] «Սովետական Հայաստան», 24 հունվարի 1950։

1950 թ. գարնանը Երևանի Ս. Մ. Կիրովի անվան, էլեկտրամեքենաշինական, ավտոդողերի, կաշվի, մահուդի գործարանների, Զանգեզուրի հանքային վարչության, Լենինականի գուլպա-տրիկոտաժային ֆաբրիկայի, Անդրկովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքի բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողներն ու ծառայողները հանդես եկան դիմումով, որը ուղղված էր ռեսպուբլիկայի արդյունաբերության բոլոր աշխատողներին և կոչ էր անում տարեկան արտադրական պլանը կատարել ժամկետից շուտ՝ նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի 30-ամյակին: Այդ դիմումը առաջ բերեց սոցիալիստական մրցության նոր հզոր վերելք:

Աշխատանքի արտադրողականությունը 1950 թ., 1948 թ. համեմատությամբ, աճեց 27,8%, իսկ 1945 թ. համեմատությամբ՝ 54,7%: Այդ է գլխավոր պատճառը, որ 1949—1950 թթ. ընթացքում արտադրանքի թողարկումը, 1948 թ. համեմատությամբ, աճեց 46%[1]: Համախառն արտադրանքի թողարկման պլանը 1950 թ. կատարվեց 103%, այսինքն՝ հնգամյա պլանով նախատեսված մակարդակը գերազանցվեց 12%: Արդյունաբերության արտադրանքը, 1940 թ. համեմատությամբ, 2,1 անգամ ավելանալու փոխարեն, փաստորեն ավելացավ համարյա 2,5 անգամ: Կապիտալ շինարարության գծով պլանը նույնպես գերակատարվեց՝ կատարողականը 110% էր, այդ թվում ռեսպուբլիկական արդյունաբերության կապիտալ շինարարության գծով՝ 162%: Այսպիսով հնգամյակի առաջադրանքները արդյունաբերության գծով զգալիորեն գերակատարվեցին[2]:

Հայկական ՍՍՌ արդյունաբերության զարգացումը 1949—1950 թթ. ըստ գլխավոր ճյուղերի հետևյալ տեսքն ունի:

Ավելացավ էլեկտրակայանների կարողությունը և էլեկտրաէներգիայի արտադրանքը: Դրան հաջորդեց հանքեր

---

¹ Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 12:

² Տե՛ս «Սովետական Հայաստան», 4 փետրվարի 1951:

1949 թ. հուլիսին շահագործման հանձնվեց Սևանի լճային գէսը, որը Հայաստանի հիդրոկայանների կարողությունը ավելացրեց մոտ 30%։ Այդ նույն ժամանակին ավարտվեց բարձր լարվածության էլեկտրական գծի կառուցումը Քանաքեռից Սևան՝ 63 կիլոմետր ու Սևան—Կիրովական՝ 58 կիլոմետր երկարությամբ, որը լճային գէսից Կիրովականի արդյունաբերական ձեռնարկություններին էլեկտրաէներգիա տալու համար էր. բացի դրանից Ձորագէսում գործարկվեց III ագրեգատը, Քանաքեռգէսի կարողությունը նույնպես ավելացավ, մյուս էլեկտրակայանների աշխատանքն ավելի բարելավվեց։ Ուժեղ թափով ծավալվեցին Գյումուշգէսի՝ Մինգեչաուրգէսից հետո Անդրկովկասի ամենախոշոր հիդրոկայանի շինարարության աշխատանքները։

Ընդհանուր առմամբ IV հնգամյակի տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ էներգետիկայի գծով կատարվել են ավելի քան 300 միլիոն ռուբլու (1955 թ. հուլիսի 1-ի գներով) կապիտալ ներդրումներ՝ մի գումար, որը գերազանցում էր 1921—1940 թթ. ընթացքում էներգետիկայի գծով կատարված ողջ կապիտալ ներդրումները։ Ռեսպուբլիկայի էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը 1949—1950 թթ. ընթացքում աճեց 43,3%, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 78%։ 1950 թ. Հայաստանի էլեկտրակայանների կարողությունն արդեն 60 անգամ գերազանցում էր 1913 թ. մակարդակը, 1945 թ. համեմատությամբ ավելանալով 55.2 հազար կիլովատով, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը զգալի չափով գերազանցեց հնգամյա պլանի առաջադրանքը և հասավ համարյա 1 միլիարդ կիլովատ ժամի (949,3 մլն. կիլովատ-ժամ)՝ գերազանցելով մոտ 200 անգամ՝ 1913 թ., 2,4 անգամ՝ 1940 թ. և 2,1 անգամ 1945 թ. արտադրված էլեկտրաէներգիայի քանակը։

Գունավոր մետալուրգիայի զարգացումը ընթանում էր արագ տեմպերով։ 1950 թ. համեմատությամբ, արտադրանքի ելքը ավելացավ 80%։ Ղափանի հանքային վարչությունը,

Շամլուղի հանքերը, Ալավերդու պղնձաձուլական գործարանը, որտեղ 1948 թ. շարք մտավ պղնձի էլեկտրոլիզի նոր ցեխը, բարելավեցին իրենց աշխատանքը, կատարելով ու գերակատարելով արտադրական պլանները։ 1950 թ. կեսերին գործարկվեց Քանաքեռի ալյումինի գործարանի (Կանազ) առաջին հերթը։ Գործարանի կոլեկտիվը կարճ ժամանակամիջոցում յուրացրեց հիմնական արտադրանքի թողարկումը, անընդհատ բարելավելով նրա որակը։ Մեծ աշխատանքներ էին տարվում Քաջարանի մոլիբդենի կոմբինատի առաջին հերթը 1951 թ. գործարկելու համար։ Այդ կոմբինատն ունեցավ միութենական խոշոր նշանակություն՝ գունավոր մետալուրգիայի արտադրանքի հետագա ավելացման գործում։ Անց էին կացվում խուզարկու-երկրաբանական հետախուզական աշխատանքներ Հայաստանի հարուստ ընդերքներում գունավոր մետաղներ, պոլիմետաղներ և այլ հանածոներ հայտնաբերելու համար։ 1950 թ. երկրաբանական-հետախուզական աշխատանքների ծավալը, 1948 թ. համեմատությամբ, ավելացավ 4 անգամից ավելի, իսկ պղնձի և այլ գունավոր մետաղների հայտնաբերված արդյունաբերական պաշարները 2—2,5 անգամ։ Ընդամենը գունավոր մետալուրգիայի արտադրանքը IV հնգամյակի տարիներին, 1945 թ. համեմատությամբ, ավելացավ 151%։

Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները ընդլայնվում էին, տեղի էր ունենում սահմանված հզորությունների յուրացումը։ Քիմիական ձեռնարկությունների համախառն արտադրանքը 1950 թ., 1948 թ. համեմատությամբ, աճեց 73%, որակի զգալի բարելավման և թողարկվող արտադրանքի տեսակների ավելացման առկայությամբ։ Ավելանում էր սինթետիկ կաուչուկի, ավտոդողերի, կաուստիկ սոդայի և քիմիական պարարտանյութերի արտադրությունը։ Այսպես, օրինակ, Երևանի ավտոդողերի գործարանը 1950 թ. իր արտադրական պլանը կատարեց 118% և, 1948 թ. համեմատությամբ, 50% ավելի ավտոդողեր տվեց ժողովրդական տնտեսությանը, թողարկելով դրա հետ մեկտեղ առավե-

լապես առաջին տեսակի արտադրանք. նա գերազանցեց հնգամյակի առաջադրանքը: Աշխատանքներ էին տարվում 1951 թ. լրիվ շահագործման հանձնելու՝ պոլիվինիլացետատի գործարանը, ընդլայնված սուպերֆոսֆատի արտադրության ցեխը Ալավերդու քիմիական գործարանում և ազոտային պարարտանյութերի ցեխը՝ Կիրովականի քիմիական կոմբինատում: Ընդհանուր առմամբ ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության արտադրանքը, այդ թվում և ավտոդողերի ու ավտոկամերաների արտադրանքը, հնգամյակի վերջում ավելացավ 2,5 անգամ համեմատած 1945 թ. հետ:

Արագորեն զարգանում էր մեքենաշինությունը, որի ձեռնարկությունները 1950 թ. արտադրական պլանը կատարեցին 109,5%, ավելացնելով համախառն արտադրանքի թողարկումը, 1948 թ. համեմատությամբ, ավելի քան 3 անգամ: Ընդլայնվեցին Երևանի էլեկտրամեքենաշինական և կաբելի գործարանները: ՍՍՌՄ Մինիստրների Սովետը սահմանեց այդ գործարանների հետագա պրոֆիլը, համապատասխանաբար ավելացնելով կապիտալ ներդրումները: 1950 թ. էլեկտրամեքենաշինական գործարանը թողարկեց 282 հազար կիլովատ ընդհանուր կարողությամբ գեներատորներ (մինչև 100 կվտ.), որը գերազանցեց 1948 թ. թողարկումը 5,6 անգամ, 609 հազար կիլովատ-ամպեր ընդհանուր կարողությամբ տրանսֆորմատորներ, որը գերազանցում էր 1948 թ. թողարկումը 2,2 անգամ: Գործարանի կոլեկտիվը հաջողությամբ վերացնում էր տեղ գտած թերությունները, կարգավորում ռիթմիկ աշխատանք: Ավարտվեցին և գործարկվեցին էլեկտրասարքավորումների, կոմպրեսորների, փոքր հիդրոտուրբինների, ավտոմասերի և այլ գործարաններ: Հնգամյակի վերջում մեքենաշինության արտադրանքը 18 անգամ գերազանցում էր 1945 թ. և 15 անգամ՝ նախապատերազմյան 1940 թ. մակարդակը[1]:

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 14—22. ՀՍՍՌ

Շինարարական լայն աշխատանքները անհրաժեշտություն առաջացրին զարգացնելու շինանյութերի արտադրությունը՝ տուֆաքարի, պեմզայի, ցեմենտի, կրի, ապակու, մեխի և այլն։ Երևանում կառուցվեցին ապակու, կղմինդրի ու աղյուսի գործարաններ, Թումանյանում՝ հրակայուն շինանյութերի խոշոր գործարան, որն ունեցավ մեծ նշանակություն Ռուսթավիի մետալուրգիական գործարանի շինարարության համար։ Երևանում և Անի-Պեմզայում կառուցվեցին շինարարական դետալների ու կոնստրուկցիաների գործարաններ, Արարատի և Ջաջուռի կրի գործարաններում նոր վառարաններ։ Արթիկի տուֆի մշակավայրերում հայտնաբերվեցին նոր հանքեր. տուֆի հանույթ կազմակերպվեց Երևանի շրջակայքում։ 1940 թ. համեմատությամբ, 1950 թ. շինարարական քարի հանույթը ավելացավ 3,4 անգամ, կղմինդրի արտադրությունը՝ 2,1 անգամ, ցեմենտինը՝ 1,6 անգամ։ Կազմակերպվեց լուսամուտի ապակու արտադրություն. սկսվեցին շինանյութերի նոր գործարանների շինարարական աշխատանքները։ Սակայն շինարարական քարի հանույթի, կղմինդրի և լուսամուտի ապակու արտադրության գծով հնգամյա պլանի առաջադրանքները կատարվեցին ոչ լրիվ[1]։

Ծանր արդյունաբերության ճյուղերին զուգընթաց շարունակում էին զարգանալ նաև թեթև արդյունաբերության և սննդ-համի ճյուղերը գյուղատնտեսական հումքի՝ բամբակի, ծխախոտի, շաքարի ճակնդեղի, գինու, մետաքսի, բրդի, կաշվի, կաթնամթերքների ու մսի, խաղողի, մրգի և բանջարեղենի կուլտուրաների բազայի վրա։ Առանձնապես զարգացավ ներքին արդյունաբերությունը, որի համախառն ար-

ղիճ-վարչության տվյալները. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն, էջ 30, 24, 25։

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 26—27։

տադրանքը 1950 թ. կազմեց 226%՝ 1940 թ. համեմատությամբ և 263%՝ 1945 թ. համեմատությամբ։ Կարգավորվեց բրդյա, բամբակյա, մետաքսյա գործվածքների, տրիկոտաժի և գուլպեղենի ավելի բարձր տեսակների արտադրությունը, աճեցին սննդ-համի, կաթնամթերքների ու մսի ձեռնարկությունները, որոնք արտադրում էին լայն սպառման արդյունաբերական և սննդամթերային ապրանքներ։ Շատացավ հացի-բուլկեղենի և թխվածքների, սեղանի գինիների ու պահածոների ասորտիմենտը։ Ավելացավ տարբեր տեսակի պանիրների, կենդանական յուղի թողարկումը։ Ընդհանուր առմամբ սննդ-համի արդյունաբերության համախառն արտադրանքը 1950 թ. ավելացավ 92%, համեմատած 1945 թ. հետ, և 35%՝ 1940 թ. համեմատությամբ։

Տեղական արդյունաբերությունը և արհեստագործական կոոպերացիան նույնպես բարելավեցին իրենց աշխատանքը գերակատարելով 1950 թ. պլանը 18%։ 1950 թ. տեղական արդյունաբերության ու արհեստագործական կոոպերացիայի գծով, 1940 թ. համեմատ, ավելի արտադրվեց ցինկապատ ամանեղեն՝ 5 անգամ, մահճակալներ՝ 2,9, տրիկոտաժային սպիտակեղեն՝ 1,6, գուլպեղեն՝ 1,9, բամբակյա գործվածքներ՝ 2,9, կոշկեղեն՝ 1,8 անգամ։ 1946—1950 թթ. գործարկվել են տեղական արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ, այդ թվում մեքենաշինական, նորոգման-մեխանիկական, հախճապակու, լաքի ու ներկի գործարաններ, կահույքի ֆաբրիկա։ Յուրացվեց գյուղատնտեսական ինվենտարի, էլեկտրալուսավորման արմատուրայի, կերասինկաների, ապակյա և հախճապակյա ամանեղենի և լայն սպառման այլ ապրանքների մասսայական արտադրությունը [1]։

Հնգամյակի տարիներին կառուցվեցին կամ լրիվ ավարտ-

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (Հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի, 1951 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

վեցին և շահագործման հանձնվեցին մահուդի գործարանը Երևանում, տրիկոտաժի ֆաբրիկան Կիրովականում, կոշիկի գործարանը Քանաքեռում, կահույքի ֆաբրիկաները և հախճապակու գործարանը Երևանում, մսի կոմբինատները Կիրովականում և Ղափանում, հզոր փակ սառցարանը Երևանում, յուղի-պանրի գործարանները Մարալիկում, Նոյեմբերյանում, Բասարգեչարում, Թալինում, խտացրած կաթի գործարանը Բասարգեչարում, ձկան պահածոների գործարանը Մարտունիում, գալալիթի գործարանը, հրուշակեղենի ֆաբրիկան Լենինականում, շաքարի գործարանը Սպիտակում, հացի գործարանները՝ Երևանում և շրջանային չորս կենտրոններում, ապակու տարայի և մետաղյա լայն սպառման առարկաների գործարաններ և այլն։ Ռեկոնստրուկցիայի ենթարկվեցին և ընդլայնվեցին մանվածքային ֆաբրիկան Լենինականում, հրուշակեղենի ֆաբրիկան Երևանում և այլն։

Այս բոլորի շնորհիվ չորրորդ հնգամյակի տարիներին, նախապատերազմյան 1940 թ. մակարդակի համեմատությամբ, Հայկական ՍՍՌ-ում բամբակյա գործվածքների արտադրությունը ավելացավ 1,3 անգամ, մետաքսյա գործվածքներինը՝ 7,6, տրիկոտաժային սպիտակեղենինը և վերնազգեստինը՝ 2,4, գուլպեղենինը՝ 1,5, կաշվե կոշիկեղենինը՝ 2,1, իսկ բրդյա գործվածքներինը՝ 32 անգամ։ Կոնսերվի արտադրությունը գերազանցվեց 82%, կենդանական յուղինը՝ 62%, մսինը՝ 44%, խաղողի գինունը՝ 220%։ Նոր կազմակերպվեց շաքարի, մսի և ձկան պահածոների արտադրությունը[1]։

1949—1950 թթ. ընթացքում զգալի շինարարական աշխատանքներ էին տարվում, որոնցից 1951 թ. շահագործման

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի, 1951 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

հանձնվեցին թեթև, սննդի, մսի ու կաթնեղենի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ, ինչպես օրինակ՝ նուրբ մահուդի կոմբինատը Երևանում, մետաքսա-մանվածքային ֆաբրիկան Շահումյանում, կոնյակի և գարեջրի գործարանները Երևանում, հացի գործարանը Կիրովականում, «Խերես» գինու գործարանը Աշտարակում, սեղանի գինիների գործարանը Կոտայքում, Երևանի սառցակոմբինատը լրիվ կարողությամբ, պաղպաղակի ֆաբրիկաները, կաթի գործարանները Լենինականում, Կիրովականում և Հայկական ՍՍՌ այլ շըրջաններում, պանրի գործարաններ 9 շրջաններում, բացի շահագործման հանձնված 19 մեքենայացված յուղի ու պանրի գործարաններից։ Այս ձեռնարկությունների կառուցումը և գործարկումը զգալի չափով պետք է ապահովեին ռեսպուբլիկայի և ռեսպուբլիկայից դուրս աշխատավորների աճող կարիքները։ Թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկությունների հիմնական խնդիրն էր էլ ավելի ավելացնել մասսայական ապրանքների թողարկումը, բարելավելով նրանց որակը։

Չորրորդ հնգամյակի տարիներին ընդամենը կառուցվեցին, վերակառուցվեցին և գործարկվեցին 220 նոր գործարան, ֆաբրիկա, էլեկտրակայան և խոշոր արդյունաբերական այլ ձեռնարկություններ, որը տալիս է այդ գծով քանակական աճ, համեմատած 1945 թ. հետ, մոտ 1,5 անգամ։ Այդ թվի մեջ են մտնում Երևանի, էլեկտրա-մեքենաշինական, ալյումինի, հիդրոտուրբինների, հեծանիվի, պոլիվինիլացետատի, ավտովերանորոգման, ճշգրիտ էլեկտրա-սարքավորումների և այլ գործարաններ։ Այդ նույն ժամանակաշրջանում սկսվեց ռեսպուբլիկայի արդյունաբերական այլ մեծ ձեռնարկությունների, ինչպես էլեկտրալամպերի և այլ գործարանների շինարարությունը, սկսվեց ընդլայնվել Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը, շարունակվում էին աշխատանքները էլեկտրա-տեխնիկական գործարանները լրիվ հզորությամբ գործարկելու համար և այլն։ 1950 թ. վերջին Հայաստանում արդեն գործում էին 699 խո-

շար արդյունաբերական ձեռնարկություն, այդ թվում 51 խոշոր էլեկտրակայան, 14 ձեռնարկություն քիմիական արդյունաբերության գծով, 4՝ գունավոր մետալուրգիայի, 95՝ մետաղամշակման (այդ թվում 16՝ մեքենաշինության գծով) 65՝ տեքստիլ, 37 կարի արդյունաբերության, 180՝ սննդ-համի գծով և այլն[1]։

Ստորև բերված աղյուսակը վկայակոչում է Սովետական Հայաստանի ծանր արդյունաբերության զարգացման և նրա մի շարք արտադրանքի մասին չորրորդ հնգամյակի վերջին տարում։

## Արտադրությունը 1950 թվականին

| | | |
|---|---|---|
| Գեներատոր | 9462 | հատ (մինչև 100 կվ.) |
| Տրանսֆորմատոր | 609 | հազար կիլովատտ ընդհանուր կարողությամբ |
| Կոմպրեսոր | 468 | հատ |
| Կենտրոնախույս մղիչ | 2673 | » |
| Մետաղահատ հաստոց | 904 | » |
| Ժամացույց | 183 | հազար |
| Մանկական հեծանիվ | 3200 | հատ |
| Լուսավորիչ լար | 3127 | կմ. |
| Հանքային պարարտանյութ | 57,9 | հազար տոննա[2]։ |

Երկրորդ աղյուսակը ակնհայտ կերպով ցույց է տալիս Սովետական Հայաստանի սոցիալիստական արդյունաբերության աճը չորրորդ հնգամյակի ընթացքում մի շարք կարևոր արտադրանքի գծով։

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

[2] Աղյուսակը կազմված է՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսություն, Վիճակագրական ժողովածու, էջ 30—35, 44 և ՍՍՌՄ արդյունաբերություն, Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն, էջ 95 տվյալներից։

| Արտադրությունը 1950 թ. | Համեմատած 1940 թ. մակարդակի հետ | Համեմատած 1945 թ. մակարդակի հետ |
|---|---|---|
| Ծծմբաթթու | — | 480 տոկոս |
| Ցեմենտ — 151.5 հազար տոննա | 159 տոկոս | 236 » |
| Շինարարական գաճ — 38.5 հազար տ. | 189 » | 360 » |
| Տեխնոլոգիական գաճ — 78,9 » | 142 » | 174 » |
| Թրծած կղմինդր — 6,238 մլ. հատ | 100 » | 291 » |
| Շինարարական աղյուս — 5,9 մլ. հատ | 123 » | 660 » |
| Արդյունաբերական և շինարարական փայտ 60 հազար խոր. մետր | 151 » | 120 » |
| Փայտ-փաներներ — 96 հազ. խոր. մետր | 135 » | 88 » |
| Սղոցանյութեր — 101 » » » | 194 » | 530 » |
| Կաշվե կոշիկներ — 2,029 մլ. զույգ | 215 » | 400 » |
| Բամբակի հյուսվածք — 16,3 հազար տ. | 164 » | 400 » |
| Բամբակյա թել — 7.8 հազար տ. | 137 » | 150 » |
| Բամբակյա գործվածք — 34.6 մլ. մ. | 129 » | 184 » |
| Բրդյա գործվածք — 551 հազար մետր | 3200 » | 520 » |
| Մետաքսյա գործվածք — 1,529 մլ. մետր | 760 » | 320 » |
| Հում մետաքս 31 տոննա | 148 » | 221 » |
| Գորգ — 17.8 հազար քառ. մետր | 111 » | 270 » |
| Կոնյակ — 96 հազար դեկալիտր | 152 » | — |
| Խաղողի գինի — 772 հազար դեկալիտր | 320 » | 160 » |
| Կենդանական յուղ — 2532 տոննա | 162 » | 177 » |
| Բուսական յուղ — 5600 տոննա | 92 » | 278 » |
| Պանիր — 2093 տոննա | 112 » | 68 » |
| Պահածոներ — 31.4 մլ. պայմ. տուփ | 182 » | 148 » |
| Միս (ներառյալ ենթամթերքներ) — 12.400 տոննա | 114 » | 192 » |
| Ձուկ — 1125 տոննա | 93 » | 95 » |
| Երշիկեղեն — 1581 տոննա | 180 » | 258 » |
| Գերանու յուղ — 1978 կիլոգրամ | — | 245 » |
| Հրուշակեղեն — 7600 տոննա | 249 » | 500 » |
| Մակարոնեղեն — 4300 » | 176 » | 157 » |
| Գլանակներ — 2,579 միլիոն հատ | 238 » | — |
| Օճառ — 10,500 տոննա | 177 » | 286 տոկոս[1]: |

[1] Աղյուսակը կազմված է Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսություն, Վիճակագրական ժողովածու, էջ 32—51 և ՍՍՌՄ արդյունաբերություն, Վիճակագրական ժողովածու, էջ 95 տվյալներից:

Չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի, ինչպես և ամբողջ Սովետական Միության տրանսպորտն ու կապը հաջող կերպով զարգանում էին զգալի չափով ընդլայնելով իրենց աշխատանքների մասշտաբները։ 1947 թ. կազմակերպվեց Անդրկովկասյան երկաթուղագծի չորրորդ բաժանմունքը՝ Երևանի բաժանմունքը, որի մեջ մտավ Հայկական ՍՍՌ երկաթուղագիծը։ Այդ բաժանմունքի կազմակերպումը բարելավեց ռեսպուբլիկայի երկաթուղային տրանսպորտի աշխատանքների օպերատիվ ղեկավարությունը։ 1948 թ. սկսվեցին երկաթուղու էլեկտրիֆիկացման աշխատանքները լեռնային դժվար մասում՝ Սանահինի կայարանից մինչև Լենինական, որը պետք է զգալի չափով ավելացներ ռեսպուբլիկայի երկաթուղային գծի թողունակությունը։ Կատարվեցին ու գերակատարվեցին 1948 թ. բեռնավորման և բեռնաթափման աշխատանքների պլանները։

Դրա հետ մեկտեղ կային լուրջ թերություններ երկաթուղային տրանսպորտի աշխատանքներում։ 1947—1948 թթ. չկատարվեցին ցեմենտի, արդյունաբերական հումքի և այլ, մասնավորապես պարենային բեռների բեռնավորման պլանները։ Թույլ էին մեքենայացված բեռնավորման և բեռնաթափման աշխատանքները, իսկ վագոնների պարապուրդները 27 տոկոսով անցնում էին սահմանված նորմայից։ Այդ պատճառով վագոնների միջին օրական վազքի պլանը կատարվեց միայն 72,6%, իսկ առևտրական արագությունը կազմեց պլանի 97,9%։ Երկաթուղայինների մի մասի մոտ՝ տեղ էին գտնել աշխատանքային դիսցիպլինայի խախտումներ, ինչպես, օրինակ, ուղարկված գնացքների ընդհանուր թվից մեկ քառորդը, գրաֆիկին հակառակ, մեկնում էր ուշացումներով և այլն[1]։

Հայկական ՍՍՌ երկաթուղայինները պարտիական կազմակերպությունների գլխավորությամբ վճռական պայքար տարան այդ թերությունների դեմ, բարձրացրին պահանջկո-

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 31—32։

ռությունը աշխատանքի մեջ, պատասխանատվության զգացումը դնելով իրենց հանձնված գործը և զգալիորեն բարելավեցին աշխատանքները։ Ղեկավարությունը ամրացվեց ավելի փորձված կադրերով։ Անվանի մեքենավար Գարեգին Արաքելյանը, որը դեռ 1937 թ. խոսք էր տվել իր շոգեմեքենայի վագրը առանց վերանորոգման հասցնել մեկ միլիոն կիլոմետրի, 1948 թ. կատարեց այն։ Արաքելյանը հաջող կերպով իր փորձն փոխանցում էր երիտասարդ կադրերին։ Սոցիալիստական մրցության մյուս առաջավորներից էին Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Ա. Խաչատրյանը, Մ. Զիրոյանը, Ս. Հարությունյանը, Շահինյանը, Ա. Կարապետյանը, Կ. Ենգոյանը, Ա. Սարգսյանը և ուրիշները, որոնք ավելացնում էին գնացքների տեխնիկական արագությունը, խնայում էին վառելանյութը և տեղափոխում էին բեռնվածության նորմաներից գերազանցած գնացքներ։ Լենինականի դեպոյի վերանորոգման ցեխը անվանի վարպետ Վ. Վասենցյանի գլխավորությամբ առաջին տեղը շահեց երկաթուղայինների Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ։ Մեծ հաջողությունների հասեցան գծային վարպետները՝ Մանուկովը, Գևորգյանը, դեպոյի աշխատողներից Առուշանյանի բրիգադը և այլք։ Երկաթուղային տրանսպորտի լավագույն մարդկանցից էին Երևանի երկաթուղային հանգույցի ավագ մեքենավարներ Վ. Մելիքյանը, Վ. Դալլաքյանը, դեպոյի պետ Ն. Թորգոմյանը, որը 1950 թ. արդեն աշխատում էր 1953 թ. հաշվին, և ուրիշները։

1950 թ. Անդրկովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքը բեռնափոխադրման պլանը կատարեց 105,3%, որը 1948 թ. համեմատությամբ ավելի 39% աճ։ Բեռնաշրջանառության պլանը 1950 թ. կատարվեց 103,1%, որը նույնպես 1940 թ. համեմատությամբ, ավելի 30,8% աճ[1]։ Լոկոմոտիվային-շարժական կազմի օգտագործումը լավացավ։ Երկաթուղային մարդատար շարժումը զգալի չափով բարելավվեց և արդեն ապահովում էր

[1] Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 27։

գյուրակեցին, ամբողջությամբ մետաղյա վագոններով: Հայաստանի երկաթուղային տրանսպորտի կողմից բեռների փոխադրումը ամբողջությամբ վերցրած գերազանցեց 1940 թ. նախապատերազմյան մակարդակը 1,5 անգամ (բեռների ժամանումը հասավ 3,2 միլիոն տոննայի՝ 1940 թ. 110 տոկոսը. բեռների մեկնումը՝ 2,3 միլիոն տոննայի՝ 1940 թ. 165 տոկոսը)[1]: Երկաթուղային տրանսպորտի աշխատողները շարունակում էին աշխատանքային պայքարը իրենց մյուս բոլոր ցուցանիշները բարելավելու համար:

Արդյունաբերության աճի հետ մեկտեղ աճեցին ոչ միայն երկաթուղային, այլ և տրանսպորտի այլ փոխադրումները: Չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում ամբողջ ավտոմոբիլային ճանապարհների ցանցը ավելացավ 28% և կազմեց 3300 կմ. (ռեսպուբլիկայի 7800 կմ. ընդհանուր ճանապարհների ցանցում), բարելավվեց ճանապարհների կապիտալ ու առօրյա վերանորոգումը և նրանց պահպանման գործը, բարձրացավ ճանապարհային շինարարական աշխատանքների մեքենայացումը, ճանապարհները կանաչապատվում էին և այլն: Երևանում տրամվայի գիծը ընդարձակվեց 15 կմ.՝ գլխավորապես ծայրամասում և ֆաբրիկա-գործարանային շրջանում, կազմակերպվեց նաև տրոլեյբուսային հաղորդակցություն 10 կմ. երկարությամբ: Նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ ավտոմոբիլային տրանսպորտի պարկը ավելացավ մոտ 2,5 անգամ, իսկ բեռների փոխադրումները 1950 թ. կազմեցին 12,5 միլիոն տոննա, գերազանցելով 1940 թ. փոխադրումների մակարդակը ավելի քան 3 անգամ: Բարելավվեց բեռնատար ավտոմեքենաների օգտագործումը և նրանց տեխնիկական սպասարկումը, կրճատվեցին ավտոմեքենաների պարապուրդները և անբեռ վազքը, տոննա-կիլոմետրերի կատարողականը 1950 թ. 3,4 անգամ ավելի էր, քան 1940 թ.: Վերականգնվեց և էյ ա-

---

[1] Տե՛ս ՍՍՌՄ տրանսպորտը և կապը, Վիճակագրական ժողովածու. 1957, ռուսերեն, էջ 67:

վելի ծավալվեց ավտոբուսային կանոնավոր հաղորդակցությունը քաղաքներում և Հայկական ՍՍՌ քաղաքների և շրջանների միջև: Մարդատար փոխադրումների ծավալը 1950 թ., 1940 թ. համեմատությամբ ավելացավ 3 անգամ: Երևանում, Լենինականում, Կիրովականում և այլ քաղաքներում կազմակերպվեց բնակչության սպասարկումը մարդատար և բեռնատար տաքսիներով[1]:

Զգալի աշխատանքներ կատարվեցին կապի բնագավառում: Հինգամյակում ավարտվեցին աշխատանքները ռեսպուբլիկայի բոլոր բնակավայրերը, գյուղերը, ավանները, մեքենա-տրակտորային կայանները հեռախոսային ցանցով միացնելու ուղղությամբ: Երևանում կառուցվեց հեռախոսային ավտոմատիկ մեծ կայան (ԱՏՍ), և դրանով իսկ քաղաքային հեռախոսային ցանցը ավտոմատացվեց: Ռադիոկետերի թիվը քաղաքներում և գյուղական վայրերում, 1940 թ. համեմատությամբ, հնգամյակում ավելացավ մոտ 75%. այդ թվում գյուղում ավելի քան 2 անգամ, և հասավ մինչև 66 հազար կետի (1940 թ.՝ 39 հազար կետ): Բարելավվում էր բնակչության սպասարկումը փոստ-հեռագրային կապով. ընդլայնվեց գյուղական փոստային բաժանմունքների ու գործակալությունների ցանցը, ավելացավ մեքենայացված փոստային տրակտի երկարությունը, փոստային թղթակցությունների փոխադրման ժամանակ լայն կերպով սկսվեց օգտագործվել ավտո ու օդային տրանսպորտը[2]:

Սովետական ժողովուրդը, հաջողությամբ վճռելով չորրորդ հնգամյակի խնդիրները արդյունաբերության ասպարեզում, հիմք դրեց սոցիալիստական արդյունաբերության հետագա, էլ ավելի հզոր վերելքին, որը հանդիսանում է սոցիալիզմից կոմունիզմին անցնելու վճռական պայմաններից մեկը: 1950 թ.

[1] Տե՛ս ՍՍՌՄ տրանսպորտը և կապը, Վիճակագրական ժողովածու, էջ 167, 76, 180, 190—192, 199, 295. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 112—113:

[2] Տե՛ս ՍՍՌՄ տրանսպորտը և կապը, Վիճակագրական ժողովածու, էջ 230—241, 244—249, 217—223, 209:

Սովետական կառավարությունը որոշումներ ընդունեց աշխարհի ամենամեծ Կույբիշևյան և Ստալինգրադյան հիդրոէլեկտրակայանների կառուցման մասին, բացի դրանից որոշումներ ընդունվեցին կառուցելու Վոլգա-Դոն նավարկելի ջրանցքը, որը միացնում է Եվրոպայի ամենամեծ գետի ավազանը Սև ծովի հետ, և այլ հսկա էլեկտրակայանների ու ջրանցքների մասին։

ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ միասին Սովետական կառավարության այդ որոշումներին ջերմորեն արձագանքեց նաև մեր ռեսպուբլիկայի աշխատավորությունը։ Հայկական ՍՍՌ արդյունաբերական ձեռնարկությունները նորակառույցներին սկսեցին մատակարարել տարբեր տեսակի սարքավորումներ, ինչպես՝ տրանսֆորմատորներ, օդային կոմպրեսորներ, կոնսոլ մղիչներ, կաբելային իրեր, հիդրոտուրբիններ, ավտոմոբիլային մասեր, էլեկտրալուսավորման արմատուրա, մեծ քանակությամբ շինարարական նյութեր և այլն։ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի նախաձեռնությամբ ռեսպուբլիկայի ձեռնարկություններում սկսվեց ծավալվել սոցիալիստական մրցություն՝ Սովետական Միության նորակառույցների պատվերները ժամկետից շուտ և բարձրորակ կատարելու համար։ Տրանսպորտի բնագավառում աշխատողները պարտավորություն էին ստանձնում «կանաչ ուղի» տալ այդ կառուցումները ուղարկվող բոլոր բեռներին։ Սովետական Միության վիթխարի նորակառույցները հանդիսացան և հանդիսանում են իսկական համաժողովրդական գործ։ Նրանք խաղաղության դրոշ են, որ բարձրացրել է սովետական ժողովուրդը։

***

Հայաստանի, ինչպես և բոլոր սովետական ռեսպուբլիկաների արդյունաբերության զարգացման առանձնահատկություններից է արդյունաբերական արտադրության տեսակարար կշռի անընդհատ ավելացումը ժողովրդական տնտեսու-

թյան ընդհանուր ծավալի մեջ, ինչպես և ծանր արդյունաբերության ճյուղերի տեսակարար կշռի ավելացումը արդյունաբերական արտադրության զարգացման պրոցեսում։

Չնայած արդյունաբերության զարգացման գործում թույլ տրված որոշ ոչ ճիշտ պլանավորման- (արդյունաբերության միակողմանի զարգացումը՝ առավել էներգիա կլանող արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելով) տեղական հումքային և էներգետիկ ռեսուրսների բազայի վրա չորրորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում զարգացում ստացան ծանր արդյունաբերության բոլորովին նոր ճյուղեր, որոնք ունեն համամիութենական նշանակություն, ինչպես էլեկտրամեքենաշինությունը, հաստոցաշինությունը, հրակայուն շինությունների արտադրությունը, այնպիսի արժեքավոր գունավոր մետաղի, ինչպիսին է մոլիբդենի հանույթը և այլն։ Ծանր արդյունաբերության անշեղ զարգացումը, Հայկական ՍՍՌ ընդերքների բնական հարստությունների հանույթի ու մշակման ծավալումը դարձրին նրան ավելի առաջավոր ինդուստրիալ ռեսպուբլիկա, որի արտադրանքը դուրս եկավ լայն, ընդհանուր միութենական շուկա։ Այդ արտադրանքի թվումն են՝ ուժային տրանսֆորմատորներ, գեներատորներ, հիդրոտուրբիններ, կոմպրեսորներ, մետաղահատ դազգահներ, էլեկտրոլիզային ապարատներ, ավտոմեքենաների և տրակտորային մասեր, էլեկտրասարքավորում և էլեկտրաչափիչ գործիքներ, ալյումին, մաքուր էլեկտրոլիզային պղինձ, կաբել, ժամացույցներ, ավտոդողեր և շատ ուրիշ արտադրանք, որը լայնորեն հայտնի է Սովետական Միության բոլոր երկրամասերում և նրա սահմաններից դուրս։

Ծանր արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը, գոյություն ունեցող ճյուղերի ընդլայնումը ապահովեցին ռեսպուբլիկայի ինդուստրիալ հզորության աճը։ Դրա հետ միասին տեղի էր ունենում Հայաստանի թեթև և սննդի արդյունաբերության ընդլայնումը և ուժեղացումը, թեթև ինդուստրիայի այնպիսի նոր ճյուղերի ստեղծումը, ինչպես՝ նուրբ մահուդի, բարձրորակ մետաքսի, ապակյա իրերի, շաքարի և այլ ար-



9—1568

դյունաբերությունը։ Ռեսպուբլիկայի թեթև ինդուստրիայի արտադրանքը՝ բրդի և մետաքսյա գործվածքներ, պարֆյումերիա, կոշիկեղեն, մրգի և բանջարեղենի պահածոներ, գինիներ, կոնյակներ և այլն նույնպես լայնորեն հայտնի են ամբողջ Սովետական Միության մեջ։

Չնայած իր փոքր տարածության և բնակչության փոքր թվի[1], Սովետական Հայաստանը՝ շնորհիվ արագ ինդուստրիալ զարգացման ավելի ու ավելի զգալի դեր է սկսում խաղալ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության մեջ իր ընդհանուր արտադրանքով։ Չորրորդ հնգամյակի վերջին մեր ռեսպուբլիկան արդեն գրավում էր VII տեղը ողջ Սովետական Միության մեջ այնպիսի կարևոր արտադրության գծով, ինչպիսին է էլեկտրաէներգիայի արտադրությունը, VII տեղը նաև ցեմենտի արտադրության գծով, VI տեղը՝ քիմիական պարարտանյութերի, IV տեղը՝ բամբակյա գործվածքների, X՝ կաշվե կոշկեղենի արտադրության գծով[2]։ 1950 թ. Հայկական ՍՍՌ-ն գրավում էր V տեղը Սովետական Միության մեջ գիպսի արտադրության, VI տեղը՝ կղմինդրի, V տեղը՝ բամբակյա թելի և գուլպաների, IV՝ սպիտակեղենային տրիկոտաժի, VIII՝ մետաքսյա գործվածքների, VII՝ վերին տրիկոտաժի և խաղողի գինու, VIII՝ պահածոների, IX՝ կենդանական յուղի արտադրության գծով և այլն[3]։

Այս բոլորը հնարավոր դարձավ կատարել մեր արդյունաբերությունը անշեղորեն զարգացնելու, բարձրորակ հայրենական տեխնիկայով հագեցնելու բազայի վրա, շնորհիվ աճած նոր ինժեներա-տեխնիկական և բանվորական կադրերի, որոնք այդ տեխնիկան հաջողությամբ տիրապետեցին, և արտա-

---

[1] Հայկական ՍՍՌ-ն իր տարածությամբ՝ մոտ 30 հազար քառ. կմ. ամենափոքր Սովետական Ռեսպուբլիկան է ՍՍՌՄ կազմում և գրավում է 15-րդ, իսկ բնակչության թվով՝ 1,8 միլիոն, 13-րդ տեղը։

[2] Տե՛ս ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, 1956, ռուսերեն, էջ 80, 82, 84, 87։

[3] Տե՛ս ՍՍՌՄ արդյունաբերությունը, Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն, էջ 174, 290, 310, 327, 332, 337, 346—348, 407, 400, 390։

ղրանքի որակի բարձրացման ու նրա ասորտիմենտի ընդարձակման հիման վրա։

Կոմունիստական շինարարության հիմնական հարցերից մեկը՝ Սովետական Միության մեջ էկոնոմիկայի, գիտության, կուլտուրայի զարգացման տեմպերի, մասնավորապես, արդյունաբերական արտադրության աճի բարձր տեմպերի հարցն է։ Զարգացման տեմպերով, այդ թվում արդյունաբերական արտադրության աճի տեմպերով, Սովետական Միությունը շատ հետ է թողել բոլոր կապիտալիստական երկրներին։ Առաջին երեք հնգամյակների տարիներին խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքի աճի տարեկան տեմպը կազմեց միջին հաշվով 19%՝ գերազանցելով 10 անգամ գլխավոր կապիտալիստական երկրների արդյունաբերական զարգացման աճի տեմպերը։ Չորրորդ հնգամյակի տարիներին սոցիալիստական արդյունաբերության արտադրանքի տարեկան աճը ավելի բարձրացավ, կազմելով, ինչպես արդեն նշվեց, 22—23% այն ժամանակ, երբ տարեց-տարի նրա տոկոսային կշիռը նույնպես բարձրանում է։

Հայկական ՍՍՌ-ում արդյունաբերական արտադրության զարգացման տեմպերը նույնպես անընդհատ ավելացել և ավելանում են։ Կապիտալ ներդրումների ծավալը արդյունաբերության, էներգետիկայի, տրանսպորտի և կապի գծով, եթե ընդունենք 100% առաջին հնգամյակի տարիների համար, ապա երկրորդ հնգամյակի տարիներին այն հասավ 305% և համապատասխանաբար երրորդ հնգամյակի 3 տարում՝ 235%, իսկ չորրորդ հնգամյակում՝ 775%։ Չորրորդ հնգամյակի տարիներին կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը գերակատարվեց 24%։ Հիմնական կապիտալ ներդրումները արդյունաբերության, էներգետիկայի, տրանսպորտի և կապի գծով կազմեցին ըստ տարիների՝ 1946 թ. համար՝ 178,8, 1947 թ.՝ 191,2, 1948 թ.՝ 246,0, 1949 թ.՝ 346,1, 1950 թ.՝ 407,9 մլն. ռուբլի (1955 թ. հուլիսի 1-ի գներով)։ Համապատասխանաբար չորրորդ հնգամյակի տարիներին արդյունաբերության համախառն արտադրանքը, եթե 1945 թ. ընդունենք

որպես 100%, 1946 թ. համար նա կազմեց 111,0, 1947 թ.՝ 146,0, 1948 թ.՝ 177, 1949 թ.՝ 220,0, իսկ 1950 թ.՝ 268,0%։ Այսպիսով, ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ, հնգամյակի վերջին տարում գերազանցում էր 22 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերության արտադրանքը՝ 61 անգամ[1]։

1950 թ. վերջին ռեսպուբլիկայի արդյունաբերական-արտադրական հիմնական միջոցների արժեքը կազմում էր 1,82 միլիարդ ռուբլուց ավելի (այդ թվում 1,76 միլիարդ ռուբլի խոշոր արդյունաբերության գծով)՝ 2,8 անգամ գերազանցելով 1940 թ. և համարյա կրկնակի անգամ՝ 1945 թ. մակարդակը։ Արդյունաբերության համախառն արտադրանքը անցել էր 1 միլիարդ ռուբլուց (1926/27 թ. անփոփոխ գներով, այդ թվում 950 միլիոն ռուբլի խոշոր արդյունաբերության գծով), նույնպես ավելանալով, 1945 թ. համեմատությամբ, համարյա 2,5 անգամ, իսկ 1940 թ. համեմատությամբ՝ համարյա 2,7 անգամ[2]։

Բնորոշ է, որ չորրորդ հնգամյակի տարիներին՝ այն ժամանակ, երբ երկրում արդյունաբերական արտադրության միջին աճը նշվեց 48%, իսկ փաստորեն կատարվեց 73%, Հայկական ՍՍՌ-ում, ինչպես և մյուս միութենական ռեսպուբլիկաներում, այն պլանավորված էր ավելի բարձր՝ օրինակ, Հայաստանում՝ 210%, իսկ կատարվեց 249%։ Արդյունաբերության զարգացման տեմպերով Սովետական Հայաստանը գրավեց III տեղը Միության մեջ՝ Էստոնիայից (342%) և Լատվիայից (303%) հետո[3]։ Այս սոցիալիստական պլանավորման մեջ արտացոլվում է Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականությունը, որը հնարավորություն է տալիս առաջներում ճնշված ժողովուրդներին հաս-

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 21—22, 105, 16 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

[3] Տե՛ս ՍՍՌՄ արդյունաբերությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 52—54։

տատել ոչ միայն իրավական հավասարություն, այլև փաստացի հավասարություն, այսինքն հասնել տնտեսական, քաղաքական ու կուլտուրական տեսակետից առաջ գնացած ազգերին, որը և նրանք, այդ թվում հայ ժողովուրդը, կատարեցին Սովետական իշխանության տարիների ընթացքում։

Արդյունաբերության և առանձնապես ծանր արդյունաբերության անշեղ վերելքի բարձր, անընդհատ աճող տեմպերը հանդիսանում են շահագործողական, կապիտալիստական հասարակության շղթաներից ազատ, արտադրության անարխիայից, ճգնաժամերից, գործազրկությունից և ժողովրդական մասսաների աղքատացումից ազատ սոցիալիստական կարգերի, սոցիալիստական արտադրության մեծագույն առավելությունների արտահայտությունը. Նրանք հանդիսանում են կոմունիստական հասարակության ստեղծման կարևորագույն պայմանը, որը և իրականացնում է սովետական ժողովուրդը։ Հայկական ՍՍՌ արդյունաբերությունը կազմում է ՍՍՌ Միության հզոր արդյունաբերության մի մասը։ Նրա զարգացումը լրիվ համապատասխանում է վերը ասածին։ Սրանք են չորրորդ հնգամյա պլանի կատարման արդյունքները ռեսպուբլիկայի արդյունաբերության, տրանսպորտի և կապի բնագավառում։

## 2. Գյուղատնտեսության զարգացումը

Սովետական Միության գյուղատնտեսության վերականգնման ու հետագա զարգացման պրոցեսը չորրորդ հնգամյակի տարիներին արմատապես տարբերվում է օտարերկրյա ինտերվենցիայից և քաղաքացիական պատերազմից հետո եղած գյուղատնտեսության վերականգնման պրոցեսից։ Օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի տարիներին մեր գյուղատնտեսությունը չկրեց այնպիսի հսկայական վնասներ և չենթարկվեց այնպիսի ավերումների, ինչպիսին Հայրենական պատերազմի տարիներին էր. այն ժամանակվա հետամնաց տեխնիկական բազան վերականգնե-

լու համար ծախսեր ավելի քիչ էին պահանջվում, սակայն 1920-ական թվականներին գյուղատնտեսությունը վերականգնվեց մոտավորապես ութ տարում, իսկ Հայրենական պատերազմից հետո՝ չորս տարում, այսինքն երկու անգամ ավելի արագ։

Պատճառը այն էր, որ գյուղատնտեսության վերականգնումը օտարերկրյա ինտերվենցիայից և քաղաքացիական պատերազմից հետո տեղի էր ունենում անհատական գյուղացիական տնտեսության բազայի վրա իր հետամնաց տեխնիկայով և դրա համար էլ գյուղատնտեսության վերականգնումը այն ժամանակ կատարվեց այդպես դանդաղ, ընդ որում նա չվերացրեց գյուղատնտեսության հետ մնալը սոցիալիստական արդյունաբերությունից, որը վերացվեց միայն շնորհիվ կոլեկտիվացման, շնորհիվ գյուղատնտեսության փոխադրմանը սոցիալիզմի զարգացման ուղու վրա մեր երկրում։

Գյուղատնտեսության վերականգնումը Հայրենական պատերազմից հետո իրականացվում էր նոր տեխնիկական հիմքերի վրա, վերականգնվում էր սոցիալիստական գյուղատնտեսությունը, որը հենվելով բարձր զարգացած սոցիալիստական արդյունաբերության վրա, ոչ միայն լրիվ կերպով վերականգնվեց, այլև ավելի զարգացավ, նույնիսկ օկուպացման ենթարկված քայքայված շրջաններում զգալի չափով գերազանցեց գյուղատնտեսական արտադրության նախապատերազմյան մակարդակը[1]։

Պատերազմը ժամանակավորապես կասեցրեց ՍՍՌՄ, այդ թվում Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության զարգացումը, որը պատերազմի ժամանակ չէր ստանում տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, պահեստային մասեր, բավարար չափով վառելիք, քիմիական պարարտանյութեր։ Մեր սոցիալիստական գյուղատնտեսության նյութական-տեխնիկական բազան թուլացավ, ամբողջությամբ վերցրած ցանքա-

---

[1] Տե՛ս Ֆ. Պ. Կոշելև, Հետպատերազմյան առաջին հնգամյակի կատարման հիմնական արդյունքները, 1951, էջ 74—75։

տարածությունները կրճատվեցին, ագրոտեխնիկան վատացավ, բերքատվությունը նվազեց, զգալի չափով պակասեց մթերատու և բանող անասունների, ձիերի գլխաքանակը, անասնապահության մթերատվությունը համապատասխանաբար իջավ, կոլտնտեսություններում պակասեց բանվորական ուժը։ Գյուղատնտեսության հետպատերազմյան զարգացման լուրջ դժվարությունները պայմանավորված էին նաև նրանով, որ պատերազմի պատճառով առաջ եկած դժվարություններին ավելացան Սովետական Միության եվրոպական մասի զգալի տերիտորիայում 1946 թ. մեծ երաշտի չարաբաստիկ հետևանքները։

Իրոք, պատերազմն ավարտելուց հետո, խաղաղ շինարարությանն անցնելով, գյուղատնտեսության բոլոր աշխատողները ձեռնամուխ եղան վերացնելու պատերազմի վերև նշված վնասները, նրա ամեն մի հետք, սակայն 1946 թ. չհաջողվեց արմատական բեկում ստեղծել գյուղատնտեսության մեջ՝ նախընթաց 50 տարիներում չտեսնված ուժեղագույն երաշտի պատճառով, որը ոչնչացրեց բերքի գերակշռող մասը՝ Ուկրաինական ՍՍՌ-ում, Մոլդավական ՍՍՌ-ում, ՌՍՖՍՌ կենտրոնական սևահողային գոտու բոլոր շրջաններում ու Ստորին Միջին-Վոլգայի աջափնյա շրջաններում։ Կապիտալիզմի պայմաններում այդպիսի տարերային աղետներից հետո գյուղատնտեսության զարգացումը տասնյակ տարիներով հետ կըշպրտվեր, իսկ գյուղացիության հոծ զանգվածները սովի կմատնվեին, ինչպես այդ տեղի ունեցավ, օրինակ, 1891 թ. սարսափելի երաշտի ժամանակ։ Սովետական պետությունը հաղթահարեց երաշտի հետևանքները, նրա հետ կապված դժվարությունները, ցույց տալով վնասված շրջաններին անհրաժեշտ օգնություն պարենային մթերքներով, սերմացուով, անասնակերով։ Իսկ երաշտից չվնասված շրջաններում, այդ թվում և Հայկական ՍՍՌ-ում, ձաղահատիկային, ինչպես և մյուս կուլտուրաների համախառն բերքը զգալիորեն ավելացավ, համեմատած 1945 թ. հետ։ Ամբողջ Սովետական Միության բնակչությունը ապահովված էր հացով մինչև

1947 թ. բերքը։ Դրանում դրսևորվեցին կոլտնտեսային գյուղատնտեսության ուժը և հզորությունը, նրա առավելությունները կապիտալիստական գյուղատնտեսության հանդեպ։

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը ընդունեցին մի շարք միջոցառումներ՝ գյուղատնտեսության վերելքի և կոլտնտեսային կարգերի հետագա ամրապնդման ուղղությամբ։

1946 թ. կոլտնտեսություններում բացահայտվեցին գյուղատնտեսական արտելի կանոնադրության՝ կոլտնտեսային կյանքի այդ հիմնական օրենքի լուրջ խախտումներ, որոնք արտահայտվում էին կոլտնտեսությունների հանրային հողերի շռայլման, կոլտնտեսային սեփականության կողոպտման, շրջանային մի շարք պարտիական և սովետական աշխատողների կողմից չարաշահումների, գյուղատնտեսական արտելի գործերի կառավարման դեմոկրատական հիմքերի խախտման մեջ։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը 1946 թ. սեպտեմբերի 19-ի «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին» իրենց որոշման մեջ անհրաժեշտ ուշադրություն դարձրեցին այդ կարևոր հանգամանքին և ձեռք առան կոնկրետ միջոցառումներ գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու համար[1]։

1947 թ. փետրվարին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումն ընդունեց «Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության վերելքի միջոցառումների մասին» կարևորագույն որոշումը, որը հիմք հանդիսացավ գյուղատնտեսության ղեկավարությունը պարտիական և սովետական օրգանների կողմից բարելավելու և մեքենա-տրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատանքների կազմակերպման և վարձատրման մեջ գոյու-

[1] «Պրավդա», 20 սեպտեմբերի 1946։

թյուն ունեցող թերությունները վերացնելու համար։ Կենտրոնական Կոմիտեի այդ որոշումը պարտավորեցրեց երեք տարվա ընթացքում (1947—1949 թթ.) վերականգնել հացահատիկի արտադրության նախապատերազմյան մակարդակը, վերականգնել և գերազանցել բամբակի, վուշի-կանեփի, շաքարի ճակնդեղի արտադրության նախապատերազմյան մակարդակը, շեշտակի կերպով բարձրացնել կարտոֆիլի, բանջարեղենի, ձիթապտուղների, ցիտրուսների և այլ կուլտուրաների արտադրությունը, վերականգնել և 1948 թ. գերազանցել խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի, իսկ 1949 թ. նաև խոզերի գլխաքանակի նախապատերազմյան մակարդակը[1]։

Սովետական կառավարությունը 1948 թ. ապրիլի 19-ին որոշում ընդունեց «Կոլտնտեսություններում արտադրողականությունը բարելավելու, բարձրացնելու և աշխատանքի վարձատրումը կարգավորելու միջոցառումների մասին»։ 1948 թ. հոկտեմբերին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը ընդունեցին որոշում «ՍՍՌՄ եվրոպական մասի տափաստանային և անտառատափաստանային շրջաններում բարձր և կայուն բերք ապահովելու համար դաշտապաշտպան անտառաշերտեր տնկելու, խոտադաշտային ցանքաշրջանառություններ արմատացնելու, լճակներ և ջրավազաններ կառուցելու պլանի մասին»[2]։

Այսպիսով Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման և վճարման գործը բարելավելու համար և վճռականորեն կասեցրին գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները, որոնք վնաս էին հասցնում կոլտնտեսականների հանրային տնտեսությանը և նրանց անձնական բարեկեցությանը։ Միաժամանակ միջոցներ ձեռք առնվեցին

[1] «Պրավդա», 28 փետրվարի 1947։

[2] «Պրավդա», 24 հոկտեմբերի 1948։

գյուղատնտեսությունը նորագույն տեխնիկայով հագեցնելու, տրակտորների, կոմբայնների և գյուղատնտեսական այլ մեքենաների, նույնպես և հանքային պարարտանյութերի արտադրությունը ավելացնելու ուղղությամբ։ Կենտկոմի պլենումի «Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատընտեսության վերելքի միջոցառումների մասին» որոշման մեջ մանրամասն նշվեցին հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների արտադրության ավելացման, անասնապահության վերելքի, մեքենա-տրակտորային կայանների և սովխոզների աշխատանքների բարելավման ուղիները և սոցիալիստական արդյունաբերության խնդիրները՝ գյուղատընտեսական մեքենաներ արտադրելու գործում։

ՍՍՌՄ կառավարությանը կից ստեղծվեց Կոլտնտեսությունների գործերի խորհուրդ Ա. Ա. Անդրեևի նախագահությամբ։ Այդ խորհրդի առաջ խնդիր դրվեց խիստ վերահսկողություն սահմանել գյուղատնտեսական արտելի կանոնադրության անշեղ իրականացման համար. կոլտնտեսությունները պաշտպանել կանոնադրության խախտման հետագա փորձերից և ճիշտ կերպով լուծել կոլտնտեսային շինարարության մյուս բոլոր հարցերը։ Սովետական կառավարությունը խրախուսանքի հատուկ միջոցառումներ սահմանեց գյուղատնտեսության աշխատավորների համար՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչմանը ներկայացնելու գյուղատնտեսության և անասնապահության առաջավորներին և նրանց պարգևատրումը ՍՍՌ Միության շքանշաններով։

Այսպիսով, գյուղատնտեսության մեջ գլխավոր խնդիրներն էին հանդիսանում կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդումը և գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ուժեղացումը, որի նպատակն էր ամենակարճ ժամանակամիջոցում բարելավել բնակչության մատակարարումը կենսամթերքներով, իսկ թեթև ու սննդի արդյունաբերությունը՝ հումքով և կուտակել պետական անհրաժեշտ պարենային և հումքային պաշարներ։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և Սովետական կա-

ռավարության միջոցառումներն ուղղված էին այդ խնդիրների կատարմանը և ծավալուն ծրագիր հանդիսացան գյուղատընտեսության բարձրացման համար չորրորդ հնգամյակի տարիներին։

Սովետական Միության, այդ թվում և Հայկական ՍՍՌ կոլտնտեսային աշխատավորությունը մեծ խանդավառությամբ և սոցիալիստական մրցությամբ դիմավորեց Պարտիայի և Կառավարության միջոցառումները, նրանց հոգատարությունը գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ։ Սոցիալիստական մրցությունը գյուղատնտեսության մեջ հետապնդում էր հետևյալ խնդիրները՝ գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման պետական պլանների հաջող կատարումը և գերակատարումը բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման հիման վրա, որը հանդիսանում էր գլխավոր խնդիրը, հողագործության և անասնապահության համախառն ու ապրանքային արտադրանքի ավելացումը և կոլտնտեսությունների հանրային տնտեսության զարգացումը, սովխոզների, մեքենատրակտորային և մեքենաանասնաբուծական կայանների աշխատանքի բարելավումը առաջավոր տեխնիկայի ներդրման, նրա մաքսիմալ չափով օգտագործման, նմանապես և ագրոկուլտուրայի ներդրման հիման վրա, գյուղատնտեսության ներքին ռեզերվների մաքսիմալ մոբիլիզացումը և կոլտնտեսություններում, սովխոզներում, մեքենատրակտորային և մեքենաանասնաբուծական կայաններում աշխատանքի արտադրողականության ամեն կերպ բարձրացումը։

Ամբողջ Սովետական երկրով մեկ ծավալվեց գյուղատընտեսության աշխատողների հուժկու սոցիալիստական մրցությունը 1947 թ. և հետագա տարիներին բարձր բերքի համար։ Այդ մրցությունը ընդգրկեց կոլտնտեսային գյուղացիության ամենալայն մասսաները։ Ցանքսը, բերքահավաքը, գյուղատնտեսական այլ աշխատանքները, հացամթերումները, ինչպես և մյուս կուլտուրների մթերումները տարեցտարի ավելի կազմակերպված, ավելի կարճ ժամկետում էին կատար-

վում, իսկ պլանները ընդհանուր առմամբ վերցված սկսվեցին գերակատարվել։

1947 թ. վճռական տարի էր Սովետական Միության գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման գործում։ Գյուղատնտեսության արտադրության համախառն արտադրանքը, 1946 թ. համեմատությամբ, ավելացավ 32%, այդ թվում հողագործության արտադրանքը՝ 48%։ 1947 թ. հաջողվեց հասնել հացահատիկային կուլտուրաների բերքատվության նախապատերազմյան մակարդակին [1]։

1948 թ. թեև կլիմայական պայմանները ոչ բոլոր տեղերում էին նպաստավոր, հացահատիկի համախառն արտադրանքը գրեթե հասավ նախապատերազմյան 1940 թ. մակարդակին, իսկ հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը՝ հեկտարից գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։ 1949 թ. գյուղատնտեսությունը հասավ նոր հաջողությունների, գերազանցելով գյուղատնտեսության արտադրանքի 1940 թ. մակարդակը։ Հնգամյակի վերջին տարում՝ 1950 թ. ինչպես և 1949 թ., հացահատիկային կուլտուրաների համախառն բերքը կազմեց 1940 թ. մակարդակից ավելի և համարյա թե հասավ հնգամյա պլանով սահմանված 1950 թ. չափերին։ Չորրորդ հնգամյակի տարիներին տեխնիկական կուլտուրաների ցանքսերը ընդարձակվեցին 59%։ Համախառն բերքը ավելացավ՝ բամբակինը 2,9 անգամ, վուշ-կանեփինը՝ ավելի քան 2 անգամ, շաքարի ճակնդեղինը՝ 2,7 անգամ, արևածաղկինը 70% [2]։

Չորրորդ հնգամյակի տարիներին մեծ չափով աճեց գյուղատնտեսության հագեցվածությունը տեխնիկայով, զարգացող արդյունաբերությունը գյուղատնտեսությանը տրամադրեց 536 հազար 15-ուժանոցի փոխադրած տրակտոր, 93 հազար հացահատիկային կոմբայն, այդ թվում 39 հազար

---

[1] Տե՛ս «Պրավդա», 18 հունվարի 1948։
[2] Տե՛ս «Պրավդա», 17 ապրիլի 1951։

խնքնագնաց, 341 հազար տրակտորային գութան, 254 հազար տրակտորային շարքացան, 249 հազար տրակտորային կուլտիվատոր և մեծ քանակությամբ այլ՝ հող մշակող, ցանող, կալսիչ և բերք հավաքող մեքենաներ[1]։ Մեքենա-տրակտորային կայանները, որոնք զինված էին գյուղատնտեսական նորագույն տեխնիկայով, վճռական դեր խաղացին սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի գործում։ Վերականգնված և նոր կառուցված մեքենա-տրակտորային, մեքենա-անասնաբուծական, անտառապաշտպան և մարգագետնամելիորատիվ կայանների ընդհանուր թիվը 1950 թ. հասավ 8400-ի՝ համարյա 1400 կայանով ավելի, քան 1940 թ., իսկ մեքենա-տրակտորային կայանների կատարած գյուղատնտեսական աշխատանքների ծավալը ավելացավ 40%[2]։ Աշխատանքի մեքենայացումով մեր գյուղատնտեսությունը դուրս եկավ առաջին տեղերից մեկը աշխարհում։

Այս բոլորը հնարավոր դարձավ Պարտիայի և Կառավարության միջոցառումների իրականացման, էլեկտրիֆիկացման հետագա զարգացման հիման վրա՝ կոլտնտեսությունների նյութա-տեխնիկական բազայի ամրապնդման, գյուղատնտեսության մեջ գիտության նվաճումների ներդրման և կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման շնորհիվ։

Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան նույնպես անընդհատ ուժեղանում էր։ Մինչև 1948 թ. ներառյալ լրացուցիչ կերպով ստեղծվեցին 9 մեքենա-տրակտորային կայան՝ Վեդու, Շահրիարի, Ղարիբջանյանի, Ալագյազի, Ղարաղալարի, Բասարգեչարի 2-րդ, Էջմիածնի 2-րդ, Ջրվեժի և Անգեղակոթի. կապիտալ վերանորոգման ենթարկվեց 6 միջշրջանային արհեստանոց և 2 մեխանիկական-վերանորոգման գործարան։ Ռեսպուբլիկայի մեքենա-

[1] Տե՛ս «Պրավդա», 17 ապրիլի 1951։

[2] Տե՛ս Ա. Ֆ. Ռումյանցև, Սովետական էկոնոմիկայի զարգացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում, էջ 21։

տրակտորային պարկը արդեն բաղկացած էր մեծ քանակությամբ տրակտորներից, 219 կոմբայնից, 320 շարքացան և 250 կալսիչ մեքենաներից, 270 կուլտիվատորներից, 1040 գութանից։ Սակայն գյուղատնտեսական աշխատատար աշխատանքների մեքենայացման աստիճանը դեռևս անբավարար էր։ Խնդիրն այն էր, որպեսզի հետագայում էլ ուժեղացնել մեքենա-տրակտորային պարկը և հասնել այն բանին, որ մեքենա-տրակտորային կայանները պարտադիր կարգով կատարեն հողի հերկման, մշակման և ագրոմիջոցառումների կոմպլեքսի մեջ մտնող այլ աշխատանքները, չեշտակի բարձրացնելով հիմնական աշխատատար աշխատանքների մեքենայացման պրոցեսը դաշտավարության, այգեգործության և անասնապահության բնագավառներում [1]։

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ 1949—1950 թթ. ռեսպուբլիկայի գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան էլ ավելի ուժեղացվեց։ Սովետական Միության արդյունաբերության հզորությունը ապահովեց մեր գյուղատնտեսության հագեցումը ամենակատարելագործված տեխնիկայով։ Այդ 2 տարում կազմակերպվեցին նոր՝ 6 մեքենա-տրակտորային և 3 մեքենա-անասնաբուծական կայաններ և նրանց ընդհանուր թիվը հասավ 49-ի (1940 թ. 33 ՄՏԿ-ի փոխարեն)։ Մեքենա-տրակտորային կայանները ստացան մեծ քանակությամբ նոր հզոր տրակտորներ, որի շնորհիվ տրակտորային պարկը այդ 2 տարում մեծացավ 85%՝ փոխադրած 15-ուժանոց տրակտորների և հասավ 2900-ի, 1940 թ. 1700-ի փոխարեն։ Ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը տրակտորներով և այլ գյուղատնտեսական մեքենաներով զինելու կապակցությամբ կատարված տրակտորային աշխատանքների ծավալը 1950 թ., 1948 թ. համեմատությամբ, ավելացավ 51%, իսկ 15-ուժանոց 1 տրակտորի միջին արտադրանքը՝ 20%։ Ռեսպուբլիկայի մեքենա-տրակտորային կայանները 1950 թ. ժամկետից շուտ կատարեցին տարեկան պլանը՝ գերակատարելով աշ-

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 51—52։

խատանքների բոլոր հիմնական տեսակները։ Կոլտնտեսությունների ցանքային տարածությունների 88% արդեն սպասարկվում էր մեքենա-տրակտորային կայանների կողմից[1]։

Մեքենա-տրակտորային կայաններում հիմնական գյուղատնտեսական մեքենաների պարկը 1951 թ. սկզբին հետևյալն էր. 1802 տրակտորային գութան՝ 1941 թ. 1302-ի դիմաց, 603 տրակտորային կուլտիվատոր՝ 1941 թ. 393-ի դիմաց, 704 շարքացան՝ 642-ի դիմաց, 285 կոմբայն՝ նույնքանի դիմաց, 80 սիլոս կտրող մեքենա՝ 41-ի դիմաց և այլն։ Ընդ որում չորրորդ հնգամյակի տարիներին գյուղատնտեսության մեջ սկըսվեցին կիրառվել նոր տիպի մեքենաներ, որ առաջներում չկային, ինչպես, օրինակ, ինքնագնաց խոտհնձիչներ, բամբակ հավաքող և հացահատիկ մաքրող մեքենաներ, ոչխար խուզող ագրեգատներ։ Այս բոլորի հետևանքով գյուղատնտեսական հիմնական աշխատանքների մեքենայացման տոկոսը, 1940 թ. համեմատությամբ, զգալիորեն բարձրացավ։ Այսպես, օրինակ, 1940 թ. վաղ ցելի միայն 45% էր կատարվել մեքենաներով, իսկ 1950 թ.՝ արդեն 61%, ցրտահերկինը՝ համապատասխանաբար, 56 և 85%, աշնանացան կուլտուրաների ցանքսերը՝ 21 և 33, գարնանացան կուլտուրաների ցանքսը՝ 13 և 24, հացահատիկների ցանքսը՝ 15 և 28, բամբակացանը՝ 71 և 97, շաքարի ճակնդեղինը՝ 63 և 94%[2]։

Հատկանշական է նաև, որ մեքենա-տրակտորային կայանները սկսեցին սպասարկել կոլտնտեսությունների անասնաբուծական ֆերմաները, իրենց վրա վերցնելով անասնապահության որոշ աշխատատար պրոցեսներ։ Այսպես, գյուղատնտեսական մեքենաներով աշխատանք կատարվեց խոտի հավաքման, սիլոսացման, ոչխարների խուզման գծով, ինչ-

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 45—46. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 98։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 99։

պես նաև կեր պատրաստող մեքենաների, անասուններին ջուր տվող մեքենաների և էլեկտրակթիչ ագրեգատների տեղադրման գծով։ Մեքենա-տրակտորային կայանները մեծ աշխատանքներ սկսեցին ոռոգման նոր սիստեմին անցնելու կապակցությամբ, գոյություն ունեցող ոռոգելի մանր առուները և ցանկապատումները լիկվիդացնելու գործում։ Մեքենա-տրակտորային և մեքենա-անասնաբուծական կայանների գլխավոր խնդիրը դարձավ՝ մաքսիմալ չափով օգտագործել իրենց հարուստ տեխնիկան և գյուղատնտեսական բոլոր աշխատանքները կատարել բարձրորակ։

Հայկական ՍՍՌ չորային կլիմայական պայմաններում ոռոգիչ աշխատանքները առաջնակարգ նշանակություն ունեն գյուղատնտեսության հետագա զարգացման համար։ Նույնիսկ Հայրենական պատերազմի ծանր տարիներին մեզ մոտ կառուցվեցին մի շարք ոռոգող ջրանցքներ՝ ինչպես Արխաշանի ջրանցքը Մարտունու շրջանում, որը ոռոգում է 1700 հեկտար հող, Լոռու ջրանցքը Ստեփանավանի և Ալավերդու շրջաններում, որը ոռոգում է 4000 հեկտար, 1000 հեկտար ոռոգող Նորքի ջրանցքի I հերթը և այլն։ Բացի դրանից ռեսպուբլիկայի կոլտնտեսականները իրենց սեփական ուժերով ծավալեցին բազմաթիվ փոքր ջրանցքների կառուցումը և նվաճեցին 1800 հեկտար ոռոգվող նոր հողեր։

1946—1948 թթ. շահագործման հանձնվեցին Միկոյանի անվան ջրանցքը Սպիտակի շրջանում, որը ոռոգում է 2600 հեկտար, Դալմայի նոր ջրանցքը՝ Շահումյանի շրջանում, որը ոռոգում է 2000 հեկտար, Գառնիի ջրանցքը՝ Կոտայքի շրջանում, որը ոռոգում է 1000 հեկտար և մի շարք այլ մանր իռիգացիոն ջրանցքներ, ջրհան կայաններ և ջրամբարներ։ Չորացման աշխատանքները տարվում էին Արարատյան դաշտի ճահճացած հողերում, Վեդու շրջանում՝ 5000 հեկտար տարածության վրա, Արտաշատի, Զանգիբասարի, Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջաններում՝ նույնպիսի կարգի 18,000 հեկտար հողային տարածության վրա։ Ընդամենը, Հայրենական պատերազմի և չորրորդ հնգամյակի առաջին

երեք տարիների ընթացքում, ջրովի հողերը ավելացան 24,855 հեկտարով, Հայկական ՍՍՌ ջրովի հողերի ընդհանուր տարածությունը 1948 թ. հասավ 211 հազար հեկտարի[1]։

1949—1950 թթ. շարունակվեցին լայն իռիգացիոն աշխատանքները։ Նոր ոռոգվող հողեր ժամանակին ստանալը մեծ նշանակություն ուներ ռեսպուբլիկայում խոտադաշտային ցանքաշրջանառությունը իրականացնելու համար՝ առանց կրճատելու կարևորագույն կուլտուրաների ցանքային տարածությունները։ Ավարտվեցին և շարք մտան Ստորին Հրազդանի ջրանցքի առաջին հերթը, որը ոռոգում է 5000 հեկտար նոր հողեր Էջմիածնի և Շահումյանի շրջաններում և բարելավում Էջմիածնի շրջանի 4000 հեկտար հողերի ապահովումը ջրով։ Կոտայքի բարձր ճնշման կայանը ջրանցքի հետ միասին ոռոգեց 1000 հեկտար նոր հողային տարածություն, Արփա լճի 90 միլիոն խորանարդ մետր ջրամբարը լրացուցիչ ջուր տվեց Շիրակի ոռոգման ցանցին։ Աշխատանքներ ծավալվեցին Թալինի խոշոր ջրանցքը կառուցելու ուղղությամբ։ Արարատյան դաշտի բամբակացան շրջաններում չորացվեցին 3000 հեկտար ճահճային հողեր և 1300 հեկտար տարածության վրա բարելավվեց գոյություն ունեցող ջրովի հողերի մելիորատիվ վիճակը։ Արազդայանի տափաստանում նույնպես չորացվեցին 1000 հեկտար ճահճային հողեր։ Դրա հետ մեկտեղ շարունակվում էր մանր ջրանցքների, ջրամբարների և ջրմուղ կայանների շինարարությունը։ Այս բոլորի շնորհիվ ոռոգելի հողերի տարածությունը 1949—1950 թթ. ավելացավ 8800 հեկտարով։ Ռեսպուբլիկայի ընդհանուր ցանքատարածությունը 1950 թ. կազմեց 471,2 հազար հեկտար՝ 1913 թ. 345,7 և նախապատերազմյան 1940 թ. 433,7 հազար հեկտարի դիմաց[2]։

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 55—56։

[2] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 41—44, Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 60։

Ռեսպուբլիկայում տարվող իռիգացիոն աշխատանքների թափի համար բնորոշ էր այն հանգամանքը, որ ջրային տնտեսության հատկացումները, 1940 թ. համեմատությամբ, 1948 թ. ավելացվեցին 70%, իսկ 1950 թ. Միութենական կառավարության որոշման համաձայն Հայկական ՍՍՌ իռիգացիոն ցանցի հետագա ավելի արագ զարգացման համար դրանք ավելացան ևս 33% (համեմատած 1949 թ. հետ)։ Ռեսպուբլիկայի Ջրային տնտեսության մինիստրությունը ոռոգող և չորացնող ջրանցքների շինարարության վրա աշխատատար աշխատանքները մեքենայացնելու համար ստացավ անհրաժեշտ քանակությամբ էքսկավատորներ և տրակտորներ. 1950 թ. այս կարգի աշխատանքների 80% արդեն կատարվում էր մեքենաներով։ Միաժամանակ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշմամբ Հայկական ՍՍՌ, ինչպես և ամբողջ Սովետական Միության ջրովի հողերում 1950 թ. սկսած անց էր կացվում ոռոգման նոր սիստեմի կազմակերպումը, որը մեծ նշանակություն ունի ոռոգելի հողագործության կուլտուրաների հետագա բարձրացման, գյուղատնտեսական տեխնիկայի մաքսիմալ օգտագործման և կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում։ Ոռոգման նոր սիստեմին անցնելու 1950 թ. աշխատանքների պլանը Հայաստանում կատարվեց 18 645 հեկտար տարածության վրա՝ այսինքն 93% [1]։

Արագ տեմպերով իրականացվում էր Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը։ 1948 թ. վերջին ռեսպուբլիկայի 1042 կոլտնտեսություններից էլեկտրիֆիկացված էին 328՝ այսինքն 31,5%, գյուղերում էլեկտրականությամբ աշխատում էին 68 կալսիչ, 56 ալրաղաց, 36 քամհար և սերմազտիչ, 38 սղոցարան, 16 կերամանրիչ և սիլոսահատիչ, 6 ջրատվիչ պոմպ և այլն [2]։ Այս թվերը թեև մեծ չէին,

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 44։

[2] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 54։

սակայն խոսում էին գյուղատնտեսական արտադրության մեջ էլեկտրաէներգիայի գործադրումն սկսելու շրջադարձի մասին։ Հաջորդ տարիներին գյուղի էլեկտրիֆիկացումը ընդունեց լայն չափեր։ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը ակտիվ մասնակցություն ցույց տվեց գյուղական գէսերի շինարարությանը, դրա մեջ տեսնելով իր բարեկեցության բարձրացման կարևոր պայմաններից մեկը։ 1950 թ. շահագործման հանձնվեցին Սևնիգէսը, Բասարգեչարի, Այգեձորի, Ակների, Ջերմուկի, Աղատեկի, Ագարակի և այլ գէսերը։ Առ 1-ը փետրվարի 1951 թ. 666 խոշորացրած կոլտնտեսություններից արդեն էլեկտրիֆիկացված էին 456-ը՝ այսինքն մոտ 70%։ Լրիվ էլեկտրիֆիկացված էին Մեղրու, Իջևանի, Աղինի, Կիրովականի, Հոկտեմբերյանի, Սևանի, Սպիտակի, Ստեփանավանի և Էջմիածնի շրջանները, իսկ Արտաշատի, Արթիկի, Ախտայի, Ախուրյանի, Աշտարակի, Շահումյանի, Կալինինոյի, Կոտայքի, Մարտունու, Նոր Բայազետի և Շամշադինի շրջաններում մնացել էր չէլեկտրիֆիկացիայի ենթարկել 1—2-ական կոլտնտեսություն։ Մեքենատրակտորային կայանները և սովխոզները նույնպես արդեն 63% էլեկտրիֆիկացված էին[1]։

Էլեկտրաէներգիան ավելի մեծ գործադրում էր գտնում կոլտնտեսային արտադրության մեջ և մի շարք կոլտնտեսություններում կալսման, հացահատիկի զտման, սիլոսացման աշխատանքներն արդեն էլեկտրիֆիկացված էին։ Կատարելով մեծ Լենինի պատգամները, ամեն կերպ զարկ էր տրվում երկրի էլեկտրիֆիկացիային, այդ թվում գյուղատնտեսական հիմնական պրոցեսների էլեկտրիֆիկացմանը, որով ավելի ինտենսիվ էր դառնում գյուղատնտեսական արտադրությունը, բարձրացվում էր հողագործության և անասնապահության կուլտուրան, արմատապես փոխվում էր գյուղացիության կենցաղը, էլեկտրիֆիկացումը քաղաքի և գյուղի միջև գոյություն

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 48 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

ունեցող էական տարբերությունը վերացնելու կարևորագույն պայմաններից մեկն է։

Կոլտնտեսությունները կազմակերպական-տնտեսական տեսակետից ամրապնդելու համար 1947—1948 թթ. զգալի աշխատանք տարվեց գյուղատնտեսական արտելի կանոնադրության թույլ տրված խախտումները վերացնելու ուղղությամբ։ Ադմինիստրատիվ-սպասարկող պաշտոններում զբաղված կոլտնտեսականների թիվը կրճատվեց 4732 միավորով և այդ կոլտնտեսականները փոխադրվեցին արտադրական աշխատանքի, որի շնորհիվ կատարվեց 923 հազար աշխօրի խնայողություն. կոլտնտեսություններին վերադարձվեցին նրանցից ապօրինի կերպով վերցված 5528 հեկտար հող, նույնպես և անասուն, հացահատիկ և այլ կենսամթերքներ. 1 միլիոն ռուբլուց ավելի դրամ այն պարենային ապրանքների արժեքի փոխարեն, որոնք բաց էին թողնվել տարբեր անձանց անվճար կամ կամայականորեն իջեցված գներով, վերացվեցին կոլտնտեսությունների 40 միլիոն ռուբլի գումարով դեբիտորական պարտքերը. իրագործվեցին մի շարք միջոցառումներ՝ ներկոլտնտեսային դեմոկրատիայի խախտումները լիկվիդացնելու ուղղությամբ։ Կոլտնտեսային ժողովներում քննվեցին առանձին կոլտնտեսականների հարցերը, որոնք խախտելով աշխատանքային կարգապահությունը, խույս էին տալիս կոլտնտեսային արտադրությանը մասնակցելուց, կոլտնտեսություններից վտարվեցին 315 մարդ[1]։

Կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրման մեջ հավասարեցման և հողերի օգտագործման մեջ դիմազրկության վերացումը ծառայեց կոլտնտեսականների աշխատանքային կարգապահության ամրապնդման և կոլտնտեսային արտադրության վերելքի գործին։ ՍՍՌՄ կառավարության 1948 թ. ապրիլի 19-ի որոշման համաձայն Հայկական ՍՍՌ-ում կարգավորվեցին աշխօրերի հաշվարկումը և աշխատան-

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 59—61։

քի վարձատրման կարգը․ դաշտավարական բրիգադներին ամրացվեցին հողամասեր և գյուղատնտեսական ինվենտար, կազմվեցին տնտեսության բոլոր բնագավառներում աշխօրերի ծախսման պլաններ, կոլտնտեսականներին լայն կերպով պարզաբանվեցին աշխատանքի նորմավորման և վարձատրման նոր կարգի օգուտը։ Պայքարը գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումների դեմ՝ կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական հետագա ամրապնդման համար շարունակվեց և կոլտնտեսությունների աշխատանքների մեջ հաջողվեց հասնել որոշ բարելավման։

Կոլտնտեսությունները կազմակերպական-տնտեսական տեսակետից իրենց հետագա ամրապնդումը գտան խոշորացման մեջ։ Այդ կարևոր երևույթը կոլտնտեսային գյուղի կյանքում նախապատրաստվեց սոցիալիստական գյուղատնտեսության ամբողջ զարգացումով։ Պետության կողմից գյուղատնտեսությանը տրակտորներով, կոմբայններով և այլ նյութա-տեխնիկական միջոցներով ցույց տրվող աճող օգնությունը անհրաժեշտ պայմաններ ստեղծեց գյուղատնտեսության ավելի արագ վերելքի համար։ Կոլտնտեսությունների հանրային եկամուտների մակարդակը իր կողմից լրիվ հնարավորություն էր տալիս ընդլայնել գյուղատնտեսական արտադրությունը, իրականացնել կոլտնտեսային գյուղերի բարեկարգումը, բարձրացնել կոլտնտեսականների կյանքի նյութական և կուլտուրական մակարդակը։ Սակայն այդ գործում լուրջ խոչընդոտ էր հանդիսանում զգալի քանակությամբ մանր կոլտնտեսությունների առկայությունը իրենց համեմատաբար փոքր հողային զանգվածներով, որը հնարավորություն չէր տալիս բավականաչափ էֆեկտիվ, բարձր արտադրողականությամբ օգտագործել հզոր տրակտորները, կոմբայնները, բարդ կալսիչ մեքենաները և այլն։ Այս է պատճառը, որ անհրաժեշտություն զգացվեց մանր կոլտնտեսությունները միացնել մոտ գտնվող կոլտնտեսություններին․ կոլտնտեսությունների խոշորացումը ծառայում էր նրանց ավելի ամրապնդման նպատակին։

Հայաստանի 518 կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում որոշումներ ընդունվեցին հարևան կոլտնտեսությունների հետ միանալու մասին։ Խոշորացումից հետո կոլտնտեսությունների թիվը 1948 թ. 1042-ից 1950 թ. վերջին իջավ 668-ի (հետագայում այդ թիվը բարձրացավ ոչ ճիշտ կերպով խոշորացած կոլտնտեսությունների բաժանման հաշվին)։ Խոշորացման չենթարկվեցին Ղափանի, Ազիզբեկովի, Մեղրու և որոշ այլ լեռնային շրջանների կոլտնտեսությունները, որտեղ լեռնային ռելյեֆի պայմանները թույլ չեն տալիս ստեղծել խոշոր դաշտային զանգվածներ։ Խոշորացման շնորհիվ կոլտնտեսությունների վարելահողերի միջին չափը հասավ 820 հեկտարի՝ խոշորացումից առաջ 545 հեկտարի դիմաց, տնտեսությունների միջին թիվը դարձավ 230՝ 160-ի դիմաց, իսկ աշխատունակ կոլտնտեսականների թիվը մեկ կոլտնտեսությունում միջին թվով կազմեց մոտ 150 մարդ։ Կոլտնտեսությունների ադմինիստրատիվ-վարչական ապարատը կրճատվեց և այդ ապարատը պահելու ծախսերը նվազեցին ավելի քան 240 հազար աշխօրով։ Խոշորացումից հետո համեմատաբար բարելավվեց կոլտնտեսային ղեկավար կադրերի կազմը՝ 1950 թ. 126 կոլտնտեսության նախագահներ ունեին բարձրագույն և միջնակարգ գյուղատնտեսական կրթություն, որոշ թվով մասնագետներ առաջ քաշվեցին որպես խոշորացված կոլտնտեսությունների վարչության նախագահի տեղակալ կամ նախագահ[1]։

Կոլտնտեսությունների խոշորացումը բարերար ազդեցություն ունեցավ նրանց հետագա աշխատանքների վրա։ Աճեցին կոլտնտեսությունների դրամական եկամուտները, որոնք 1950 թ. կազմեցին 125% 2 տարվա համար, իսկ բացարձակ թվերով՝ 421,7 մլն. ռուբլի, նախապատերազմյան 1940 թ. 224,9 մլն. ռուբլու դիմաց։ Ավելացան նաև կոլտնտեսություն-

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 49—50 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

ների անբաժանելի ֆոնդերը, որոնց գումարը 1950 թ. հասավ 819,5 միլիոն ռուբլու, 1940 թ. 269,2 միլիոն ռուբլու դիմաց։ Կոլտնտեսություններում համեմատաբար բարելավվեց աշխատանքի կազմակերպումը։ Մեկ աշխատունակ կոլտնտեսականի վաստակած աշխօրերի թիվը 1950 թ. կազմեց 192՝ 1948 թ. 166-ի դիմաց[1]։

Այսպիսով, խոշորացված կոլտնտեսությունների գլխավոր խնդիրը հանդիսացավ գյուղատնտեսության հետագա վերելքը՝ հանրային տնտեսության ամրապնդման և զարգացման, գյուղատնտեսական մեխանիզմների և խոշորացված կոլտնտեսությունների այլ միջոցների մաքսիմալ օգտագործման, գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերի զարգացման և կոլտնտեսություններում աշխատանքի ռացիոնալ կազմակերպման շնորհիվ։

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման հիմնական միջոցը՝ ագրոնոմիական միջոցառումների ճիշտ կիրառումն է։ 1948 թ. Հայկական ՍՍՌ կոլտնտեսություններում ավարտվեց խոտադաշտային ցանքաշրջանառության կիրառումը, սակայն, ինչպես նշվեց Հայաստանի Կոմպարտիայի XIV համագումարում, միայն ցանքաշրջանառության կիրառումը, ագրոմիջոցառումների մասնակի իրականացումը և կերախոտերի միակողմանի ներդրումը չէին տալիս մեծ արդյունքներ բերքատվության բարձրացման գործում։ Պետք էր ամբողջովին կիրառել ակադեմիկոսներ Դոկուչաևի, Վիլյամսի և Կոստիչևի ագրոնոմիական միջոցառումների կոմպլեքսը, լրիվ օգտագործել միչուրինյան գյուղատնտեսության գիտության նվաճումները, հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները։ Այդ նպատակով Սովետական Հայաստանի, ինչպես և ամբողջ Միության գյուղատնտեսության մեջ, սկսվեց խոտադաշտային

---

[1] Տե՛ս Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարի բանաձևը ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ. 1951, էջ 6 և Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 85։

ցանքաշրջանառության կիրառումը՝ տարբեր խոտերի, լոբազգիների և ընդեղենների պարտադիր ներդրումով, հողի ճիշտ մշակմամբ։ Ուշադրություն դարձվեց օրգանական և հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործմանը, ցանքը ընտիր և տեսակավորած սերմերով կատարելու վրա, դաշտապաշտպան անտառներ հիմնելու, լճակներ, ջրամբարտակներ կառուցելու գործին և ոռոգող ջուրը ռացիոնալ կերպով օգտագործելուն։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները ղեկավարվելով Պարտիայի և Կառավարության որոշումներով և բարելավելով աշխատանքի կազմակերպումը, հենվելով գյուղատնտեսության հետագա մեքենայացման ու էլեկտրիֆիկացման, ոռոգելի ցանքի ծավալման, գյուղատնտեսության մեջ գիտության նվաճումները ներդնելու վրա ընդարձակում էին ցանքային տարածությունները, բարձրացնում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, ավելացնում գյուղատնտեսական արտադրանքը։ Սոցիալիստական մըրցությունը գյուղում լայն թափ ընդունեց։

Դեռևս 1947 թ. իր լավագույն աշխատանքի համար առաջինը գյուղատնտեսության աշխատողներից Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչման արժանացավ Թալինի շրջանի Բուդյոննու անվան կոլտնտեսության օղակավարուհի կոմերիտական Մարիամ Մարտիրոսյանը։ Այդ նույն ժամանակ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչմանը արժանացան նաև Նոր Բայազետի շրջանի «Սպարտակ» կոլտնտեսության նախագահ Սարգիս Վարդանյանը և 6 օղակավարներ, Ախտայի շրջանի Ֆանտան գյուղի կոլտնտեսության նախագահ Մ. Սարգսյանը և օղակավար Մ. Վարդանյանը, Սիսիանի շրջանի «Բեկում» կոլտնտեսության նախագահ Ծ. Հախվերդյանը և 6 կոլտնտեսականներ։ Չորրորդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՌ կոլտնտեսային արտադրության 100-ից ավելի աշխատողներ իրենց բեղմնավոր աշխատանքի համար արժանացան Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչմանը, իսկ մի քանի հազար կոլտնտեսականներ պարգև-

վատրվեցին ՍՍՌՄ շքանշաններով։ Սա վկայակոչում է մեր Հայրենիքի հզորության էլ ավելի ամրապնդման և ռեսպուբլիկայի գյուղացիության վառ հայրենասիրության մասին։

Եթե հացահատիկային կուլտուրաների ցանքային տարածությունը 1940 թ. կազմում էր 340 հազար հեկտար, ապա Հայրենական պատերազմի տարիներին, ինչպես արդեն նշվել է, նա ավելացավ 18,3 հազար հեկտարով և հասավ մոտ 360 հազար հեկտարի։ Խոտադաշտային ցանքաշրջանառության կիրառման կապակցությամբ 1948 թ. տեղի ունեցավ հացահատիկային ցանքսերի որոշ նվազում և 1950 թ. նրանք կազմեցին 318,9 հազար հեկտար, ընդ որում ցորենի տեսակարար կշիռը հավասար էր այդ ցանքսերի 62%։ Տեխնիկական կուլտուրաների տարածությունը Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում ամբողջությամբ վերցրած պահպանվեց նախապատերազմյան մակարդակի վրա, իսկ 1945 թ. սկսեց ավելանալ և 1948 թ. արդեն կատարվեցին հնգամյա պլանի առաջադրանքները՝ տեխնիկական կուլտուրաների ցանքային տարածությունների ընդլայնման գծով։

Եթե 1940 թ. տեխնիկական կուլտուրաների տակ գտնվող ընդհանուր տարածությունը կազմում էր 35,7 հազար հեկտար (1945 թ.՝ 36,2 հազար հեկտար), ապա 1950 թ. նա հասավ 42,5 հազար հեկտարի։ Համապատասխանաբար ծխախոտի ցանքսերի տարածությունը ավելացավ 1940 թ. 5200 հեկտարից և 1945 թ. 7 800 հեկտարից մինչև 10100 հեկտարի 1950 թ., շաքարի ճակնդեղի ցանքսերը 1940 թ. 1600 հեկտարից և 1945 թ. 2700 հեկտարից՝ մինչև 4000-ի։ Բամբակի ցանքսերի տարածությունը 1940 թ. կազմում էր 16 հազար հեկտար, բայց պատերազմի տարիներին այն պլանային կարգով կրճատվեց մինչև 13 500 հեկտար, իսկ 1945 թ. սկսեց ավելանալ, հասնելով արդեն 1948 թ. 15 հազար հեկտարի՝ այնքան, որքան պլանավորված էր չորրորդ հնգամյակի վերջին։

Զգալի չափով ընդլայնվեցին կարտոֆիլի և բանջարաբոստանային կուլտուրաների, խաղողի ու մրգատու այգինե-

րի տարածությունները։ Եթե 1940 թ. կարտոֆիլը և բանջարաբոստանային կուլտուրաները զբաղեցնում էին 20,3 հազար հեկտար, ապա պատերազմի տարիներին նրանք առանձնապես ծավալվեցին և 1945 թ. հասան 33,2 հազար հեկտարի։ Մինչև 1950 թ. այդ տարածությունը մնաց համարյա նույնը՝ 33,1 հազար հեկտար։ Խաղողի այգիների ընդհանուր տարածությունը կոլտնտեսություններում և սովխոզներում 1939 թ. 15 600 հեկտարից հասավ մինչև 18 221 հեկտարի (1948 թ. սկզբներին)։ Պտղատու այգիների տարածությունը 1939 թ. 15800 հեկտարից՝ մինչև 19500 հեկտարի (1948 թ.)։ Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակման հետ մեկտեղ ավելացավ նաև նրանց բերքատվությունը[1]։

1949—1950 թթ. Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը հիմնականում տեղի ունեցավ գյուղատնտեսության արտադրության համախառն արտադրանքի ավելացման գծով, որին հաջողվեց հասնել գլխավորապես գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու շնորհիվ։ Կոլտնտեսային գյուղացիությունը կատարում էր բերքատվության կրկնապատկման խնդիրը՝ այն գլխավոր խնդիրը, որը դրված էր գյուղատնտեսության աշխատողների առջև։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1950 թ. հունիսի 14-ի հրամանագրով Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության աշխատողների մի մեծ խմբի՝ 42 հոգու շնորհվեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչումը Լենինի շքանշանի և «Մուրճ ու մանգաղ» ոսկյա մեդալի հանձնումով[2]։

1949—1950 թթ. ընթացքում ցանքային տարածությունը քիչ ավելացավ, փոփոխություններ տեղի ունեցան առանձին

---

[1] Տե՛ս ՍՍՌՄ ցանքային տարածությունները, Վիճակագրական ժողովածու, հատ. I, 1957, ռուսերեն, էջ 128—129, 132—133. Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 41—43։

[2] Տե՛ս «Կոմունիստ», 16 հունիսի 1950։

կուլտուրաների ցանքերի միջև, ինչպես, օրինակ, հացահատիկային ցանքերի որոշ կրճատման հաշվին կերախոտերի ցանքերի տարածությունը ավելացավ 49,1% և տեխնիկական կուլտուրաներինը՝ 3,6%։ Այսպիսով կերախոտերի ցանքային տարածությունների տոկոսը ամբողջ ցանքային տարածության մեջ բարձրացավ 1945 թ. 7,2% մինչև 16,3% 1950 թ., տեխնիկական կուլտուրաներինը, համեմատաբար, 7,8%, մինչև 9%, իսկ հացահատիկային կուլտուրաներինը՝ 77,8% իջավ 67,7%։

Զգալի աշխատանք կատարվեց հացահատիկային ցանքերը տեսակավորված սերմերով կատարելու ուղղությամբ։ Շրջանային սերմային տնտեսությունների թիվը ավելացավ մինչև 32, իսկ էլիտային-սերմարուծական տնտեսությունների թիվը՝ 4-ի։ 1950 թ. հացահատիկի ցանքերի արդեն 97,6% ցանվեց տեսակավորված սերմացուով։ Ավելանում էր բամբակի համախառն արտադրանքը՝ բամբակի ցանքային տարածությունը 1950 թ. ավելացավ 2000 հեկտարով, 1948 թ. համեմատությամբ, և կազմեց 17 հազար հեկտար, դրանով իսկ գերազանցելով հնգամյա պլանի առաջադրանքը։

Հոկտեմբերյանի և Արտաշատի շրջանների կոլտնտեսականները հաջողությամբ լուծում էին բամբակի բերքատվության բարձրացման խնդիրը։ Նրանք 1949—1950 թթ. ամեն մի հեկտարից միջին հաշվով հավաքեցին 25—26 ցենտներ բամբակ, 1948 թ. 17—20 ցենտների դիմաց։ Էջմիածնի շրջանի կոլտնտեսականները 1950 թ. նույնպես հասան բամբակի բերքատվության բարձրացմանը, ստանալով հեկտարից 23,5 ցենտներ, իսկ Զանգիբասարի շրջանի կոլտնտեսականները՝ 21,3 ցենտներ։ Այսպիսով, եթե բամբակի բերքատվությունը 1945 թ. կազմում էր միջին հաշվով հեկտարից 11,6 ցենտներ, 1947 թ.՝ 14,3 ցենտներ, ապա 1950 թ. նշանակալից չափով գերազանցում էր անցյալ տարիների բերքատվությունը[1]։

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 30, 34—36։

*Բամբակագործության, խաղողագործության և ծխախոտագործության բնագավառներում առանձնապես զգալի հաջողություններ ձեռք բերեցին Արտաշատի շրջանի Անաստասավան գյուղի «Փարիզյան կոմունայի անվան», Հոկտեմբերյանի շրջանի «III Ինտերնացիոնալի անվան», Նոր Բայազետի շրջանի Հացառատ գյուղի «Կարմիր Հոկտեմբեր», Բասիկյանի անվան, ինչպես նաև Շամշադինի շրջանի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությունները։ Խնդիր էր դրվում, որ այս առաջավոր կոլտնտեսությունների փորձը դարձնել մյուս բոլոր կոլտնտեսությունների սեփականությունը և դրանով զգալիորեն ավելացնել բամբակի, ծխախոտի, խաղողի, այլ գյուղատնտեսական մթերքների արտադրանքը և արդյունաբերական հումքը։*

*1950 թ. գարնանը Իջևանի շրջանի ծխախոտագործները, Արտաշատի շրջանի խաղողագործները, Հոկտեմբերյանի շրջանի բամբակագործները, Ղուկասյանի շրջանի անասնաբույծները հանդես եկան դիմումներով՝ ծավալելու սոցիալիստական մրցություն Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-ամյակի պատվին։ Այդ կոչը մեծ խանդավառությամբ ընդունվեց ռեսպուբլիկայի կոլտնտեսային գյուղացիության կողմից և տարվա վերջին ձեռք բերվեցին նոր հաջողություններ գյուղատնտեսության տարբեր բնագավառներում։*

*Սովխոզային շինարարության ասպարեզում նույնպես որոշ հաջողություններ ձեռք բերվեցին։ Չորրորդ հնգամյակի առաջին տարիներին ռեսպուբլիկայի սովխոզները լուրջ դժվարությունների առաջ էին կանգնած բանվորական ուժի պակասի պատճառով։ Այդ բացը վերացնելու և միաժամանակ խաղողի ու պտղատու այգիների մշակումը բարելավելու շնորհիվ սովխոզները վերացրեցին իրենց երկարատև հետ մնալը։ Սակայն նրանց աշխատանքներում դեռ կային թերու-*

---

*Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները. ՍՍՌՄ ցանքային տարածությունները, Վիճակագրական ժողովածու, հատ. I, էջ 132—133։*

թյուններ։ Սովխոզները պարտավոր էին ավելի բարելավել տնտեսության վարումը, լրիվ յուրացնել իրենց ամրացված հողերը, ստեղծել ուժեղ տնկաբուծային բազա, ուժեղացնել կոլտնտեսությունների և բնակչության մատակարարումը ամեն տեսակի տնկիներով։

Հատուկ ուշադրություն դարձվեց ռեսպուբլիկայում զարգացող մերձարևադարձային կուլտուրաների մշակության վրա։ Միութենական կառավարության որոշմամբ 1948—1949 թթ. Նոյեմբերյանի շրջանում կազմակերպվեցին ձիթենու և մերձարևադարձային պտղաբուծության սովխոզներ։ Անհրաժեշտ էր այդ սովխոզներում ծավալել տնկաբուծային տնտեսությունը Նոյեմբերյանի, Ալավերդու և Իջևանի շրջանների կոլտնտեսությունները տնկիներով ապահովելու համար։ Դրանով Հայաստանի գյուղատնտեսության մեջ դնալով պետք է թափ առնեին և զարգանային բոլորովին նոր ճյուղեր, որ առաջներում երբեք չէր եղել, բայց որի հնարավորությունը կար մեզ մոտ։ Սա Պարտիայի և Կառավարության, Սովետական իշխանության կողմից մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության հետագա զարգացման, աշխատավորության կարիքների հանդեպ ցույց տրվող հոգատարության արտահայտություններից մեկն էր հանդիսանում։

1950 թ. ռեսպուբլիկայում արդեն կար 27 սովխոզ 1940 թ. 14-ի փոխարեն[1]։ Նրանց առաջ խնդիր էր դրված հասնել շահութաբեր աշխատանքի, ավելի մեքենայացնել արտադրության աշխատանքները, վերականգնել 1949/1950 թ. ձմռան ցրտերից ոչնչացած տնկիները և դառնալ իսկապես օրինակելի տնտեսություններ։ 1949—1950 թթ. Հայաստանի սովխոզները զգալի չափով բարձրացրին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Ամենալավ ցուցանիշներն ունեին Նոյեմբերյանի Շամպայն գինիների կոմբինատի, Միկոյանի անվան, Շահումյանի անվան Կոնսերվտրեստի և Լոռվա ցեղային անասնապահական սովխոզները։

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 55։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն էին նվիրում նաև գյուղատնտեսության այնպիսի կարևոր բնագավառին, ինչպիսին է անասնապահությունը։ Հայտնի է, որ երկար տարիներ գյուղատնտեսության կենտրոնական պրոբլեմը՝ գյուղատնտեսության մյուս բոլոր խնդիրների լուծման բանալին, հանդիսացել և հանդիսանում է հացահատիկային պրոբլեմը, որը լուծելուց հետո միայն կարելի էր հաջող կերպով լուծել և գյուղատնտեսության մյուս խնդիրները, ինչպես նաև անասնապահության պրոբլեմը։ Այդ գլխավոր պատճառի հետևանքով նախապատերազմյան տարիներին անասնապահությունը իր զարգացումով ընդհանրապես հետ էր մնում ամբողջ գյուղատնտեսության զարգացման տեմպերից։ Բացի դրանից Հայրենական պատերազմի ժամանակ անասնապահությունը, ինչպես այդ նշվեց վերևում, շատ ծանր կորուստներ կրեց, նամանավանդ Սովետական Միության ժամանակավորապես օկուպացված տերիտորիայում, որտեղ նա փաստորեն լրիվ ոչնչացվեց։

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1947 թ. փետրվարյան պլենումը իր «Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության վերելքի միջոցառումների մասին» որոշման մեջ նշեց նաև անասնապահության վերականգնման կոնկրետ ուղիները։ Սակայն անասնապահության վերելքի համար նախադրյալներ ստեղծվեցին միայն 1949 թ., երբ վերականգնվեց հացահատիկային կուլտուրաների նախապատերազմյան բերքատվությունը և այն ժամանակ 1949 թ. ապրիլին Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և ՍՍՌՄ Մինիստրների Սովետը ընդունեցին «Կոլտնտեսային և սովխոզային հանրային մթերատու անասնաբուծության զարգացման եռամյա պլանը (1949—1951 թթ.)»։

Կոլտնտեսային գյուղացիությունը, գյուղատնտեսության բոլոր աշխատողները իրենց ջանքերը դրեցին անասնապահության զարգացման եռամյա պլանը հաջող կատարելու համար։ 1949 թ. կոլտնտեսություններում ստեղծվեցին անաս-

նարուծական և թռչնաբուծական 120 հազար նոր ֆերմաներ։ Կոլտնտեսությունները կատարեցին չորրորդ հնգամյա պլանի առաջադրանքները հանրային անասունների գլխաքանակի աճի նկատմամբ։ 1950 թ. վերջին մթերատու անասունների ընդհանուր գլխաքանակը Սովետական Միության մեջ վերականգնվեց, ընդ որում 1940 թ. նախապատերազմյան մակարդակը գերազանցվեց 4%, իսկ թռչունների գլխաքանակի գծով գերազանցվեց 14%[1]։ Սակայն այդ հաջողությունները դեռևս անբավարար էին և չէին կարող բավարարել սովետական ժողովրդի աճող պահանջները, դեռևս շատ թերություններ կային անասնապահության զարգացման գործում և նրանցից գլխավորն էին գլխաքանակի դանդաղ աճը և անասունների մթերատվության ցածր մակարդակը։

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայաստանում խոշոր թերություններ կային անասնաբուծության զարգացման գործում։ Անասնապահությունը հետ էր մնում։ Եթե խոշոր եղջերավոր անասունների ընդհանուր գլխաքանակը նախապատերազմյան՝ առ 1-ը հունվարի 1941 թ. կազմում էր 598,3 հազար գլուխ (այդ թվում կովերին՝ 212,4 հազար), իսկ առ 1-ը հունվարի 1946 թ. կազմում էր 538 հազար գլուխ (այդ թվում կովերինը՝ 178,1 հազար), ապա հնգամյակի վերջին՝ առ 1-ը հունվարի 1951 թ. 494 հազար էր (այդ թվում կովերինը՝ 140,6 հազար գլուխ)։ Ձիերի գլխաքանակը առավել ևս հետ էր մնում նախապատերազմյան 1940 թ. մակարդակից։ Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը (ոչխար և այծ) առ 1-ը հունվարի 1951 թ. կազմում էր 1.309,2 հազար և փոքր չափով անցել էր նախապատերազմյան մակարդակը՝ 1,221,3՝ առ 1-ը հունվարի 1941 թ. (իսկ առ 1-ը հունվարի 1946 թ.՝ 1,031,7 հազար էր)։ Խոզերի գլխաքանակը աճում էր դանդաղ՝ 81,2 հազար էր առ 1-ը հունվարի 1951 թ. (58,8 հազար՝ առ 1-ը հունվարի 1941 թ. և 45,7 հազար՝ առ 1-ը հունվարի 1946 թ.)[2]։

---

[1] Տե՛ս «Պրավդա», 17 ապրիլի 1951։

[2] Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 75։

Բացի դրանից, եթե դաշտավարության համախառն արտադրանքը ավելանում էր բերքատվության բարձրացման շնորհիվ, ապա անասնապահության գծով գլխաքանակի աճը տեղի էր ունենում առանց անասնապահության մթերատվության զգալի աճի, որը կաթնատվության գծով, 1948 թ. համեմատությամբ, նույնիսկ իջավ 7,4%։ Կովերի ստերջությունը 1950 թ. կազմեց նրանց ընդհանուր թվի 37%՝ 1948 թ. 29%-ի փոխարեն, իսկ առանձին շրջաններում, ինչպես, օրինակ, Թալինի, Արթիկի, Ալավերդու և այլն այն հասնում էր 40—50% [1]։

Ա. Ի. Միկոյանը 1950 թ. մարտին իր ընտրողների առաջ արտասանած ճառում նշեց անասնաբուծության զարգացման խոշոր թերությունները Հայկական ՍՍՌ-ում. նա մատնանշեց, որ «Այնպիսի գործում, ինչպիսին է անասնաբուծությունը, հաջողությունները չի կարելի սահմանափակել միայն գլխաքանակի պլանի քանակական կատարումով, որովհետև մեզ հարկավոր են ոչ թե անասունների գլուխները, այլ մթերքներ՝ միս, կաթ, յուղ և բուրդ» [2]։

Այս բոլորը տեղի էր ունենում այն պատճառով, որ անասունների խնամքը չէր բարելավվում, նրանց կերը բավականաչափ չէր։ Այսպես, 1950 թ. Հայկական ՍՍՌ-ի կոլտնտեսությունները ընդամենը պատրաստեցին 810 հազար տոննա կոշտ կեր, այսինքն միջին հաշվով մեկ գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար 13 ցենտներ, իսկ դրանից 6 ցենտներից ավելին ծղոտ էր, որը բացահայտորեն անբավարար էր անասունի նորմալ գիրությունը պահպանելու համար։ Հյութառատ անասնակեր, կերային արմատապտուղներ չէին մշակվում և պատրաստվում բավականաչափ քանակությամբ։ Անասնապահության մթերատվության հետ մնալը կարելի էր

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 37—38, 40—41։

[2] Ա. Ի. Միկոյան, Ճառ Երևանի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1950 թ. մարտի 10-ին, 1950, ռուսերեն, էջ 61 (այս պարբերության թարգմանությունը հայերեն հրատարակությունում սխալ է կատարված)։

վերացնել, եթե բարելավվեր անասունների խնամքը ու ապահովվեր նրանց կերի կայուն բազան, մանավանդ ձմռան շրջանում[1]։

Մինչև 1950 թ. Անդրկովկասում կիրառվում էր ոչխարաբուծության հետամնաց քոչվոր ձևը, որի ժամանակ անասունների տեղից տեղ քշելը հեռու տարածությունների վրա՝ ամառը Ադրբեջանական ՍՍՌ-ից Հայկական ՍՍՌ ամառային արոտավայրերը և ձմռանը՝ Հայկական ՍՍՌ-ից Ադրբեջանական ՍՍՌ ձմեռային արոտավայրերը, ոչ միայն չէին նպաստում ոչխարաբուծության զարգացմանը, այլև ամեն տարի կոլտնտեսություններին հասցնում էին հսկայական վնասներ, որոնք առաջանում էին անասունների մեծ քանակության անկումից, նրանց հափշտակումներից և մթերատվության խիստ ընկնելուց, մասնավորապես բրդի կորստից։ Ելնելով այդ բոլորից սկսած 1950 թ. միջոցներ ձեռք առնվեցին սահմանափակելու ոչխարաբուծության քոչվոր եղանակը։ Հայկական ՍՍՌ, ինչպես և Ադրբեջանական ՍՍՌ կոլտնտեսությունները և շրջանային կազմակերպությունները սկսեցին գոմերի և անասնապահական այլ շենքերի ավելի լայն շինարարությամբ անասունների ամբողջ գլխաքանակը ձմռան շրջանում պահելու համար։ Ուժեղացավ ուշադրությունը անասունների խնամքի և նրանց կերով ապահովելու, կոլտնտեսային ֆերմաներում ցեղաբուծության գործը բարելավելու, արդյունաբերական նպատակների համար բրդի քանակի ավելացման և նրա որակի լավացման նկատմամբ և այլն։

Մեծ թերություններ կային գյուղատնտեսության և մյուս ճյուղերում։ Վատ էր զարգանում թռչնաբուծությունը։ 1947 թ. թռչունների գլխաքանակի ավելացման պլանը կատարվեց միայն 57,8%, իսկ 1948 թ. առաջին 3 եռամսյակում՝ 54,8%։ 1949—1950 թթ. թռչնաբուծության զարգացումը ընթացավ ավելի արագ տեմպերով՝ թռչունների գլխաքանակը կոլտըն-

---

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 38—40։

տեսային ֆերմաներում համարյա թե կրկնապատկվեց, բայց դա անբավարար էր։ 1950 թ. վերջին թռչունների գլխաքանակը Հայկական ՍՍՌ-ում հասնում էր միայն 308 հազարի։ Թռչնաբուծության զարգացումն ապահովելու համար Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրությունը կազմակերպեց 8 ինկուբատորային կայան, որոնք միայն 1951 թ. պետք է տային 900 հազար ճուտ։ Դանդաղ էր ընթանում մեղվաբուծության զարգացումը։ Եթե 1945 թ. կար 47,5 հազար մեղվա-ընտանիք, 1947 թ.՝ 56,2 հազար էր, իսկ 1948 թ. այդ թիվը հասավ 59,5 հազարի։ Դանդաղ էր զարգանում նաև շերամապահությունը։ Եթե 1940 թ. կոլտնտեսությունները պետությանը հանձնեցին 145 տոննա կոկոն, 1948 թ.՝ 150 տոննա, իսկ շերամի գրենայի մեկ տուփից համապատասխանաբար ստացվեց 52,5 և 54,3 կիլոգրամ։ Այս ցուցանիշները շատ հետ էին մնում ռեսպուբլիկայում եղած մեծ հնարավորություններից[1]։

***

Այսպիսով, Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյա պլանը հիմնականում կատարվեց։ 1946—1950 թթ. ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին մի մեծ գումար՝ 222,2 միլիոն ռուբլի (1955 թ. հուլիսի 1-ի գներով), որը հավասար է II և III հնգամյակների ընթացքում ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ ողջ կապիտալ ներդրումների գումարին։ Այդ կապիտալ ներդրումները աճում էին ըստ տարիների հետևյալ կերպ. 1946 թ.՝ 31,8 մլ. ռուբլի, 1947 թ.՝ 29,6, 1948 թ.՝ 37,9, 1949 թ.՝ 50,2, 1950 թ.՝ 72,7 միլիոն ռուբլի։ Ընդհանուր առմամբ գյուղատնտեսու-

[1] Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 44—45 և Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 40—41։

թյան ամբողջ համախառն արտադրանքը 1950 թ. կազմեց մոտ 1 միլիարդ 370 միլիոն ռուբլի (1951 թ. համեմատական գներով) և, համեմատած նախառևոլյուցիոն 1913 թ. հետ, գերազանցում էր այն 80% [1]։

Ինչպես նշված էր Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրության մեջ՝ չորրորդ հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, հնգամյա պլանի առաջադրանքները հացահատիկային կուլտուրաների բերքատվության և համախառն բերքի գծով գերակատարվեցին, 1950 թ. հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը 53% ավելի բարձր էր, քան 1940 թ.։ Հացահատիկային կուլտուրաների համախառն բերքը կոլտնտեսություններում 43% գերազանցեց 1940 թ. մակարդակը, այդ թվում ցորենի արտադրությունը՝ 39%։ Տեխնիկական կուլտուրաների գծով ցանքատարածությունն ավելացավ 19%, այդ թվում շաքարի ճակնդեղինը՝ 150%, ծխախոտինը՝ 94%։ Բամբակի հումքի համախառն բերքը հնգամյակի ընթացքում ավելացավ 3,4 անգամ, ծխախոտինը՝ 2 անգամ, շաքարի ճակնդեղինը՝ 1,5 անգամ։ Հնգամյա պլանի առաջադրանքը բամբակենու ցանքատարածությունն ավելացնելու գծով, ինչպես արդեն նշվել է, կատարվեց 1948 թ. և ապա գերակատարվեց, իսկ բերքատվության առաջադրանքը կատարվեց 1949 թ.։

Այդ նույն հաղորդագրության մեջ նշված է, որ բանջարաբոստանային կուլտուրաների և կարտոֆիլի գծով ցանքատարածությունը, 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 63%։ Կոլտնտեսություններում կարտոֆիլի համախառն բերքը 2,8 անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։ Բազմամյա խոտաբույսերի խոտհարքի տարածությունը, 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 2,3 անգամ, սակայն հնգամյա պլանի առաջադրանքը թերակատարվեց, որի հետևանքով կերի բազան ետ մնաց անասնապահության աճած

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները.

պահանջներից։ Չորրորդ հնգամյակի տարիներին կոլտնտեսություններում խաղողի և պտղատու այգիների տարածությունն ավելացավ, բայց բազմամյա տունկերի բերքատվության առաջադրանքը չկատարվեց։

Կոլտնտեսություններում հանրային մթերատու անասունների գլխաքանակի աճման հնգամյա պլանի առաջադրանքը գերակատարվեց։ Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կոլտնտեսություններում 1950 թ., նախապատերազմյան մակարդակից բարձր էր 27%, ոչխարներինը և այծերինը՝ 72%, խոզերինը՝ 2,2 անգամ և թռչուններինը՝ 3 անգամ։ Հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՌ կոլտնտեսություններում զգալի աշխատանք կատարվեց անասունների ցեղայնությունը բարելավելու ուղղությամբ։ Սակայն այս բոլոր ցուցանիշները արտահայտում էին, գլխավորապես, քանակական աճը և այս ցուցանիշների ետևը թաքնված էին խոշոր թերություններ՝ անասնապահության զարգացման գործում, առանձնապես որակական տեսակետից։

Հնգամյակի ընթացքում աճեց գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը։ Ռեսպուբլիկայի տրակտորային պարկի հզորությունը հնգամյակի տարիներին բարձրացավ ավելի քան 2 անգամ։ Մեքենա-տրակտորային կայանները 1950 թ. կատարեցին 45% ավելի գյուղատնտեսական աշխատանքներ, քան 1940 թ.։ Հաջողություններ ձեռք բերվեցին հողագործության կուլտուրայի բարձրացման ասպարեզում։ Հացահատիկային կուլտուրաների ամբողջ ցանքը սկսեց կատարվել տեսակավորված սերմերով։ Կոլտնտեսությունների ցելահողերում կատարված գարնանացան կուլտուրաների ցանքը 1950 թ. կազմեց ամբողջ ցանքատարածության 66%։

Իրականացվեց զգալի ոռոգացիոն շինարարություն։ Ծավալվեց աշխատանքը ջրովի հողերը ոռոգման նոր սիստեմին փոխադրելու կապակցությամբ։ Մեծ աշխատանք կատարվեց գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Էլեկտրիֆիկացված կոլտնտեսությունների թիվը չորրորդ հնգամյակի տարիներին ավելացավ համարյա 3 անգամ։

Մինչև 1950 թ. վերջը, ինչպես արդեն նշվեց, էլեկտրիֆիկացվեց ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների ավելի քան 2/3 մասը։

Զգալի աշխատանք կատարվեց նաև կոլտնտեսությունները կազմակերպորեն ու տնտեսապես ավելի ամրապնդելու և գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու ուղղությամբ։ Կոլտնտեսություններում ամրապնդվեց աշխատանքային կարգապահությունը և բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։ Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը 1950 թ., 1940 թ. համեմատությամբ, ավելացան ավելի քան 3 անգամ։

Այսպիսով, չորրորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը հասավ նոր հաջողությունների։ Կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը աճեց և ավելի ամրապնդվեց։ Ուժեղացավ գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան, բարձրացավ մեքենատրակտորային կայանների դերը կոլտնտեսային արտադրության մեջ։ Չորրորդ հնգամյակի ժամանակաշրջանում պատրաստվեցին գյուղատնտեսական արտադրության կազմակերպիչների ու մասնագետների, հողագործության, անասնաբուծության և մեքենայացման վարպետների նոր, որակյալ կադրեր[1]։

Անշուշտ, գյուղատնտեսության շարունակվող հետ մնալը երկրի զարգացման ընդհանուր տեմպերից հետևանք էր այն լուրջ սխալների, որ թույլ էին տրվում գյուղատնտեսության ղեկավարման և պլանավորման գործում անհատի պաշտամունքի մթնոլորտում, ինչպես՝ գյուղատնտեսության մի շարք կարևոր ճյուղերում և առավել ևս անասնապահության բնա-

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951 թ. և Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 61, 85։

դավառում, կոլտնտեսականների և կոլտնտեսությունների նյութական շահագրգռվածության սկզբունքի խախտումը, հաճախ կոլտնտեսականների հասարակական ու անձնական շահերի ճիշտ զուգակցման և կոլտնտեսությունների ու կոլտընտեսականների նյութական շահագրգռվածության սկզբունքի խախտումը ի վնաս նրանց, ինչպես նաև կոլտնտեսությունների անբավարար ղեկավարումը պարտիական, սովետական և գյուղատնտեսական օրգանների կողմից, տեղական պայմանների առանձնահատկությունների հաշվի չառնելը, տեղերում գյուղատնտեսական տեխնիկայի դեռ անբավարար օգտագործումը, կոլտնտեսություններում դեռևս թույլ աշխատանքային կարգապահությունը և կոլտնտեսականների աշխատանքների վատ կազմակերպվածությունը, որը հանգեցնում էր մեծ կորուստների բերքահավաքի գործում և այլն։

Սակայն սոցիալիստական գյուղատնտեսությունը Հայաստանում ինչպես և ողջ Սովետական Միության մեջ, չորրորդ հնգամյակի տարիներին մեկ անգամ ևս ցույց տվեց իր ուժը և զարգացման անսպառ հնարավորությունները։ Կոլտնտեսային կարգերի կենսական ուժը հիմնված է կոլտնտեսություններում հանրային սեփականության և կոլեկտիվ աշխատանքի վրա, որտեղ տնտեսությունը զարգանում է պլանային կարգով և ազատ է ագրարային ճգնաժամերից, շահագործումից և գյուղատնտեսության քայքայումից։ Սոցիալիստական սիստեմը լայն հնարավորություն է տալիս արագորեն տարածելու գիտության և առաջավոր փորձի նվաճումները ամբողջ գյուղատնտեսության մեջ։ Կոլտնտեսությունները, որպես առաջավոր խոշոր տնտեսություն, լայն կերպով օգտագործում են առաջնակարգ տեխնիկա, պարարտանյութեր, ագրոնոմիական գիտության նվաճումները և բազմակողմանի զարգացնում են գյուղատնտեսության բոլոր ճյուղերը։ Այդ պատճառով մեր գյուղատնտեսությունը չունի սահմաններ աշխատանքի արտադրողականության և բոլոր կուլտուրաների բերքատվության բարձրացման, ապրանքային արտադրանքի ավելացման, կոլտնտեսությունների և կոլտնտեսա-

կանների հանրային հարստության և անձնական եկամուտների աճի համար։ Կոլտնտեսային կարգերը ամենակենսունակ կարգերն են գյուղատնտեսության մեջ, որովհետև աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը կոլտնտեսություններում հնարավորություն է տալիս լրիվ կերպով օգտագործել խոշոր տնտեսության բոլոր առավելությունները և դրա հետ մեկտեղ ճիշտ կերպով զուգակցել կոլտնտեսականների անձնական և հանրային շահերը։

Այս բոլորի շնորհիվ է, որ Հայրենական Մեծ պատերազմի նախօրեին Սովետական Միության կազմի մեջ մտած Մերձբալթիկայի Սովետական ռեսպուբլիկաների և Բելոռուսական ՍՍՌ ու Ուկրաինական ՍՍՌ արևմտյան մարզերի, Մոլդավական ՍՍՌ մի շարք շրջանների գյուղացիությունը, ամենակարճ ժամանակամիջոցում, համոզվելով կոլտնտեսային կարգերի առավելությունների մեջ և ստանալով մեծ օգնություն Սովետական պետությունից, վճռականորեն կանգնեց կոլտնտեսային շինարարության ուղու վրա։ Չորրորդ հնգամյակի տարիներին Էստոնական, Լատվիական, Լիտվական ՍՍՌ-ում, Բելոռուսական և Ուկրաինական ՍՍՌ արևմտյան մարզերում և Մոլդավական ՍՍՌ-ում գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը լրիվ հաղթող հանդիսացավ։

Կոլտնտեսային շինարարության փորձը ուսումնասիրելու համար չորրորդ հնգամյակի տարիներին ժողովրդական դեմոկրատիայի երկրներից Սովետական Միություն էին գալիս աշխատավոր գյուղացիների բազմաթիվ պատվիրակներ, որոնք ակներև համոզվում էին կոլտնտեսային կարգերի առավելությունների մեջ, սկսում էին իրենց մոտ կիրառել կոլեկտիվ տնտեսությունների սկզբնական ձևերը։

Չորրորդ հնգամյակի տարիներին էլ ավելի ամրապնդվեց կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը, ընդլայնվեց գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան, ավելացավ գյուղատնտեսական արտադրությունը։ Կոլտնտեսությունները զարգանում էին բազմաճյուղանի, բարձր ապրան-

քային տնտեսության վերափոխվելու ճանապարհով։ Հողագործության և անասնապահության ամրապնդման հետ մեկտեղ Հայաստանի կոլտնտեսությունները ստեղծում և զարգացնում էին այգեգործություն, բանջարաբուծություն, մեղվաբուծություն, շերամապահություն և այլն, ինչպես և ամեն տեսակի օժանդակ ձեռնարկություններ։ Այս բոլորը հնարավորություն էր տալիս նրանց բարձրացնելու արտադրության ապրանքայնությունը և կոլտնտեսականների աշխօրերի արժեքը։ Կոլտնտեսային կարգերը էլ ավելի ամրապնդվեցին և հանդիսանում են Սովետական Միության մեջ հզոր ուժ, որն ունի կարևորագույն նշանակություն կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում։

## 3. Աշխատավորության նյութական բարեկեցության աճը և կուլտուրական մակարդակի բարձրացումը

Սոցիալիստական արտադրության նպատակը ոչ թե շահույթն է, որը բնորոշ է կապիտալիստական արտադրության համար, այլ մարդն իր կարիքներով, այսինքն՝ մարդու, ամբողջ հասարակության նյութական և հոգեկան, կուլտուրական պահանջմունքների բավարարումը։ Այդ խնդրի կատարմանն է ենթարկված հասարակական արտադրությունը Սովետական պետության մեջ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից սկսած։ Այս կարևորագույն հանգամանքը խարսխվել և խարսխվում է օբյեկտիվ տնտեսական հիմքի, սոցիալիստական հասարակության տնտեսական բազիսի վրա։ Սոցիալիզմի հաղթանակի հետ միասին մեր երկրում աշխատավորների կարիքները բավարարելու հնարավորությունները ավելացան և ավելի են ընդարձակվում, սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողությունը ավելի լայն ասպարեզ է ստանում։

«Կապիտալիստական հասարակարգը,— նշել է Վ. Ի. Լենինը,— ամեն ինչ անում էր վերնախավերի համար։ Նա չէր

հոգում ներքին խավերի մասին»[1]: Այնինչ Սովետական Միության մեջ աշխատավորության կենսական մակարդակը անշեղորեն բարձրացել և բարձրանում է, որովհետև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բնորոշ հատկություններից մեկն այն է, որ նա ժողովրդին տվեց ոչ միայն ազատություն, այլև ունևոր ու կուլտուրական կյանք վարելու հնարավորություն:

Սովետական պետությունը չորրորդ հնգամյակի տարիներին, մեծ ներդրումներ կատարելով ժողովրդական տնտեսության մեջ՝ նրա վերականգնման և հետագա զարգացման համար, անդադար հոգատարություն էր ցուցաբերում սովետական ժողովրդի բարեկեցության, նրա կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման համար: Սովետական ժողովրդի բարեկեցությանը պատերազմի պատճառած հսկայական վնասները միանգամից անհնարին էր վերացնել. խաղաղ շինարարությանն անցնելուց հետո բնակչության կյանքի պայմանները դեռևս մնում էին դժվարին: Աշխատավորության կենսական մակարդակի անընդհատ բարձրացման հիմքը պետք է հանդիսանար և հանդիսացավ հենց արդյունաբերության և գյուղատնտեսության արագ վերելքը: Սովետական Միությունում ազգային եկամտի աճը աշխատավորության նյութական բարեկեցության անընդհատ բարելավման անհրաժեշտ պայմանն է:

Ազգային եկամտի աճի ուղղությամբ չորրորդ հնգամյա պլանի առաջադրանքը մյուս առաջադրանքների հաջող կատարման և գերակատարման հետ նույնպես գերակատարվեց զգալի չափով: ՍՍՌՄ ազգային եկամուտը 1950 թ. 64% գերազանցեց 1940 թ. նախապատերազմյան մակարդակը, պլանով նախատեսված 38% փոխարեն[2]: Այսպիսով, եթե 1913 թ. ազգային եկամուտը կազմում էր 21 միլիարդ ռուբլի (1926/1927 թթ. անփոփոխ գներով), իսկ 1940 թ.՝ 128,3 միլիարդ ռուբլի, ապա 1950 թ. անցավ 210 միլիարդ ռուբլուց, պլա-

1 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 31, էջ 645:
2 Տե՛ս «Պրավդա», 17 ապրիլի 1951:

նով նախատեսված 177 միլիարդ ռուբլու փոխարեն և գերազանցեց 1913 թ. մակարդակը 10,03 անգամ[1]:

Մեր երկրում ազգային եկամուտը օգտագործվում է սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման, Սովետական պետության պաշտպանության հզորության ամրապնդման և ժողովրդի բարեկեցության բարձրացման շահերի համար, այսինքն՝ բաշխվում է աշխատավորության համաժողովրդական և անձնական շահերը բավարարելու նպատակով: Դա իր արտահայտությունն է գտնում ՍՍՌՄ և միութենական ռեսպուբլիկաների պետական բյուջեի մեջ՝ բյուջեի, որը անդեֆիցիտ է և բացառում է մեզ մոտ դրամական ինֆլյացիաներ, որոնք ծանր լուծ են աշխատավորների համար կապիտալիստական երկրներում: Այսպես, օրինակ, 1950 թ. բյուջեով Սովետական Միության աշխատավորությունը միայն իր սոցիալ-կուլտուրական պահանջները բավարարելու համար ստացավ ծախսերի 35%-ից ավելին, իսկ մուծեց, որպես հարկային վճարում՝ պետական բյուջեի եկամտային մասի միայն 8,4%, 1950 թ. աշխատավորության անձնական նյութական և կուլտուրական կարիքներին է ծառայել երկրի ողջ ազգային եկամտի 74%[2]:

Պատերազմից խաղաղ շինարարության անցումը, արդյունաբերության փոխադրումը խաղաղ ժամանակաշրջանի արտադրանքի թողարկման համար, գյուղատնտեսության հաջողությունները պայմաններ ստեղծեցին, բնակչության քարտային մատակարարման սիստեմը վերացնելու համար: Սովետական պետությունը կարող էր արդեն վերադառնալ նորմալ ապրանքաշրջանառության և բնակչության սպառման

---

[1] Տե՛ս ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը 1956 թ., Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն, էջ 34—35 և Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, «Պրավդա», 21 մարտի 1946 թ., Ա. Վիկենտև, Սովետական էկոնոմիկայի զարգացման ուղիները չորրորդ հնգամյակում, 1952, ռուսերեն, էջ 139—140:

[2] Տե՛ս «Պրավդա», 14 հունիսի 1950 և 17 ապրիլի 1951:

ավելացմանը։ Սովետական կառավարությունը մի շարք միջոցներ ձեռք առավ գների բազմազանությունը վերացնելու ուղղությամբ, որպես քարտային սիստեմը վերացնելու նախապատրաստում։ 1946 թ. խիստ երաշտի և պարենային պետական պաշարների նվազման պատճառով չհաջողվեց վերացնել քարտային սիստեմը. դա հնարավոր դարձավ իրականացնել 1947 թ. վերջին։

1947 թ. դեկտեմբերի 14-ին հրապարակվեց Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և Սովետական կառավարության որոշումը՝ «Դրամական ռեֆորմ անցկացնելու և պարենային ու արդյունաբերական ապրանքների քարտերը վերացնելու մասին»[1]։ Այս կարևոր միջոցառումը մեկ անգամ ևս ցույց տվեց Սովետական Միության հզորությունը, Սովետական իշխանության խիստ ժողովրդական բնույթը և արտադրության սոցիալիստական եղանակի առավելությունները։

Սովետական Միությունը, երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակից Եվրոպայի բոլոր երկրներից առաջինը կարողացավ վերացնել քարտային սիստեմը։ Դրամական ռեֆորմը լիկվիդացրեց պատերազմի հետևանքները դրամական շրջանառության ասպարեզում, ամրապնդեց սովետական ռուբլին, դարձրեց այն լիարժեք։ Նորմավորված բաշխման փոխարեն սկսվեց ծավալուն սովետական առևտուր՝ գների զգալի իջեցման հիման վրա։ Դրամական ռեֆորմ կատարելիս բանվորների և ծառայողների աշխատավարձը չիջեցվեց. Նույնությամբ թողնվեցին նաև գյուղատնտեսական մթերքների մթերումների նախկին գները։ Այդպիսով և բանվորները և ծառայողները, և գյուղացիները, զգալի օգուտ ստացան և շարունակում էին ստանալ հետագա տարիների ընթացքում՝ պարենային ու արդյունաբերական ապրանքների գների իջեցումից ու սովետական դրամի գնողունակության հետագա բարձրացումից։

[1] «Պրավդա», 15 դեկտեմբերի 1947։

Աշխատավորության նյութական բարեկեցության բարելավումը մեր Սովետական երկրում կրում է սիստեմատիկ և մշտական բնույթ։ Արդյունաբերության, գյուղատնտեսության հաջողությունները, ազգային եկամտի ավելացումը զուգակցվել և զուգակցվում են քաղաքի և գյուղի աշխատավորների նյութական բարեկեցության աճման հետ։ 1950 թ. բանվորների, ծառայողների և գյուղացիության ընդհանուր եկամուտը, նախապատերազմյան 1940 թ. համեմատությամբ, արդեն ավելացավ՝ համեմատական գներով, 62% [1]։

Սովետական կառավարությունը սիստեմատիկորեն իջեցնում էր պարենային ու արդյունաբերական ապրանքների գները։ Դրամական ռեֆորմի և քարտային սիստեմի վերացման հետ մեկտեղ չորրորդ հնգամյակի տարիներին մասսայական սպառման ապրանքների մանրածախ գները եռակի անգամ իջեցվեցին։ Գների առաջին իջեցման շնորհիվ, որը տեղի ունեցավ 1947 թ. դեկտեմբերին քարտային սիստեմի վերացման հետ միասին, Սովետական Միության բնակչությունը տարվա ընթացքում շահեց մոտ 86 միլիարդ ռուբլի։ Երկրորդ իջեցումը, որը սկսվեց 1948 թ. և ավարտվեց մինչև 1949 թ. մարտ ամիսը, բնակչությանը ապահովեց 71 միլիարդ ռուբլու նոր տարեկան շահույթ։ 1949 թ. ընթացքում աշխատանքի արտադրողականության արագ աճի, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, ամբողջ ժողովրդական տնտեսության մեծ հաջողությունների շնորհիվ հնարավոր եղավ իրագործելու 1950 թ. մարտի 1-ից երրորդ և հնգամյակի տարիների ընթացքում գների ամենազգալի իջեցումը, որը տվեց լրացուցիչ կերպով 110 միլիարդ ռուբլու շահույթ։

Այսպիսով, մասսայական սպառման բոլոր ապրանքների գների եռակի իջեցումը աշխատավորությանը 267 միլիարդ ռուբլու տարեկան շահույթ տվեց։ Պետական մանրածախ գների ինդեքսը բոլոր ապրանքների վրա առ 1-ը մարտի 1951 թ., համեմատած 1947 թ. IV եռամսյակի հետ, կազմեց

[1] «Պրավդա», 17 ապրիլի 1951։

53%, այսինքն համարյա 2 անգամ ավելի ցածր, ընդ որում պարենային ապրանքներինը՝ 48%, ոչ պարենային ապրանքներինը՝ 63%[1]։ Այդ կապակցությամբ բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձը աճեց ավելի քան 2 անգամ, կոլտնտեսականների հանրային և անձնական եկամուտները ավելացան. ուժեղացավ գյուղատնտեսական ապրանքների մուտքը դեպի կոլտնտեսային շուկաները, սովետական դրամի գնողունակությունը բարձրացավ երկու անգամ։ Սովետական ռուբլին դարձավ ամենակայուն և ամենալիարժեք վալյուտան աշխարհում։ Սրանք էին պատճառները, որ Սովետական կառավարությունը 1950 թ. մարտի 1-ից ռուբլու պաշտոնական կուրսի հաշվումը փոխադրեց ոսկու բազայի վրա։ Սա արտահայտեց սովետական ֆինանսական սիստեմի ավելի ամրապնդումը։ Այս բոլորի մեջ վառ արտահայտություն էր գտնում պետական հոգատարությունը աշխատավորության կարիքների, աշխատավորության բարեկեցության վերելքի նկատմամբ։

Սովետական առևտուրը չորրորդ հնգամյակի տարիներին անընդհատ ընդարձակվում էր մասսայական սպառման ապրանքների արտադրության բարձրացման հիման վրա։ Քարտային սիստեմի վերացումը և անցումը սովետական ծավալուն առևտրին՝ շեշտակի կերպով ավելացրեց ապրանքաշրջանառությունը։ Արդեն 1949 թ. ժողովրդական սպառումը կարևորագույն ապրանքների գծով ավելի բարձր էր, քան նախապատերազմյան՝ 1940 թ.։ 1950 թ. պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը զգալի չափով գերազանցեց 1940 թ. մակարդակը։ Համապատասխանաբար 1950 թ. բնակչությանը վաճառվեց ձուկ՝ 51% ավելի, յուղ՝ կենդանական և բուսական 59 և 67%, գործվածքեղեն՝ 47%, մսի մթերքներ՝ 38%, շաքար, հրու-

---

[1] Տե՛ս ՍՍՀՄ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, 1956, էջ 211։ Սովետական առևտուրը, Վիճակագրական ժողովածու, 1956, էջ 132։

շակեղեն, կոշկեղեն 1/3-ով ավելի։ Ավելացավ բնակչության կուլտուրական կարիքների և տնտեսության պետքերի համար ապրանքների վաճառքը. այսպես, օրինակ, ժամացույցներինը՝ 3,3 անգամ, կարի մեքենաներինը՝ համարյա 3 անգամ, ռադիոընդունիչներինը՝ 6 անգամ, հեծանիվներինը՝ 2,9 անգամ, մոտոցիկլետներինը՝ 16 անգամ և այլն[1]։ Տեղի էր ունենում պետական և կոոպերատիվ առևտրի անշեղ վերելք, աշխատավորության գնողունակության աճ. նրանց նյութական ու կուլտուրական պահանջները ավելանում էին։

Հայկական ՍՍՌ բնակչության մատակարարումը լայն սպառման պարենային և արդյունաբերական ապրանքներով նույնպես սիստեմատիկորեն բարելավվում էր։ Դրամական ռեֆորմից, քարտային սիստեմը վերացնելուց և պարենային ու արդյունաբերական ապրանքների պետական գները իջեցնելուց հետո ռեսպուբլիկայում սովետական առևտուրը ծավալվեց և հասավ զգալի հաջողությունների։

Հայաստանում պետական ու կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը, 1948 թ., 1947 թ. համեմատությամբ, կազմեց 114,1%։ Պարենային և արդյունաբերական ապրանքների վաճառքը զգալիորեն ավելացավ։ Այսպես, օրինակ, հացի վաճառքը ավելացավ 133%, շաքարինը՝ 118,1%, կենդանական յուղինը՝ 17,1%, ձեռքի և լվացքի օճառինը՝ 57,4%, բամբակյա գործվածքներինը՝ 15,6% և այլն։ Պետական մանրածախ գների իջեցման հետևանքով ռեսպուբլիկայի քաղաքներում կոոպերատիվ առևտրի գներն, 1947 թ. համեմատությամբ, տարվա ընթացքում իջան 40—50%, իսկ կոլտնտեսային շուկաներում գներն իջան 20—35%։ Միայն 1948 թ. առևտրական կետերի թիվը ավելացավ 260 միավորով։ Բացի դրանից, ավելի աճեց առևտրի մանրածախ ցանցը և շրջիկ առևտուրը[2]։

Սակայն առևտրի ընդարձակման բնագավառում կային խոշոր թերություններ։ Առևտրի ցանցում աշխատում էին

---

[1] «Պրավդա», 17 ապրիլի 1951։

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», 27 հունվարի 1949։

ջատ մարդիկ, որոնք չէին հասկանում սովետական կուլտուրական առևտրի պահանջները. վատ էր դրված կոլտնտեսականներին անհրաժեշտ ապրանքներով մատակարարելու գործը. հաճախ ապրանքները ուղարկվում էին շրջաններ և գյուղեր առանց հաշվի առնելու բնակչության պահանջները, մի հանգամանք, որն առաջ էր բերում որոշ շրջաններում ապրանքների կուտակում, մյուս շրջաններում այդ նույն ապրանքների պահանջի առկայությամբ։ Դեռևս վատ էր կազմակերպված առևտրական ցանցի բարեկարգման և ապրանքների, առանձնապես պարենային ապրանքների, պահպանման գործը։ Անհրաժեշտ էր արագ վերակառուցել աշխատանքները. ավելի ծավալել կուլտուրական սովետական առևտուրը, ավելացնել ապրանքաշրջանառությունը, բարելավել ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության մատակարարումը, պետք էր ուժեղացնել միջկոլտնտեսային ապրանքաշրջանառությունը միջշրջանային կոլտնտեսային շուկաներն ընդարձակելու միջոցով և այլն։

Ձեռնամուխ լինելով այդ պատասխանատու խնդիրները կատարելուն, առևտրի աշխատողները ծավալեցին սոցիալիստական մրցություն։ 1949—1950 թթ. ապրանքաշրջանառությունը Սովետական Հայաստանում ավելի ծավալվեց. պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը (ներառյալ հասարակական սնունդը) 1950 թ. կազմեց 2 միլիարդ 370 միլիոն ռուբլի՝ 1940 թ. 1.094 միլիոն ռուբլու դիմաց, ընդ որում պետական առևտրի տոկոսը ամբողջ մանրածախ ապրանքաշրջանառության մեջ բարձրացավ 1940 թ. 62-ից մինչև 73%, ի հաշիվ կոոպերատիվ և կոլտնտեսային շուկայի առևտրի տոկոսների։ Ընդարձակվեց ունիվերսալ և մասնագիտացված խանութների, մթերային խանութների և կրպակների ցանցը, հասնելով 1950 թ. 3329 միավորի (1940 թ. 2710 միավորի դիմաց), ընդ որում 1874 քաղաքներում և 1455 գյուղական վայրերում, իսկ հասարակական սննդի ձեռնարկությունների ցանցը կազմեց 656 միավոր (1940 թ. 562 միավորի դիմաց)։ Աճեց նաև

կոլտնտեսային առևտրի ծավալը։ Կոլտնտեսությունների դրամական եկամուտների ընդհանուր գումարը, եթե 1940 թ. կազմում էր 224,9 միլիոն ռուբլի, ապա 1950 թ. նա կազմեց 421,7 միլիոն ռուբլի՝ տալով համարյա կրկնակի աճ[1]։ Այս կարևոր հանգամանքը կոլտնտեսությունների ամրապնդման, նրանց տնտեսական հաջողությունների և կոլտնտեսականների նյութական բարեկեցության հետզհետե վերելքի արտահայտությունն էր։

Սովետական ժողովրդի նյութական բարեկեցության վերելքը արտահայտվում է նաև բանվորների և ծառայողների թվի անընդհատ աճով և նրանց աշխատավարձի ֆոնդի ավելացումով։ Գործազրկության բացակայությունը և աշխատանքի իրավունքի երաշխիքի ապահովությունը Սովետական պետության մեջ պայմաններ են ստեղծել ՍՍՌ Միության քաղաքացիների համար պետության օժանդակությամբ ընտրելու իրենց համար հարմար մասնագիտություն, անընդհատ բարձրացնելու իրենց որակավորումը. կատարելագործելու իրենց գիտելիքները՝ ամեն մեկը իր ասպարեզում։ Չորրորդ հնգամյակի տարիներին տեղի էր ունենում բանվոր դասակարգի անընդհատ աճ, բարձրանում էր նրա կենսական մակարդակը։ Ժողովրդական տնտեսության մեջ բանվորների և ծառայողների ընդհանուր թիվը 1950 թ. վերջին կազմեց 39,2 միլիոն մարդ, ավելանալով, 1940 թ. համեմատությամբ, 7,7 միլիոնով[2]։

Չորրորդ հնգամյակի տարիներին բանվոր-ծառայողների կադրերի պատրաստումը և նրանց որակավորման բարձրացումը ընդունեց մինչև այդ չտեսնված չափեր։ Միայն պետական աշխատանքային ռեզերվների գծով պատրաստվեց 3 միլիոն 389 հազար երիտասարդ մասնագետ։ Միլիոնավոր բանվորներ ստացան որակավորում և բարձրացրին իրենց մակարդակը՝ անհատական ու բրիգադային—կուրսային ու-

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 125, 131, 85։

[2] Տե՛ս «Պրավդա», 17 ապրիլի 1951։

ստացման ճանապարհով, տեխնիկական մինիմումի խմբակներում և տարբեր կուրսերում։

Սովետական պետության պայմաններում արտադրական որակավորում ստանալը և նրա բարձրացումը ոչ միայն բանվորի ու ծառայողի անձնական գործն է, այլև ամբողջ հասարակության գործը. ծախսերը, որոնք կապված են դրա հետ ամբողջովին իր վրա է վերցնում պետությունը։ Այդ պատճառով էլ որակավորված բանվորների տեսակարար կշիռը Սովետական Միության բանվոր դասակարգի կազմում Սովետական իշխանության տարիներին, և առանձնապես չորրորդ հնգամյակի տարիներին ու այժմ շեշտակի կերպով ավելացել և ավելանում է։ ՍՍՌՄ բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական արագ աճը աշխատանքի արտադրողականության բարձրացման, սոցիալիստական արտադրության հետագա զարգացման կարևոր պայմաններից և վճռական նշանակություն ունեցող հանգամանքներից մեկն է կոմունիստական հասարակարգ կառուցելու համար։

Չորրորդ հնգամյակի վերջին՝ 1950 թ. աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության մեջ, նախապատերազմյան 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 37% (պլանավորված էր 36%)[1]։ Բնորոշ է, որ այն ժամանակ, երբ բանվորների ու ծառայողների թիվը մեր երկրում 1950 թ. 3,5 անգամ գերազանցեց բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը ցարական Ռուսաստանում 1913 թ., արդյունաբերական արտադրության ծավալը ավելացավ 15 անգամ։ Սա վկայում է ՍՍՌՄ-ում նոր տեխնիկայի հզոր բազայի հիման վրա բանվոր դասակարգի արագ կուլտուր-տեխնիկական աճի և աշխատանքի արտադրողականության շեշտակի վերելքի մասին[2]։

---

[1] «Պրավդա», 17 ապրիլի 1951։

[2] Տե՛ս Ֆ. Պ. Կոշելև, Հետպատերազմյան առաջին հնգամյակի կատարման հիմնական արդյունքները, էջ 166—168. Ա. Ֆ. Ռումյանցև, Սովետական էկոնոմիկայի զարգացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում, 1951, ռուսերեն, էջ 28։

Չորրորդ հնգամյակի տարիներին մեծ թվով ինժեներատեխնիկական և որակյալ բանվորական կադրեր պատրաստվեցին Հայաստանի արագ զարգացող արդյունաբերության համար: Այդ կարևոր աշխատանքը չէր դադարում անգամ Հայրենական պատերազմի ծանր տարիներին: Արդյունաբերության կողմից կադրերի պահանջը հիմնականում ապահովում էին ռեսպուբլիկայի բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունները և պետական աշխատանքային ռեզերվները: Հնգամյակի տարիներին Հայաստանում կային 11 արհեստագործական ուսումնարան և 5 ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոց, որոնցում սովորում էին մինչև 3000 պատանի, և պատրաստվեց 11 հազարից ավելի երիտասարդ բանվոր արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի համար: Պետական աշխատանքային ռեզերվների սիստեմը հանդիսացել և հանդիսանում է արդյունաբերությունը որակյալ բանվորական ուժով լրացնելու հիմնական աղբյուրը: Բացի դրանից, 1947—1950 թթ. անմիջապես արտադրության մեջ պատրաստվել են մոտ 40 հազար նոր բանվորներ և բարձրացվել է 42,2 հազար բանվորների որակավորումը:

Արդյունաբերության մեջ զբաղված մարդկանց թիվը 1950 թ., 1948 թ. համեմատությամբ, ավելացավ 53, իսկ 1945 թ. համեմատությամբ՝ 102,4%. անմիջապես արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը չորրորդ հնգամյակի ընթացքում անցավ 65 հազարից (այդ թվում 55 հազարը խոշոր արդյունաբերության մեջ). ավելանալով, նախապատերազմյան 1950 թ. համեմատությամբ, մոտ 80%, իսկ 1945 թ. համեմատությամբ՝ 75%: Միևնույն ժամանակ աշխատանքի արտադրողականությունը չորրորդ հնգամյակի վերջին, համեմատած նախապատերազմյան 1940 թ. հետ, բարձրացավ 37 տոկոսով, իսկ 1945 թ. համեմատությամբ, ինչպես վերևում նշվեց՝ 54,7 տոկոսով: Նույնպես անշեղորեն աճում էր աշխատավարձային ֆոնդը. 1950 թ. բանվոր-ծառայողների աշխատավարձային ֆոնդը կազմեց 1940 թ. աշ-

խատավարձային ֆոնդի 132,4 տոկոսը, իսկ 1945 թ. համեմատությամբ աճեց ավելի քան երկու անգամ։

1950 թ. Հայկական ՍՍՌ միայն արդյունաբերության և շինարարության մեջ աշխատում էին մոտ 100 հազար բանվոր-ծառայող՝ 1940 թ. 47 հազարի դիմաց։ Սովետական Հայաստանի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ բանվորների ու ծառայողների թիվը 1950 թ. վերջին կազմեց մոտ 235 հազար մարդ և, 1940 թ. վերջի համեմատությամբ, աճեց ավելի քան 90 հազարով, այսինքն՝ 64%, 1945 թ. համեմատությամբ՝ 59,8%, 1948 թ. համեմատությամբ՝ 21,9%։ Գյուղի աշխատավորները նույնպես բարձրացրին և բարձրացնում են իրենց արտադրական-տեխնիկական մակարդակը. տիրապետեցին և տիրապետում են շատ նոր մասնագիտությունների, որոնք պետք են գյուղատնտեսական արտադրության մեջ, ինչպես տրակտորիստի, կոմբայնավարի և այլն։ Միայն 1950 թ. ընթացքում գյուղատնտեսության գծով պատրաստվել են 1400 մեխանիզատորական կադրեր, այդ թվում 780 տրակտորիստ[1]։ Նրանցից շատ շատերը դարձան գյուղատնտեսության առաջավորներ և վարպետներ։ Այս բոլորը պերճախոս կերպով վկայում է Հայկական ՍՍՌ բանվորների և ծառայողների, ամբողջ հայ ժողովրդի կուլտուր-տեխնիկական մակարդակի զարգացման մասին։

Ժողովրդական տնտեսության զարգացմանը՝ բոլոր բնագավառներում մեծ մասնակցություն էին ցուցաբերում սովետական կանայք։ Բանվորների և ծառայողների միջավայրում, նույնպես և կոլտնտեսություններում կանայք սկսեցին ավելի և ավելի խոշոր դեր կատարել։ 1950 թ. Հայկական

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951. ՀՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները և Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 120, 117, 17։

ՍՍՌ-ում կանանց թիվը, որոնք անմիջականորեն զբաղված էին արդյունաբերության մեջ, հասավ բանվորների ընդհանուր թվի 36%, հասարակական սննդի աշխատողների՝ 51%, ժողովրդական լուսավորության և առողջապահության օրգաններում՝ ծառայողների ընդհանուր թվի մինչև 61 և 77%, իսկ ընդամենը ռեսպուբլիկայում բանվորների և ծառայողների թվում կանայք կազմում էին 39% [1]։

Կանայք լայն կերպով առաջ էին քաշվում ղեկավար աշխատանքի կուլտմասսային արտադրության, արդյունաբերության մեջ, պարտիական-սովետական գծով, որպես ֆերմաների վարիչներ, օղակավարուհիներ, բրիգադավարներ, կոլտնտեսության նախագահներ, գործարանային ցեխի վարիչներ, ձեռնարկությունների դիրեկտորներ, տեղական Սովետների գործադիր կոմիտեների բաժնի վարիչներ և նախագահներ, Պարտիայի շրջանային և քաղաքային կոմիտեների բաժնի վարիչներ և քարտուղարներ, մինիստրներ և մինիստրի տեղակալներ և այլ ղեկավար պաշտոններում։ Ռեսպուբլիկայի աշխատավորները հպարտանում են իրենց առաջավոր կանանցով։ Վերը նշված ղեկավար աշխատանքներում նույնպես և տեղական Սովետների և Գերագույն Սովետի կազմում էին՝ Սևանի մետաքսագործարանի բանվորուհի Ս. Կարապետյանը, Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորուհի Ն. Լիխաչովան, կոլտնտեսուհի Ռ. Ղարիբյանը, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Պ. Հովհաննիսյանը, Երևանի մահուդի ֆաբրիկայի ապարատուրային ցեխի պետ Պ. Բաղլովան, Երևանի դպրոցային պիտույքների ֆաբրիկայի գլխավոր ինժեներ Ս. Տատիկյանը և շատ ուրիշներ։ Պարտիական և սովետական աշխատողների թվում՝ Ն. Թուխիկյանը, Լ. Ստեփանյանը, Ա. Ծատուրյանը, Դ. Շամցյանը, Մ. Բարաջանյանը, Բ. Գրիգորյանը և ուրիշներ։

Սովետական պետության պայմաններում, երբ կանանց

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 119։

ղեկավար աշխատանքի առաջ քաշելու և նրանց կյանքի կուլտուր-կենցաղային պայմաններն էլ ավելի բարելավելու գործը, մասնավորապես մսուրների, մանկապարտեզների, ճաշարանների և այլն լայն շինարարությունը դիտվում է Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության կողմից, որպես համապետական կարևորության գործ, կանայք հանդիսացել և հանդիսանում են կոմունիստական շինարարության ակտիվ մասնակիցները։

Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը անդադար հոգատարություն են ցուցաբերել ժողովրդի կյանքի, կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, աշխատավորների առողջության ու հանգստի վերաբերյալ։ Չորրորդ հնգամյակի տարիներին, համեմատած անցած տարիների հետ, լայն թափ ընդունեց Հայկական ՍՍՌ քաղաքների, շրջանային կենտրոնների և գյուղերի բարեկարգումը։ Առանձնապես խոշոր շինարարություն ծավալվեց ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում, որտեղ ճարտարապետական տեսակետից ձևավորվեցին նոր հրապարակներ և փողոցներ, մայթերը, փողոցները ասֆալտապատվեցին, ստեղծվեցին նոր պուրակներ, էլ ավելի կանաչապատվեցին փողոցները և Երևանի շրջակայքը, կառուցվեց նոր ջրմուղ։ Այս կարգի աշխատանքները կատարվում էին և առաջ՝ մինչև Հայրենական պատերազմը, բայց չորրորդ հնգամյակի տարիներին բնորոշ դարձավ այն, որ այս բոլորը ընդունեց մինչ այդ չտեսնված չափեր և քաղաքը կերպարանափոխվեց, բարելավվեց նրա սանիտարական դրությունը։

Բարեկարգման աշխատանքները հաջողությամբ տարվում էին և Հայաստանի ինդուստրիալ-կուլտուրական երկրորդ կենտրոն՝ Լենինականում, ինչպես նաև Կիրովականում։ Շատ բան արվեց Ալավերդու, Էջմիածնի, Ստեփանավանի, Նոր Բայազետի, Ղափանի և այլ քաղաքների բարեկարգման համար։

Արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ տեղի էր ունենում ռեսպուբլիկայի քաղաքային բնակչության աճը։ Եթե նախապատերազմյան 1939 թ. մարդահամարի տվյալներով

Հայաստանի մայրաքաղաք Երևանը ուներ 200 հազար բնակիչ, ապա առ 1-ը հունվարի 1951 թ. այդ թիվը հասավ 305 հազարի։ Լենինականի բնակչության թիվը 68 հազարից հասավ 86 հազարի, իսկ Կիրովականինը՝ 18 հազարից 31 հազարի։ Ստեղծվեցին արդյունաբերական նոր կենտրոններ և ավաններ, ինչպես՝ Թումանյան, Սպիտակ, Ախթալա, Քաջարան, Դաստակերտ, Լուսավան, Աուքել։ Ռեսպուբլիկայի քաղաքների և քաղաքատիպ վայրերի բնակչությունը առ 1-ը հունվարի 1951 թ. կազմում էր 563 հազար մարդ, այսինքն բնակչության, որը նույնպես աճեց, 40,62%։ Հայկական ՍՍՌ քաղաքային բնակչության բուռն զարգացումը Սովետական իշխանության տարիներին և մասնավորապես չորրորդ հնգամյակի տարիներին բնորոշելու համար նշենք, որ 1913 թ. Հայաստանում (այժմյան սահմաններում) այն ժամանակվա 1 միլիոն բնակչությունից միայն 10,4% էր ապրում քաղաքներում և քաղաքատիպ վայրերում, 1926 թ. մարդահամարի տվյալներով՝ 19%, իսկ 1939 թ. մարդահամարի տվյալներով՝ 28,6%[1]։

Հայաստանի քաղաքներում և գյուղերում ծավալվեց անհատական բնակարանային շինարարությունը։ Միայն 1949—1950 թթ. բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների կողմից քաղաքներում և շրջանային կենտրոններում կառուցվեցին մինչև 6 հազար, իսկ գյուղական վայրերում մինչև 5 հազար անհատական տներ։ Բացի դրանից, 1949 թ. քաղաքներում և շրջանային կենտրոններում կառուցվեցին և աշխատավորության օգտագործման հանձնվեցին 122 հազար քառ. մետր, իսկ 1950 թ.՝ 107 հազար քառ. մետր պետական բնակելի ֆոնդ։ Հնգամյակի տարիներին պետական ձեռնարկությունների, հիմնարկների, տեղական Սովետների, ինչպես նաև պետական վարկի միջոցով քաղաքների ու բանվորական ավանների բնակչության կողմից կառուցվեցին ընդամենը 1

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ սոցիալիստական շինարարությունը (1920—1940) վիճակագրական ժողովածու, Երևան, 1940, ռուսերեն, էջ 9։ Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, վիճակագրական ժողովածու, էջ 14 և Հայկական ՍՍՌ վիճակագրական վարչության տվյալները։

միլիոն 55 հազար քառ. մետր ընդհանուր տարածությամբ բնակելի շենքեր։ Բացի դրանից, գյուղական վայրերում կառուցվեց 15.000 բնակելի տուն[1]։ Սակայն բնակարանային շինարարության այդ տեմպերը դեռևս անբավարար էին աշխատավորության, նամանավանդ գյուղական բնակչության կարիքները բավարարելու համար։ Խնդիրը կայանում էր նրանում, որպեսզի ամբողջ ռեսպուբլիկայում ավելի ծավալել բնակարանային և կոմունալ շինարարությունը։

Մեծ ուշադրություն էր դարձվում աշխատավորության կուլտուր-կենցաղային սպասարկման գործը բարելավելու վրա։ Չորրորդ հնգամյակի ընթացքում համարյա թե շրջանային բոլոր կենտրոններում անցկացվեցին նոր ջրմուղներ, որոնք կարգավորեցին բնակչության ջրամատակարարումը։ Շրջանային բոլոր կենտրոններում սկսեցին գործել էլեկտրակայաններ, ռադիոհանգույցներ, հյուրանոցներ, բարեկարգված բաղնիքներ։ Շատ գյուղերում կառուցվեցին աղբյուրներ, բաղնիքներ, ակումբներ, դրվեցին մշտական կինոսարքավորումներ, ընդարձակվեցին կամ նոր անցկացվեցին ռադիոցանց, էլեկտրալուսավորում և այլն։

Սակայն գյուղի բարեկարգման աշխատանքները դեռևս լրիվ չէին ծավալվում և դեռ շատ հետ էին մնում գյուղացիության պահանջներից։ Պետք էր ավելի և ավելի շատ լուսավոր ու հարմար տներ կառուցել, անցկացնել փողոցներ, գյուղերը կանաչապատել, ապահովել ամեն մի գյուղ բաղնիքով, էլեկտրալուսավորությամբ և այլն, և այդպիսով բարձրացնել ամբողջ գյուղացիության կյանքի կուլտուր-կենցաղային մակարդակը։

Բարելավվեց նաև հեռախոսային կապը քաղաքներում և գյուղական վայրերում, ռեսպուբլիկայի կենտրոնի և շրջանների միջև, շրջանային կենտրոնների կապը գյուղերի հետ։ Ինչպես վերևում արդեն նշվել է, Երևանում հեռախոսային

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 106—107։

կայը ավտոմատացվեց և խոշոր չափով ընդարձակվեց, մի բան, որ մեծ հարմարություն տվեց քաղաքի բնակչությանը։ Չորրորդ հնգամյակի տարիներին անհամեմատ աճեց հայրենական առաջնակարգ ռադիոընդունիչների արտադրությունը, որոնք տարածվեցին և մտան աշխատավորության կենցաղի մեջ։ Բարելավվեց քաղաքային տրանսպորտի աշխատանքը Երևանում, Լենինականում, Կիրովականում, ինչպես նաև ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքը, որը միացնում էր կենտրոնը շրջանների հետ։ Տրոլեյբուսային հաղորդակցությունը, դյուրեկեցիկ, նոր ավտոբուսները, մարդատար և բեռնատար տաքսիները, ռադիոն, հեռախոսը և այլն՝ մեծ հարմարություն էին բնակչության համար և վկայում էին նրա կուլտուր-կենցաղային մակարդակի զգալի աճի մասին։

Բացի ռեալ աշխատավարձի բարձրացումից և եկամուտների ավելացումից, Սովետական Միության աշխատավորությունը օգտվել և օգտվում է շատ ուրիշ նյութական բարիքներից։ Հայաստանում 1950 թ. սոցիալ-կուլտուրական միջոցառումների՝ ժողովրդական լուսավորության, առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի, սոցիալական ապահովության կարիքների համար ծախսվել է 708 միլիոն ռուբլի՝ 1940 թ. 318 միլիոն ռուբլու փոխարեն, որը կազմեց տարվա ողջ պետական բյուջեի ծախսերի 63,5%։ Չորրորդ հնգամյակի ընթացքում Հայաստանի պետական բյուջեի ծախսերի մասից, որը կազմել է 5 միլիարդ 357 միլիոն ռուբլի, սոցիալ-կուլտուրական միջոցառումների վրա ծախսվել է 3 միլիարդ 84 միլիոն ռուբլի, այսինքն 57% ավելին։ Այս գումարը համարյա 2 անգամ գերազանցում է Սովետական իշխանության ծախսերը ռեսպուբլիկայի աշխատավորության սոցիալ-կուլտուրական կարիքների վրա սկսած 1921 թ. մինչև 1941 թ.։

Չորրորդ հնգամյակի, ինչպես և նախորդ տարիներին, բնակչությունը պետության հաշվին ստացել է նպաստներ և վճարումներ բանվորների ու ծառայողների սոցիալական ապահովության գծով, կենսաթոշակներ, ձրիաբար և արտոնյալ գներով ուղեգրեր սանատորիաների, հանգստյան տների և

մանկական հիմնարկների համար, նպաստներ՝ բազմազավակ և միայնակ մայրերին, ձրի բժշկական օգնություն, ձրի ուսուցում և աշխատավորների որակավորման բարձրացում՝ պետության հաշվին, թոշակներ սովորողներին և մի շարք այլ վճարումներ ու արտոնություններ։ Բոլոր բանվորներն ու ծառայողներն ամեն տարի արձակուրդներ են ստացել պահպանելով աշխատավարձը։ Ռեսպուբլիկայի աշխատավորության կյանքի մակարդակի բարձրացման մասին է վկայակոչում նաև Պետական աշխատանքային խնայողական դրամարկղերում բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների կուտակումների անընդհատ ավելացումը։ Այսպես, օրինակ, եթե նախապատերազմյան 1940 թ. ավանդների ամբողջ գումարը կազմել է 31 միլիոն ռուբլի, այդ թվում գյուղական վայրերում 8 միլիոն ռուբլի, ապա 1950 թ. նա ավելացավ 2,8 անգամ, կազմելով 87 միլիոն ռուբլի, այդ թվում գյուղական վայրերում 9 միլիոն ռուբլի[1]։

Չորրորդ հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում անընդհատ բարելավվում էր առողջապահության գործը։ Հիվանդանոցների, կլինիկաների, ծննդատների, ամբուլատորիաների և պոլիկլինիկաների ցանցը զգալի չափով ընդարձակվեց։ Մասսայական միջոցառումները հիվանդությունների պրոֆիլակտիկայի (կանխման) գծով, առանձնապես առաջներում բնակչության համար մեծ չարիք հանդիսացող ջերմախտի դեմ պայքարը՝ ճահիճների չորացման միջոցով, և այլն, անհամեմատ նվազեցրին հիվանդությունները բնակչության մեջ։ 1947—1948 թթ. գյուղական բժշկական տեղամասերը ստացան բավարար չափով ժամանակակից բժշկական սարքավորում, բուժամիջոց և դեղորայք։ Նոր պրեպարատները, մաս-

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 177—178, 171, 180. Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951։

նավորապես մեր արդյունաբերության կողմից արդեն թողարկվող հակաբիոտիկները՝ պենիցիլին, ստրեպտոմիցին և այլն, հզոր միջոց հանդիսացան հիվանդությունների դեմ պայքարելու և աշխատավորների առողջությունը պահպանելու գործում։

Սակայն առողջապահության օրգանների աշխատանքներում խոշոր թերություն էր հանդիսանում անբավարար ուշադրությունը դեպի շրջանային կենտրոնների ու գյուղական բնակչության աճած պահանջմունքները։ Բժշկական կադրերը անհամաչափ էին բաշխված, այսպես, օրինակ, 1948 թ. ռեսպուբլիկայում բժիշկների 1732 ընդհանուր թվից Երևանում աշխատում էին 1140-ը, իսկ շրջանային կենտրոններում և գյուղերում՝ 255 բժիշկ[1]։ Այսպիսով, գյուղական բնակչությունը հաճախ ստիպված էր լինում բժշկական օգնության դիմել Երևան կամ Լենինական՝ տեղերում բժիշկների բացակայության պատճառով։ Առողջապահության օրգանների աշխատանքներում այս խոշոր թերությունները վերացնելու համար 1949—1950 թթ. ընթացքում 300-ից ավելի բժիշկներ քաղաքներից և, գլխավորապես, Երևանից ուղարկվեցին գյուղական վայրերը մշտական աշխատանքի, միաժամանակ գյուղում ընդարձակվեց բուժական հիմնարկների՝ հիվանդանոցների, պոլիկլինիկաների, ամբուլատորիաների, ծննդատների, մանկական և կանացի կոնսուլտացիաների ցանցը։ Շարունակվում էր առողջապահության օրգանների աշխատանքներում տեղ գտած թերությունների վերացումը, առանձնապես ռեսպուբլիկայի շրջաններում։ Բնակչության բժշկական և բուժական, սանիտարական-պրոֆիլակտիկ (կանխիչ) սպասարկումը, ինչպես և կուրորտային սպասարկումը, ամբողջությամբ վերցրած, չորրորդ հնգամյակի տարիներին անհամեմատ բարելավվեց։ Հիվանդանոցային մահճակալների թիվը քաղաքներում և գյուղական վայրերում 1950 թ., 1940 թ. համեմատությամբ, ավելացավ 58%, միջին բուժանձնակազմը հա-

[1] Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 89։

մարզա կրկնապատկվեց, հասնելով 4556 մարդու (1913 թ. հավասար էր միայն 153-ի), իսկ բժիշկների թիվը (ներառյալ ատամնաբույժներին) ավելացավ 2,5 անգամ, հասնելով 2575-ի (1913 թ. հավասար էր միայն 73-ի)։ Եթե 1945 թ. ռեսպուբլիկայում կային 5 սանատորիա՝ 884 և 7 հանգստյան տուն՝ 369 մահճակալներով, ապա հնգամյակի վերջին՝ 1950 թ. առկա էին 13 սանատորիա՝ 2107 և 10 հանգստյան տուն՝ 1002 մահճակալներով.

Այսպիսով, չորրորդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՌ-ում, ինչպես և ամբողջ Սովետական Միության մեջ, վերացվում էին պատերազմի վնասները և հետքերը, անշեղորեն բարձրանում էր սովետական մարդկանց նյութական բարեկեցությունը, բարելավվում էին աշխատավորության կյանքի պայմանները։ Այս բոլորը իր արտահայտությունն էր գտնում նաև ռեսպուբլիկայի ազգաբնակչության աճի մեջ։ Բնական աճը Հայաստանում 1950 թ. կազմում էր 23,1՝ 1000 մարդուն, իսկ ընդհանուր առմամբ Սովետական Հայաստանի բնակչության թիվը, չնայած պատերազմի ընթացքում տված կորուստների, առ 1-ը հունվարի 1951 թ. արդեն գերազանցում էր նախապատերազմյան՝ 1939 թ. 1 միլիոն 281,6 հազարի մակարդակը և կազմեց 1 միլիոն 364,4 հազար մարդ[1]։

Այս բոլորը պերճախոս կերպով վկայակոչում է ռեսպուբլիկայի աշխատավորության կենսամակարդակի զգալի բարձրացման մասին։ Այդ պրոցեսի հիմքում ընկած է արտադրության սոցիալիստական եղանակը, որը բացառում է գործազրկություն և մասսաների աղքատացում և ՍՍՌ Միության

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին. «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 165, 167, 168. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 245 և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները։

քաղաքացիներին ապահովում է՝ նրանց ընդունակություններին համաձայն աշխատելու և ծախսված աշխատանքի քանակի ու որակի համապատասխան վարձատրություն ստանալու հնարավորություն։ Ամեն մի աշխատավոր Սովետական պետության պայմաններում ունի լրիվ հնարավորություն բարելավելու իր նյութական դրությունը՝ աշխատել ավելի լավ և բարձրացնել իր որակավորումը ու դրա հետ մեկտեղ իր կենսական մակարդակը։ Սովետական պետության մեջ ջերմ հոգատարություն է ցուցաբերվում սովետական ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման գործին։ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը անդադար հոգ են տանում ժողովրդի բարիքների համար։

***

Կոմունիզմի լրիվ հաղթանակի համար անհրաժեշտ է հասնել գիտության և տեխնիկայի հսկայական զարգացման և դրա հիման վրա արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, կապի նույնպիսի զարգացմանը։ Անհրաժեշտ է հասնել կրթության, գրականության, արվեստի, սովետական ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի էլ ավելի զարգացման ու ծաղկման, հասնել այն բանին, որ հասարակության բոլոր անդամների համար աշխատանքը դառնա առաջնակարգ կենսական պահանջմունք և վերացնել մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը։ Կոմունիստական պարտիայի պայքարը՝ մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկները լրիվ կերպով արմատախիլ անելու և ժողովրդին կոմունիզմի ոգով դաստիարակելու գործում, այն մեծ նյութական միջոցները և հնարավորությունները, որոնք տրամադրվում են Սովետական պետության կողմից, ապահովեցին չորրորդ հնգամյակի տարիներին գիտության, տեխնիկայի, կուլտուրայի հետագա զարգացումը մեր երկ-

րում։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգաց-
ման, աշխատավորության նյութական բարեկեցության աճի
հետ մեկտեղ բարձրանում էր նրա կուլտուր-կրթական և տեխ-
նիկական մակարդակը։

Գիտության ու տեխնիկայի զարգացումը սերտորեն շաղ-
կապված է ժողովրդական տնտեսության հետ, նրանց նշանա-
կությունը սովետական ժողովրդի կյանքում անընդհատ մե-
ծանում է։ Աշխատանքի մեքենայացումը, արտադրության ա-
ճը բանվոր դասակարգի և գյուղացիության կուլտուր-տեխ-
նիկական և նյութական-կենսական մակարդակի բարձրացման
կարևորագույն պայմանն է մեր երկրում։ Այդ պատճառով էլ
Սովետական պետության մեջ աշխատավորությունը ունեցել է
և ունի մասսայական մասնակցություն տեխնիկական ուսուց-
ման, արտադրության բարելավման և աշխատանքի արտա-
դրողականության բարձրացման գործում։ Սովետական Միու-
թյան հիմնական տնտեսական խնդիրը լուծելու գործում՝
տնտեսապես, այսինքն՝ բնակչության մեկ շնչին հասնող ար-
տադրության քանակով, գլխավոր կապիտալիստական երկըր-
ներին հասնելու և նրանցից անցնելու գործում տեխնիկայի և
արտադրության այդ առաջադիմությունը ունեցել է և ունի
վճռական նշանակություն։ «Կոմունիզմը կամավոր, գիտակից,
միավորված, առաջավոր տեխնիկա օգտագործող բանվորների
աշխատանքի բարձրագույն արտադրողականությունն է, կա-
պիտալիստականի համեմատությամբ»[1]։

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և
Սովետական կառավարությունը ցուցաբերել և ցուցաբերում
են հոգատարություն գիտության և տեխնիկայի աշխատող-
ների նկատմամբ, ստեղծել և ստեղծում են բոլոր պայման-
ները գիտության և տեխնիկայի արագ զարգացման համար։
Չորրորդ հնգամյակի տարիներին սովետական գիտնականնե-
րը մշակեցին ատոմային էներգիայի օգտագործման հետ
կապված գիտական հարցերը։ Գիտական այդ մեծ հայտնա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 524։

գործումը և նրա պրակտիկ կիրառումը խաղաղ նպատակներով ժողովրդական տնտեսության մեջ, որը գլխավորն է Սովետական պետության համար, տեխնիկական հետագա առաջադիմության և արտադրական ուժերի չտեսնված զարգացման հզոր միջոց է։ Գիտության նվաճումների մշտական ներդրումը արտադրության մեջ, աշխատանքի մեքենայացման ծավալումը, նորագույն տեխնիկայի և սոցիալիստական մրցության առաջավորների փորձի լրիվ օգտագործումը ամրապնդում են Սովետական պետության ուժն ու հզորությունը, բարձրացնում են աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակը, նրանց նյութական բարեկեցությունը և արագացնում են սովետական ժողովրդի անցումը սոցիալիզմից կոմունիզմին։

Հայկական ՍՍՌ-ում գիտության և տեխնիկայի աշխատողները, սերտորեն համագործակցելով սովետական գիտության գիտահետազոտական կենտրոնների և գլխավորապես ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հետ, բեղմնավոր կերպով աշխատում էին չորրորդ հնգամյակի տարիներին և իրենց լուման մտցնում կոմունիստական շինարարության գործում։

Ռեսպուբլիկայի գիտահետազոտական հիմնարկները տարեց-տարի բարելավում էին իրենց աշխատանքը, նրանց թիվը ավելանում էր։ 1950 թ. Հայաստանում արդեն կար 60 գիտահետազոտական ինստիտուտ, ինքնուրույն լաբորատորիա և սեկտոր (1940 թ. 36)։ Ռեսպուբլիկան ուներ մոտ 2000 գիտական աշխատող, որոնցից 112 գիտության դոկտորներ էին, իսկ 658՝ թեկնածուներ։ Այդ թվից 1170 աշխատում էին բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ 778՝ գիտահետազոտական հիմնարկներում։ Աճում էին գիտական նոր կադրերը։ Այսպես, օրինակ, եթե 1940 թ. ռեսպուբլիկայում ասպիրանտների քանակը 142 էր, ապա 1950 թ.՝ արդեն 297. Եթե 1940 թ. ավարտել է 6 ասպիրանտ, ապա 1950 թ.՝ 57, այսինքն՝ նախորդ թիվը համարյա տասնապատկվել է։ Հայկական ՍՍՌ գիտական մտքի կենտրոնը՝ Հայկական ՍՍՌ

Գիտությունների ակադեմիան, որը հիմնադրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի բազայի վրա դեռևս պատերազմի ծանր տարիներին՝ 1943 թ. նոյեմբերին, 1950 թ. ընդգրկում էր ռեսպուբլիկայի 33 գիտահետազոտական հիմնարկ։ 1940 թ. համեմատությամբ, չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում գիտահետազոտական հիմնարկների թիվը ավելացավ ավելի քան 1,5, իսկ գիտական աշխատողների քանակը՝ 2,5 անգամ[1]։ Սովետական Հայաստանի գիտնականները, որոնք կազմում են Սովետական Միության մեջ գիտության աշխատողների առաջավոր ջոկատներից մեկը, պայքարում էին պատվով կատարելու առաջնահերթ խնդիրը՝ հասնելու և զգալի չափով գերազանցելու մեր սահմանից դուրս գիտության նվաճումները։

Գիտությունների ակադեմիայի մի շարք գիտահետազոտական հիմնարկներ կատարեցին բեղմնավոր աշխատանք գիտական պրոբլեմների մշակման գործում։ Այսպես, օրինակ, Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանը Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Համբարձումյանի գլխավորությամբ տվեց աչքի ընկնող աշխատանքներ աստրոֆիզիկայի բնագավառում։ Վ. Հ. Համբարձումյանը իր խոշոր գիտական հայտնագործությունների համար 1946 և 1950 թթ. կրկնակի անգամ պարգևատրվեց Ստալինյան մրցանակով։ Ֆիզիկայի ինստիտուտը կարևոր գիտական աշխատանքներ էր կատարում՝ կոսմիկական ճառագայթների ուսումնասիրման բնագավառում ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանովի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանյանի ղեկավարությամբ, որոնք նույնպես պարգևատրվեցին Ստալինյան մրցանակով։ Օգտակար աշխատանք էր տանում Ակադեմիայի Ջրա-էներգետիկ ինստիտուտը ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ի. Վ.

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 155—156, ՍՍՌՄ կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, 1956, էջ 252—253։

Նիկողայոսի ղեկավարությամբ։ Քիմիական ինստիտուտը, որի դիրեկտորն էր Ստալինյան մրցանակի լաուրեատ Ա. Մ. Գասպարյանը, Մ. Գ. Մանվելյանի կողմից մշակվող տեխնոլոգիական պրոցեսի համաձայն լուծում էր նեֆելինային սիենիտների կարևորագույն պրոբլեմը, որը մեծ պրակտիկ նշանակություն ունի ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման համար։ Ռեսպուբլիկայում տարվող շինարարական աշխատանքներին պրակտիկ օգնություն էր ցույց տալիս Ակադեմիայի Շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտը։ Սելեկցիայի և ցորենի, խաղողի ու այլ կուլտուրաների նոր տեսակների աճեցումով էր զբաղվում Ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտը։ Լեզվի բնագավառում աչքի ընկավ Ակադեմիայի իսկական անդամ Ս. Ա. Մալխասյանցը՝ երկարամյա քրտնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող Հայերեն լեզվի քառահատոր բացատրական բառարանով, որի համար նրան նույնպես շնորհվեց Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչում։

Գիտահետազոտական հիմնարկների աշխատանքները բարելավելու գործում մեծ նշանակություն ունեցան Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի որոշումները իդեոլոգիական հարցերի նկատմամբ և Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի որոշումը Հայաստանի պարտիական կազմակերպություններում իդեոլոգիական աշխատանքը ուժեղացնելու մասին։ Ելնելով այդ որոշումներից, Գիտությունների ակադեմիայում վերանայվեցին Պատմության, Գրականության, Լեզվի ինստիտուտների, Փիլիսոփայության, Տնտեսագիտության սեկտորների գիտահետազոտական աշխատանքների պլանները, սկսվեց կտրուկ բեկում սովետական հասարակության՝ մեր սովետական իրականության պատմության հետ կապված հարցերի ուսումնասիրման բնագավառում։ Թափ առավ առաջավոր միչուրինյան գյուղատնտեսական գիտության ներդրման աշխատանքները Հայկական ՍՍՌ-ում, ինչպես և հետազոտական ու պրակտիկ աշխատանքների հետագա բարելավումը բիոլոգիական և բժշկական գիտությունների բնագավառում ակա-

դեմքերը Ի. Պ. Պավլովի կլասիկ ժառանգության հիման վրա։ Հայաստանի գիտական աշխատողների կոլեկտիվը իր ջանքերն ուղղեց ստեղծելու արժեքավոր գիտական աշխատություններ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը Սովետական երկրում և կօգնեին լուծելու կոմունիստական շինարարության պրակտիկ խնդիրները։

Չորրորդ հնգամյակի տարիները բնորոշ են և բազմազգ Սովետական պետության բոլոր ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հետագա ծաղկումով։ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարությունը սովետական ժողովրդի բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման վերաբերյալ մեծ կերպով արտահայտվեց հայ ժողովրդի օրինակով՝ նրա կրթության գործի, նրա գրականության, արվեստի, հայ ժողովրդի ամբողջ կուլտուրայի անշեղ զարգացման մեջ։

Ժողովրդական կրթության բնագավառում ձեռք բերվեցին զգալի հաջողություններ։ Նախ և առաջ ընդգծենք, որ բյուջետային հատկացումները ժողովրդական լուսավորության գծով Հայաստանում, ինչպես և բոլոր միութենական ռեսպուբլիկաներում անընդհատ աճում էին։ Այսպես, եթե 1940 թ. ռեսպուբլիկայում այդ կարգի ծախսերը կազմել են 238 միլիոն ռուբլի, իսկ 1946 թ.՝ 360 միլիոն, ապա 1950 թ.՝ արդեն կազմեցին 497 միլիոն ռուբլի։ Միջնակարգ դպրոցների թիվը ռեսպուբլիկայում 1950 թ. հասավ 1160-ի, իսկ սովորողների թիվը՝ մինչև 302 հազարի, ընդ որում 5—10 դասարաններում սովորողների թիվը՝ 117 հազարի։ Հայկական ՍՍՌ քաղաքներում լրիվ կերպով իրականացվեց պարտադիր 7-ամյա ուսուցումը։ 1950/51 ուս. տարում ռեսպուբլիկայում գործում էին 32 դպրոց բանվորական երիտասարդության համար, մոտ 5 հազար սովորողներով (1945/46 ուս. տարում կար այդ կարգի 11 դպրոց, 1300 սովորողներով), 189 գյուղական երիտասարդական դպրոց, 10600 սովորողներով (1945/46 ուս. տարում՝ 100 դպրոց, 6100 սովորողներով) և 24 7-ամյա ու 10-



13—1568

*ամյա դպրոց (ներառյալ հեռակա) մեծահասակների համար, որոնք ընդգրկում էին 1800 սովորող*[1]*։*

*Հնգամյակի տարիներին բարելավվեց և ամրապնդվեց դպրոցների ուսուցչական կազմը, Բարձրացավ ուսուցիչների որակը, ավելացավ բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների թիվը, շատերը ստացան բարձրագույն կրթություն հեռակա կարգով։ 1950/51 ուս. տարում ռեսպուբլիկայում արդեն աշխատում էին 15 հազարից ավելի ուսուցիչ (ներառյալ համատեղողները)։ Այս թիվը ինքնըստինքյան պերճախոս է մեր ռեսպուբլիկայի ազգաբնակչության համար (որը, ինչպես նշեցինք, 1950 թ. վերջին կազմում էր 1 միլիոն 386,4 հազար), իսկ եթե այդ թիվը համեմատենք նախասովետական 1914/15 ուս. տարում Հայաստանի դպրոցներում աշխատող ուսուցիչների ընդհանուր թվի հետ (1146), ապա աճը կստանանք 13,2 անգամ։ Նույն կարգի աճը, համեմատած նախապատերազմյան 1940/41 ուս. տարվա հետ, կազմում է 35,3%, իսկ չորրորդ հնգամյակի սկզբի՝ 1945/46 ուս. տարվա հետ, տալիս է 28,2%*[2]*։*

*Բարելավվեց նաև դպրոցները դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով ապահովելու գործը։ Այսպես, օրինակ, Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչությունը միջնակարգ դպրոցների համար 1948 թ. հրատարակեց 54 անուն դասագիրք, 1945 թ. հրատարակված 24 անվան փոխարեն, և բացի այդ, միութենական մյուս ռեսպուբլիկաներից ստացվեց մոտ 100 անուն դասագիրք և 1949/50 ուսումնական տարում հրատարակվեց արդեն 74 անուն դասագիրք 2 միլիոն 400 հազար ընդհանուր տպաքանակով*[3]*։*

---

[1] *Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 149, 152. ՍՍՌՄ կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 70—71, 71, 116, 118, 120։*

[2] *Տե՛ս ՍՍՌՄ կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 110—111։*

[3] *Տե՛ս Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 69—70. Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, էջ 59։*

Տեխնիկումների թիվը 1950 թ. կազմեց 44, իսկ սովորողների ընդհանուր թիվը՝ 10300 1940 թ. 8900 հոգու դիմաց։ Սովորողների թիվը տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներում, տեխնիկումներում ու այլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում չորրորդ հնգամյակի տարիներին ավելացավ 50 հազար մարդով և 1950 թ. հասավ 312 հազար մարդու[1]։

Դպրոցների լայն շինարարության շնորհիվ, հիմնականում վերացվեցին երեքհերթյա պարապմունքները։ Գյուղական վայրերը լրիվ կերպով ապահովվեցին յոթնամյա, իսկ քաղաքները՝ լրիվ միջնակարգ դպրոցների ցանցով։ Դրանով իսկ ուսումնական բազա ստեղծվեց ընդհանուր պարտադիր յոթնամյա ուսուցման համար՝ գյուղական վայրերում և տասնամյա ուսուցման համար՝ քաղաքներում։ Այդպիսով հնգամյա պլանի առաջադրանքը ժողովրդական կրթության բնագավառում գերակատարվեց։

Բարելավվեց նաև ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքը։ Դեռևս պատերազմի տարիներին վերականգնվեցին կամ նոր կազմակերպվեցին Ֆիզիկական կուլտուրայի, Գեղարվեստա-թատերական, Ռուսական մանկավարժական (Ուսուցչական ինստիտուտի բազայի վրա), Հեռակա մանկավարժական (Երևանում) և Լենինականի մանկավարժական ինստիտուտները։ Ընդամենը 1945 թ., ինչպես և չորրորդ հնգամյակի տարիներին, կային 15 բուհ (13 ստացիոնար և 2 հեռակա) 1940 թ. 9-ի փոխարեն։ Հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ չկազմակերպվեցին, քանի որ դրա կարիքը չէր զգացվում։

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը «Հայկական ՍՍՌ 1946—1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին», «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951 Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսություն, Վիճակագրական ժողովածու, էջ 149։

բուհերի աճը հիմնականում գնում էր ներքին ընդլայնման և ուսուցման գործը բարելավելու ուղղությամբ։ Բուհերի ընդունելությունը և համապատասխանաբար ավարտողների թիվը ավելացավ. պատերազմից հետո բուհերի ամբիոնները, լաբորատորիաները, կաբինետները կահավորվեցին ուսումնական նոր սարքավորումներով, ապահովվեցին ձեռնարկներով և այլն. դասախոսական աշխատանքի մեջ ընդգրկվեցին գիտական աշխատանքի փորձ ունեցող շատ գիտնականներ. մի շարք ֆակուլտետների գծով ուսուցման ժամկետները երկարացվեցին։ Այս բոլորը բարձրացրեց դասավանդման որակը և նպաստեց ուսանողության կողմից գիտելիքները ավելի լավ յուրացնելուն։

1950 թ. Սովետական Հայաստանի ստացիոնար բուհերում սովորում էին մոտ 10,5 հազար մարդ (1940 թ. 7,426 մարդու դիմաց), իսկ հեռակա բուհերում՝ մոտ 4,5 հազար մարդ, այսինքն ավելի շատ, քան նախատեսված էր հնգամյա պլանով։ Ընդամենը ռեսպուբլիկայի բուհերում 1950 թ. սովորում էին 15,1 հազար ուսանող-ուսանողուհի, 1940 թ. 11,1-ի դիմաց։ Չորրորդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը ստացավ 6400 մասնագետ բարձրագույն կրթությամբ և 8400՝ միջին տեխնիկական և հատուկ պատրաստականությամբ։ 1950 թ. (առ 1-ը հուլիսի) ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների թիվը կազմում էր 16200 (առ 1-ը հունվարի 1941 թ.՝ 7300-ի և առ 1-ը հունվարի 1946 թ. 9300-ի դիմաց), որից 2800 ինժեներ (առ 1-ը հունվարի 1941 թ.՝ 1400-ի և առ 1-ը հունվարի 1946 թ.՝ 1600-ի դիմաց), 2000 գյուղատնտեսության մասնագետ (առ 1-ը հունվարի 1941 թ.՝ 1000-ի և առ 1-ը հունվարի 1946 թ.՝ 1200-ի դիմաց) և 2300 բժիշկ (առ 1-ը հունվարի 1941 թ.՝ 1000-ի և առ 1-ը հունվարի 1946 թ.՝ 1200-ի դիմաց)[1]։

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—

Սակայն, այս հաջողությունների հետ մեկտեղ կային խոշոր թերություններ ժողովրդական կրթության բնագավառում և տեխնիկումների ու բուհերի աշխատանքներում, որոնցից գլխավորը պարտադիր կրթության բացակայությունն էր։ Այդ առանձնապես զգալի էր գյուղական վայրերում, որտեղ ֆիզիկա-մաթեմատիկական գիտելիքներ, հատկապես ռուսերեն լեզուներ դասավանդող շատ ուսուցիչների որակը ցածր էր։ Նույն բանը նկատվում էր նաև քաղաքային դպրոցներում։ Եվ պատահական չէր, որ նույնիսկ 1950 թ. հանրակրթական դպրոցներում երկրորդ տարեցիների թիվը կազմեց 39 հազար աշակերտ, այսինքն՝ աշակերտության 12,5%։ Դեռևս նկատվում էր ուսուցչական կադրերի մեծ հոսունություն, դպրոցական աշխատանքի գլխավոր մասը լայն կերպով չէր ուսումնասիրվում և կիրառվում ողջ հանրապետությունում, քիչ էր ուշադրություն դարձվում ուսանողության ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը. դեռ թույլ էր գիտակցական գիտելիքների աշակերտների և ուսանողների մոտ։ Անբավարար էր դրված ֆիզիկա-մաթեմատիկական և, հատկապես, հասարակական գիտությունների դասավանդումը Պետական համալսարանում և մյուս բուհերում. առկա էին դեռ թալմուդականություն և տառակերություն հասարակական գիտությունների ուսումնասիրման գործում։

1948 թ. Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ընդունեց կարևոր որոշում դպրոցներում ռուսերեն լեզվի դասավանդումը և դասատուների կազմը բարելավելու մասին։ Դպրոցների, տեխնիկումների, բուհերի առաջ խնդիր էր դրված վերացնելու աշխատանքներում տեղ գտած թերությունները, բարելավելու ուսուցչական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործը, բարձրացնելու

---

1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951. Հայկական ՍՍՌ սոցիալիստական շինարարությունը (1920—1940 թթ.), էջ 113. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը. Վիճակագրական ժողովածու, էջ 149, 154, 119։

ուսումնա-դաստիարակչական աշխատանքի և դասախոսությունների գաղափարական-տեսական մակարդակը և բուհերում աշխատելու համար ներգրավել գիտության լավագույն ներկայացուցիչներին։ Այս գծով հնգամյակի վերջին նկատվեց բարելավում։ Բուհերում որոշ չափով բարձրացավ դասախոսությունների, սեմինար ու պրակտիկ պարապմունքների մակարդակը. Երևանի Պետական համալսարանում բարձրացավ ուսումնական աշխատանքի որակը, ամբիոնները ապահովվեցին որակյալ պրոֆեսորա-դասախոսական կադրերով, Համալսարանն սկսեց ավելի պատրաստված մասնագետներ բաց թողնել։

Չորրորդ հնգամյակում թափ էր ստանում մասսայական կուլտուր-լուսավորական աշխատանքը։ Եթե 1940 թ. ռեսպուբլիկայում կար 11 թանգարան, ապա 1950 թ. այդ թիվը կազմեց արդեն 18։ Ընդարձակվում էր ակումբների, գրադարանների, ընթերցարանների ցանցը։ 1946—1950 թթ. ընթացքում գյուղական ակումբների թիվը հասավ մինչև 1022, գյուղական գրադարանների և ընթերցարաններինը՝ մինչև 1232, շրջանային բոլոր կենտրոններն արդեն ունեին կուլտուրայի տներ՝ կինոսարքավորումներով։ Ընդամենը 1950 թ. կինոսարքավորումների թիվը ռեսպուբլիկայում կազմում էր 374 (1940 թ. 168-ի և 1945 թ. 138-ի դիմաց), որոնցից 102 ավտոշրջիկ կինոսարքավորումներ։ Եթե 1940 թ. Հայկական ՍՍՌ-ում կար 908 մասսայական գրադարան, որն ընդգրկում էր 711 հազար կտոր գրքի ֆոնդ, ապա 1950 թ.՝ արդեն 1467, 2 միլիոն 239 հազար կտոր գրքի ֆոնդով. համապատասխանաբար, ակումբ՝ 897 և 1163։ 1946 թ. ռադիոֆիկացված էին 275 գյուղ, իսկ 1949 թ.՝ արդեն 381. 1949 թ. ռեսպուբլիկայում կար 44 հազար ռադիոկետ, որից 25 հազարը՝ գյուղերում. 1940 թ. համեմատությամբ, 1950 թ. ռադիոկետերի թիվը, ինչպես վերևում նշվեց, ավելացավ մոտ 75% և հասավ 66 հազարի[1]։

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—

Սովետական Հայաստանի քաղաքներում և շրջաններում 1950 թ. գործում էին 16 թատրոն[1]։ Այդ թվում էր Ամո Խարազյանի անվան ռեսպուբլիկական շրջիկ թատրոնը, որը ներկայացումներ էր տալիս ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում։ Բազմաթիվ ինքնագործ խմբակները, որոնց մեջ ներգրավված էր գյուղական երիտասարդությունը, սիստեմատիկորեն կազմակերպում էին արվեստի ինքնագործ շրջանային և ռեսպուբլիկական ստուգատեսներ։ Երևանում ժողովրդական ստեղծագործության տունը ղեկավարում էր ինքնագործունեության աշխատանքները ռեսպուբլիկայում։

Գիտական և քաղաքական գիտելիքների տարածման Հայկական ընկերությունը և Կուլտուր-լուսավորական հիմնարկների կոմիտեի լեկցիոն բյուրոն, չնայած վերը նշված լուրջ թերությունները լեկտորական աշխատանքի բնագավառում վերացվում էին և նրանց, գիտա-լուսավորչական աշխատանք էին տանում ռեսպուբլիկայի աշխատավորության լայն մասսաների մեջ. ծանոթացնում էին նրանց պոպուլյար ձևով գիտության նվաճումների, երկրի ներքին կյանքում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող կարևորագույն քաղաքական իրադարձությունների, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության քաղաքականության հետ։ Ակումբային աշխատանքի, ամբողջ մասսայական-քաղաքական և պրոպագանդիստական աշխատանքի որոշ ուժեղացումը, գյուղի ռադիոֆիկացիան բարձրացնում էին կոլտնտեսականների ընդհանուր կուլտուրան, ավելի բարելավում նրանց կենցաղը, դաստիարակում քաղաքի և գյուղի աշխատավորությանը սովետական հայրենասիրության ոգով, սոցիալիստա-

1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 159, 157. ՍՍՌ կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 34—35։

[1] Տե՛ս ՍՍՌՄ կուլտուրական շինարարությունը. Վիճակագրական ժողովածու, էջ 34—35։

կան սեփականությունը պահպանելու, ամրապնդելու և պետական ու աշխատանքային բարձր դիսցիպլինայի ոգով։

Հայաստանի աշխատավորության կուլտուրական աճը արտահայտվում էր նաև սպորտի և ֆիզկուլտուրայի շարժման ուժեղացման մեջ։ Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի սաներով ռեսպուբլիկան ապահովվեց որակյալ կադրերով սպորտի և ֆիզկուլտուրայի մասսայական ծավալումը ղեկավարելու համար։ Այդ տարիներին ռեսպուբլիկայում ծավալվեց ֆիզկուլտուրային հրապարակների, ջրի ավազանների, սպորտային սրահների լայն շինարարություն, ձեռք էր բերվում սպորտային անհրաժեշտ գույք, ուշադրություն էր դարձվում սպորտի տարբեր ձևերին՝ մոտոցիկլետային, հեծանվային, ըմբշամարտության, բռնցքամարտության, մարմնամարզության, թեթև ատլետիկայի, սեղանի թենիսի, դահուկային սպորտին, ալպինիզմին և այլն։ Կամավոր սպորտային ընկերությունները՝ «Սպարտակ», «Դինամո», «Աշխատանքային ռեզերվներ», «Իսկրա» (Կայծ), «Կոլտնտեսական» և այլն հասան զգալի սպորտային արդյունքների՝ համամիութենական մասշտաբով։

Այսպես, օրինակ, 1949 թ. Բուդապեշտում երիտասարդության և ուսանողների միջազգային ֆեստիվալում խոշոր հաջողություններ ձեռք բերեցին Սովետական Հայաստանի սպորտսմենների ներկայացուցիչներ՝ ՍՍՌՄ սպորտի վարպետներ, մարմնամարզիկ Հրանտ Շահինյանը, բռնցքամարտիկ Էդվարդ Արխատակեսյանը, լողորդ Իվան Բուռկյանը։ Նրանք նվաճեցին աշխարհի չեմպիոնի կոչումները ուսանողական մրցումների գծով և շահեցին ոսկյա մեդալներ (որոնցից 6 ոսկյա մեդալ առաջավ միայն Հ. Շահինյանը) ու մրցանակային գավաթներ։ Այդ տարիներին աչքի ընկան նաև սպորտի վաստակավոր վարպետներ՝ համամիութենական և համաշխարհային ռեկորդսմեններ ու չեմպիոններ Սերգո Համբարձումյանը, Սարո Վարդանյանը, Իվան Ազգարովը և ուրիշներ։ Առանձնապես պետք է նշել 18-ամյա պատանի Տիգրան Պետրոսյանի հաջողությունը, որը 1947 թ. արժանա-

ցավ ՍՍՌՄ ամենաերիտասարդ շախմատային վարպետի կոչմանը (այժմ միջազգային գրոսմայստեր)։

Սպորտի և ֆիզկուլտուրայի բնագավառում հետագա խնդիրը կայանում էր նրանում, որպեսզի ուշադրությունը կենտրոնացնել ոչ թե առանձին ռեկորդների և առանձին ռեկորդսմենների ու սպորտային վարպետների վրա, այլ սպորտի և ֆիզկուլտուրայի գործի մեջ ներգրավել երիտասարդության լայն խավեր, առանձնապես գյուղական, կոլտնտեսային երիտասարդությանը։ Այդ կարևոր գործի համար Հայաստանում արդեն կային կադրեր, բավականաչափ նյութա-տեխնիկական հնարավորություններ և փորձ։

Սովետական կուլտուրայի կարևորագույն և անքակտելի մասն է կազմում գրականությունը և արվեստը։ Հայկական սովետական գրականությունը՝ արձակը, պոեզիան, դրամատուրգիան IV հնգամյակի տարիներին ապրում էր հետագա վերելք։ Այդ վերելքը պայմանավորված էր ամբողջ իդեոլոգիական ճակատի և, մասնավորապես, գրականության ասպարեզի աշխատանքի բարելավումով և տեղի էր ունենում Կոմունիստական պարտիայի պահանջների իրականացման նշանաբանով։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի կողմից «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի վերաբերյալ հայտնի որոշումներում տրված դիրեկտիվների իրագործումը դարձավ հայկական սովետական գրականության գլխավոր խնդիրը։

Դեռևս Հայրենական պատերազմի տարիներին սովետահայ գրողները, ոգեշնչվելով սովետական ժողովրդի հերոսական պայքարով, հանդես եկան մի շարք արժեքավոր գեղարվեստական երկերով, որոնցում արտահայտում էին սովետական հայրենասիրության զգացմունքները, կոչ էին անում ժողովրդին պաշտպանել Հայրենիքը, ջախջախել ֆաշիզմը։ Այդ երկերի թվին են դասվում հայ ժողովրդի տաղանդավոր վարպետ՝ ավագ բանաստեղծ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները և հրապարակախոսական հոդվածները, Հրաչյա Քոչարի, Նաիրի

Զարյանի, Գուրգեն Բորյանի և այլ գրողների ու պոետների ստեղծագործությունները։ Սակայն այս բոլորի հետ միասին, գրողները և պոետները առանձին երկերում տարվեցին պատմական թեմատիկայով և հնադարյան Հայաստանի իդեալականացումով. այդ կարգի երկերում անցյալ ժամանակների հայրենասիրության գաղափարները նույնացվում էին հայ ժողովրդի արդիական սովետական հայրենասիրության գաղափարների հետ, հայրենասիրության իսկական ծաղկումների հետ՝ զուգահեռ, որը անտեղի է անց կացնել նրանց որակական տարբերության պատճառով։

Հայաստանի Սովետական Գրողների միության տպագիր օրգանները, գրական քննադատները և գրողները Պարտիայի ուղղություն ցույց տվող ցուցումներից հետո և 1946 թ. սեպտեմբերին կայացած Հայաստանի Սովետական գրողների II համագումարից հետո սկսեցին վերակառուցել իրենց աշխատանքները։ Լույս ընծայվեցին և վերահրատարակվեցին արդիական, ժամանակակից թեմաներով այնպիսի երկեր, ինչպիսիք են Նաիրի Զարյանի «Հացավանը», Հմայակ Սիրասի «Հայրը և որդին», Հրաչյա Քոչարի «Սրբազան ուխտը», Գարեգին Սևունցի «Ազատության պողոտան», Գեղամ Սարյանի, Գևորգ Էմինի, Սիլվա Կապուտիկյանի, Հովհաննես Շիրազի, Աշոտ Գրաշու, Սարմենի և ուրիշների նոր ստեղծագործությունները։ Մանկական գրականության բնագավառում հանդես եկան՝ Վախթանգ Անանյանի «Սևանի ափին» հրաշալի վիպակը, որը թարգմանվեց աշխարհի շատ լեզուներով, Ստեփան Զորյանի «Սարաշենի տղաները», Հովհաննես Ղուկասյանի «Փոքրիկ վրիժառուները» և այլն։ Այս գեղարվեստական երկերում երգվում են սովետական մարդկանց հայրենասիրությունը, Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը և ստեղծարար աշխատանքը։ Բայց այս հաջողությունների հետ մեկտեղ պետք էր դեռ վերացնել արձակի ետ մնալը, երկերում կոնֆլիկտներից խուսափելու կեղծ տեսակետը։ Որպեսզի բավարարվեին սովետական ընթերցողի աճող պահանջները պետք էր բարձրացնել երկերի գե-

գաղափարական մակարդակը, բարելավել գրական քննադատության վիճակը, որը դեռևս մնում էր անբավարար, ծավալել սովետական գրողների ստեղծագործական աշխատանքը, ստեղծել ավելի լիարժեք և բարձր գաղափարական երկեր, որոնք նվիրված լինեին սովետական ժողովրդի՝ Կոմունիստական Հասարակության կառուցողի լի հերոսական օրերին և սքանչելի գործերին։

Չորրորդ հնգամյակի տարիներին տեղի էր ունենում ամբողջ արվեստի հետագա զարգացումը։ Թատրոնների, համերգային կազմակերպությունների և, առանձնապես, կինոթատրոնների ցանցը զգալի չափով ընդարձակվեց։ Ռեսպուբլիկայում Գեղարվեստական և Թատերական ինստիտուտների ստեղծումը բարելավեց արվեստի աշխատողների կադրեր պատրաստելու գործը։ Սակայն այս տարիներում կային լուրջ թերություններ։ Թատրոնի, երաժշտության, կերպարվեստի գործիչների մոտ նկատվում էր նահանջ սովետական ժողովրդի կյանքի ժամանակակից թեմատիկայի արտացոլումից և տարվելը անցյալով. ստեղծվեցին մի շարք անգաղափարական երկեր ֆորմալիստական և արատավոր այլ ուղղություններով։ Անգաղափար պիեսները լցրել էին թատրոնների ռեպերտուարը։ Հաճախ սովետական իրականությունը խեղաթյուրված էր պատկերացվում։ Ստորաքարշությունը կապիտալիստական արևմուտքի առաջ նկատվում էր և այստեղ։

Արվեստի աշխատողների շրջադարձը աշխատանքի այդ բոլոր թերությունները հաղթահարելու և ուղղելու համար տեղի ունեցավ թատրոնի և երաժշտության վերաբերյալ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հայտնի որոշումներից հետո։ Սկսվեց սոցիալիստական ռեալիզմի ժողովրդական ակունքների ուսումնասիրումը, ստեղծագործական աշխատանք դեմոկրատական արվեստի և կլասիկ ժառանգության նվաճումների օգտագործումով։ Թատրոնների ռեպերտուարը լրացվեց սովետական և սովետահայ դրամատուրգիայի պիեսներով, որոնք նվիրված էին սովետական ժողովրդի հետպատերազմյան կյանքի ակտուալ հարցերին։

Այսպես, օրինակ, Գաբրիել Սունդուկյանի անվան Հայկական Պետական դրամատիկ թատրոնը բեմադրեց երիտասարդ դրամատուրգներ Գ. Տեր-Գրիգորյանի և Հ. Ղարագյոզյանի «Այս աստղերը մերն են» պիեսը։ Այդ բեմադրությունը նշվեց Ստալինյան մրցանակով։ Լավագույն իրենց բեմադրությունները ներկայացրին նաև Կ. Ստանիսլավսկու անվան Ռուսական դրամատիկական թատրոնը, Լենինականի դրամատիկական թատրոնը, Երևանի Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի և այլ շրջանային թատրոնները։

Հայկական ՍՍՌ կոմպոզիտորները ստեղծեցին մի շարք գաղափարապես հագեցված երաժշտական երկեր, ինչպես Ալեքսանդր Հարությունյանի «Հայրենիք» կանտատան, Առնո Բաբաջանյանի «Հերոսական բալլադան», որոնք արժանացան Ստալինյան մրցանակների, Էդուարդ Միրզոյանի «Հայաստան» կանտատան, Կարո Զաքարյանի «Հայրենիքի փառքը» բալլադան, Գայանե Չեբոտարյանի պրելյուդները, Հարո Ստեփանյանի «Հերոսուհի» օպերան, Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Արեգակի ցոլքերում» մանկական օպերան, մյուս կոմպոզիտորների մի շարք գեղեցիկ երգեր։ Սրա հետ միասին ռեսպուբլիկայի աշխատավորությունը լայն կերպով ծանոթանում էր ինչպես հայ, այնպես էլ ռուս և Սովետական Միության մյուս բոլոր եղբայրական ժողովուրդների երաժշտական կուլտուրային ու կլասիկ ժառանգությանը։

Կերպարվեստը նույնպես հաջողությունների հասավ։ Երևանի Աբովյանի անվան պուրակում կառուցվեց հուշարձան հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ, նոր գրական լեզվի հիմնադիր Խաչատուր Աբովյանի պատվին (քանդակագործ Սուրեն Ստեփանյան)։ Նկարչության բնագավառում լավագույն կտավներ տվեցին նկարիչներ Հովհաննես Զարդարյանը, Մհեր Աբեղյանը, Էդվարդ Իսաբեկյանը և ուրիշներ։

Սովետական Միության յուրաքանչյուր ժողովրդի ազգային կուլտուրան, այդ թվում հայ ժողովրդի կուլտուրան, կազմում է սովետական ժողովրդի միասնական՝ բովանդակությամբ սոցիալիստական, բնույթով ինտերնացիոնալ, ձևով

ազգային կուլտուրայի մի մասը, որի գաղափարական-թեո-րետիկական հիմքն է մարքսիզմ-լենինիզմի ռևոլյուցիոն ուս-մունքը: Սովետական հասարակարգի և պետական կարգերի կենարար ուժը արտահայտվում է ազգային կուլտուրաների ծաղկումը նրանց բազմակողմանի զարգացման, փոխադարձ շփման ու հարստացման հիման վրա: Ամեն մի ժողովրդի աչքի ընկնող երկերը գիտության, գրականության, արվեստի գծով թարգմանվել և թարգմանվում են Սովետական Միու-թյան մյուս ժողովուրդների լեզուներով և առաջին հերթին, ռուսերեն լեզվով, որը կատարել և կատարում է հսկայական դեր Սովետական Միության սոցիալիստական ազգերի հա-մագործակցությունը կազմակերպելու գործում: Հայկական ՍՍՀ-ում, ինչպես և բոլոր Սովետական ռեսպուբլիկաներում ռուսերեն լեզվի ուսումնասիրումը, որը հանդիսանում է Սո-վետական Միության մեջ ժողովուրդների տնտեսական, կուլ-տուրական ու քաղաքական մերձեցման գործիք, լայն հնա-րավորություն է տալիս աշխատավորությանը ծանոթանալու ռուսական առաջավոր գիտության, գրականության, արվեստի բոլոր հարստությունների, և միաժամանակ՝ համաշխարհա-յին գիտության ու կուլտուրայի լավագույն նվաճումների հետ:

Չորրորդ հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում լայն թափ ստացան եղբայրական ժողովուրդների գրականության, արվեստի լավագույն երկերի հայերեն թարգմանությունների հրատարակումը: Միաժամանակ ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների լեզուներով էին թարգմանվում հայ հեղինակների երկերը: Հայերեն լեզվով, ինչպես և բոլոր ժողովուրդների լեզունե-րով, թարգմանվում էին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները: Կուլտուրայի բուռն զարգացման մասին է վկայակոչում ռեսպուբլիկայում մեծ քանակությամբ թեր-թերի, ամսագրերի, գրքերի հրատարակումը:

Եթե նախասովետական շրջանում՝ 1914 թ. Հայաստանում հրատարակվող մի քանի թերթերի տիրաժը հասնում էր մի-այն 19 հազարի, իսկ բոլորովին աղքատիկ գրականության և ամսագրերի ընդհանուր տիրաժը 100 հազար էր, ապա Սովե-

տական իշխանության տարիների ընթացքում հրատարակչական գործը՝ մամուլը, գրականության հրատարակումը, հասավ մեծ մասշտաբների: Չորրորդ հնգամյակի վերջին, ինչպես վերևում նշվեց, Հայկական ՍՍՌ-ում հրատարակվում էին 55 անուն ռեսպուբլիկական, շրջանային, գործարանային և այլ թերթեր. այդ թվում Երևանում հրատարակվում էր 11 անուն թերթ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով՝ 186 հազար օրինակ տիրաժով (36 միլիոն տարեկան տիրաժով): Նախապատերազմյան՝ 1940 թ. Հայաստանում հրատարակվել են 699 անուն գիրք (611 հայերեն) 2 միլիոն 819 հազար օրինակ տիրաժով (2,584 միլիոնը՝ հայերեն). Գրքերի ընդհանուր տիրաժը, որը հրատարակվել է ռեսպուբլիկայում 1950 թ. (880 անուն, որից 756 հայերեն) կազմեց ավելի 4 միլիոն 878 հազար օրինակ (4,572 միլիոն օրինակը հայերեն) և համեմատած 1940 թ. հետ, ավելացավ 73%: 1950 թ. հրատարակվել են 34 ամսագիր (դրանցից 20 հայերեն) 458 հազար օրինակ տիրաժով (434 հազարը հայերեն): Գրքերի և ամսագրերի տիրաժը (տարեկան) 1950 թ. կազմեց 5,3 միլիոն օրինակ, 1940 թ. 3,3 միլիոն օրինակի դիմաց[1]:

Գիտությունը և կուլտուրան Սովետական Հայաստանում զարգացել և զարգանում են ռուսական սովետական կուլտուրայի բարերար ազդեցության ներքո, ամբողջ Սովետական Միության մեջ գիտության ու կուլտուրայի մեծ նվաճումների պայմաններում:

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թթ. չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1951. Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները. Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 151 և ՍՍՌՄ կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 34—35, 318—319, 324—325:

* * *

Այսպիսով, չորրորդ հնգամյակի տարիները բնորոշվում են սովետական ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի անընդհատ վերելքով: Մասնավորապես Սովետական Հայաստանում IV հնգամյակի տարիներին կապիտալ ներդրումները ժողովրդական լուսավորության, արվեստի, առողջապահության, բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության գծով կազմեցին 584,3 միլիոն ռուբլի (1955 թ. հուլիսի 1-ի գներով), որը գերազանցում էր այդ նույն կարգի կապիտալ ներդրումները III հնգամյակում 93,5%, II հնգամյակում 81 և I հնգամյակում՝ 818% [1]:

Բազմազգ Սովետական պետության բոլոր ժողովուրդները, նրանց թվում նաև հայ ժողովուրդը, գնում են զարգացման մի ընդհանուր, կոմունիստական ուղիով: Եղբայրական համագործակցության և փոխադարձ օգնության, ռուս մեծ ժողովրդի շուրջը համախմբվածության պայմաններում Սովետական Միության բոլոր ժողովուրդները հասան չտեսնված քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման: Սոցիալիստական պետության տնտեսական հզորության էլ ավելի ամրապնդումը և աշխատավորության կենսական մակարդակի բարձրացումը կազմում է պետության ու ժողովրդի շահերի միասնությունը, հանդիսանում է Սովետական Միության հանրային աշխատանքի բարձր արտադրողականության հիմքը, իսկ դա ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակարգի հաղթանակի համար [2]:

Կոմունիստական պարտիան աշխատավորությանը դաստիարակում է կոմունիզմի ոգով, բարձր գիտակցության և կոմունիստական բարոյականության ոգով: Աշխատավորության հանրակրթական ու կուլտուրական մակարդակի հետա-

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալները:

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 523:

դա աճը, նրանց արտադրական-տեխնիկական որակավորման բարձրացումը, այդ թվում կոլտնտեսային սոցիալիստական գյուղատնտեսության ագրոնոմիական ուսուցումը, բազա է հանդիսանում Սովետական Միության մեջ աստիճանաբար վերացնելու մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը։

Կոմունիստական պարտիայի քաղաքականությունը, նրա մարքս-լենինյան գաղափարախոսությունը՝ սովետական ժողովրդի քաղաքականությունն է և իդեոլոգիան, սովետական քաղաքացիների գիտակցված նպատակը, որովհետև հենց նրանց հարազատ ժողովրդական գործն է։ Սովետական ժողովուրդը և նրա կազմում հայ ժողովուրդը սերտ կերպով համախմբված Կոմունիստական պարտիայի շուրջը. Հասավ համաշխարհային պատմական հաղթանակների՝ կոմունիզմի շինարարության գործում, ապացուցելով, որ իր բարոյա-քաղաքական հատկություններով, իր աշխարհայեցողությամբ սովետական ժողովուրդը ամենաառաջավոր ժողովուրդն է աշխարհում։ Կոմունիստական պարտիան անդադար պայքարում է սովետական ժողովրդի կոմունիստական գիտակցության, կոմունիստական բարոյականության հետագա բարձրացման համար։

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՍՍՌ Միության հզորությունը, նրա անխորտակելի ուժը որոշվում է Սովետական պետության որակական նոր, սոցիալիստական հիմունքով, նրա անսասան հիմքերով։ Սովետական հասարակությունը, այնպես, ինչպես և նրան նախորդող հասարակությունները, զարգանում է համաձայն հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների։ Սոցիալիստական արտադրական հարաբերությունները հանդիսացան գլխավոր ու վճռական ուժը, որը հիմքում ապահովեց երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության հաջող վերակառուցումը և արտադրողական ուժերի հետագա զարգացումը։ Սովետական երկրին չեն սպառնում տնտեսական ճգնաժամեր. Սովետական Միությունում չկա և չի կարող լինել արտադրության անարխիա՝ ոչ ճգնաժամ, ոչ գործազրկություն, ոչ ժողովրդական հարստությունների շռայլում կապիտալիստների կողմից, այլ կա թե արտադրության, և թե ժողովրդի նյութական բարեկեցության անշեղ վերելք։ Սովետական Միության մեջ գոյություն չունեն շահերի հակադրություն քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև։ Կապիտալիզմի և շահագործման սիստեմի ոչնչացումով, սոցիալիստական կարգերի ամրապնդումով մեր երկրում անհետացան այդ հակադրությունները և դրա փոխարեն հաստատվեց բանվոր դասակարգի, գյուղացիության, ինտելիգենցիայի բարոյա-քաղաքական միասնությունը, որի հիմքն է կազմում բանվորա-գյուղացիական դաշինքը, պրոլետարիատի դիկտատուրան, Կոմունիստական պարտիայի ղեկավարությունը։



14—1568

Սովետական Միության զարգացումը չորրորդ հնգամյակի տարիներին բնորոշվում է հետևյալ կարևոր հանգամանքներով. երկրի էկոնոմիկայի լրիվ փոխադրումը խաղաղ ժամանակի արտադրության պահանջներին համապատասխան և արտադրության վերականգնումն ու հետագա զարգացումը. սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնության, ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդումը, սովետական հայրենասիրության աննախընթաց վերելքը և Կոմունիստական պարտիայի շուրջը աշխատավորության էլ ավելի համախմբումը: Կոմունիստական շինարարությունը և նրա մեծ նպատակը ծնել ու ծնում են չտեսնված աշխատանքային եռանդ, քաղաքի և գյուղի միլիոնավոր աշխատավորների սոցիալիստական մրցություն:

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը պլանավորել և պլանավորում են երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման գործը: Այդ պլանավորումը ճիշտ կերպով է արտացոլում ՍՍՌՄ-ում գործող ժողովրդական տնտեսության պլանային, համաչափ զարգացման տնտեսական օբյեկտիվ օրենքի պահանջները, օրենք, որը ծագեց արտադրության սոցիալիստական եղանակի հետ և նրա բազայի վրա, կոնկուրենցիայի և արտադրության անարխիայի կապիտալիստական օրենքին հակակշիռ: Պլանային, համաչափ զարգացման հնարավորությունը, ժողովրդական տնտեսությունը միասնական պետական պլանով վարելու և կազմակերպելու օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ արտադրության սոցիալիստական եղանակի արմատական առավելություններից մեկն է:

Սովետական ժողովուրդը տնտեսական և կուլտուրական մեծ նվաճումներ ձեռք բերեց նաև չորրորդ հնգամյակի տարիներին, որովհետև ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման չորրորդ հնգամյա պլանը ճիշտ կերպով էր արտացոլում պլանային, համաչափ

զարգացման օրենքի պահանջները և լրիվ համակերպվում էր սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի պահանջների հետ. դրա համար էլ երկրի էկոնոմիկան անշեղորեն զարգանում էր, վերցնելով ավելի և ավելի արագ տեմպեր։ Չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է (առանց կոլտնտեսությունների) 2 միլիարդ 243 միլիոն ռուբլի (1955 թ. հուլիսի 1-ի գներով)՝ այսինքն մոտավորապես այնքան, որքան առաջին երեք հնգամյակներին ամբողջությամբ վերցրած։ Վերին աստիճանի բնորոշ է նաև Հայաստանի պետական բյուջեի աճը։ Չորրորդ հնգամյակում ռեսպուբլիկայի բյուջեն կազմեց ըստ տարեկան կատարողականների 5 միլիարդ 137 միլիոն ռուբլի եկամուտների գծով և 5 միլիարդ 357 միլիոն՝ ծախսերի գծով։ Համեմատության համար նշենք, որ ռեսպուբլիկայի համար այս մեծ գումարը գերազանցում էր Սովետական Հայաստանի ողջ պետական բյուջեի գումարը՝ սկսած 1923 թ.[1] մինչև 1941 թ.՝ Հայրենական Մեծ պատերազմը, եկամուտների գծով համարյա կրկնակի անգամ, իսկ ծախսերի գծով 2 անգամից ավելի[2]։

Ժողովրդական տնտեսության պլանային, համաչափ զարգացման օրենքի ուսումնասիրումը, ավելի մեծ չափերով նրան տիրապետելը, պետական ճիշտ պլանավորումը և աշխատավոր մասսաների ստեղծագործական, գիտակից գործունեությունը սովետական ժողովրդին հնարավորություն են տալիս էլ ավելի մեծ հաջողությունների հասնել կոմունիզմի կառուցման ճանապարհին։ Սովետական ժողովուրդը հպարտանում է իր հասարակարգով և պետական կարգերով՝ ամենաառաջավոր և կենսունակ կարգերով։ Սովետական ժողովուրդը պարծենում է իր սովետական սոցիալիստական կու-

---

[1] Սովետական իշխանության կողմից ժառանգած Հայաստանի էկոնոմիկայի ծայր աստիճանի քայքայվածության հետևանքով մինչև 1923 թ. ռեսպուբլիկայում կայուն պետական բյուջե չի եղել։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը, Վիճակագրական ժողովածու, էջ 105, 171, 177—179։

տարայով՝ աշխարհում ամենաառաջավոր և ամենահումանիստական կուլտուրայով:

Սոցիալիզմի հաղթանակը և սոցիալիզմից դեպի կոմունիզմի աստիճանաբար անցումը, մեր երկրում մեծագույն վերափոխումները՝ հետևանք են Կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականության: Պարտիան հասավ այն բանին, որ նրա իդեոլոգիան և քաղաքականությունը դարձան հենց կյանք՝ մասսաների իդեոլոգիան և քաղաքականությունը: Սովետական Միության աշխատավորության պարզ կերպով պատկերացված նպատակը, որը կյանքի կոչեց և զարգացրեց միլիոնավոր աշխատավոր մասսաների ստեղծագործական ակտիվությունը, առանց որի անհնար կլինեին սովետական սոցիալիստական կարգերի բոլոր հաղթանակները:

Չորրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի աշխատավորները ողջ Սովետական Միության աշխատավորների հետ միասին ապրում էին քաղաքական և աշխատանքային ակտիվության նոր վերելք, որը ուղղված էր Սովետական պետության հզորության էլ ավելի ամրապնդման գործին, նպատակ ունենալով և տնտեսական տեսակետից հասնել առաջ զարգացած կապիտալիստական երկրներին:

Կոմունիստական պարտիան՝ աշխարհում ամենահզոր և ամենահեղինակավոր պարտիան է: Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության քաղաքականությունը ճիշտ կերպով արտահայտում է հասարակության հասունացած տնտեսական պահանջները, լայն ասպարեզ է տալիս սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողությանը, ընդլայնելով նրա վերափոխիչ ուժի ազդեցության շրջանակները: Խորաթափանց կերպով, գիտական կանխատեսությամբ, Կոմունիստական պարտիան ուղղություն է տալիս կոմունիստական շինարարության պրոցեսին:

Սովետական ժողովուրդը իրավամբ հպարտանում է, որ նա է առաջինը հարթել սոցիալիզմի ուղին: Սոցիալիստական հասարակարգի պատմական բախտը որոշվել և որոշվում է հերոսական սովետական ժողովրդի՝ բանվոր դասակարգի,

կոլեկտիվային գյուղատնտեսության, ժողովրդական ինտելիգենցիայի ստեղծագործ աշխատանքով, մասսաների ակտիվությամբ, որոնց ղեկավարում և ուղղություն է ցույց տալիս մեծ Կոմունիստական պարտիան։ «Չնայած անհատի պաշտամունքին և հակառակ դրան, Կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող ժողովրդական մասսաների հզոր նախաձեռնությունը, որ մեր կարգի ծնունդն է, կերտում էր իր պատմական մեծ գործը՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները սոցիալիզմի կառուցման ճանապարհին։ Եվ դրանում իր բարձրագույն արտահայտությունն է գտնում Սովետական սոցիալիստական կարգի դեմոկրատիզմը»[1]։

Կոմունիստական պարտիան տարել և տանում է անողոք, վճռական պայքար բուրժուական իդեոլոգիայի մնացուկների, նրա ռեցիդիվների և արտահայտությունների դեմ։ Պարտիայի իդեոլոգիական աշխատանքը, նրա պայքարը իդեոլոգիական ճակատում կարևորագույն դեր են խաղում մարդկանց գիտակցությունից կապիտալիզմի մնացուկները, նախապաշարմունքները և վնասակար տրադիցիաները մաքրելու գործում։ Սովետական մարդկանց գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացումը հանդիսանում է կոմունիստական շինարարության գործում՝ նրանց ակտիվության և ստեղծագործական աշխատանքի ուժեղացման անհրաժեշտ պայմանը։ Կոմունիստների և անպարտիական աշխատավորների՝ ամբողջ սովետական ժողովրդի մարքս-լենինյան դաստիարակությունը Կոմունիստական պարտիայի և սոցիալիստական Հայրենիքի հանդեպ անսահման նվիրվածության ոգով, Կոմունիստական պարտիայի հատուկ հոգատարության առարկան է։ Պարտիան դնում և իրագործում է մեր կադրերի գաղափարական-քաղաքական պատրաստականության սիստեմատիկ բարձրացման, սովետական ժողովրդի գիտության,

[1] Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին. ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի 1956 թ. հունիսի 30-ի որոշումը, 1956, էջ 22։

գրականության, արվեստի՝ ամբողջ կուլտուրայի զարգացման և կատարելագործման խնդիրը. նա է, որ ուղղում է իդեոլոգիական ներգործության բոլոր միջոցները՝ պրոպագանդան, ագիտացիան, մամուլը, ռադիոն, արվեստը և այլն, սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության գործը ավելի բարելավելու, սովետական ժողովրդի քաղաքական զգոնությունը ու ակտիվությունը ավելի բարձրացնելու համար։

Այս ամբողջ աշխատանքը իդեոլոգիական, մասսայական-քաղաքական, բացատրական և կազմակերպական գծով, ներառյալ բոլոր քաղաքական կամպանիաները, ավելի էին մոբիլիզացնում սովետական ժողովրդի ջանքերը, այդ թվում հայ ժողովրդի, ավելի սերտ համախմբում նրան Կոմունիստական պարտիայի շուրջը և ուղղություն տալիս պայքարելու չորրորդ հնգամյա պլանի առաջադրանքները կատարելու և գերակատարելու համար։ Նա բարձրացնում է բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի՝ պարտիական և անկուսակցական բոլշևիկների սոցիալիստական ակտիվությունը, նպաստում է սովետական մարդկանց ուժերի մոբիլիզացմանը կոմունիստական շինարարության տնտեսական և քաղաքական խնդիրները կատարելուն և անձնվեր հավատարմությանը Սովետական Հայրենիքին ու մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին։

Այս բոլորի ուժով է, որ Սովետական Միությունը կարողացավ չտեսնված կարճ ժամանակամիջոցում լիկվիդացնել պատերազմի հասցրած չափազանց ծանր վնասները և դառնալ էլ ավելի հզոր տերություն։ Այդ բազմազան աշխատանքը՝ սովետական ժողովրդի նոր անզուգական սխրագործությունն է. նա անխզելիորեն կապված է սովետական ժողովրդի խաղաղասիրության և նրա անխոնջ ստեղծագործական գործունեության հետ։

Չորրորդ հնգամյակի տարիներին տեղի էր ունենում Սովետական իշխանության օրգանների աշխատանքի, պարտիական կազմակերպությունների գործունեության ընդհանուր բարելավում, որոշ չափով բարելավվեց ներպարտիական աշխատանքը, ուժեղացավ մասսայական-քաղաքական աշխա-

տանքը. կոմունիստների, նույնպես և անպարտիականների գաղափարական-քաղաքական մակարդակը բարձրացավ։ Այս բոլորը հանդիսացավ կարևոր պայմաններից մեկը ռեսպուբ-լիկայի արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտու-րայի ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար։

Այս նվաճումները ավելի մեծ կլինեին, եթե պարտիական ու սովետական ղեկավար օրգանները իրենց անհրաժեշտ բարձունքի վրա գտնվեին, եթե անհատի պաշտամունքը և նրա վնասակար հետևանքները չունենային իրենց ճնշող ազ-դեցությունը։ Իրականում Հայաստանի Կոմունիստական պար-տիայի Կենտրոնական Կոմիտեի և Հայկական ՍՍՌ Մինիս-տրների Սովետի ուսումնասիրված ժամանակաշրջանի ղե-կավարությունը անտեսում էր ռեսպուբլիկայում գյուղատնտե-սության և արդյունաբերության զարգացման ճիշտ հեռա-նկարները, առանձնապես Հայաստանի լեռնային շրջանների գյուղատնտեսության գծով, խախտում էր աշխատանքի կո-լեկտիվության սկզբունքը, չունկնդրելով կոմունիստ ու ան-պարտիական մասսայի քննադատության ձայնին, գնում էր վարչարարության, քննադատության և ինքնաքննադատության ճնշման ճանապարհով, հաճախ նախկին պաշտոններում իրենց չարդարացրած և գործին անընդունակ մարդիկ տե-ղափոխվում էին այլ, ոչ պակաս պատասխանատու աշխա-տանքի։ Նախկին ղեկավարությունը անտեսում էր պարտիա-կան դիրեկտիվները՝ պարտիական-քաղաքական աշխատանքը ուժեղացնելու և քննադատությունը, ինքնաքննադատությունը ծավալելու մասին. նա սահմանափակում էր քննադատությու-նը, ձգտում էր թմրեցնել կոմունիստների զգոնությունը գո-յություն ունեցող թերությունների նկատմամբ։ Շատ պար-տիական ու սովետական պատասխանատու աշխատողներ հաշտվում էին այդ անթույլատրելի դրության հետ և սկզբուն-քայնություն չէին ցուցաբերում այդ լուրջ սխալները շտկելու համար[1]։

[1] Տե՛ս Հայաստանի Կոմունիստական պարտիայի XVII համագումարի բանաձևը Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ, 1954։

Անհատի պաշտամունքը՝ արդեն անցած էտապ է Սովետական երկրի կյանքում։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը անհրաժեշտ միջոցներ ձեռք առան պարտիական մասսաների և ամբողջ ժողովրդի ակտիվության և ստեղծագործական նախաձեռնության հետագա բարձրացման համար։ Հետևողականորեն հաղթահարվում են անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները պարտիական, պետական, տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր ասպարեզներում։

ՍՄԿՊ պատմական XX և XXI համագումարների որոշումները, լենինյան նորմաների վերականգնումը մեր Պարտիայի կյանքում արմատախիլ են անում այն բոլոր թերությունները, որոնք տեղի ունեին մեզ մոտ՝ ժողովրդական տնտեսության մեջ, պարտիական, սովետական, պրոֆմիութենական և մյուս բոլոր կազմակերպությունների աշխատանքներում. նրանք ուղղված են աշխատավորության կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացմանը և նրանց ուժերի էլ ավելի մոբիլիզացմանը կոմունիստական հասարակության ծավալուն շինարարության խնդիրները, մասնավորապես յոթնամյա պլանը հաջող իրագործելու համար։ Ժողովրդի համար բարիքներ ստեղծելու հոգատարությունը հանդիսանում է Պարտիայի բարձրագույն օրենքը։

Սովետական ժողովուրդը չխնայելով իր ուժերն ու եռանդը, կատարեց և գերակատարեց չորրորդ հնգամյա պլանը, որպես իր կենսական շահերին համապատասխանող մարտական ծրագիր։ Սովետական մարդկանց հայրենասիրությունը, ստեղծագործական նախաձեռնությունը և աշխատանքային առաքինությունը, որոնք գլխավորվում էին Կոմունիստական պարտիայի կողմից, մեծ նվաճումների հասցրին երկրի էկոնոմիկայի և ժողովրդի կուլտուրայի բոլոր ասպարեզներում։ Չորրորդ հնգամյակի հաջող կատարումը, չորրորդ հնգամյակի տարիները խոշոր քայլ հանդիսացան Սովետական Միության համար կոմունիզմի ճանապարհին՝ ճանապարհ, որով վստահորեն տանում է սովետական ժողովրդին Սովետական Միության Կոմունիստական պարտիան։

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր (4-րդ հրատարակություն)*, հ.հ. 28, 29, 30, 31, 33։

*Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, Երևան, 1943 թ.։*

*Գերմանա-ֆաշիստական զավթիչների չարագործությունները պարզող ու հետաքննող Արտակարգ Հանձնաժողովի հաղորդագրություններ, «Պրավդա», № 219, 13 սեպտեմբերի 1945 թ.։*

*Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, «Պրավդա», № 68, 21 մարտի 1946 թ.։*

*Օրենք Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, Երևան, 1946, ռուսերեն։*

*ՍՍՌՄ Պետպլանի հաղորդագրությունը. ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման պետական պլանի կատարման արդյունքները 1946 թվին, «Պրավդա» № 19, 21 հունվարի 1947 թ.։*

*ՍՍՌՄ Պետպլանի Հայկական ՍՍՌ լիազորի հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման 1946 թվի պետական պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», № 26, 1-ը փետրվարի 1947 թ.։*

*ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1947 թ. պետական պլանի մասին, Սովետական Հայաստան», № 52, 4 մարտի 1947 թ.։*

*ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ ԿԿ որոշումը դրամական ռեֆորմ անցկացնելու և պարենային ու արդյունաբերական ապրանքների քարտերը վերացնելու մասին, 14 դեկտեմբերի 1947 թ., «Պրավդա», № 334, 15 դեկտեմբերի 1947 թ.։*

*ՍՍՌՄ Պետպլանի հաղորդագրությունը ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1947 թվի պետական պլանի կատարման արդյունքների մասին, «Պրավդա». № 18, 18 հունվարի 1948 թ.։*

ՍՍՌՄ Պետպլանի Հայկական ՍՍՌ լիազորի հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման 1947 թվի պետական պլանի կատարման արդյունքների մասին. «Սովետական Հայաստան» № 22, 28 հունվարի 1948 թ.։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1948 թ. պետական պլանի կատարման արդյունքների մասին, «Պրավդա», № 20, 30 հունվարի 1949 թ.։

Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1948 թ. պետական պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», № 21, 27 հունվարի 1949 թ.։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ ԿԿ որոշումը 1949 թ. մարտի 1-ից մասսայական սպառման ապրանքների պետական մանրածախ գների իջեցման մասին, «Պրավդա», № 60, 1 մարտի 1949 թ.։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1949 թվի պետական պլանի կատարման արդյունքների մասին. ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը, «Պրավդա», № 18, 18 հունվարի 1950 թ.։

Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1949 թվի պետական պլանի կատարման արդյունքների մասին. «Սովետական Հայաստան», № 20, 24 հունվարի 1950 թ.։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ ԿԿ 1950 թ. փետրվարի 28-ի որոշումը պարենային և արդյունաբերական ապրանքների պետական մանրածախ գների նոր իջեցման մասին, «Պրավդա», № 60, 1 մարտի 1950 թ.։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1950 թվականի պետական պլանի կատարման արդյունքների մասին. ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը, «Պրավդա», № 26, 26 հունվարի 1951 թ.։

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման 1950 թվականի պետական պլանի կատարման արդյունքների մասին. Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության հաղորդագրությունը, «Սովետական Հայաստան», № 29, 4 փետրվարի 1951 թ.։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետում և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեում. Պարենային և արդյունաբերական ապրանքների պետական մանրածախ գների նոր իջեցման մասին, «Պրավդա», № 60, 1 մարտի 1951 թ.։

ՍՍՌՄ Պետական պլանային հանձնաժողովի և ՍՍՌՄ Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը ՍՍՌՄ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Պրավդա», № 107, 17 ապրիլի 1951 թ.։

Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», № 136, 13 հունիսի 1951 թ.։

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման 1951—1955 թվականների հինգերորդ հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին. Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Պետական պլանային հանձնաժողովի և Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության հաղորդագրությունը, «Սովետական Հայաստան», № 160, 10 հուլիսի 1956 թ.։

Հայկական ՍՍՌ սոցիալիստական շինարարությունը (1920—1940 թթ.). Վիճակագրական ժողովածու, 1940, ռուսերեն։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը. Վիճակագրական ժողովածու, 1956, ռուսերեն։

ՍՍՌՄ կուլտուրական շինարարությունը, Վիճակագրական ժողովածու, 1956, ռուսերեն։

Սովետական առևտուրը, Վիճակագրական ժողովածու, 1956, ռուսերեն։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը 1956 թվին, Վիճակագրական տարեգիրք, 1957, ռուսերեն։

ՍՍՌՄ արդյունաբերությունը, Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն։

ՍՍՌՄ տրանսպորտը և կապը. Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն։

ՍՍՌՄ ցանքային տարածությունները, Վիճակագրական ժողովածու, հատ. 1-ին, 1957, ռուսերեն։

Սովետական իշխանության նվաճումները 40 տարում թվերով, Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն։

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը. Վիճակագրական ժողովածու, 1957, ռուսերեն։

Մի քանի կոմպարտիաների ներկայացուցիչների ինֆորմացիոն խորհրդակցությունը Լեհաստանում 1947 թ. սեպտեմբերի վերջին, 1948, ռուսերեն։

Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, 1948։

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի XIV համագումարի բանաձևը Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ, 1948։

Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, 1951։

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի XV հա-

մագումարի բանաձևը Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ, 1951։

ՍՍՌՄ գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին. ՍՄԿՊ Կենտկոմի Պլենումի 1953 թ. սեպտեմբերի 3-ի որոշումը. 1953։

Հաշվետու զեկուցում Հայաստանի ԿՊ XVII համագումարում ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, 1954։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի XVII համագումարի բանաձևը Հայաստանի ԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ, 1954։

Անձի պաշտամունքի և նրա հետևանքների հաղթահարման մասին. ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի 1956 թ. հունիսի 30-ի որոշումը, 1956։

ՍՍՌՄ Կառավարության 1956 թ. հոկտեմբերի 30-ի Դեկլարացիան Սովետական Միության և մյուս սոցիալիստական պետությունների բարեկամության և համագործակցության զարգացման ու հետագա ամրապնդման հիմունքների մասին, «Սովետական Հայաստան», № 255, 1 նոյեմբերի 1956 թ.։

Հայաստանի ԿՊ Կենտրոնական Կոմիտեին կից Պարտիայի պատմության ինստիտուտի՝ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ֆիլիալի Պարտիական արխիվ. ֆոնդ 1 (37, 40, 75 ցուցակների գործերը)։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հայրենական Մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ (ՀՄՊՊԿ արխիվ), ֆոնդեր՝ 14, 53, 63։

Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության տվյալներ (ձեռագիր)

«Պրավդա», օրգան ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի, 1945—1951 թթ.։

«Սովետական Հայաստան», օրգան Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի և Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների Սովետների. 1946—1951 թթ. և առանձին համարներ՝ 1935, 1941, 1956, 1957 թթ.։

«Կոմունիստ», օրգան Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի և Երևանի կոմիտեի, 1946—1951 թթ. և առանձին համարներ՝ 1954, 1956, 1957 թթ.։

«Սովետական Հայաստան», ամսագիր, օրգան Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության, 1945—1951 թթ.։

Ն. Ս. Խրուշչով. ՍՍՌՄ գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին, 1953։
Երկրում հացահատիկի արտադրության հետագա ավելացման և խոպան ու խամ հողերի յուրացման մասին, 1954։
ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը Պարտիայի XX համագումարին, 1956։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40 տարին, 1957,
Ժողովրդի կյանքի հետ գրականության և արվեստի սերտ կապի համար, 1957:
Արդյունաբերություն, գյուղի նոր ձեռնարկությունների, 1958:
Ա. Ի. Միկոյան. Ճառ Երևան քաղ. Ստալինյան ընտրական օկրուգի նախընտրական ժողովում, 1950 թ. մարտի 10-ին, 1950:
Ի. Վ. Ստալին. Ճառ Մոսկվա քաղ. Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում, 1946 թ., փետրվարի 9-ին, 1946:

Ս. Կ. Առաքելյան. Հետպատերազմյան հնգամյակի հիմնական խնդիրները, Երևան, 1947 (Թարգմանություն ռուսերենից):
Հ. Ն. Բամանյան, Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկան Հայրենական պատերազմի շրջանում և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում, Երևան, 1953:
Դ. Պ. Կոշելև, Հետպատերազմյան առաջին հնգամյակի կատարման հիմնական հանրագումարները, 1951, ռուսերեն:
Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում (1941—1945), Երևան, 1954:
Ա. Զ. Ռումյանցև, Սովետական էկոնոմիկայի զարգացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում, 1951, ռուսերեն:
Ս. Վիկենտև, Սովետական էկոնոմիկայի զարգացման ուրվագծերը չորրորդ հնգամյակում, 1952, ռուսերեն:
ՍՍՀՄ պատմություն, սոցիալիզմի դարաշրջան (1917—1957 թ.թ.) ուսումնական ձեռնարկ, 1957, ռուսերեն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հեղինակի կողմից . . . . . . . . . . 5
Ներածություն . . . . . . . . . . . 7

Գլուխ առաջին — *Սովետական ժողովրդի հաղթանակը Հայրենական Մեծ պատերազմում և անցումը խաղաղ շինարարության* . . . . . . . . . . 15

Գլուխ երկրորդ — *Ժողովրդի բարոյա-քաղաքական միասնության հետագա ամրապնդումը հնգամյակի տարիներին* . 44

Գլուխ երրորդ — *Աշխատավորության պայքարի արդյունքները հնգամյա պլանի կատարելու գործում*

1. *Արդյունաբերության, տրանսպորտի, կապի զարգացումը* 99
2. *Գյուղատնտեսության զարգացումը* . . . . 133
3. *Աշխատավորության նյութական բարեկեցության աճը և կուլտուրական մակարդակի բարձրացումը* . . 165

Եզրափակում . . . . . . . . . . 209
Օգտագործված աղբյուրներ և գրականություն . . . . 217

ՍԵԴՎԱՐԴ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԽԱՐՄԱՆԴԱՐՅԱՆ

# *ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՈՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ*

*(1946—1950)*

Պատ. խմբագիր՝ Լ. Ա. Ճաղզամյան
Հրատ. խմբագիր՝ Ռ. Խ. Մանոյան
Նկարչական ձևավորումը՝ Ն. Ա. Թովմասյանի
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ա. Գևորգյան

ՎՖ 03127 ԽՀԽ 391, Հրատ. 1842, Պատվեր 1568, Տիրաժ 500

Հանձնված է արտադրության 14 V 1960 թ.։
Ստորագրված է տպագրության 13/VII 1960 թ.։
Թուղթ 84×108 $^{1}/_{32}$։ Հրատ. 9,45 մամուլ, տպագր. 14 մամուլ։
Հին գինը կազմով 6 ռ. 65 կ.։
Նոր գինը 1961 թ. 66 կոպ.։

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության, հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0026051

ЦЕНА
1 40 70